


ԱՐՄԵՆՈՒԿԻ ՂԱՄԲԱՐՅԱՆ



ԱՅԿԱԿԱՆ ԱՐՅԸ  
1912-1914թթ.  
ԵՎ  
ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՆ



ԵՐԵՎԱՆ 2006



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՄԵՆՈՒՐԻ ՎԱՆՅԱՅԻ ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ 1912-1914 ԹԹ.

ԵՎ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՆ

A  
90878



ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇԺԵԱՆ  
ՄԱՏԵՆԱԾԱՐ



ARCH. MESROB ASHJIAN  
BOOK SERIES

10

10

ԵՐԵՎԱՆ 2006

ՀՏԴ 941 (479.25 ) + 940.3/4  
ԳՄԴ 63.3 (2Հ) + 63.3 (4 ՄԲ)  
Ղ - 301

Աշխատությունը հրատարակության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ  
Պատմության ինստիտուտի «Նոր պատմության» բաժինը

Խմբագիր՝ պ.գ.թ. Ռ.Օ. Սահակյան

ՂԱՄԲԱՐՅԱՆ Ա.

Հայկական հարցը 1912-1914թթ և Մեծ Բրիտանիան.- Եր.:  
Ղ – 301 ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2006.- 232 էջ

«Հայկական հարցը 1912-1914թթ. և Մեծ Բրիտանիան» աշխատությունը նվիրված է Մեծ Բրիտանիայի քաղաքականության ուսումնասիրությանը Հայկական հարցում վերջինի վերաբացման շրջանում: Առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրված հարուստ փաստական նյութի հանգամանալից վերլուծությունը թույլ է տալիս ներկայացնել գրքում այն եզրակացությունը, որ Արևմտյան Հայաստանի համար նախատեսված բարենորոգումների խնդրի վերաբացումը, քննարկումները և, ի վերջո, բացասական լուծումները որոշակիորեն պայմանավորված էին նաև Հայկական հարցում Մեծ Բրիտանիայի որդեգրած քաղաքականությամբ:

Գիրքը նախատեսված է նեղ մասնագետների պատմաբանների, դիվանագետների և ընթերցող լայն շրջանների համար:

ISBN 99941-969-6-0

ԳՄԴ 63.3 (2Հ) + 63.3 (4ՄԲ)  
ՀՀ ԳԱԱ Պատմ. ինստ., 2006

Նվիրում եմ հորս՝  
Վանիկ Ղամբարյանի  
պայծառ հիշատակին

## ԱՌԱՋԱԲԱՆ

Վերականգնված հայկական անկախ պետականության կայացման պայմաններում, ավելի քան երբեք, մեծ նշանակություն է ստացել հայ ժողովրդի պատմության սպիտակ էջերի ուսումնասիրությունն ու լուսաբանումը: Դա, մասնավորապես, վերաբերում է հայ ժողովրդի պատմության առանցքային հիմնահարցերից մեկի՝ Հայկական հարցի պատմության խորը և համակողմանի ուսումնասիրությունը:

Օսմանյան Թուրքիայի տիրապետության ներքո գտնվող Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու խնդիրը 19-րդ դարի 70-ական թվերից ի վեր դարձավ միջազգային դիվանագիտության քննարկման առարկա: Հայկական հարցը, լինելով Արևելյան խնդրի բաղկացուցիչ մաս, պարբերաբար շահարկվում էր մեծ տերությունների՝ մերձավոր արևելյան քաղաքականության ոլորտում:

«Հայկական հարցը 1912-1914թթ. և Մեծ Բրիտանիան» թեմայի ուսումնասիրությունը դիտական արդիական նշանակություն ունի, քանի որ Հայկական հարցի պատմական պատմության բաղկացուցիչ մաս հանդիսանալով, այն տակավին դիտական հատուկ ուսումնասիրությունն առարկա չի եղել:

Խնդրո առարկա հիմնահարցը սերտորեն առնչվում է հայ ժողովրդի նկատմամբ մեծ տերությունների՝ մասնավորապես Մեծ Բրիտանիայի վարած քաղաքականությանը: Թեմայի ուսումնասիրության քաղաքական արդիականությունն այն է, որ կօգնի բացահայտել մեծ տերությունների քաղաքականության էությունն անկախություն ձեռք բերած ժողովրդների նկատմամբ նաև այսօր:

1912թ. հոկտեմբերին, երբ արդեն բռնկվել էր Բալկանյան առաջին պատերազմը, Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ V-ը

դիմեց Կովկասի փոխարքա Ի.Ի.Վորոնցով-Դաշկովին՝ նրա ուշադրությունը հրավիրելով արևմտահայության ծանր վիճակի և Հայկական հարցի լուծման անհրաժեշտության վրա: Այդ ուղերձը նպատեց Հայկական հարցի նկատմամբ ուսական իշխանությունների քաղաքական ակտիվացմանը: Բարենորոգումների խնդրի լուծման շուրջ վերսկսվեց դիվանագիտական պայքար: Այն անցավ մի քանի փուլ և տեեց մոտ երկու տարի: Հայկական հարցի պատմության մեջ ճակատագրական դեր խաղաց 1914թ. հուլիսի 19-ին բռնկված առաջին համաշխարհային պատերազմ: Թուրքական կառավարությունն ակնկալում էր, որ այն հնարավորություն կրնձնուի վերջ դնել Հայկական հարցին՝ Թուրքիայում հայության գլխովին ոչնչացման միջոցով:

Ուսումնասիրության ժամանակաշրջանն ընդգրկում է 1912թ. հոկտեմբեր-1914թ. հուլիս ամիսները, որոնք հարուստ են պատմական իրադարձություններով: Առանց այդ շրջանի մանրակրկիտ ուսումնասիրության՝ դժվար է հասկանալ Հայկական հարցի լուծման հետ կապված դիվանագիտական հետազա խաղերի էությունը:

Մեր ուսումնասիրության առարկան է հանդիսացել առաջին համաշխարհային պատերազմին նախորդած տարիներին Հայկական հարցի շուրջ մեծ տերությունների միջև ծավալված դիվանագիտական պայքարը: Այդ խնդրի լուսաբանումն անհրաժեշտ է դարձրել Մեծ Բրիտանիայի քաղաքականության և դիվանագիտության դերի բացահայտումը Հայկական հարցի վերաբացման շրջանում: Աշխատության ընտրությունը թելադրվել է այն իրողությամբ, որ ուսումնասիրվող շրջանում Հայկական հարցի նկատմամբ Մեծ Բրիտանիայի քաղաքականությունը պատմադրության մեջ համակողմանիորեն չի լուսաբանվել:

Ներկա ուսումնասիրությունը նպատակ ունի.

1. լուսաբանել արևմտահայության դրությունը 1912-1914թթ. և անգլիական վավերագրերի հիման վրա ցույց տալ Հայկական հարցի վերաբացման նախադրյալները:

2. ներկայացնել Անգլիայի հետաքրքրություններն ու շահախնդրությունը Հայկական հարցում և վերջինիս վերաբերմունքը խնդրի վերաբացմանը:

3. բացահայտել Անդլիայի քաղաքական նկրտումները բարենորոգումների առթիվ 1913թ. հուլիսին մեծ տերությունների՝ Ենի-Քյոյում տեղի ունեցած խորհրդաժողովում, ինչպես նաև ուսուցիչական և ուսուցիչական բանակցություններում:

4. Լուսաբանել Անդլիայի քաղաքականութունը Թուրքիայի և մեծ տերություններ, հատկապես Ռուսաստանի հետ ունեցած հարաբերություններում Հայկական հարցի վերաբացման խնդրում, ինչպես նաև Անդլիայի հասարակական շրջանների և մամուլի վերաբերմունքը Հայկական հարցի նկատմամբ:

Մեր կողմից լուսաբանվող հիմնահարցի վերաբերյալ ուսումնասիրությունների և ստեղծված հարուստ գրականության մեջ իր տեղն է գտել նաև 1912-1914թթ. վերաբացված Արևմտյան Հայաստանի համար նախատեսվող բարենորոգումների խնդրի արծարծումը:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին արդեն Հայկական հարցի վերաբացման /1912-1914թթ./ պատմությունն անդրադարձել են ժամանակի քաղաքական և հասարակական գործիչները: Նրանց կողմից ստեղծվել են մի շարք աշխատություններ: Դրանցից են. Ե.Օտյանի<sup>1</sup>, Բաբկին վարդապետի<sup>2</sup>, Ատոմի /Հարություն Շահրիկյան/<sup>3</sup>, Հ.Աճառյանի<sup>4</sup>, Մուշեղ արքեպիսկոպոսի<sup>5</sup>, Ե. Գեղամյանի<sup>6</sup>, Ա. Զոպանյանի<sup>7</sup>, Գր. Զոհրապի<sup>8</sup> աշխատությունները, որտեղ հեղինակները հանդես են գալիս որպես հայոց պատմության փայլուն գիտակներ:

<sup>1</sup>Օտյան Ե., Պողոս փաշա Նուբար, Կ. Պոլիս, 1913:

<sup>2</sup>Բաբկին վարդապետ, Հայկական հարցը և Պողոս Նուբար փաշան: Վաղարշապատ, 1914:

<sup>3</sup>Ատոմ, Բարենորոգումների հարցը, Կ. Պոլիս, 1914:

<sup>4</sup>Աճառյան Հ., Տաճկահայ հարցի պատմությունը / սկզբից մինչև 1915 թ./, Նոր-Երևան, 1915:

<sup>5</sup>Մուշեղ արքեպիսկոպոս, Հայկական մղձավանջը. քննական վերլուծություններ: Բոստոն, 1916:

<sup>6</sup>Գեղամյան Ե., Հայերի ազատագրական շարժումները 20-րդ դարում /Հայկական հարցի յոթերորդ շրջան/, Բաքու, 1917:

<sup>7</sup>Զոպանյան Ա., Հայաստանը թուրք լուծին տակ, Պոստոն, 1918:

<sup>8</sup>Զոհրապ Գր., Հայկական հարցը փաստաթղթերու լուսին տակ, Բեյրութ 1973:

Հայաստանում խորհրդային իշխանությունն սկզբնական շրջանում բարենորոգումների խնդրին իրենց ուսումնասիրությունններում անդրադարձել են հայ պատմագրության նշանավոր ներկայացուցիչներ Լեոն /Առաքել Բաբախանյան/<sup>1</sup> և Բ.Բորյանը<sup>2</sup>: Չնայած նրանց աշխատություններում առկա են որոշ անճշտություններ, որոնք բացատրվում են ժամանակի քաղաքական կոնյուկտուրայով և փաստական նյութի անբավարար ուսումնասիրությամբ, հեղինակներին հաջողվել է մերկացնել ոչ միայն երիտթուրքերի հակահայկական, այլև մեծ տերությունների երկդիմի քաղաքականությունը Հայկական հարցում:

Հետագայում խորհրդահայ պատմաբաններ Ե.Սարգսյանը<sup>3</sup>, Մ.Արզումանյանը<sup>4</sup>, Մ.Աղայանը<sup>5</sup>, Հ.Ինճիկյանը<sup>6</sup>, Ա.Համբարյանը<sup>7</sup>, Ն.Կարապետյանը<sup>8</sup>, Գ.Գալոյանը<sup>9</sup>, Մ.Քոչարը<sup>10</sup>, Զ.Կիրակոսյանը<sup>11</sup>, Հր.Սիմոնյանը<sup>12</sup> իրենց աշխատություններում հարուստ փաստական նյութի հիման վրա ուսումնասիրել և վերլուծել են հիմնահարցին առնչվող առանձին խնդիրներ:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Հայկական հարցում մեծ տերությունների դիրքորոշման, հակասությունների և ղիվանագիտական պայքարի լուսարանման տեսակետից կարևոր տեղ են գրավում հայ պատմագրության

<sup>1</sup>Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925:

<sup>2</sup>Борян Б. А., Армения, международная дипломатия и СССР, Часть 1., М.-Л., 1928.

<sup>3</sup>Саркисян Е.К., Экспансионистская политика Османской империи в Закавказье накануне и в годы первой мировой войны, Ереван, 1962.

<sup>4</sup>Արզումանյան Մ.Վ., Հայաստան 1914-1917, Երևան, 1969:

<sup>5</sup>Աղայան Մ.Պ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976:

<sup>6</sup>Инджикян О.Г., Буржуазия Османской империи, Ереван, 1977.

<sup>7</sup>Համբարյան Ա.Ս., Երիտթուրքերի ազգային և հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1979թ:

<sup>8</sup>Կարապետյան Ե.Վ., Հայկական բարենորոգումների խնդիրը 1912-1914թթ., Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, էջ 520-536, Երևան, 1981:

<sup>9</sup>Գալոյան Գ.Ա., Պատմության քառուղիներում, Երևան, 1982; նույնի Рабочее движение и национальный вопрос в Закавказье .1900-1922, Ереван, 1969.

<sup>10</sup>Կոչար Մ., Армяно-турецкие общественно-политические отношения и Армянский вопрос в конце 19-го- начале 20-го веков, Ереван, 1988:

<sup>11</sup>Կրակոսյան Ժ., Младотурки перед судом истории, Ереван, 1989.

<sup>12</sup>Սիմոնյան Հր., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991:

մեջ Զ.Կիրակոսյանի<sup>1</sup>, Ս.Հակոբյանի<sup>2</sup>, Ե.Սարգսյանի<sup>3</sup>, Ս.Ստեփանյանի<sup>4</sup> աշխատությունները: Այս շարքում առանձնակի պետք է նշել Ս.Հակոբյանի նշված ուսեսերեն լեզվով գրված մենագրությունը, ուր մյուս տերությունների շարքում մանրամասն ներկայացվում են նաև Մեծ Բրիտանիայի առևտրատնտեսական և ռազմավարական հետաքրքրություններն Արևմտյան Հայաստանում: Հեղինակը համառոտակի անդրադառնում է նաև 1912-1914թթ.՝ Հայկական հարցի բարձրացման շրջանում անգլիական կառավարությունից դրսևորումներին և քաղաքականությունը Հայկական բարենորոգումների խնդրում:

Նշված աշխատությունները ծանրակշիռ ներդրում են Հայկական հարցի պատմությունն առավել ամբողջական ներկայացնելու խնդրում: Սակայն որոշ դրույթներ դրանցում վերանայման կարիք ունեն, քանի որ կրում են անցյալի գաղափարական դրոշմը: Բացի այդ՝ խնդրո առարկա հիմնահարցը վերոհիշյալ աշխատություններում հստակ է չոչափվել և անաչառ վերլուծության չի ենթարկվել:

1912-1914թթ. Հայկական հարցում Մեծ Բրիտանիայի քաղաքականության վերաբերյալ պատմաբանների կողմից առանձին աշխատություն չի ստեղծվել:

1999թ. լույս է տեսել Ա.Կիրակոսյանի<sup>5</sup> ուսումնասիրությունը, որը կարևոր ներդրում է Հայ-անգլիական հարաբերությունների պատմության լուսաբանման գործում: Այդուհանդերձ, այն հանգամանքը, որ աշխատության ժամանակագրական շրջանակները շատ լայն են՝ մոտավորապես մեկ դար, մեր կարծիքով դժվարացրել է գրքի վերջին գլխում ներկայացված 1912-1914 թվերին՝ Հայկական հարցի արձարձման

<sup>1</sup>Киракосян Дж., Западная Армения в годы первой мировой войны, Ереван, 1971.

<sup>2</sup>Акопян С.М., Западная Армения в планах империалистических держав в период первой мировой войны, Ереван, 1967.

<sup>3</sup>Саркисян Е. К., Политика Османского правительствa в Западной Армении и державы в последней четверти 19-го в. и в начале 20-го в., Ереван, 1972.

<sup>4</sup>Степанян Ст., Армения в политике империалистической Германии (конец 19-го-начало 20-го вв.), Ереван, 1975.

<sup>5</sup>Կիրակոսյան Ա. Ջ., Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը /19-րդ դարի 30-ական թթ. - 1914 թ./, Երևան, 1999:

նոր փուլում Անգլիայի քաղաքականության համակողմանի լուսաբանումը:

Հիմնահարցի պատմական ընթացքի զարգացմանը հետևելուն և Հայկական հարցի հետ կապված որոշ խնդիրներին լուսաբանմանը օգնում են սփյուռքահայ մի շարք հեղինակները՝ Մ.Սերոբյանի<sup>1</sup>, Գ.Լազեանի<sup>2</sup>, Պաստերմաճեանի<sup>3</sup>, Կ.Իգմիրլյանի<sup>4</sup>, Լ.Չորմիսյանի<sup>5</sup>, Ռ.Հովհաննիսյանի<sup>6</sup>, Ս.Սապահ-Գյուլյանի<sup>7</sup>, Ա.Ամուրյանի<sup>8</sup>, Վ.Դադրյանի<sup>9</sup> ուսումնասիրությունները: Մ.Սոմաքյանի<sup>10</sup> և Ա.Նասիպեանի<sup>11</sup> աշխատություններում հպանցիկ ձևով ներկայացվում են նաև մեզ հետաքրքրող ժամանակահատվածում Անգլիայի վերաբերմունքն ու դիրքորոշումը Հայկական հարցում:

Խնդրի ամբողջական լուսաբանման տեսակետից անհրաժեշտ է նշել նաև խորհրդային պատմաբաններ Վ.Ա.Գուրկուկյանի<sup>12</sup>, Վ.Մ.Խվոստովի<sup>13</sup>, Ա.Ֆ.Միլլերի<sup>14</sup>, Լ.Գ.Իստյազդինի<sup>15</sup>,

<sup>1</sup>Սերոբյան Ս., Հայկական հարցը և անոր փուլերը, Պեյրուք, 1937: Նույնի Սեր պայքարը հայ ազատագրության ուղիով, Գահիրե, 1948:

<sup>2</sup>Լազեան Գ., Հայաստանը և հայ դատը ըստ դաշնագրերու, Գահիրե, 1957:

<sup>3</sup>Պաստերմաճեան Հ., Հայոց պատմություն, Բ հատոր, Անթիլիաս-Լիբանան, 1958:

<sup>4</sup>Իգմիրլյան Կ., Հայ ժողովրդի քաղաքական ճակատագիրը անցյալն և ներկայիս / քննական տեսություն/, Բեյրուք, 1964:

<sup>5</sup>Չորմիսյան Լ., Կուսակցությունները, Բեյրուք, 1965:

<sup>6</sup>Hovannissian R., Armenia on the Road to Independence, 1918, L-A, 1967.

<sup>7</sup>Սապահ-Գյուլյան Ս., Պատասխանատուները, Պեյրուք, 1974:

<sup>8</sup>Ամուրյան Ա., Հայ դատը և հայ ժողովրդի ազատագրական ճիգերը, Թեհրան, 1977

<sup>9</sup>Dadrian V., The History of the Armenian Genocide; Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus, Oxford, 1995.

<sup>10</sup>Somakian M., Empires in Conflict: Armenia and the Great Powers, 1895-1920, London-New-York, 1995.

<sup>11</sup>Նասիպեան Ա., Բրիտանիա և Հայկական հարցը 1915-1923, Պեյրուք, 1994:

<sup>12</sup>Гурко-Кряжин В.А., История революции в Турции, Москва, 1923.

<sup>13</sup>Хвостов В.М., История международных отношений, 1871-1917гг., Москва, 1947. Его же, История дипломатии, том 2, Дипломатия в новое время 1871-1914. М., 1963.

<sup>14</sup>Миллер А.Ф., Оттоманская империя, М., 1946. Его же, Краткая история Турции, М., 1948.

<sup>15</sup>Истягин А.Г., Экспансия германского империализма в Турции и русско-германские противоречия по Армянскому вопросу, 1912-1914гг, в книге „Агрессивная внешняя политика германского империализма.“, М., 1959.

Ա.Ա.Մոգիլևիչի և Մ.Ա.Հայրապետյանի<sup>1</sup> աշխատությունները, որտեղ հեղինակները այս կամ այն կերպ անդրադարձել են մեր ընտրած հիմնահարցին:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Հայկական հարցի շուրջ դիվանագիտական պայքարը և տևրությունների քաղաքականությունը հզանցիկ ուսումնասիրվել է արևմտաեվրոպական և ամերիկյան պատմաբանների կողմից: Այդ առումով որոշ հետաքրքրություն են ներկայացնում ամերիկյան հեղինակներ Ռ.Դեխտեր<sup>2</sup> և Վ.Վան դեր Դյուսենի<sup>3</sup> աշխատությունները: Անգլիացի հեղինակ Ջ. Հելլերը<sup>4</sup> իր ուսումնասիրության մեջ անդրադառնում է անմիջապես Մեծ Բրիտանիայի քաղաքականությունը Հայկական հարցում 1912-1914թթ., ներկայացնում է Մեծ Բրիտանիայի հետաքրքրություններն ու շահերը: Հելլերը միանշանակ արդարացնում է Մեծ Բրիտանիայի քաղաքականությունը Հայկական բարենորոգումների խնդրում, թեպետև ընդունում է, որ այն ուղղված չէր հայերին օգնելուն:

Ուսումնասիրության հիմնահարցի վերաբերյալ առանձին հետաքրքիր տեղեկություններ են ներկայացվում Էդվին Փիրսի<sup>5</sup>, Հարոլդ և Նոյել Բաքսթոնների<sup>6</sup>, Վ.Ուիլյամսի<sup>7</sup>, Է. Ռոբինսոնի<sup>8</sup>, Ջ. Մերիոթի<sup>9</sup>, Թ. Վուլի<sup>10</sup>, Ֆ. Գրեյվսի<sup>11</sup>,

<sup>1</sup>Могилевич А.А., Айрапетян М.А., На путях к мировой войне, 1914-1918, М., 1940.

<sup>2</sup>Davison Roderic H., The Armenian Crisis 1912-1914, New -Yor k, 1948.

<sup>3</sup>W.J. Van der Dussen, The Question of Armenian Reforms in 1913-1914.", The Armenian Review ", Spring, 1986, volume 39, N 1.

<sup>4</sup>Heller Joseph, Britain and the Armenian Question, 1912-1914. A Study in Real Politik, "Middle Eastern Studies", 1980, N 16.

<sup>5</sup>Pears Edwin, Turkey and its People, London, 1912; Forty Years in Constantinople. London, 1915.

<sup>6</sup>Buxton N. and Buxton H., Travel and Politics in Armenia, London, 1914.

<sup>7</sup>Williams W. Llew., Armenia :Past and Present. A Study and a Forecast., London, 1916.

<sup>8</sup>Robinson Emily, Armenia and the Armenians, London, 1916; The Armenians, London, 1918.

<sup>9</sup>Marriott J.A.R., The Eastern Question. A Study in European Diplomacy, Oxford, 1917.

<sup>10</sup>Waugh Teleford, Turkey Yesterday, Today and Tomorrow, London, 1930.

<sup>11</sup>Graves Philip P., Briton and Turk, London and Melbourne, 1940.

Քր. Ուոլքերի<sup>1</sup> աշխատություններում:

Հիմնահարցի լուսաբանման համար մեր կողմից ուսումնասիրվել են վերը նշված հետազոտություններն ու մենագրությունները: Սակայն թեմայի մանրակրկիտ լուսաբանումը հնարավոր էր միայն հարուստ արխիվային նյութերի սկզբնաղբյուրների, տպագրված փաստաթղթերի ժողովածուների, մամուլի ընձեռած նյութերի, քաղաքական, հասարակական և պետական գործիչների հուշերի, ինչպեսև որոշ մենագրություններում տեղ գտած վավերագրերի և այլ աղբյուրների մանրակրկիտ ուսումնասիրության և վերլուծության հիման վրա:

Խնդրո առարկայի լուսաբանման համար կարևոր նշանակություն ունեն Հայաստանի ազգային արխիվի տարբեր ֆոնդերում պահպանվող նյութերը<sup>2</sup>:

Հայկական հարցում Մեծ Բրիտանիայի քաղաքականության ուսումնասիրությունը անհնար է պատկերացնել առանց Լոնդոնի Փաբլիք Ռեքորդ Օֆիսի Արևմտյան Հայաստանին և Հայկական հարցին վերաբերող արխիվային նյութերի: Դրանց մի մասը<sup>3</sup> միկրոժապավենների տեսքով բերվել է Մեծ Բրիտանիայից և պահպանվում է Հայաստանի ազգային արխիվում: Աշխատության մեջ օգտագործվել են այդ նյութերը:

Կարևոր տեղեկություններ են հայտնում ուսումնասիրությանը նաև Հայաստանի ազգային արխիվում գետնիցված Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվի<sup>4</sup> բազմաթիվ ֆոնդերից կաղմված հավաքածուները, Ռուսաստանի պետական ռազմապատմական արխիվի<sup>5</sup> նյութերը:

<sup>1</sup>Walker J.Christopher, The Survival of a Nation,New-York, 1980.

<sup>2</sup>Հայաստանի Ազգային Արխիվ, ֆ. 43, ց.1, գգ.33, գ. 50; ֆ. 57, ց.5, գգ. 3,15,19,24,27,29,31,53,55, 57, 58,59, 65, 152; ֆ.113, ց.3,գ.1011; ֆ.227, ց. 4, գ. 39; ֆ. 282, ց.21, գ. 38; ֆ. 412,ց.1, գ. 606:

<sup>3</sup>Public Record Office / London /, Foreign Office, 25/ 2452; 195 /2375; 195 / 2449; 195 / 2450, parts 1,2,3,4,5,6.

<sup>4</sup>Архив Внешней Политики России, ф. Посольство в Константинополе, дд.1603. 1605, ф. Политический Архив, дд.1645, 1646, 1647, 1648, 3462, 3464, 3480.

<sup>5</sup>Российский Государственный Военно-Исторический Архив ,ф. 2000, он. 1, д. 3845; ф. 40, он.1, д.150.

ՀՀ Ե.Չարենցի անվան գրականությունը և արվեստի թանգարանի արխիվի<sup>1</sup> նյութերը հնարավորություն են տալիս լուսաբանել Հոնդոնի հայկական գաղութի գործունեությունը Հայկական հարցի վերաբացման ուղղությամբ: Այդ նյութերը լրացուցիչ աղբյուր են նաև Հայկական հարցի վերաբացման նկատմամբ Մեծ Բրիտանիայի դիրքորոշման լուսաբանման առումով:

Ուսումնասիրության ընթացքում օգտագործվել են տարբեր տեղությունների դիվանագիտական փաստաթղթերի տպագրված ժողովածուներ, ցարական Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության դիվանագիտական փաստաթղթերն ամփոփող մի քանի ժողովածուներ<sup>2</sup>, ընդգրկելով նաև Հայկական հարցի վերաբերյալ վավերագրեր: Դրանք հնարավորություն են տալիս լուսաբանել Արևմտյան Հայաստանի համար նախատեսվող բարենորոգումների շուրջ 1913-1914թթ. տեղի ունեցած դիվանագիտական քննարկումներն ու սլայքաբլիզ տեղությունների միջև: Հայկական հարցում բուն Մեծ Բրիտանիայի քաղաքականության րացահայտման համար անփոխարինելի են Մեծ Բրիտանիայի արագործնախարարության վավերագրերն ամփոփող փաստաթղթերի բազմահատոր ժողովածուները<sup>3</sup>: Այնտեղ զետեղված փաստաթղթերը հնարավորություն են տալիս լուսաբանել հաջորդաբար՝ օրեցօր տեղի ունեցած իրադարձությունները և Մեծ Բրիտանիայի քաղաքական նպատակների դրսևորումներում տեղի ունեցած փոփոխությունները:

<sup>1</sup>ՀՀ ԳԱ Թ, Արշակ Չոպանյանի ֆ., 2-րդ բաժին, գ.783; Ենովկ Արմենի ֆ., գ.1351; Վահան Սալեգյանի ֆ., գ. 7, գգ. 123, 382, 738:

<sup>2</sup>Сборник дипломатических документов. Реформы в Армении. 26 ноября 1912 - 10 мая 1914 года. / Министерство Иностранных Дел России /. Петроград, 1915; Будущее устройство Армении. По официальным дипломатическим документам Оранжевой книги, трактующей реформы в Армении/ Дипломатический архив, т.8/, Петроград, 1915; Раздел Азиатской Турции. По секретным документам бывшего Министерства Иностранных Дел. Под редакцией Адамова Е.А., 1924 ; Сборник договоров России с другими государствами /1856- 1917/, под редакцией Адамова Е.А., Козьменко И.В., Москва, 1952.

<sup>3</sup>British Documents on the Origins of the War /1898 - 1914/, Edited by G.P. Gooch and H.Temperley, London, 1936.

Սուլյն ուսումնասիրութեան համար լուրջ ազբյուրագիտական հիմք է Ջ. Կիրակոսյանի և Ռ.Սահակյանի կազմած դիվանագիտական փաստաթղթերի ժողովածուն<sup>1</sup>: Ժողովածուի 1912-1914թթ. վերաբերող բաժնում ընդգրկված են ոչ միայն ռուսական, այլև ֆրանսիական դիվանագիտական վավերագրեր: Դա հնարավորութուն է ընձեռում մոտենալ հարցի լուսաբանմանը ոչ միայն ռուսական և անգլիական, այլև ֆրանսիական դիվանագիտութեան գնահատականների տեսանկյունից:

Հայկական բարենորոգումների խնդիրը լուսաբանելու համար մեծ արժեք են ներկայացնում նաև ակադեմիկոս Վ.Միքայելյանի կողմից հրատարակված Կալգերական Գերմանիայի արտգործնախարարութեան քաղաքխիվի պաշտոնական և ոչ պաշտոնական փաստաթղթերը<sup>2</sup>: Այստեղ ամփոփված նյութերը նույնպես անմիջականորեն վերաբերում են մեր նախընտրած հիմնահարցին:

Մի շարք ժողովածուներ<sup>3</sup> օժանդակ դեր են խաղացել ուսումնասիրութեան ժամանակ: Դրանց մեջ տեղ զտած դիվանագիտական փաստաթղթերը, անմիջականորեն կապված չլինելով Հայկական հարցի վերաբացման 1912-1914թթ. ժամանակաշրջանի հետ, զգալիորեն օգնել են թեմայի բազմակողմանի լուսաբանմանը:

<sup>1</sup>Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում /1828-1923/, Խմբ.Կիրակոսյան Ջ.Ա., Սահակյան Ռ., Երևան, 1972:

<sup>2</sup>Армянский вопрос и геноцид армян в Турции / 1913-1919/. Материалы политического архива министерства иностранных дел каизеровской Германии, сборник под ред. Микаеляна В., Ереван, 1995.

<sup>3</sup>Լեոն Հայոց հարցի վավերագրեր, Թիֆլիս, 1915; Геноцид армян в Османской империи, сб. документов и материалов под ред. Нерсисяна М.Г., Ереван, 1983; Ключников Ю., Сабанин А., Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях., ч. 2, Москва, 1926; Материалы по истории франко-русских отношений за 1900-1914гг. Сборник секретных дипломатических документов бывшего императорского Российского Министерства Иностранных дел, Москва, 1926; Международные отношения в эпоху империализма. Документы из архивов Царского и Временного правительств 1878-1917, серия 2, 1900-1913, т.20, ч.2, 14.08.1912-17.10.1912. Москва, 1940; Хрестоматия по истории международных отношений. Выпуск 2, Африка и Передняя Азия, Москва, 1972.

Աղբյուրագրիտական նշանակութիւնն ունեն նաև մի շարք մենագրութիւններ և աշխատութիւններ, որոնց հեղինակները՝ հայ<sup>1</sup> և օտարագիր<sup>2</sup>, ուսումնասիրվող ժամանակաշրջանի ժամանակակիցներն էին: Նրանց աշխատութիւններում առանձին փաստերի, հաճախ նաև ժամանակի ընդհանուր պատմութեան վերլուծութիւնն է տրվում: Այդ պատճառով էլ անհրաժեշտ է քննադատական մոտեցում ցուցաբերել այդ գործերում տեղ գտած կարծիքներին, գնահատականներին և վերլուծութիւններին, քանի որ զրանց հեղինակները՝ հատկապես օտարագիր, միշտ էլ, որ անաչառ մոտեցումներ են դրսևորել ընթացիկ իրադարձութիւններին:

Աշխատութիւնում օգտագործվել են նաև 1912-1914թթ. հայկական, ռուսական և անգլիական մամուլի ընձեռած այն նյութերը, որոնք իրենց հերթին հնարավորութիւն տվեցին բացահայտել Հայկական հարցի նկատմամբ Մեծ Բրիտանիայի քաղաքականութիւնը:

Աշխատութիւնը XX դարի սկզբին Հայկական հարցի նկատմամբ Անգլիայի վարած քաղաքականութեան վերաբերյալ առաջին ուսումնասիրութիւններից մեկն է: Փորձ է արվել առաջին անգամ առանձին՝ ամբողջական աշխատութեան ձևով, ներկայացնել անգլիական քաղաքականութեան հետևողական դարգացումն ու դրսևորումը Հայկական հարցում 1912-1914թթ. ընդգրկող ժամանակահատվածում: Ուսումնասիրութեան մեջ նորովի մոտեցում է ցուցաբերվում և բացահայտվում է անգլիական գլխահագիտութեան գիրքորոշումը:

Առաջին անգամ գիտական շրջանառութեան մեջ են դրվում քննարկվող հիմնահարցի վերաբերյալ արխիվային նյութեր, մի շարք ժողովածուներում տեղ գտած փաստաթղթեր և վավերագրեր: Հարուստ աղբյուրների և նոր ուսումնասիրութիւնների հիման վրա աշխատութիւնում ներկայացվում են հետևյալ նորութիւնները.

<sup>1</sup>Մուշեղ արքեպիսկոպոս, Հայկական մղձավանջը. Զննական վերլուծութիւններ, Բոսթոն, 1916; Ջավեն արքեպիսկոպոս, Պատրիարքական յուշերու: Վավերագրեր և վկայութիւններ, Գահիրե, 1947; Արմեն Գարո, Ապրիլ օրեր, Պեյրոս, 1951; Փափազյան Վահան, Իմ յուշերը, Բ հատոր, Պեյրոս, 1952:

<sup>2</sup>Мандельштам А.Н., Младотурецкая держава, Москва, 1915; Сазонов С.Д., Воспоминания, Берлин, 1927; Buxton N. and Buxton H., Ibid., Pears E., Ibid.: Graves Ph., Ibid..

1. պաշտոնական Անգլիայի արձագանքի ու զրուսերման լուսաբանումը, որը հաջորդեց Ամենայն Հայոց կաթողիկոսի հանձնարարութեամբ մեծ տերութիւնների, այդ թիւում նաև Մեծ Բրիտանիային ուղղված օգնութեան դիմումին:

2. հիմնավորված է այն, որ Հայկական հարցի Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի ձևակերպման հեղինակ Մեծ Բրիտանիան Հայկական հարցի վերաբացման նախաձեռնութիւնը հանգամանքների բերումով հոժարակամ զիջում է Ռուսաստանին:

3. առաջին անգամ գիտական շրջանառութեան մեջ են դրվում փաստաթղթեր, որոնք հաստատում են, որ Արևմտյան Հայաստանի համար նախատեսվող բարենորոգումների հարցի քննարկումը 1913թ. սմռանը հետաձգվել էր միայն Մեծ Բրիտանիայի պատճառով: Հիմնավորվում է այն միտքը, որ անգլիական կառավարութեան վարած քաղաքականութեան պատճառով բարենորոգումների խնդիրը 1913թ. դրական լուծում չստացավ:

4. հայկական վիլայեթների համար նախատեսվող բարենորոգումների ռուսական նախագծի տապալման հիմնական պատճառը Գերմանական խմբավորման դիմադրութեան հետ, հավասարապես Մեծ Բրիտանիայի խարդավանքներն էին ենի-Քյոյի խորհրդաժողովի աշխատանքների ժամանակ:

5. ատենախոսութեան մեջ որպես նորույթ ներկայացվում է պատմագրութեան մեջ բավարար չափով չլուսաբանված անգլիական կառավարութեան դիրքորոշումը Հայկական հարցում 1913թ. աշնանն ու ձմռանը:

6. բացահայտվում են անգլիական դիվանագիտութեան ձգտումները՝ օգտագործել Հայկական հարցը Փոքր Ասիայում իրականացվող իրենց քաղաքականութեան համար:

Ուսումնասիրութեան մեջ տեղ գտած նյութը, հետևութիւններն ու եզրակացութիւնները կնպաստեն Հայկական հարցի, հայ ժողովրդի նոր շրջանի պատմութեանը նվիրված աշխատութիւնների ստեղծմանը: Աշխատութիւնը կարող է օգտակար լինել քաղաքագետների և դիվանագետների համար, որոշակի նշանակութիւն ունենալ հանրապետութեան արտաքին քաղաքականութեան մշակման առումով:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ  
ՎԵՐԱԲԱՑՄԱՆ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի ավարտը հաստատող Սան-Ստեֆանոյի պայմանագրում առաջին անգամ, որպես միջազգային դիվանագիտութայան հարց, արծարծվեց Հայկական հարցը: Արևելյան խնդրին առնչվող Հայկական հարցը 1878թ. հունիս-հուլիսին՝ Բեռլինի վեհաժողովում ենթարկվեց հետագա քննարկումների, ուր Փոքր Ասիայում եվրոպական երկրների և Ռուսաստանի շահերին հակասող ինքնավար Հայաստանի դադարափարը վերջնականապես թաղվեց մեծ տերությունների միացյալ ուժերով: Անգլիայի խարդավանքները և Ասիական Թուրքիան իրար մեջ բաժանել ձգտող եվրոպական մյուս տերությունների շահամոլ քաղաքականությունը Բեռլինի վեհաժողովում Հայկական հարցը վիժեցնելու գլխավոր պատճառն էր<sup>1</sup>:

Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը դիվանագիտական մի գործողություն էր՝ պահանջների և բարենորոգումների մի հոդված, որ 1878թ. սկսած արևմտահայերի համար բացում էր մի կողմից անպտուղ հույսերի և դատարկ խոստումների շրջան, մյուս կողմից՝ ավերածություն, անխնա ջարդերի ու կոտորածների, բարբարոսությունների և հալածանքների անվերջ ընթացք: Այդ հոդվածն իրապես դարձավ դժոխային կյանքի ստեղծման և դառը հիասթափությունների մի անկյունաքար:

Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածը դատապարտված էր դատարկ հնչյուն մնալու: Այն ստորագրած մեծ տերությունները՝ որպես դիվանագիտական պայքարի դործիք, չարա-

<sup>1</sup>Գ.Գալոյան, Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը 1878թ. Բեռլինի վեհաժողովում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1997, N 1, էջ 19:

շահելու էին Հայկական հարցը<sup>1</sup>. Իսկ սուլթան Աբդուլ Համիդ II-ը գործում էր այնպես, կարծես Բեռլինի համաձայնագրում խոսք անգամ չկար Հայկական հարցի մասին: Նա հիանալի հասկանում էր, որ «այնպիսի դատարկ բանի համար, ինչպիսին կարեկցանքն էր Փոքր Ասիայի լեռներում կորած մի փոքրաթիվ ժողովրդի նկատմամբ, Եվրոպան իրեն տհաճություններ էլ էր պատճառի»<sup>2</sup>:

Ինչպես ճիշտ կերպով նկատել է Կ.Պոլսում անգլիական դեսպանատան քարտուղար Լ.Նեկլը, Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը տասնյակ «տարիների ընթացքում մնաց միայն թղթի վրա: Եվրոպական տերություններին անհրաժեշտություն չեղավ հետեւել բարենորոգումները կյանքում իրագործելուն, քանի որ Բ. Դուռը չձեռնարկեց և ոչ մի բարենորոգում»<sup>3</sup>:

Եվրոպական տերությունների խոստումների սնանկությունն ու դիվանագիտական զանազան գործարքներն ուղղակի թե անուղղակի աղատություն էին տալիս սուլթանին, որը մարդասպաններին ոչ միայն չէր պատժում, այլև պարզեներ շնորհելով նոր հանցագործությունների էր մղում: Ավելին, նա կազմակերպում է քրդական համիդեական զնդեր: Զարդերի և ավերվածությունների հրդեհը դեռևս մի տեղ չմարած թուրքական բռնապետությունը մեկ ուրիշ տեղ էր այն բորբոքում:

Աբդուլ Համիդ II-ի մերձավոր զինակից, մեծ վեզիր Քյամիլ փաշան դեռևս այդ օրերին Հայկական հարցի լուծման միակ միջոց էր համարում հայերի ֆիզիկական իսպառ բնաջնջումը Թուրքիայում: Այդ հարցում նա Թուրքիայի զաշնակից էր համարում Անգլիային: Մեծ վեզիրը հայտարարել է. «Մենք և Անգլիան Հայաստան բառը ոչ միայն չենք ճանչեր, այլ այդ անունը հնչող կզակները պետք է ջախջախենք»<sup>4</sup>:

<sup>1</sup> E. К. Саркисян, Армянский вопрос и великие державы, "Литературная Армения", 1965, N 6, стр 4 Ա. Կարինյան, Իմպերիալիստական պատերազմը և Հայաստանը, Երևան, 1924, էջ 7:

<sup>2</sup> А. Джувелегов, Будущее Турецкой Армении, Москва, 1914, стр. 7.

<sup>3</sup> Լրաբեր հասարակական գիտությունների, 1997, N 1, էջ 7:

<sup>4</sup> Հայաստանի ազգային արխիվ /այսուհետ ՀԱԱ /, ֆ. 1120, գ. 55, ք. 29:

<sup>5</sup> «Փորձ», 1879, N 7-8, էջ 204-205:

1890-ական թվականների ջարդերն Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում արևմտահայության ցեղասպանության առաջին փորձն էր:

1894թ. Սասունի առաջին կոտորածից հետո, համաշխարհային հասարակական կարծիքի ճնշման տակ, մեծ տերությունները ստիպված էին միջամտել և զսպել սուլթանի կամայականությունները: 1895թ. մայիսի 11-ին անգլիական, ռուսական և ֆրանսիական դեսպանները հայկական նահանգներում բարենորոգումներ անցկացնելու ծրագիր ներկայացրեցին Բ. Դոանը<sup>1</sup>: Չնայած այդ ծրագիրը որոշ փոփոխություններով ընդունվեց Բ. Դոան կողմից, այն երբեք չգործադրվեց: Բարենորոգումների մասին այլևս խոսք չեղավ:

Անդլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը չկարողացան և մասամբ էլ չցանկացան գործադրել տալ իրենց համևտ ծրագիրը: Սակայն նրանց համար «Հայկական հարցը դարձել էր մի դուռ, որը հարմար պահին բացվում էր Օսմանյան կայսրության ներքին գործերին միջամտելու համար»: Իսկ Թուրքիայում իր ազդեցությունն ու դիրքերն ամրապնդող Գերմանիայի «եսամոլ քաղաքականությունից պատճառով էլ հայկական խնդիրը դարձավ ներքին և արտաքին կնճիռներով շրջապատված մի ղժվարայու ժ խնդիր»<sup>2</sup>:

Հայաստանում մտցվելիք բարենորոգումների ծրագիրը «սե ուրվականի նման հետևում էր Ելզրդ-Քյոչկի հրեշի և ծնեցնում նրա ուղեղում ջարդ ու կոտորածի գիվային ծրագրեր»<sup>1</sup>:


1890-ական թվականներից հետո ավելի սաստկացան արևմտահայերի ազգային և սոցիալական ճնշումները: Սուլթանն արևմտահայերի ազատագրական շարժումներն իրենց բնում խեղդելու նպատակով երկրի մի շարք շրջաններում հիմ-

<sup>1</sup>Օրագրի տեքստը տես Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), խմբ. Ջ. Ս. Կիրակոսյան, Ռ. Սահակյան, (այսուհետ Հայաստանը միջազգային դիվանագիտության...) Երևան, 1972, էջ 130-147:

<sup>2</sup>Дж. Куракосян, Западная Армения в годы первой мировой войны, Ереван, 1971, стр. 112.

<sup>3</sup>Ս. Չերազ, Հայկական խնդիր, Վենետիկ, 1917, էջ 29:

<sup>4</sup>Բ. Իշխանյան, Տաճկահայ խնդիրը և միջազգային դիվանագիտությունը, Թիֆլիս, 1907, էջ 30:



նեց գորանոցներ, ավագակային խմբեր<sup>1</sup>: Նա լավ էր հասկանում, որ բարենորոգումների հիմքում դրված էր հայերի և մահմեդականների թվի հարաբերությունը և ձգտում էր թեկոտորածով, թե՛ գաղթականությունը նվազեցնել հայերի քանակը հայկական վիլայեթներում: Էլ չենք խոսում այն մասին, որ թուրքական իշխանությունները միտումնավոր կերպով նաև կեղծում էին հայկական վիլայեթներում հայերի թվաքանակը, որպեսզի մահմեդականների թվային ուժն ու առավելությունն այնքան ծանրանա, որ ոչ մի կարևորություն չունենար այլևս բարենորոգումների իրականացումը: Այդ կերպ ձգտելով թյուրիմածություն մեջ պցել նաև մեծ տերություններին՝ համիդյան կառավարությունը բնաջնջված և արտաքսված հայերի փոխարեն բնակեցնում էր մահմեդական տարրեր, գլխավորապես քրդեր և մուհաջիրներ: Ա-Դոն գրում էր, որ «Հայոց Ձորում քրդերը եկան հաստատվեցին հիմնականում 1896թ. կոտորածներից հետո»<sup>2</sup>:

Քուրդ աղաները, օգտվելով սուլթանի հովանավորությունից, բռնագրավեցին հայկական հողերը և դարձան ընդարձակ կալվածքների տերեր, ծաղկուն դաշտերը վերածեցին արտավայրերի՝ երկրի գյուղատնտեսությունը կտ տանելով դեպի ֆեոդալական հետամնաց կյանք:

1878-1908 թթ. համիդյան շրջանում ոչ ընդհանուր թուրքիայի, ոչ էլ մասնավորապես Արևմտյան Հայաստանի բարեկարգություն տեղի չունեցավ: Մինչդեռ թուրքական իշխանությունների վարած քաղաքականությունը հանգեցրեց նրան, որ «երկիրը տնտեսապես քայքայվեց, բարոյապես սնանկացավ, զինվորականապես անպետք և քաղաքականապես ոչնչություն դարձավ»<sup>3</sup>:

Աբգուլ Համիդի վարչակարգն անհանդուրժելի էր ոչ միայն հայերի, այլև Օսմանյան կայսրության ոչ թուրք մյուս ազգերի համար: 1908. հունվարին թուրքիայում Անգլիայի դեսպան Նիկոլաս Օ'Կոնորը (N. O'Conor) արտաքին գործերի նախարար Էդուարդ Գրեյին (E. Grey), հայտնում էր. «Աբգուլ Համիդի կառավարության Մակեդոնիայի, Հայաստանի և այլ

<sup>1</sup>ՉԱ Ա, Ֆ.1120, գ. 55, ք. 48:

<sup>2</sup>Ա-Դո, Վանի, Բիթլիսի, Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912, էջ 183:

<sup>3</sup>Վ. Փափազյան, Իմ յուշերը, Բեյրութ, 1952, Բ հատ., էջ 68:

ճնշված ազգությունների նկատմամբ տարվող քաղաքական-նույնությունը դատապարտելի է և նույնիսկ գարշելի»<sup>1</sup>:

«Սուլթանն իր բռնակալությամբ, լրտեսության ու ճնշումի վարչակարգով իր դեմ էր հանել թուրք մտավորական առաջագիտակցության տարրերը նույնպես»<sup>2</sup>:

Նման պայմաններում երեք տասնյակ տարիներ շարունակ մի բուռն ճնշված ժողովուրդ հույսերով լի աչքը հառել էր եվրոպական տերությունների և Ռուսաստանի վրա, հանդիսավոր խոստումների, մշակված բարենորոգումների իրագործում էր սպասում պաշտոնական եվրոպայից: Սակայն եվրոպական մոռացության էր մատնել Հայկական հարցի լուծումը և սպասումների ու անորոշության մեջ գցել արևմտահայությանը:

1908թ. թուրքիայում հաստատվեցին սահմանադրական կարգեր: Դա մի անսպասելի և իրական անակնկալ էր, որը սակայն նոր հիասթափություններ պետք է բերեր արևմտահայությանը: Սահմանադրության հաստատումն Օսմանյան կայսրությունում թուրք և թուրքահայատակ ժողովուրդների զանգվածային պահանջի հետևանք էր, այլ թուրք մտավորականություն, քաղաքական գործիչների և, հատկապես, բանակի սպայակցան վերնախավի կողմից կազմակերպված հեղաշրջման արդյունք: Սուլթան Համիդ II-ը, քաղաքական իմաստությունը զիջման մեջ տեսնելով, 1908թ. հուլիսի 10-ին հռչակեց 1876թ. Սահմանադրության վերահաստատումը: Երիտթուրքերը սուլթանին դահընկեց չարեցին, սակայն, կենտրոնացնելով իշխանությունը սեփական ձեռքերում, դարձան դրություն իրական սերը:

Օսմանյան կայսրության ժողովուրդների մեջ ամենամեծ խանդավառություն, ոգևորություն և անկեղծություն նոր կարգերի դիմավորողները եղան հայերը<sup>3</sup>: Արևմտահայերն իրապես հավատացին, թե սահմանադրություն հռչակող սուլ-

<sup>1</sup>Ա.Կիրակոսյան, Բրիտանական դիվանագիտությունը եվ արևմտահայության խնդիրը, Երևան, 1999, էջ 379:

<sup>2</sup>Յ. Պաստերնակ, Հայոց պատմություն, Անթիլիաս-Լիբանան, 1958, Բ հատոր, էջ 177:

<sup>3</sup>Վ. Փափազյան, Սշվ. աշխ., Բ հատոր, էջ 49; Յ. Պաստերնակ, Հայոց, Սշվ. աշխ., էջ 179; Գ. Ա. Գուբոն, Последние избуения в Армении, Факты и ответственность. Самая черная страница новейшей истории, Петроград, 1916, стр. 18.

Թանական ֆերմանը /հրամանագիրը/ վերացրել էր բռնատիրական կարգերը և հայաժանքները: Նրանց թվում էր, թե երիտթուրքերի հռչակած՝ ազատութուն, արդարութուն, հավասարութուն, եղբայրութուն կարգախոսներով խտացված պետական նոր կարգերը կստեղծեն իրենց բողոքներին և դժգոհութուններին գոհացում պատճառող նոր կացութուն: Հեղաշրջումից հետո մի քանի շաբաթ շարունակ կայսրության տարածքում ցույցեր և հանրահավաքներ էին տեղի ունենում: Դրանց ժամանակ թուրքերն ու հայերը, մահմեդականներն ու ոչ մահմեդականները գրկախառնվում էին, զանգվածաբար եղբայրանում: Ամենուրեք տիրող ցնծության և խանդավառության մասին իրենց կառավարությանն էին հայտնում թուրքիայում անգլիական հյուպատոսներն ու դեսպանը՝

Արևմտահայերը շարունակում էին հավատալ երիտթուրքերին այնքան ժամանակ, մինչև հենց իրենք՝ երիտթուրքերը, չկոտորեցին այդ հավատը՝:

Սահմանադրության հռչակումից անմիջապես հետո, երիտթուրքերը մեղմեցին հակահայկական քաղաքականութունը և որոշ բարեփոխումներ անցկացրեցին հայերի օգտին: Հայաժանքները դադարեցին, առժամանակ արգելվեց հակահայկական քարոզը: Երիտթուրքերը վերացրեցին սուլթանի կողմից հաստատված արտակարգ վարչակարգը, որն արգելում էր հայերին տեղափոխվել գավառից գավառ, գյուղից գյուղ կամ մեկնել արտասահման: Թուլյատրեցին կոտորածների ու հալածանքների հետևանքով արտասահման փախած հայերին հետ վերստանալ<sup>3</sup>:

Բանտերից և աքսորավայրերից արձակվեցին բազմաթիվ հայ կալանավորներ: Երիտթուրքերը միաժամանակ դադարեցրին հայգուկների հետապնդումը, որի շնորհիվ շատեր, դուրս գալով թաքստոցներից, վերադարձան տուն:

Երիտթուրքերը ցրեցին սուլթանի կողմից հայերին հալածելու և բնաջնջելու համար հավաքագրված ոճրագործ խմբերը, ինչպես նաև վերացրեցին Արևմտյան Հայաստանի տարբեր

<sup>1</sup> J Christopher Walker, The Survival of a Nation, New-York, 1980, p.181

<sup>2</sup> Г.А.Губенс, указ. соч., стр. 18.

<sup>3</sup> Մ.Ս.Համբարյան, Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1979, էջ 20:

վայրերում հայկական շարժումները ճնշելու նպատակով հաստատված զորանոցները: Երկրի որոշ մասերում երիտթուրքերը վերջ տվեցին քրդերն ավազակութուններին, որի շնորհիվ գյուղացիները կարողացան փոքր-ինչ շունչ քաշել<sup>1</sup>:

Հայերին ներգրավեցին վարչական աշխատանքներում և պաշտոններ տվեցին: Արևմտահայերն իրավունք ստացան ներկայացուցիչներ ունենալ օսմանյան խորհրդարանում:

1908թ. սեպտեմբերին սկսեց դործել արևմտահայ Ազգային Սահմանադրությունը, վերաբացվեց Ազգային ժողովը, որոնց գործունեությունն արգելված էր սուլթանի կողմից 1891թ.<sup>2</sup>:

Աշխուժացավ նաև մշակույթային կյանքը, մամուլը: Վերացվեց դրաքննությունը, անարգել հրատարակվում էին նոր գրքեր և թերթեր: Կարգի էին բերվում հին դպրոցները և բացվում նորերը: Հիմնվեցին գրադարաններ, ակումբներ, միություններ: Բոլոր ազատությունների մեջ ամենից շատ հայերին բարոյական գոհացում էր պատճառում հայ քաղաքական կազմակերպությունների գործունեությունն ազատությունը:

Նշված բարեփոխումները երիտթուրքերը կատարեցին իրենց դիրքերն ամրապնդելու համար ինչպես երկրի ներսում, այնպես էլ Եվրոպայի առջև: Երիտթուրքերը ձգտում էին հեղինակություն ձևառք բերել և, հայերի համակրանքը շահելով, կանխել արևմտահայերի ազգային ազատագրական պայքարը: Երիտթուրքական շարժման գլուխ կանգնած էին, ինչպես նշում է Ա. Գարոն «մի խումբ թուրք հայրենասերներ, որոնց նպատակն էր ամեն հնարավորություն գիտել արտաքին աշխարհին ցույց տալու, թե տաճիկ կառավարությունը մտկ էր արդեն հիմնական բարենորոգումների շրջանը և, հետևաբար, այլևս կարիք չկար արտաքին միջամտություն՝ ճանկատանի հպատակ ցեղերի իրավունքները պաշտպանելու համար»<sup>3</sup>:

Հասնելով իրենց նպատակին՝ երիտթուրքերն ամբողջովին բացահայտեցին իրենց վերաբերմունքը ոչ միայն հայերի, այլև մյուս ազգային փոքրամասնությունների նկատմամբ: Նրանք ցույց տվեցին իրենց իրական դեմքը: Երիտթուրքերն

<sup>1</sup>Ա.Ս. Համբարյան, նշվ. աշխ., էջ 23:

<sup>2</sup>Վ. Փափազյան, նշվ. աշխ., Բ հատոր, էջ 70:

<sup>3</sup>Արմեն Գարո, Ապրած օրեր, Պեյոութ, 1951, էջ 212:

անփոփոխ էին թողել ոչ միայն համիդյան հայահալած, այլև հայաջինջ քաղաքականությունը: Հակահայկական քարոզը սկսվեց հեղափոխությունից քիչ հետո և տալիս էր իր արդյունքները: 1908թ. աշնանն արդեն տեղի էին ունենում հայթուրքական ընդհարումներ: 1909թ. հունվարին ռուսական հյուպատոսը հրզրումից հաղորդում էր, որ հայերի նկատմամբ մահմեդականների ատելու թյունն աճում էր ոչ թի օրերով, այլ ժամերով<sup>1</sup>:

Անգամ տխրահռչակ թուրքական սահմանադրությունը, որն, ինչպես ենթադրում էին, պետք է երաշխավորեր բոլոր օսմանահպատակների հավասարությունն օրենքի առջև և, ընդհանրապես, օրինականության և կրոնի հանդուրժողականություն հաստատելու, հիմքում չփոխեց իրերի արմատացած դասավորվածությունը<sup>2</sup>:

Երիտթուրքերի քաղաքականության ցայտուն արտահայտությունը եղավ 1909թ. ապրիլի 1-ի ջարդը Ադանայում: Այդ օրերին Կիլիկիայում և Հալեպի նահանգի հայաբնակ վայրերում կոտորվեց շուրջ 30000 հայ: Ջարդի ականատես Հելլեն Գիբբոնսը գրում էր, որ «հայերին կոտորում էին անխնա, Ադանայի կոտորածը շատ անգամ ավելի սարսափելի էր, քան համիդյան ջարդերը»<sup>3</sup>: Տասնյակ տարիներ շարունակ Թուրքիայում ծառայող անգլիացի լրագրող Էդվին Փիրսը (Edvin Pears) իր գրքում գրում է, որ այդ կոտորածը, ինչպեսև Հայաստանում իրագործված մյուս կոտորածները, որոնց համար պատասխանատու էր Աբդուլ Համիդն իր ավագակախությամբ, սկսվեց և ավարտվեց մեթոդապես մշակված և ծրագրված ձևով<sup>4</sup>:

Երիտթուրքերն ամեն կերպ աշխատում էին անմեղ երեւալ մեղադրում էին հայերին և հայ ազգային կուսակցություններին սադրիչ գործողությունների և ապստամբական ձգտումների մեջ: Նրանք փորձում էին Ադանայի ոճրագոր-

<sup>1</sup>Геноцид армян в Османской империи, сборник документов и материалов, под редакцией М.Г.Нерсесяна, Ереван, 1983, стр. 188; Архив внешней политики России (далее АВПР) ф. Политархив, д. 1645, л. 14.

<sup>2</sup>Ю. Веселовский, Трагедия Турецкой Армении, Москва, 1915, стр. 19; R.H. Davison, The Armenian Crisis 1912-1914, New-York, 1948, p. 3

<sup>3</sup>Hellen Gibbons, The Red Rugs of Tarsus. Paris, 1919, p 10.

<sup>4</sup>E.Pears, Turkey and It's People, London, 1912, p.289.

ծուծյունը բարդել Աբդուլ Համիդի վրա, օգտվելով այն Հան-  
գամանքից, որ այդ ջարդերը համընկան սուլթանի կազմակեր-  
պած պետական հեղաշրջմանը: Սակայն դա չհաջողվեց երիտ-  
թուրքերին: Չնայած այդ օրերին եվրոպական մամուլն Ադա-  
նայի ջարդը ներկայացրեց իբրև համիդյան ջարդարար քաղա-  
քականության վերջաբան, և՛ Թուրքիայի, և՛ Եվրոպայի, և՛  
Ռուսաստանի դիվանագիտական ու հասարակական շրջանները  
քաջ գիտակցում էին, որ ջարդի կազմակերպիչը երիտթուրքա-  
կան կառավարութունն էր<sup>1</sup>:

Մերսինի անգլիական փոխհյուպատոս Դուլթի Ուայլին  
(C.H.M. Doughty Wylie), որն ականատես էր Ադանայի դեպքե-  
րին, փորձել էր անգամ կանգնեցնել հայերի ջարդը<sup>2</sup>: Նա  
կտրականապես ժխտում էր հայերի կողմից որևէ սադրիչ հա-  
կախառավարական գործողութուն և վկայում էր, որ տեղական  
իշխանությունները նախապես տեղյակ էին նախապատրաստ-  
վող ջարդի մասին<sup>3</sup>: Հետագայում Կ.Պոլսում անգլիական դես-  
պանության հավատարմատար Չ.Մարլինգը (Ch.Marling) հա-  
վաստում էր, որ երիտթուրքերն են եղել ջարդի անմիջական  
կազմակերպողները: Այդ էր վկայում նաև Ադանայում անգ-  
լիական փոխհյուպատոս Վ.Մեյոյուսը (D. W. Matthews)<sup>4</sup>:

Ադանայի կոտորածի կազմակերպիչը և իրականացման  
հեղինակը «իթթիհատն» էր: Երիտթուրքերը իրագործեցին այն,  
ինչ երկար տարիներ երազում էր թուրք բուրժուազիան: 'Իրա  
նպատակն էր. 1. Կիլիկիայի հայության թվի նվազեցումը,  
2. տնտեսական ներուժի թուլացումը, երկրի հարստությունը  
թուրքերի ձեռքում կենտրոնացնելը: Վերը նշվածը իթթիհա-  
տականների ծրագրային գործունեության մի մասն էր<sup>5</sup>:

<sup>1</sup>Геноцид армян в Османской империи, сборник документов и материалов., стр. 194-195, под редакцией М.Г.Нерсисяна, Ереван, 1983; Г.А. Губбонс., там же, с тp.8; N.Buxton and H. Buxton, Travel and Politics in Armenia, London, 1914, p. 43.

<sup>2</sup>Teleford Waugh, Turkey. Yesterday, Today and Tomorrow, London, 1930, p. 122.

<sup>3</sup>M. Somakian. Empires in Conflict. Armenia and the Great Powers 1895-1920, London- New- York, 1995, p.42.

<sup>4</sup>Public Record Office ( London), Foreign Office (այսուհետև FO), 195 / 2450, pt.1, p.43.

<sup>5</sup>Ս.Ասալահ-Պյուլյան, Պատասխանատուները, Պեյրուք, 1974, էջ 108  
Ռ.Գասպարյան, Կիլիկիահայությունը 20-րդ դարի սկզբին, Ե., 1999, էջ 19-34:

Կիլիկիայի ջարդերը սկիզբն էին երիտթուրքերի համիդյան ոճրագործութեան, որ կանգ չէր առնելու բնավ, մինչև որ սպասելով հարմար ժամանակի՝ ամբողջովին ավարտեր բնաջնջման իր գործը<sup>1</sup>: Ազանայի ջարդը ցույց տվեց, որ երիտթուրքերը ոչինչով չէին տարբերվում «ծեր» թուրքերից<sup>2</sup>, որ իթիհիհատականները նույնպիսի ու ավելի ջարդարար թուրքեր էին, ինչպիսին էին սուլթանականները<sup>3</sup>: Ինչպես հայտնում էր Կ.Պոլսում Անգլիայի դեսպան Զ.Լոութերն (G.Lowther) էդ. Գրեյին՝ «վարչակարգի փոփոխումը չէր նշանակում էութեան փոփոխում»<sup>4</sup>:

Ազանայի դեպքերը մեծ հիասթափություն առաջացրին արևմտահայերի մեջ և բացահայտեցին երիտթուրքերի էությունը: Հետզհետե պարզվեց, որ ազատությունը, սահմանադրությունը, օսմանցիությունը, ինչպես նաև արդարությունն ու ազգային իրավունքներն իթիհիհատը մի կերպ էր հասկանում ու ըմբռնում, հպատակ ազգերը՝ այլ: Ավելացավ այն սթափ հայերի թիվը, որոնք հասկանում էին, որ երիտթուրքերը նոր աղետներ են պատրաստում հայ ժողովրդի համար:

Մինչ Ազանայի ջարդը՝ բնականուր խանդավառութեան մթնոլորտում հայ մտավորականությունը և ազգային ազատագրական շարժման մի շարք ներկայացուցիչներ ու կազմակերպություններ չարաչար խաբվեցին՝ հավատալով երիտթուրքերի կեղծ խոստումներին: Առավել սթափ էին նայում իրականությանը և չէին հավատում սահմանադրությանը հայդուկներից շատերը: Նրանք կոչ էին անում չհավատալ թուրք կառավարության անկեղծությունը և զրադվել ինքնապաշտպանության խնդրով:

Հրապարակի վրա եղած բոլոր հայ կուսակցություններն օսմանյան սահմանադրության առաջին իսկ օրերից ցած գրե-

<sup>1</sup>Մուշեղ արքեպիսկոպոս, Յայկական մղձավանջը, քննական վերլուծություններ, Բոստոն, 1916, էջ 11:

<sup>2</sup>W.Liew Williams, Armenia: Past and Present. A Study and a Forecast, London, 1916, p 96, Ph. Graves, Briton and Turk, London- Melbourn, 1940, p 136, Людовик де Контансон, Реформы в Азиатской Турции. Армянский вопрос, М., 1914, стр 34.

<sup>3</sup>Ս. Ամուրյան, Յայ դատը, հայ ժողովրդի ազատագրական ճիգերը, Թեհրան, 1977, էջ 92:

<sup>4</sup>FO, 195 / 2450, pt. 3, p.1.

<sup>5</sup>Ատոմ, Բարենորոգումների հարցը, Կ. Պոլիս, 1914, էջ 59:

ցին գեները, կարծելով թե հասել են իրենց նպատակին: Կուսակցությունները ձգտում էին փոխադարձ վստահության և բարեկամության հիման վրա զարգացնել հարաբերությունները թուրք ժողովրդի և իշխանությունների հետ<sup>1</sup>: Այդ մտադրությունն արտահայտվում էր թուրք կուսակցությունների հետ հայ կուսակցությունների՝ դաշնակցականները՝ իթթիհատականների, հնչակյաններն՝ իթիլաֆականների, համադործակցության մեջ: Հայ երկու կուսակցություններն էլ Հայկական հարցի լուծումն այժմ համարեցին թուրքիայի ներքին գործ և Արևմտյան Հայաստանի համար պահանջում էին ոչ թե անջատում, այլ ինքնավարություն: «Ինքերանքով ընդունեցինք օսմանյան սահմանադրությունը,՝ գրում էր Միք. Վարանդյանը,՝ ոչ մի անջատողական ձգտում, ոչ մի խոսք եվրոպական միջամտության, ճշ-րգ հողվածի մասին...»<sup>2</sup>:

Ի տարբերություն Դաշնակցությանը և Հնչակյան կուսակցության՝ 1908թ. հոկտեմբերին արևմտահայ իրականություն մեջ ձևավորված նոր՝ հայ Սահմանադրական Ռամկավար կուսակցությունն իր ծրագրի մեջ միայն ակնարկում էր ինքնավարության մասին, առաջ չքաշելով այդ պահանջարկը: Ռամկավարները չհամագործակցեցին իթթիհատի կամ իթիլաֆի հետ, սակայն առանձին հարցերում պատրիարքարանի միջոցով հաղորդակցվում էին թուրքական կառավարիչներին: Նրանք նպատակ չունեին անջատել հայերին Օսմանյան կայսրությունից և առաջնորդվում էին «հայությունն օսմանություն հետ» բնաբանով<sup>3</sup>:

Վերակազմյալ Հնչակյան կուսակցությունը նույնպես անջատողական ոչ մի ձգտում չուներ և արևմտահայերի փրկությունը տեսնում էր ոչ թե թուրքիայից անջատվելու, այլ նրա վերակազմավորման, օսմանյան ժողովուրդների ընդհանուր առաջադիմության մեջ<sup>4</sup>: Այդուհանդերձ, նրանք մոտացություն չէին տալիս ազգային ինքնապաշտպանության դադարները: Տեսնելով իթթիհատի վերսկսած հալածանքները

<sup>1</sup>Լ. Չորմիսյան, Կուսակցությունները, Բեյրութ, 1965, էջ 59:

<sup>2</sup>Միք. Վարանդյան, Հ.Յ.Ղազնակցության պատմություն, Բ Հատոր, Փարիզ, 1950, էջ 9:

<sup>3</sup>Կ.Իզմիրլյան, Հայ ժողովրդի քաղաքական ճակատագիրը անցյալն և ներկայիս, Բեյրութ, 1964, էջ 145:

<sup>4</sup> ՀԱԱ, ֆ.282, ց.21, գ.38, ք.1:

և թալանի քաղաքականությունը Հայերի նկատմամբ՝ նրանք խիստ քննադատուծյան ենթարկեցին իթթիհատին և Ադանայի Ջարդի ամբողջ մեղքը դրեցին երիտթուրքերի վրա<sup>1</sup>:

Եթե Հեղափոխությունից առաջ Սոցիալ-Դեմոկրատական Հնչակյան կուսակցությունը խուսափեց երիտթուրքերի հետ համագործակցելուց, ապա սահմանադրության հռչակումից հետո համալրեց նրանց հանդեպ ընդդիմություն կազմը: Օգնություն ակնկալիքով հնչակյանները մերձեցան «Ազատություն և համաձայնություն» /«Հյուրինս վե իթիլաֆ»/ կուսակցությունը և 1912թ. փետրվարի 7-ին համաձայնություն կնքեցին իթիլաֆականների հետ: Նրանք պարտավորվում էին հարգել օսմանյան պետության ժողովրդապետական սկզբունքները, պաշտպանել երկրի տարածքային ամբողջականությունը, մերժելով անջատողական ամեն մի փորձ՝ հասնել ազգերի իրավահավասարությունը, ժխտելով մեկ ազգի դերիշխանությունը մյուսի նկատմամբ պաշտպանել արևմտահայերի ազգային Սահմանադրությունը:

Սակայն իթիլաֆը ոչ թե համագործակցում էր հնչակյանների հետ, այլ օգտագործում և խաբում էր նրանց՝ ճիշտ այնպես, ինչպես իթթիհատը՝ դաշնակցականներին: 1912թ. հուլիսի 9-ին իշխանության գալուստ պես իթիլաֆականները թշնամական դիրք բռնեցին կայսրության բոլոր ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ և հիմնականում շարունակեցին իթթիհատի ներքին և արտաքին քաղաքականությունը: Հնչակյանները, տեսնելով թուրք կառավարիչների ազգայնամուլ և խաբեբայական վարքագիծը, հրաժարվեցին համագործակցության գաղափարից և կոչ արեցին հայերին՝ դիմել ինքնապաշտպանության: Նրանք Հայկական հարցի լուծումը նորից կապեցին մեծ տերությունների հետ:

Դաշնակցությունը շարունակեց իթթիհատի հետ համագործակցության քաղաքականությունն Ադանայի Ջարդից հետո ևս: Երիտթուրքերը խոստացել էին առաջիկա խորհրդարա-

<sup>1</sup>М.Кочар, Армяно-турецкие общественно-политические отношения и Армянский вопрос, Ереван, 1988, стр. 210-211.

<sup>2</sup>Պատմություն Սոցիալ-Դեմոկրատական Հնչակյան կուսակցության 1887-1962, Ա հատոր, Բեյրութ, 1962, էջ 348, Հայ ազգային և Հայաստանի ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ (1885-1914թթ.), Ե., 2003, էջ.53:

նական ընտրություններին Դաշնակցությանը տալ 20 տեղ: 1909թ. հեղաշրջումից հետո երիտթուրքերի համար ստեղծվեց մի խարխուլ կացություն, որը անհրաժեշտ ու կարևոր էր դարձրել դաշնակցականների աջակցությունը նրանց համար<sup>1</sup>: Սակայն Դաշնակցությունը գնալով խաղալիք էր դառնում իթթիհատի ձեռքին և արտամղվում հասարակական կյանքից:

1912թ. խորհրդարանական ընտրությունները սառնություն մտցրեցին կուսակցությունների հարաբերությունների միջև: Խոտուսցված 20 պատգամավորական տեղերի փոխարեն Դաշնակցությունը 12 տեղ ստացավ: Լեոյի կարծիքով.«Այս փաստորեն նշանակում էր, թե բարեկամները խաբել են բարեկամներին»<sup>2</sup>: Լավ հասկանալով երիտթուրքերի վարած քաղաքականության իմաստը, Կ.Պոլսում անգլիական ղեկավարության հավատարմատար Չ. Մարլինդը հեռագրում էր արտգործնախարար Է.Գրեյին, որ, եթև «Միություն և առաջադիմություն» կոմիտեն պահպաներ իշխանությունն իր ձեռքում և շարունակեր սկսած քաղաքականությունը, որը հավանաբար կբերեր հայերի գինաթափմանը, ճիշտ այնպես, ինչպես բուլղարացիների դեպքում, ապա անշուշտ կառաջացներ Դաշնակցության հիասթափությունը<sup>3</sup>:

Հետզհետե տոգի ունեցող ղեկավարներ հաստատեցին Հ.Յ.Դաշնակցությունը չարաչար խաբվել էր իթթիհատի կողմից:

Ճնշելով սուլթան Աբդուլ Համիդի կողմից 1909թ. մարտի 31-ին /ապրիլի 13-ին/ կազմակերպած հեղաշրջման փորձը երիտթուրքերն ամբողջովին հաստատեցին իրենց իշխանությունը: Նրանք հիմնովին մոռացության տվին երկրի ժողովրդավարացման և զարգացման իրենց խոստումները<sup>4</sup>: Երիտթուրքերի համար կառավարելը նախ և առաջ նշանակում էր իշխանության պահպանում: Նրանք ոչ միայն անընդունակ գտնվեցին, այլև չցանկացան բարեփոխություններ մտցնել կայսրության ներքին կյանքի մեջ: Օսմանյան տիրա-

<sup>1</sup>Յ.Աճառյան, Տաճկահայոց հարցի պատմությունը սկզբից մինչ 1915թ, Նոր-Նախիջևան, 1915, էջ 62-63:

<sup>2</sup>Լեո, Անցյալից, էջ 142:

<sup>3</sup>Մ. Somakian, Ibid., p. 43.

<sup>4</sup>А.Ф. Муллер, Остоманская империя (Султанская Турция), Москва, 1946, стр. 33.

պետութեան տակ ընկած քրիստոնյա հպատակներին համար բարեփոխումներ չիրագործելու երիտթուրքերի քաղաքականութիւնն ուներ իր քաղաքական, ազգային, տնտեսական, կրօնական պատճառները<sup>1</sup>. ոչ թուրք տարրերի զարգացման մեջ երիտթուրքերը վնաս և չարիք էին տեսնում իրենց զիրքին, ուժին և ապագային:

Երիտթուրքերը չապահովեցին քաղաքացիների տարրական իրավունքները: Իթիհատականները չստեղծեցին անձի և գույքի ապահովվածութիւն: Իրավունքն ու օրենքը գոյութիւն ունեին միայն արտաքնապես, քանի որ քրիստոնյա հպատակների վրա իրականում չէին տարածվում: Բարեփոխումներ անցկացնելու փոխարեն երիտթուրքական վարչակարգը ավելի սաստկացրեց սոցիալ-տնտեսական կեղեքումները: Երիտթուրքերը հայտարարեցին, որ թուրքիայում սոցիալական խնդիր գոյութիւն չունի ընդհանրապես<sup>2</sup>:

Երիտթուրքերը չկամեցան կարգավորել նաև հողային հարցն Արևմտյան Հայաստանում: Ինչպես հայտնում էր Էրզրումից անգլիական հյուպատոս Մ. Գրեգորին /Mc.Gregory/ անօրինական ձևով զավթած հողերը հայերին վերադարձնելու փոխարեն կառավարութիւնը մտադիր էր խլել նրանց պատկանող մնացած հողերը<sup>3</sup>: Իթիհատականները ոչ միայն ուժեղացրեցին սակավահողութիւնն ու հողազրկումը, այլև պաշտպանելով աղաների շահերը, նպաստեցին ֆեոդալական իշխանութեան տարածմանը պուղագիական նոր զանգվածների վրա<sup>4</sup>:

Ազգային քաղաքականութեան մեջ երիտթուրքերը նույնպես գործնականում չէին ցանկանում որևէ փոփոխութիւն մտցնել: Խոսքով կայսրութեան բոլոր ժողովուրդների իրավահավասարութիւնը հուշակած երիտթուրքերը ցանկանում էին

<sup>1</sup>Այդ մասին տես Գր. Չոիրապ, Հայկական հարցը փաստաթղթերու լուսին տակ, Պեյրուք, 1973, էջ 19-22:

<sup>2</sup>Б.А. Борьян, Армения.Международная дипл оматия у СССР, Часть 1, Москва-Ленинград,1928, стр. 283.

<sup>3</sup>Е.В. Тарле, Европа в эпоху империализма, 1871-1919., Соч. в 12 томах, т.5, Москва,1958, стр. 201; В.А. Гурко-Кряжин, История революции в Турции, М.,1923, стр. 54.

<sup>4</sup>FO, 195 / 2375, pp 237-238, 274. 307, 340

<sup>5</sup>Երիտթուրքերի հողային քաղաքականութեան և արևմտահայերի դրութեան մասին ավելի մանրամասն տես Ա Ս Համբարյան, Գլխ. աշխ., էջ 48-105:

հենց այդ կարգախոսով էլ համոզել, թե Թուրքիայում այլևս ազգային հարց չկա, որ այն մեկընդմիշտ լուծել է հեղափոխութիւնը: Առաջ քաշելով պանօսմանիզմի դաղափարախոսութիւնը՝ երիտթուրքերը քարոզում էին, որ Թուրքիայում այսուհետ չկան մահմեդականներ, քրիստոնյաներ կամ այլ ժողովուրդներ, այլ կա միայն մի ազգ՝ օսմանցի: Կ.Պոլսում անգլիական դեսպանը հաղորդում էր Անգլիայի արտգործնախարարութեանը, որ երիտթուրքերի համար «օսմանցի» անկասկած նշանակում էր «թուրք», իսկ «օսմանացման» քաղաքականութիւնը՝ պարզապէս թուրքական սանդուղի ոչ թուրք տարրերը փոշիացնելու քաղաքականութիւնն էր<sup>1</sup>: Որդեգրելով ձուլման քաղաքականութիւնն այլազգիների նկատմամբ՝ «Միութիւն և առաջադիմութիւն» կազմող երիտթուրքերն ազգայնամոլութեամբ «ծեր» թուրքերից էլ ավելի կատաղի կառավարութիւն ստեղծեցին և գծագրեցին բոլորին «օսմանցի» դարձնել<sup>2</sup>:

Իթիբիհատի պարագլուխները գտնում էին, որ այլազգիների ձուլման համար անբավարար էր միայն համոզման եղանակը և անհրաժեշտութեան դեպքում պետք է գենք գործածվեր<sup>3</sup>: Ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ նոր վարչակարգի «ուժային» քաղաքականութիւնն օրինաչափութիւն դարձավ: Պետք է նշել, որ եթե ոչ թուրք մահմեդական բնակչութեան հանդեպ երիտթուրքերը ձուլման ուղղութիւն էին բռնել, ապա քրիստոնյաների նկատմամբ կիրառում էին ֆիզիկական բնաջնջման քաղաքականութեանը<sup>4</sup>: Երիտթուրքերի ազգայնամոլ քաղաքականութիւնը իր գաղաթնակետին հասավ Հայկական հարցում: Լ.Օշերովսկիու տվյալներով՝ Թուրքիայի տարածքում բնակվող բոլոր ժողովուրդներից ամենից շատ բռնութիւնների ու ջարդերի էին ենթարկվում հայերը<sup>5</sup>: Կ.Պոլսում ռուսական դեսպանութեան թարգման Ա.Մանդելշ-

<sup>1</sup>V. Dadrian, The History of the Armenian Genocide, Oxford, 1995, p. 179

<sup>2</sup>ՀԱԱ, ֆ.227, ց.400, գ. 39, ք.40:

<sup>3</sup>В.А. Гурко-Кряжин, там же, стр. 62-63.

<sup>4</sup>Е.К.Саркисян, Экспансионистская политика Османской империи в Закавказье накануне и в годы мировой войны, Ереван, 1962, стр.98.

<sup>5</sup>А. Ошеровский, Трагедия армян-беженцев, С.-П., 1916, стр. 21.

տամը վկայում էր, որ Ադանայի ջարդից հետո դանդաղ, բայց հաստատորեն շարունակվում էր հայերի բնաջնջումը<sup>1</sup>:

1910թ. հոկտեմբերի 13-ին Սալոնիկում կայացավ «Իթիհատ վե թերազգ» կուսակցության համագումարը: Քննարկելով ազգային հարցը, համագումարն առանձին անդրադարձավ Հայկական հարցին և հայերին բնաջնջելու պաշտոնական որոշում ընդունեց: Դա համարվում էր անհետաձգելի անհրաժեշտություն, Հայկական հարցի արմատական լուծում: Արևմտահայության ոչնչացման այս որոշումը վերջնականորեն մշակվեց 1911թ. հոկտեմբերին կայացած իթիհատի հաջորդ համագումարում<sup>2</sup>: Իսկ մինչ այդ՝ 1910 թ. սեպտեմբերին ընդունված երիտթուրքերի որոշումն էլ նախատեսում էր հայերի հողերի և գույքի անցումը մահմեդականներին<sup>3</sup>:

Օսմանահպատակ հայերի վիճակը գնալով վատթարանում էր: Բացահայտ սպառնալիքները, կողոպուտները, առևանգումները, սպանությունները կրկին դառնում էին տարածված երևույթներ և հիշեցնում համիդյան շրջանը: Նախորդ տարիների ջարդերի կրկնության սպառնալիքը ստիպում էր հայերին արտագաղթել: Արևմտահայերը գաղթում էին Ամերիկա, Աֆրիկա, Եվրոպա և հատկապես Ռուսաստան<sup>4</sup>: Արտագաղթողների թիվն այժմ ավելի մեծ էր, քան Աբդուլ Համիդի կառավարման վերջին տարիներին<sup>5</sup>:

Արևմտահայ գյուղացիությունը շահագործման և բռնությունների հետ մեկտեղ կրկին տքնում էր վարչակարգի հարկային քաղաքականության տակ: Երիտթուրքերն անընդմեջ բարձրացնելով ու ավելացնելով հարկերը հայերից ավելի շատ հարկեր էին պահանջում, քան թուրքերից և ահավոր դաժանություն և բռնություններ էին գործադրում դրանց գանձման ընթացքում<sup>6</sup>: Արդյունքում հաճախակի էին

<sup>1</sup>Е.К. Саркисян, указ. соч., стр. 75.

<sup>2</sup>Համագումարի մասին տես Յր. Սիմոնյան, Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991, էջ153-154; Ն. Սարուխանյան, Հայկական հարցը մինչխորհրդային հայ հասարակական մտքի և պատմագրության մեջ, Երևան, 1997, էջ 114-116:

<sup>3</sup>М. Ковалевский, Армянский вопрос, "Вестник Европы", 1915, N 6

<sup>4</sup>АВПР, ф. Политархив, д. 1646, л. 73.

<sup>5</sup>Ս.Ս. Յամբարյան, նշվ. աշխ., էջ 43:

<sup>6</sup>АВПР, ф. Политархив, д. 1646, л.72; д. 1647, л.45.

բախումները հարկահավաքների հետ, սրոնք ավարտվում էին ոչ հօգուտ արևմտահայերի: Երիտթուրքերի կեղեքումների քաղաքականությունը հասցրել էր բնակչության մեծ մասին չքավորության ու թշվառության: Հայկական շատ դավառներում անհաղթահարելի սով էր: Որոշ գյուղերում համայնքներն ի վիճակի չէին եկեղեցու և հոգևորականների ծախսերը հոգալ: Չղիմանալով երիտթուրքական կառավարության հալածանքներին՝ հուսահատության մեջ ընկած արևմտահայերից ոմանք սովամահ չլինելու համար հարկադրված մահմեդականություն ընդունեցին: Ասվածի վկայությունն էին էրզրումում անգլիական և ռուսական հյուպատոսներ Մք. Գրեգորիի և Շարիտսերի ղեկույցներն իրենց տերությունների դեսպաններին: Նրանք հայտնում էին, որ հետապնդումների ու բռնությունների հետևանքով մի շարք գյուղերի բնակիչներ, օգնության ոչ մի ակնկալիք չունենալով, 1911թ. օգոստոսին դավանափոխ էին եղել<sup>1</sup>: Եզակի չէին նաև այն դեպքերը, երբ մեծ տերությունների կողմից հավանախորություն ձեռք բերելու նպատակով արևմտահայ մի շարք գյուղեր ամբողջությամբ ընդունում էին կաթոլիկ կամ ուղղափառ քրիստոնեություն<sup>2</sup>:

Չլուծված հոգային հարցն էլ ավելի էր բարդացնում արևմտահայ գյուղացու վիճակը: Օգտագործելով հոգային վեճերը՝ երիտթուրքերը յարում էին արևմտահայերի հարաբերությունները քրգերի<sup>3</sup> և մուհաջիրների (գաղթականների) հետ<sup>4</sup>: Երիտթուրքերի իշխանության օրոք նրանց թիվը գնալով ավելանում էր Փոքր Ասիայում: Հետևելով սուլթան Համիդի քաղաքականությանը՝ երիտթուրքերը նույնպես մուհաջիրներին բնակեցնում էին հայկական հողերում: Իսկ հայ-քրգական հարաբերությունները սրելու նպատակով՝ նրանք խրախուսում էին քրգերին բռնադրավել հայերի հողերը և հրահրում սպանությունների և ավազակությունների: 1910թ. փետրվարին Կ.Պոլսից հոֆմեյստեր Չարիկովը Ռուսաստանի արտգործնախարարությունը տեղեկացնում էր, որ քրգերի և հայերի միջև հարաբերությունները թշնամական էին<sup>5</sup>: 1910թ. դեկ-

<sup>1</sup>FO, 195 / 2375, p. 353; АВПР, ф. Политархив, д. 1647, л. 110.

<sup>2</sup>FO, 195 / 2375, p. 354; АВПР, ф. Посольство в Константинополе, д. 1603, л. 41

<sup>3</sup>FO, 195 / 2375, p. 240.

<sup>4</sup>Նույն տեղում, p. 274.

<sup>5</sup>АВПР, ф. Политархив, д. 1646, л. 9.

տեմբերին էրգրումի ռուսական Հյուպատոս Շտրիտտերը Հաղորդում էր, որ քրդերից կազմվում էր թեթև հեծելազոր / խաֆիֆի-սուվարի/<sup>1</sup>: Ավազակներից ու մարդասպաններից հավաքված խմբերի թիվը շատ անգամ գերազանցում էր նախկին «Համիդիեի» քանակը և մեծ անհանգստություն առաջացնում արևմտահայերի մեջ:

Քրդերի ավազակությունները գնալով սաստկանում էին: Էրգրումից անգլիական Հյուպատոսը Հաղորդում էր դեսպան Զ. Լոութերին, որ հայերի նկատմամբ ճնշման սաստկացումը թուրք իշխանությունների կողմից քրդերին հաճոյանալու քաղաքականության արդյունքն է<sup>2</sup>: Բիթլիսում անգլիական Հյուպատոս Ա. Սաֆրաստյանից ստացված տեղեկությունների հիման վրա 1911թ. գարնանն ու ամռանը Մ. ք. Գրեգորին Հաղորդում էր, որ վիլայեթի տարբեր շրջաններում տեղի են ունենում քրդերի կողմից հայերի բացահայտ օրը ցերեկով սպանություններ<sup>3</sup>: Ավելի ուշ նա նաև տեղեկացնում էր քրդերի անպատեխիլության հետ կապված հայերի աճող դժգոհության և նրանց շրջաններում տիրող անհանգստության մասին<sup>4</sup>:

1911թ. սեպտեմբերին անկառավարելի էր դարձել իրավիճակը Վանում<sup>5</sup>: Հոկտեմբերի սկզբին վիլայեթ կատարած շրջագայությունից հետո, Վանի անգլիական փոխհյուպատոս Մոլինյուքս-Սիլը (Molynaux-Seel) դեսպան Զ. Լոութերին ներկայացնում էր վիլայեթում տիրող ծանր և լարված իրավիճակը: Դիվանագետի գնահատմամբ իրադրությունը նախորդ տարվա համեմատ ավելի լարված էր: Փոխհյուպատոսի համոզմամբ անհրաժեշտ էր իշխանությունների միջամտումը, որը բավականին ուշացել էր: Մոլինյուքս-Սիլը տեղեկացնում էր, որ «հայերը շարունակում են ղինվել, և քանի որ հայերին ծայրահեղություն էին հասցնում, մեծ դժբախտություններ կարող էին տեղի ունենալ»:

Երիտթուրքական կառավարությունը, անտեսելով այդ շարունակում էր զինել քրդերին, ավելացնել «Համիդիե» հե-

<sup>1</sup> Там же, л. 73.

<sup>2</sup> FO, 195 / 2375, p. 238

<sup>3</sup> Նույն տեղում, p. 223.

<sup>4</sup> Նույն տեղում, pp. 196, 316.

<sup>5</sup> Նույն տեղում, p. 389.

<sup>6</sup> Նույն տեղում, p. 463.

ծելագորի թվաքանակը: Ազգամիջյան կռիվներ հրահրելու նպատակով որոշ վայրերում գեներալ ռաժանեցին նաև հայերին<sup>1</sup>: Երիտթուրքերը լարում էին թուրքահպատակ փոքր ազգերին իրար դեմ: Այս համոզմունքն էին հայտնում Անգլիայի արտգործնախարար Է. Գրեյին ինչպես անգլիական հյուպատոսները հայկական վիլայեթներից, այնպես էլ ղեկավարն Զ. Լուսթերը<sup>2</sup>:

Հայկական շարժումները ճնշելու և հալածանքները սաստկացնելու նպատակով թուրքական կառավարութունը՝ բնակչության անձն ու գույքը պաշտպանելու պատրվակով, եռակի, քառակի մեծացնում էր ոստիկանության թվաքանակը, որն իր հերթին ավերում ու թալանում էր բնակչությանը և զանազան բռնություններ գործադրում<sup>3</sup>: Բացվում էին նաև նոր ոստիկանական դպրոցներ: 1911թ. նոյեմբերին անգլիական հյուպատոս Մ. Գրեյգորին տեղեկացնում էր, որ Էրզրումում բացված ոստիկանական դպրոցը պետք է ծառայողներ ապահովեր Էրզրում, Դիարբեքիր /Տիգրանակերտ/, Վան, Բիթլիս, Սեբաստիա, Խարբեք վիլայեթների համար<sup>4</sup>:

Ազգային և քաղաքական պայքարի քողի տակ երիտթուրքերը ձգտում էին նվազեցնել հայերի անտեսական ներուժը, չեզոքացնել հայերի միակ ուժը: Թուրքերի և քրդերի թշնամական վերաբերմունքը հայերի նկատմամբ հիմնականում պայմանավորված էր հենց այն հանգամանքով, որ հայ բուրժուազիան, լինելով թուրքիայիում նոր արտադրահարսրերբուրթյունների՝ կապիտալիզմի կրողը, կործանում էր կյանքի հին հիմքերը՝ մահմեդական բնակչության համար հաճախ ցավազին ձևով<sup>5</sup>:

Երիտթուրքերն ամեն կերպ աշխատում էին վերջ գնել նաև հայերի և մյուս ոչ թուրք ժողովուրդների մշակութային առավելությանը<sup>6</sup>: Նրանք խտացրեցին հայերի մշակույթ

<sup>1</sup> АВРР, ф. Посольство в Костантинополе, д.1603, л.40; Ա.Ս.Համբարյան, Ազգ. աշխ., էջ 39:

<sup>2</sup> M. Somakian, Ibid., p. 64.

<sup>3</sup> FO, 195 /2375, p. 157.

<sup>4</sup> Նույն տեղում, p. 536.

<sup>5</sup> Օ. Գ. Инджикян, Буржуазия Османской империи, Ереван, 1977, стр. 274; В. А. Гурко-Кряжин, указ. соч., стр. 74.

<sup>6</sup> A. Toynbee, Turkey. A Past and a Future, London. New -York, 1917, p. 404.

Թի դեմ ուղղված հալածանքները, խոչընդոտում էին ազգային մշակույթի զարգացումը՝ «բարոյական միակ ուժի, որ կարող էր նրանց պաշտպանել»<sup>1</sup>: Իթթիհատականներն արգելում էին ազգային դպրոցների բացումը, հայերի դասավանդումը փոխարինում էին թուրքերենով, հեռացնելով դպրոցներից օտարերկրյա հպատակներին՝ թուրք ուսուցիչներ էին նշանակում, դպրոցների կնիքներն անգամ պետք է թուրքերեն լինեին<sup>2</sup>:

Իթթիհատական կառավարությունը պահանջում էր հայերեն թերթերի փոխարեն հրատարակել թուրքերեն թերթեր, ձգտում էր իր հայեցողությամբ ընտրել կամ ձեռնադրել հայ հոգևորականներին, արգելել եկեղեցու համեմատական ազատություններն ու ծիսակատարությունները, եկեղեցին ծառայեցնել օսմանյան կամ թուրանական նպատակներին<sup>3</sup>: Երիտթուրքերի վարած քաղաքականությունը նախատեսում էր նաև Կ.Պոլսի հայոց պատրիարքի իրավունքների սահմանափակում<sup>4</sup>: Իթթիհատականները պահանջում էին, որ պատրիարքարանը զբաղվի միայն կրոնական գործերով և ոչ մի միջամտություն չցուցաբերի քաղաքական կյանքին:

Երիտթուրքական կառավարության վարած քաղաքականության հետևանքով ավարառությունները, հափշտակությունները, առևանգումները, ահաբեկումները և մասնակի կոտորածները դարձել էին կյանքի սովորական ընթացք, օր օրի խորացնելով արևմտահայության հիասթափությունն ու վրդովմունքը: Կ.Պոլսի հայկական Ազգային խորհրդի և պատրիարքարանի կողմից տեղական իշխանություններին, երիտթուրքական կառավարությանը և օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցիչներին ուղարկված բազմաթիվ բողոքներն ու որոշումները մնում էին անհետևանք<sup>5</sup>, իսկ մարդասպաններն ու կեղեքիչները շարունակում էին իրենց չարագործությունները: Եթե արևմտահայերի գիմադրությունը չլիներ, ապա վիճակն ավելի սարսափելի կլիներ:

<sup>1</sup>Գր. Ձոհրապ, Հայկական հարցը փաստաթղթերու լուսին տակ, Պեյրուք, 1973, էջ 20:

<sup>2</sup>FO, 195 / 2375, p. 129; АВПР, ф. Политархив, д. 1647, л. л. 54, 64.

<sup>3</sup>Ա.Ս.Համբարյան, նշվ. աշխ., էջ 41:

<sup>4</sup>FO, 195 / 2375, 128; N. Buxton N. and H. Buxton, Ibid., p. 28.

<sup>5</sup>ՂԱԱ, ֆ. 57, ց.5, գ.15, քթ. 3-7:

Երիտթուրքական հեղաշրջումից հետո թուլացած հայ-գուկային շարժումը որոշ ժամանակ անց կրկին աշխուժացավ և ուղղվեց ազգային ու սոցիալական հարստահարումների դեմ: Մի շարք տեղերում հայդուկներին հաջողվեց պաշտպանել գյուղացիների անձն ու գույքը և, ահաբեկելով հարստահարիչներին, լուծել նրանց վրեժը: Հայդուկների գործունեությունը նոր թափ էր հաղորդում ազգային ազատագրական ու գյուղացիական շարժումներին<sup>1</sup>: Արևմտահայ գյուղացիութունը հրաժարվում էր հարկերի և տուրքերի վճարումից, փորձում էր իր ուժերով լուծել հողային հարցը, դիմում ինքնապաշտպանություն և ակտիվ գործողությունների: Տիրապետող կարգերի, ազգային-սոցիալական ճնշումների և բռնությունների դեմ ըմբոստանում և պայքարում էր նաև քաղաքների բնակչությունը: Չնայած արևմտահայության ելույթները բռնկվում էին տարերայնորեն, իրարից անջատ, ունեին տեղական նշանակություն և հիմնականում ավարտվում էին պարտություններ, դրանք որոշ չափով դասվում էին թուրք պաշտոնյաների և քուրդ աղաների սանձարձակությունները:

Այդպիսով, 1908թ. երիտթուրքական հեղափոխությունից և օսմանյան սահմանադրություն փրահաստատումից հետո ևս արևմտահայությունն արյունալից տարիներ էր բուրդում: Հայր կա՛մ բացարձակապես ստրուկ պիտի լիներ, կա՛մ լքեր իր հայրենիքը, կա՛մ պիտի ըմբոստանար դաժան բռնություն դեմ՝ պաշտպանելու իր ունեցվածքը, արդար աշխատանքի արդյունքը, իր մարդկային ու ընտանեկան պատիվը և, վերջապես, կյանքը:

<sup>1</sup>Այդ մասին մանրամասը տես Ա.Ս.Համբարյան, Ազգային ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում, Երևան, 1999, էջ 167-206 ; Ծ. Աղայան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976, էջ 217:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԱՅՈՒՄԸ ԵՎ  
ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Երիտթուրքերի կառավարման առաջին տարիները հաստատեցին, որ նրանք որդեգրել էին սուլթան Աբդուլ Համիդ II-ի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականությունը: Ավելին, համիդյան ավանդական հետադիմական քաղաքականությունը համեմվեց մոլի ազգայնամոլությունամբ և վերածվելով բացահայտ ահաբեկչության ուղղվեց ոչ թուրք ազգային բոլոր փոքրամասնությունների դեմ: Այս քաղաքականությունը բարձրացվեց պետական մակարդակի և ամրապնդվեց երիտթուրքերի ընդունած Սահմանադրությունից մեջ<sup>1</sup>:

Օսմանյան պետությունը լրջորեն վերակազմելու և վերակառուցելու փոխարեն երիտթուրքերը, Ա. Չոպանյանի բնորոշմամբ. «բովանդակ իսլամ աշխարհի պաշտպանի դերն էին ստանձնել և ծրագրել էին երեք հարյուր միլիոն մահմեդականների ազատել, իրենց խոսքով, քրիստոնյա բռնավորների լծից»<sup>2</sup>: Թուրքական կայսրության մեջ ամենուրեք տիրում էր սարսափի մթնոլորտը: Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Հ. Մորգենթաուն (H. Morgenthau) գրում էր, որ «բնակչությունն ավելի էր հեռավորել, ավելի աղքատացել և տարանջատվել քան երբևէ»<sup>3</sup>: Դեզոհությունը երիտթուրքերի դեմ ծայր էր առնում և՛ քրիստոնյա և՛ մահմեդական բնակչության շրջաններում: Արդեն 1910-1912 թթ. այն Կ. Պոլսի դեմ հանեց արաբներին, մակեդոնացիներին, ալբանացիներին, իսկ առանձին դեպքերում ընդվզեցին նաև քրդերն ու թուրքերը: Երիտթուրքերը կայսրության ամբողջականության գաղափարով տարված՝ բռնանում էին թուրքահպատակ այլազգիների ազգային ինքնորոշման ձգտումների դեմ: Այս քաղաքականությունը հանգեցնում է սուր երկպառակությունների և բերում ալբա-

<sup>1</sup>Գ. Գալոյան, Պատմության քառուղիներում, Երևան, 1982, էջ 137:

<sup>2</sup>Ա. Չոպանյան, Հայաստանը թուրք լուծին տակ, Պոստոն, 1918, էջ 35:

<sup>3</sup>H. Morgenthau. Secrets of the Bosphorus, London, 1918, p. 7.

նական, մակեդոնական, արաբական, հայկական և հունական հարցերի բարձրացմանը<sup>1</sup>:

Ինչպես նշում էր Ջ.Լոութերը. «երիտթուրքերը շատ անգամ ավելի դաժան էին, քան Աբդուլ Համիդը: Նրանց կազմած կառավարությունը բաղկացած էր մարդկանցից, որոնք միևնույն ժամանակ չարագործ էին և ոչ կոմսետենտ, ծախու. և ահաս»<sup>2</sup>: Չլուծելով ազգային և ազգարային խնդիրները, անտեսելով երկրի անտեսական հետամնացությունը և ճգնաժամային իրավիճակը՝ երիտթուրքերը առավել ուշադրություն էին դարձնում ռազմական ծախսերին և բանակի վերակազմավորմանը: Կ.Պոլսում Անգլիայի դեսպան Ջ.Լոութերն արագործնախարար է. Գրեյին հաղորդում էր որ «բանակը միակ օբյեկտն է, որին հատկացվում է ուշադրություն և միջոցների մեծ մասը»<sup>3</sup>: Նա նշում էր, որ ռազմական բյուջեն կազմում էր երկրի ընդհանուր բյուջեի 1/3 և միակն էր, որ 1910թ. հաստատվեց խորհրդարանի կողմից առանց որևէ առարկություն:

Երիտթուրքերը ոչ միայն չապահովեցին երկրի ժողովրդավարական զարգացումը, այլև չկարողացան ազատել կայսրությունն օտարերկրյա կախիվածությունից: Եթե մինչհեղափոխական շրջանում իթթիհատականները հայտարարում էին, որ ձգտում էին ազատել Թուրքիան օտարերկրյա ազդեցությունից, ապա իշխանությունը զրավելուց հետո նրանց նպատակը դարձավ ընտրել այս կամ այն առավել շահավետ տերությունների խմբակցությունը, որի հովանավորությունից կարելի էր օգտվել<sup>4</sup>:

Օտարերկրյա օդնություն՝ հատկապես նոր վարկեր ձևաբերելու հարցում, առավել քան իրենց նախորդները, անզսպվածությունը ցուցաբերելով՝ երիտթուրքերն ավելի խորացրեցին Թուրքիայի կիսագաղութային վիճակը<sup>5</sup>: Անգլիան և Ֆրանսիան չէին մերժում Թուրքիայի ֆինանսական օգ-

<sup>1</sup>И.И. Голобородько, Турция, Москва, 1913, стр.283.

<sup>2</sup>Elie Kedurie, Young Turks. Freemasons and Jews, "Middle Eastern Studies", London, January 1971, vol. 7, N 1, p.90.

<sup>3</sup>Է.Կ.Տարկսյան, Политика османского правительства в Западной Армении и державы в последней четверти 19в. и в начале 20в., Ереван, 1972, стр. 246.

<sup>4</sup>А.Ф. Миллер, Оттоманская империя, Москва, 1946, стр.33.

<sup>5</sup>Օ.Գ. Инджикян, Буржуазия Османской империи, Ереван, 1977, стр. 276.

նության դիմումները, սակայն չափազանց ծանր պայմաններ էին ներկայացնում դրանց բավարարման համար<sup>1</sup>: Պաշտոնների զավթման և խոշոր կապիտալ ներդրումների միջոցով Անգլիան և Ֆրանսիան թուլացրին Օսմանյան կայսրութունը տնտեսապես և ֆինանսապես, վերածեցին այն կիսագաղութի<sup>2</sup>: Միևնույն ժամանակ, երբ Անգլիան և Ֆրանսիան շարունակում էին վճռորոշ դեր խաղալ Օսմանյան կայսրության տնտեսական կյանքում, Գերմանիան արդեն հաստատել էր իր ռազմական և քաղաքական գերիշխանութունը Թուրքիայում:

Մեծ տերություններից յուրաքանչյուրը, այդ թվում նաև Ռուսաստանը՝ անկախ գործադրվող միջոցներից, ձգտում էին ապահովել իրենց առևտրատնտեսական, ռազմավարական հետաքրքրություններն ու շահերը: Ինչ վերաբերում էր Անգլիային, ապա նա, հավատարիմ մնալով իր Կաղութային քաղաքականության սկզբունքներին, դեմ չէր այն զավթողական ձգտումներին, որոնք, անշուշտ, կհանգեցնեին նրա հետաքրքրությունները բավարարմանը: «Հնդկաստանի և Եգիպտոսի տիրուհուն հրապուրել էին Սուեզի ջրանցքի և Կարմիր ծովի ափերը, Պաղեստինն ու Միջագետքը»<sup>3</sup>: Այդ նոր ձեռքբերումները կմոտեցնեին Հնդկաստանի սահմանները Միջերկրականի ափերին:

Երիտթուրքերի հետադիմական ներքին քաղաքականության արդյունքում առաջացած բազում խնդիրներն ավելի ծանրացան արտաքին արկածախնդրական քաղաքականության հետևանքով:

Իտալա-թուրքական հարաբերությունների սրումը 1911թ. աշնանը բերեց Իտալիայի հարձակմանն աֆրիկյան Տրիպոլիտանիայի վրա: 1911-1912թթ. այդ պատերազմի արդյունքն այն եղավ, որ Թուրքիան ընդամիշտ կորցրեց աֆրիկյան տիրույթները:

Օգտվելով պատերազմում իթիհատականների կրած անհաջողություններից իթիլաֆականները ընդդիմության

<sup>1</sup>Այդ մասին տես Раздел Азиатской Турции по секретным документам бывшего министерства иностранных дел, Москва, 1924, стр. 10-40.

<sup>2</sup>A. J. Toynbee. Turkey: A Past and a Future, N-Y, 1917, p. 79.

<sup>3</sup>Ж. Каузер, Европа и новая Турция, Москва, 1925, стр. 7.

կաղմակերպած Հեղաշրջման արդյունքում 1912թ. հուլիսին զավթեցին իշխանությունը: Այս իրադարձություններն ավելի արագացրին Թուրքիայի պարտությունը: Դեռ էջը ստորագրվել իտալա-թուրքական պատերազմի ավարտն ազդարարող պայմանագիրը, երբ սկսվեց Բալկանյան առաջին պատերազմը:

Բալկանյան ժողովուրդների ազատագրական ձգտումները 1912թ. աշնանը հանդեպրել էին Բալկանյան երկրների ազդական դաշնակցության ձևավորմանը: Թուրքական կառավարության անհեռատես քաղաքականությունը՝ Մակեդոնիային և Ալբանիային ժամանակին ինքնավարություն չհատկացնելը, նպաստեց նրան, ինչից այդքան վախենում էին երիտթուրքերը՝ Օսմանյան կայսրության անդամահատմանը: 1912թ. հորտեմբերի 8-ին Չեռնոգորիան սկսեց ազդական գործողությունները: Թուրքիայի դեմ ելան նաև Սերբիան, Բուլղարիան, Հունաստանը: Դաշնակիցների նպատակն էր դուրս մղել Թուրքիային Բալկաններից և ազատել Օսմանյան լծից Մակեդոնիան, Թրակիան և Ալբանիան:

Առաջին իսկ օրերից պատերազմն անհաջող էր ընթանում Թուրքիայի համար: Կարճ ժամանակում դաշնակիցների զորքերը մոտեցել էին Կ.Պոլսի մատույցներին, Բուլղարիան զրավել էր Ադրիանապոլիսը: Սակայն Ռուսաստանի, որի շահերին տվյալ ժամանակ էջը համապատասխանում Կ.Պոլսի ու նեղուցների անցումը Բուլղարիային<sup>1</sup> և «մեծ պատերազմի բանկումից» երկյուղած<sup>2</sup> եվրոպական տերությունների միջամտությունը փրկեց Օսմանյան կայսրությունը կործանումից: 1912թ. գեկտեմբերի կեսին թուրքական կառավարությունը եվրոպական տերությունների միջամտությամբ Հոնդոնում հաշտություն բանակցություններ սկսեց Բալկանյան երկրների հետ<sup>3</sup>:

Արևելյան հարցը կրկին իր բոլոր բարդություններով ասպարեկ եկավ: Հայ ազգային ղեկավար շրջանները ցանկացան օգտագործել ստեղծված իրադրությունը և արևմտյան գլխավորությունների առջև բարձրացնել արգեն մոռացության

<sup>1</sup>РГВИА, ф. 2000, оп.1, д. 3845, лл. 49-51.

<sup>2</sup>ՂԱ, ֆ.43, ց.1, գ. 33, ք.84:

<sup>3</sup>В.М. Хвостов, История дипломатии, т. 2, Москва, 1963, стр. 750-751.

մատնված Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածի կենսագործման հարցը:

Բալկանյան պատերազմի նախօրյակին արդեն հայ ղեկավար շրջաններն ամբողջովին կորցրել էին հավատը թե՛ ռաբենորոգումներ իրականացնելու, թե՛ քուրդ ելուզականներից պաշտպանելու՝ երիտթուրքական կառավարության խոստումների և հայտարարությունների հանդեպ: 1911թ. աշնանը, փաստորեն, խարխլվեց նաև իթթիհատ-դաշնակցութուն համաձայնությունը<sup>1</sup>: Դաշնակցությունը կիսում էր հայության մեջ տիրող կարծիքը, որ ներքին ուժերը բավական չէին դիմազրավելու երիտթուրքական վտանգը: Պետք էր որոնել այլ ուժեր, պետք էր ստեղծված ծանր ու վտանգավոր կացությունը ներկայացնել տերություններին և միևնույն ժամանակ չխոցել ձևական կապը երկրի կառավարիչների հետ: Վրա հասած թուրք-բալկանյան պատերազմը մեկ անգամ ևս պարզեց և հրամայական դարձրեց համազգային միահամուռ քաղաքական գործողությունների պահանջը:

Հայկական հարցը կրկին հանդես եկավ իր արդիականությամբ: Դեռ իտալա-թուրքական պատերազմի սկզբին իրավիճակը հայկական վիճակներում խիստ սրվել էր՝ Անգլիական հյուպատոսների տեղեկությունները Վանից<sup>2</sup>, Բիթլիսից<sup>3</sup> և այլ վայրերից հաստատում էին, որ հայ-քրդական հարաբերությունները գնալով ավելի էին վատթարանում, որ իթթիհատական կառավարությունը չէր պատրաստվում կարգավորել ոչ մի խնդիր:

1911թ. հոկտեմբերին Բիթլիսից անգլիական հյուպատոս Ա.Սաֆրաստյանը հայտնում էր, որ պատերազմի սկզբին իրագործությունը տեղում որոշ չափով փոխվել էր, քանի որ Ռուսաստանի հետ պատերազմի սպառնալիքը փոքր-ինչ զսպում էր քուրդ և թուրք հրոսակներին՝ ակտիվ գործողությունների դիմելուց: Սակայն արդեն նոյեմբեր ամսին Ա.Սաֆրաստյանը հեռագրում էր ղեսպանատուն, որ իրավիճակը փնա-

<sup>1</sup>Վ.Փափազյան, Հայկական բարենորոգումները /1912-1914/, «Վեմ», Հանդես մշակույթի և պատմության, Փարիզ, 1933, սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 90-91:

<sup>2</sup>Joseph Heller, Britain and the Armenian Question. 1912-1914. A study in Real Politik, "Middle Eastern Studies", 1980, N 16, p. 4

<sup>3</sup>ՓՕ. 195 / 2375, p.499.

<sup>4</sup>Նույն տեղում, p. 420.

լով փոխվում էր<sup>1</sup>: Դեկտեմբերի 11-ի տագնապալից հաղորդագրության մեջ նա նշում էր, որ վերջին 10 օրերի ընթացքում վիլայեթում ստեղծված իրավիճակը ամենասարսափելին էր 1908թ-ից ի վեր և գերազանցում էր անգամ հին վարչակարգի ամենախափար օրերը<sup>2</sup>:

Բռնություններն ու ավազակային հարձակումները խաղաղ բնակչության վրա շարունակվում էին 1912թ. ընթացքում: 1912թ. հուլիսի 25-ին Վանում ռուսական փոխհյուպատոս Ալֆերևը եվրոպացի միսիոներների հետ հանդիպումից հետո, կիսելով նրաց մտավախությունները հայերի անվտանգության վերաբերյալ, տեղեկացնում էր, որ Կ.Պոլսում ծավալվող քաղաքական իրադարձությունները խիստ անհանգստացնում էին հայերին և ստիպում նրանց նախազգուշական միջոցներ ձեռք առնել: Ինչ վերաբերում էր արևմտահայ գյուղացիությանը, ապա Ալֆերևը նշում էր, որ նրանք կարող էին շատ լրջորեն տուժել անընդմեջ աճող քրդական ավազակություններից<sup>3</sup>:

Հուլիսյան հեղաշրջումը նոր խլրատումներ առաջացրեց քրդական շրջաններում: Ինքնավարություն ձեռք բերելու գաղափարով տարված, օգտվելով Ռուսաստանի գաղտնի աջակցությունից՝ քրդերի առաջնորդները ասպտամբուլթյուն էին պատրաստում հեղինակազրկված թուրք կառավարության դեմ<sup>4</sup>:

1912թ. աշնանը լարվածությունը հայկական վիլայեթներում սարսափելի չափերի էր հասնում<sup>5</sup>: Ինչպես տեղեկացնում էր Կ.Պոլսում անգլիական դեսպան Զ.Լոութերը, Վանում և Բիթլիսում հանցագործությունների թիվը 1912թ. օգոստոս-սեպտեմբերին աճել էր 50%-ով<sup>6</sup>: 1912թ. սեպտեմբերին իթիլսֆական կառավարությունը, ստանալով հայկական պատրիարքության հայերին պաշտպանելու ու քրդերի վայրագություններին վերջ դնելու խնդրանքով դիմումները և ցանկանալով

<sup>1</sup>FO, 195 / 2375, pp. 480, 517 - 519, 523, 531.

<sup>2</sup>Նույն տեղում, թ. 562-563.

<sup>3</sup>ՀԱԱ, ֆ.57, ց.5,գ.24, թ.2-3; АВПР, ф.Посольство в Константинополе, д.1603, л. 3.

<sup>4</sup>АВПР, ф.Политархив, д.1648, л. 48-49.

<sup>5</sup>ՀԱԱ, ֆ. 57,ց.5, գ.15, թ. 25:

<sup>6</sup>M. Somakian, Ibid., p. 46.

կանխել եվրոպական տերությունների միջամտությունը, հայտարարեց, որ պատրաստվում է անհրաժեշտ միջոցներ ձևոնարկել արևելյան վիլայիթներում կարգ ու կանոն հաստատելու համար<sup>1</sup>: Սակայն որևէ գործնական քայլեր չկատարվեց: Ջ. Լոութերը տեղեկացնում էր Անգլիայի արտգործնախարար է. Գրեյին, որ նոր վարչակարգը քրդերին սանձելու ցանկություն մեջ նույնքան զուսպ էր, որքան հինը<sup>2</sup>:

Բալկանյան պատերազմը դրությունն ավելի բարդացրեց: Ամենուր անիշխանություն էր տիրում: Քուրդ ավագակներն ավելի սանձարձակ<sup>3</sup> հողային գրավումներ ու ավարառություններ էին կատարում և սպառնալիքի տակ էին պահում հայերին: Այս պայմաններում արևմտահայ գյուղացիությունը սպառնացող վտանգն ավելի էր սաստկանում, քանի որ Արևմտյան Հայաստանի արևելյան մասերում տեղակայված գորամասերը այդ թվում նաև հայերից կազմված գորարածինները, տեղափոխվել էին Բալկանյան ճակատ, թողնելով արևմտահայությունն ամբողջովին անպաշտպան: Երկիրը մնացել էր անկանոն ուժերի և ժանդարմերիայի անբավարար հսկողության տակ<sup>4</sup>:

Արևմտահայության ծանր կացությանն ավելացավ մի նոր չարիք: Պատերազմի արդյունքում Բալկանյան թերակղզուց խուճապահար գաղթող և քրիստոնյա հպատակների հանդեպ կատաղի ատելությամբ լցված մահճակալական բնակչությունը կառավարության որոշմամբ բնակեցվում էր հայկական վիլայիթներում<sup>5</sup>՝ սրելով առանց այդ էլ առկա հողային և կրոնական հակամարտությունները:

Բացի այդ, Բալկանյան առաջին պատերազմում Թուրքիայի պարտությունն առաջացրել էր մեկ այլ բարդություն ևս: Ամենևին ուշադրություն չդարձնելով, որ հայերը միշտ եղել էին Թուրքիայի հավատարիմ քաղաքացիներ և առավելագույն նվիրումով կատարել ավելին, քան իրենց պարտականությունները, թուրքական կառավարությունը կասկածանք

<sup>1</sup>Международные отношения в эпоху империализма, Серия вторая, т. 20, ч. 2, М., 1940, стр 175-176.

<sup>2</sup>M Somakian, Ibid., p 65

<sup>3</sup>Վ. Փափազյան, նշվ. աշխ., «Վեմ», Փարիզ, 1933, սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 91:

<sup>4</sup>FO, 195/2450, part 1, pp 6-14, Б.Мухоморян, Трагедия Турку, Баку, 1919, стр.16.

քով ու անխտահուծթյամբ էր վերաբերում հայերին<sup>1</sup>: Թուրքերը Բալկաններում կրած իրենց պարտությունները վերագրում էին այն բանին, որ քրիստոնյաներին թուլատրվել էր ծառայել թուրքական բանակում: Այս մտայնությունը, բնականաբար, ավելի էր սրում հակասությունները և շիկացնում լարված հարաբերությունները քրիստոնյաների և մահմեդականների միջև: 1912թ նոյեմբերի առաջին կեսին հայոց Պատրիարքարանը բացահայտ սպառնականահաբեկչական նամակներ էր ստանում, ուր հայերը մեղադրվում էին որպես օտարերկրյա հարձակումների առիթ ինչի համար արժանի էին պատժի<sup>2</sup>:

Ստեղծված հակահայկական մթնոլորտն անհանգստացնում էր հայ ազգային-քաղաքական ուժերին ու ստիպում նրանց փրկության միջոցներ փնտրել: Բալկանյան ժողովուրդների հաջողությունները ոգևորել և հույս էին ներշնչել արևմտահայությանը: Իր լուծումը չստացած Հայկական հարցի վերաբացման համար նախադրյալներ էին ստեղծվել. 1/ Թուրքիայի պարտությունը և 2/ Բալկանյան առաջին պատերազմի արդյունքների նկատմամբ մեծ տերութւթութենների ցուցաբերած հետաքրքրու թյունը: Կար նաև հաջողության մի մեծ գրավական՝ ուսու դիվանագիտության բարյացակամ վերաբերմունքը դեպի Հայկական հարցը, որն, իհարկե, բացատրվում է տվյալ պահին Հայկական հարցի լուծման և Ռուսաստանի պետական շահերի համրնկմամբ:

Բալկանյան ճգնաժամի օրերին ավելի ամրապնդվեց արևմտահայության ուսուական կողմնորոշումը: Իսկ արևելահայ լայն զանգվածները, մտափորականության ներկայացուցիչները, Հայկական հարցի լուծումը և ընդհանրապես արևմտահայության փրկության հույսը կապում էին միայն Ռուսաստանի հետ: Դեռ 1912թ. սեպտեմբերի 19-ին Թիֆլիսում հրավիրվել էր մի ժողով, որին մասնակցում էին հայ հասարակական տարբեր խավերի ներկայացուցիչներ: Ժողովը հարց էր բարձրացրել դիմել ուսուական կառավարությանը:

<sup>1</sup>М. Эрцбергер, Германия и Антанта, Москва-Петроград, 1923, стр. 80; Ի. Աղայան, Հայ ժողովրդի ազտագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976, էջ 289:

<sup>2</sup>М. Кочар, указ. соч., стр. 202-203.

Համանման ժողովներ էին տեղի ունեցել նաև Բաքվում, Վանում, Բաթումում և այլ կենտրոններում:

Հայ հասարակական շրջաններում քննարկվում էին Ռուսաստանի օգնությունը թուրքական լծից արևմտահայերի ազատագրման բազմազան տարրերակներ և առաջարկություններ: Ոմանք պնդում էին Ռուսաստանի կողմից Արևմտյան Հայաստանի գինազրավման, մյուսները՝ Ռուսաստանի հովանավորությունը Օսմանյան կայսրության կազմում ինքնավար Հայաստանի ստեղծման, իսկ երրորդները՝ պարզապես Ռուսաստանի ճնշմամբ բարենորոգումներ անցկացնելու վրա<sup>1</sup>:

Արևմտահայություն և արևելահայություն անունից պաշտոնական բանակցություններ սկսեց Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ V-ը: Հայ ազգի իզձերն արտահայտելով՝ կաթողիկոսը 1912թ. հոկտեմբերի 15-ին Կոփկասի փոխարքա կոմս Ի.Ի.Վորոնցով-Պաշկովի միջոցով գիմեց ուսական կայսրին՝ հայերին պաշտպանելու խնդրանքով<sup>2</sup>:

Ռուսական կառավարությունը բարյացակամ վերաբերմունք դրսևորեց հայերի խնդրանքին ու Հայկական հարցի լուծմանը, սակայն համաձայնեց զբաղվել արևմտահայերի խնդրով միայն Բալկանյան պատերազմի ավարտից հետո<sup>3</sup>: Ակնհայտ է, որ Բալկանյան պատերազմի պայմաններում Արևմտյան Հայաստանի գինազրավումը Ռուսաստանի կողմից, ինչը ցանկանում էր արևմտահայերի մի մասը, չէր մտնում ցարական կառավարության ծրագրերի մեջ, քանի որ դա կրեներ Թուրքիայի մասնատմանը և, ինչպես նշում էր Ռուսաստանի արտգործնախարար Ա.Սազոնովը, եվրոպական պատերազմի<sup>4</sup>:

Ռուսաստանի պատասխանը չէր լավարարում հայությունը, քանի որ, ինչպես հայտնում էր Զ.Լոռլթերը Անգլիայի արտգործնախարարությունը, «հայերի համար ստեղծվել էին անչափ ծանր պայմաններ, և ուսական գինազրավումը հայի-

<sup>1</sup>Տես ՀԱԱ, ֆ. 57, ց.5, գ.55, ք.15-19: «Յորիզոն», 1912, N 259, նոյեմբերի 23; E.K. Саркисян, Армянский вопрос в Россия в 1912-1914гг, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 1995, N 1, էջ 111-114.

<sup>2</sup>ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 53, ք.47; Լեո, Հայոց հարցի վավերագրեր, Թիֆլիս, 1915, էջ 306:

<sup>3</sup>АВНР, ф. Политархив, д.3464, л. 29.

<sup>4</sup>ՀԱԱ, ֆ.57, ց.5, գ. 65, ք.29:

րի համար ավելի գերադասելի էր, քան իրենց ներկա իրավի-  
ճակը»<sup>1</sup>:

Ինչ վերաբերում էր թուրքական կառավարությանը, ապա այդ ժամանակաընթացքում՝ 1912թ. դեկտեմբերի սկզբին, իթիլաֆալանները երկյուղ կրելով, որ Հայկական հարցը կարող էր ուղևորական կառավարության կողմից վտանգավոր միջամտության առիթ դառնալ, փորձեցին հանաձայնություն ձևաբերել հայերի հետ՝ առաջարկելով բարենորոգումներ իրենց կողմից: Մակայն այդ քայլը կատարվեց ճիշտ թուրքական ձևով: Մի շարք թերությունների և անհամապատասխանությունների հետ մեկտեղ՝ բարենորոգումների իթիլաֆալանների ծրագրերը չէր ենթադրում եվրոպական հսկողություն, առանց որի ոչինչ էր նույնիսկ լավագույն նախագիծը: Բացի այդ, այն տարածվելու էր ոչ թե բոլոր 6, այլ միայն 4 հայկական վիլայեթների վրա<sup>2</sup>:

Դժվար չէ հասկանալ, որ իթիլաֆալաններն այս նախագիծն առաջ էին քաշել միայն հայկական բարենորոգումների հարցն օրակարգից հանելու նպատակով և իրականում ոչինչ չէին պատրաստվում անել արևմտահայերի դրությունը գեթ մի փոքր բարելավելու համար:

1912թ. դեկտեմբերի 24-ին հայոց կաթողիկոսը կրկին դիմեց Նիկոլայ II-ին: Այս անգամ, արտահայտելով հայերի մեջ տիրող ընդհանուր տազնապր՝ կաթողիկոսը խնդրեց, որ Լոնդոնում կայացող դեսպանաժողովում բալկանյան խնդիրների հետ միասին քննության առնվեք նաև Հայկական հարցը՝ հայկական 6 վիլայեթներում բարենորոգումներ անցկացնելու խնդիրը: Կաթողիկոսը նշում էր, որ, «եթե հայերը այս անգամ էլ չըջանցվեն, ապա դա հավասարագոր կլինի նրանց վերջնական բնաջնջմանը»<sup>3</sup>:

<sup>1</sup> J. Heler, Ibid, p.5.

<sup>2</sup> Նախագծի տեքստը տես Сборник дипломатических документов. Реформы в Армении. 26 ноября 1912 года - 10 мая 1914 года, Петроград, 1915, стр. 13-15 (далее - Реформы в Армении); Будущее устроительство Армении по оффициальным дипломатическим документам Оранжевой книги, трактующей реформы в Армении ( дил. архив т. 8), Петроград, 1915, стр 17-19 ( далее - Оранже. книга); Լեո, նշվ. աշխ., էջ 308-311:

<sup>3</sup> Геноцид армян в Османской империи..., стр. 248-249

Հայկական հարցը միջազգային խորհրդատուական անձնակազմի կողմից քննարկվել էր 1912թ. դեկտեմբերի 21-ի Կ.Պոլսի Հայոց Ազգային ժողովի դռնփակ նշանավոր նիստին, որը նաև պարզեց հայ կուսակցությունների լիակատար համերաշխությունը բարենորոգումների հարցում<sup>1</sup>: Դաշնակցության պատգամավորները հայտարարեցին, որ պատմական այդ լուրջ պահին իրենք հրաժարվում էին կուսակցական հաշիվներից, որպեսզի կատարյալ միություն թափանցի ազգի մեջ: Հայկական հարցի պատմության հարուցման ընթացքում առաջին ամգամն էր, որ 1912թ. ազգային մարմինները և հայ քաղաքական կազմակերպությունները «միակամ և միասիրտ գործի էին լծվել»:<sup>2</sup>

Դեռ 1912թ. նոյեմբերի 8-ին, հայոց կաթողիկոս Գևորգ V-ը Լոնդոնում Եփրոսյայի հայոց առաջնորդ Գևորգ եպիսկոպոս Յուսուբյանին հղած նամակում հանձնարարել էր Լոնդոնի հայ համայնքին՝ առանց ժամանակ կորցնելու հետադարձ ոգնություններ ղրկումներ անել եփրոսյական մեծ տերություններին և Ամերիկայի Միացյալ Նահանգներին<sup>3</sup>:

Այս հանձնարարականին հաջորդեց կաթողիկոսի նոյեմբերի 10-ի՝ Պողոս Նուբար փառային՝ որպես Եփրոսյայում կաթողիկոսի լիազոր ներկայացուցչի նշանակումը<sup>4</sup>: Պողոս Նուբար փառային հանձնարարվել էր հուշագիր պատրաստել Լոնդոնի խորհրդատուական ներկայացուցչու համար<sup>5</sup>: Հուշագիրը պատրաստվեց Նուբար փառայի գլխավորությամբ կազմված պատվիրակության կողմից: Պատվիրակության անդամներն էին Եփրոսյայի հայոց առաջնորդ Գևորգ եպիսկոպոս Յուսուբյանը, նշանավոր քաղաքական և հասարակական գործիչ, բանաստեղծ Մինաս Չերազը, հայտնի իրավաբան Հարություն Մոստիճյանը և Արթին Յաղուբ փառան՝ Լոնդոնի գիտական շրջաններում ճանաչված գիտնական, լեզվաբան, հնագետ<sup>6</sup>:

<sup>1</sup>ՀԱԱ, ֆ.57, ց. 5, գ.55, ք.3; Оранжевая книга, стр.14-15:

<sup>2</sup>Մ. Սերոբյան, Մեր պայքարը հայ ազատագրության ուղիով, Գահիրե, 1948, էջ 225:

<sup>3</sup>ՀԱԱ, ֆ. 57, ց.5, գ.19, ք.22:

<sup>4</sup>Նույն տեղում, գ. 55, ք. 12:

<sup>5</sup>Նույն տեղում, գ.27, ք.3:

<sup>6</sup>Նույն տեղում, գ.58, ք.17; Գրականության և արվեստի թանգարան / այսուհետ ՉԱԹ /, Վահան Սալեզյանի ֆ., գ.7, գ.738, ք.1:

Հուշագրում նկարագրվում էր արևմտահայության սարսափելի վիճակը Բեռլինի վեհաժողովից սկսած և ընդգծվում բարենորոգումներ անցկացնելու անհրաժեշտությունը<sup>1</sup>:

Պատվիրակության գործունեությունը զուգահեռ՝ Նուբար փաշայի դիմումներին աջակցելու համար Կ.Պոլսի Ազգային ժողովի որոշմամբ պատրիարք Արշարունին այցելում էր Կ.Պոլսում մեծ տերությունների դեսպաններին: Հոգևոր առաջնորդը նրանց ուշադրությունը հրավիրելով հայկական վիրայեթներում բարենորոգումներ անցկացնելու հրատապություն փրա՝ խնդրում էր միջամտել հոգևոր հայերի:

Արևմտահայերի ճակատագրի նկատմամբ ակտիվ մասնակցություն էին ցուցաբերում նաև աշխարհի տարբեր երկրներում բնակվող հայերը: Ռուսաստանի և եվրոպական հայկական գաղութների ձեռնահաս շատ անձիք աշխատանքներ էին տանում հայկական հարցի լուծման համար: Վիեննայում՝ Մխիթարյան միարանություն արքահայրը, Հունգարիայում՝ նախարարապետ, հայազգի Լուկաչը, Բեռլինում՝ Հովհաննես Խան Մասեհյանը, Իտալիայում՝ Վենետիկի Մխիթարյան արքահայրը, Լոնդոնում՝ պրոֆ. Թոմասյանը և Մ.Գաբրիելյանը<sup>2</sup> շփման մեջ էին կառավարական շրջանների հետ:

Ռուսաստանում, Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Բուլղարիայում, Եգիպտոսում, ԱՄՆ-ում ստեղծվում էին արևմտահայերի պաշտպանության բազմաթիվ կոմիտեներ: Աշխուժացած հայ կազմակերպությունները դիմում էին նշված տերությունների կառավարություններին, հայտնի և հեղինակավոր դեմքերի: Ճապոնիայում և Բիրմայում բնակվող հայերը դիմեցին Հաագայի միջազգային դատարանին<sup>3</sup>: Բուլղարիայի, Ռումինիայի, Հունգարիայի, Պարսկաստանի, Հնդկաստանի, Եգիպտոսի, ԱՄՆ-ի հայ համայնքները նամակներ հղեցին ռուսական կառավարությունը, հույս հայտնելով, որ Ռուսաստանը իր վրա կվերցնի Հայկական հարցի լուծման նախաձեռնությունը<sup>4</sup>:

<sup>1</sup>Լ.Քոնրանսոն, Հայկական հարցին վերջին փուլերը, Կ.Պոլիս, 1922, էջ 53-56; Ե.Օոյան նշվ. աշխ., էջ 52-55:

<sup>2</sup>ՀԱԱ, ֆ.57, ց.5, գ.19, քթ.8-9 :

<sup>3</sup>R Davison, *ibid*, p.5

<sup>4</sup>ՀԱԱ, ֆ.57, ց.5, գ.29, քթ. 8-13.

Ստանալով Գևորգ V-ի նամակը, Եվրոպայի Հայոց առաջնորդը Անգլիայի Հայ գաղութի անուսնից 1912թ. նոյեմբերի 27-ի նամակում դիմում էր կաթողիկոսին ավելի կոնկրետ և նպաստավոր հանձնարարություններ ստանալու համար<sup>1</sup>:

Նույն օրերին Հ. Մոստիճյանը իր նամակներից մեկում գրում էր, որ Բալկանյան պատերազմի հենց սկզբին, Հայկական Հարցի լուծման գաղափարներով տոգորված, մի խումբ լոնդոնաբնակ հայերի կողմից մասնախումբ էր ստեղծվել Հայկական Հարցով զբաղվելու խորհրդակցություններ կազմակերպելու, Մանչեսթերի և Փարիզի Հայ գաղությանների հետ համագործակցելու համար<sup>2</sup>: Նա գրում էր, որ Լոնդոնի հայերը անում էին իրենց հնարավորությունների սահմաններում ամեն բան Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածին իրական կյանք տալու համար: Նրանց հաջողվել էր միմիայն անգլիացիներից բաղկացած Հայկական մասնախումբ կազմել, որին անդամակցեցին անգլիական խորհրդարանի անդամներ և այլ հեղինակավոր անձնավորություններ: Մասնախումբը միջոցներ էր ձեռնարկում, որպեսզի խաղաղության պայմանագրի կնքման ժամանակ Հայկական խնդիրն էլ ստանա իր պատշաճ լուծումը:

Հ.Մոստիճյանը հայտնում էր նաև, որ լոնդոնահայերը անհատական դիմումներ էին հղել Անգլիայի վարչապետ Հ. Ասքուիթին (H. Asquith), արտոգործնախարար Է. Գրեյին և փորձում էին անգլիացի բարեկամների միջոցով կապ հաստատել նրանց հետ: Նոյեմբերի 30-ի ավյալներով Հ.Մոստիճյանը գրում էր, որ անգլիական կառավարությունը շատ նպաստավոր կերպով էր վերաբերվում հայերի պահանջներին<sup>3</sup>:

Նման կարծիք էր հայտնում նաև Լոնդոնի Հայ հոգաբարձության ատենադպիր Պ.Տոնապետյանը: Նույն թվականի դեկտեմբերի սկզբին Անգլիայի արտոգործնախարարի օգնականը մասնավոր հանդիպման ժամանակ Պ.Տոնապետյանին խորհուրդ էր տվել գաղտնի դիմումներ անել տերություններին: Սակայն անգլիացի գիվանագետը զգուշացնում էր, թե

<sup>1</sup>Նույն տեղում, գ.31, ք.5:

<sup>2</sup>ՀՀ ԳԱԹ, Վահան Սալեզյանի ֆոնդ, գ.382, ք. 1:

<sup>3</sup>Նույն տեղում, գ.382, ք.2:

Հայերին անհրաժեշտ էր գաղանի պահել իր տված այդ խորհուրդը<sup>1</sup>:

1912թ. դեկտեմբերի 15-ի «Հորիզոնը» գրում էր, որ Լոնդոնում բնակվող Հայերը թուրքահայերի թշվառ կացության մասին մի ընդարձակ զեռութուն ներկայացրեցին Անգլիայի արտգործնախարարին, խնդրելով վերջինիս աջակցությունը Լոնդոնում հրավիրվող գեսպանների վեհաժողովի ժամանակ<sup>2</sup>:

1912թ. դեկտեմբերի 29-ին Գեորգ եպիսկոպոսը տեղեկացնում էր կաթողիկոսին, որ անգլահայ համայնքը ավելի նպատակահարմար էր գտել Ռուսաստանի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Իտալիայի, ԱՄՆ-ի, ինչպես և Անգլիայի վեհապետերին, եկեղեցական առաջնորդներին և արտգործնախարարներին հեռագրերի փոխարեն աղերսագրեր հղել<sup>3</sup>:

Անգլիայի հայության անունից 1912թ. դեկտեմբերի 31-ին Մեծ Բրիտանիայի և Իռլանդիայի միացյալ թագավորության կայսեր Գեորգ V-ին<sup>4</sup> և 1913թ. հունվարի 2-ին արտգործնախարար Է. Գրեյին<sup>5</sup> ուղղված խնդրագրերը ստորագրվել էին Եվրոպայի հայոց առաջնորդ Գեորգ եպիսկոպոսի կողմից:

Նրանցում նկարագրվում էր հայ ժողովրդի կրած դարավոր տառապանքները, մշտական հալածանքն ու սիստեմատիկ կոտորածը, կյանքի, գույքի և պատվի կատարյալ անապահովածությունը: Անգլահայերը դիմում էին անգլիական թագավորին հովանավորության և մարդկային վերարբերմունքի խնդրանքով դեպի մի քրիստոնյա նահատակ ազգը: Հայերը դիմում էին Բեռլինի պայմանագիրը ստորագրած բոլոր տերություններին՝ Հայկական հարցի լուծումը կրկին իրենց ձեռքը վերցնելու խնդրանքով: Հիշելով Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը, հայերը խնդրում էին հայկական վիլայեթներում և Կիլիկիայում հաստատել այնպիսի վարչակարգ, որը հայերին ընդմիջտ խաղաղ կյանք կապահովեր:

Մինչ խնդրագրի ուղղելը, լոնդոնահայերի հանձնախումբը տեսակցության խնդրանքով դիմել էր Անգլիայի

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ.57, ց.5, գ.31, ք.9:

<sup>2</sup> «Հորիզոն», Թիֆլիս, 1912, 15 դեկտեմբերի, N 277:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ.57, ց.5, գ.31, ք. 62:

<sup>4</sup> Նույն տեղում, ք. 90:

<sup>5</sup> Նույն տեղում, ք.70:

արտգործնախարար Է. Գրեյին: Հանձնախումբը պատասխան չստացավ: Ինչպես հայտնում էր Գեորգ Եպիսկոպոսը, միայն արտգործնախարարի մտերիմ անձանց միջոցով հանձնախումբը տեղեկացավ հավանական տեսակցության մասին: Հայ շրջանակներում այն տեսակետն էր տիրում, թե Է. Գրեյը անձամբ համակիր էր հայոց խնդրին, սակայն նպատակահարմար չէր գտնում հրապարակել իր վերաբերմունքը<sup>1</sup>:

Պաշտոնական Անգլիան աղերսազրերը ստանալուց հետո էլ, որևէ ակտիվություն չցուցաբերեց Հայկական հարցի վերաբացման վերաբերյալ: Բանն այն է, որ անգլիական կառավարությունը համար Հայկական խնդրի արծարծումն օրվա խնդիր չէր: Արևմտահայությունը ճակատագիրը տվյալ պահին ամենևին տեղ չունեի անգլիացիներին հետաքրքրությունների ոլորտում: Այս կապակցությամբ անհրաժեշտ է համառոտակի անդրադառնալ այն հարցին, թե ունե՞ր արդյոք Անգլիան Հայկական բարենորոգումների՝ 61-րդ հոդվածի իսկական հեղինակը, որևէ հետաքրքրություն Հայկական խնդրում, Արևմտյան Հայաստանի վերաբերյալ ընդհանրապես:

Հիմնահարցի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ինչպես 19-րդ դարում, այնպես էլ, 20-րդ դարի սկզբին Արևմտյան Հայաստանը անգլիացիների համար ուներ և՛ առևտրատնտեսական, և՛ օպորտունիստական նշանակություն:

Անգլիայի առևտրատնտեսական հետաքրքրություններն Արևմտյան Հայաստանում աչքի էին ընկնում նրանով, որ այդ տարածքը ոչ միայն շահավետ շուկա էր անգլիական արդյունաբերական ապրանքների համար, այլև էժան հումքի աղբյուր: 20-րդ դ. սկզբին անգլիացիները այստեղ պայքարում էին ֆրանսիացիների և հատկապես, ռուսական առևտրականների հետ: Անգլիացիներին շատ հետաքրքրել էին Արևմտյան Հայաստանի հանքային հարստությունները, հատկապես նավթի հնարավոր պաշարը: Բացի այդ Արևմտյան Հայաստանն այն տարածքն էր, որի վրայով անցնում էին Պարս-

<sup>1</sup> ԴԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 31, ք. 62:

կատտան և Կենտրոնական Ասիա տանող անգլիական արևմտասիական առևտրական ուղիները<sup>1</sup>:

Ռազմավարական առումով Արևմտյան Հայաստանը Անգլիայի համար մի պլացդարմ էր, որը կարող էր պաշտպանել նրա գաղութների մատույցները: Տիրանալով Արևմտյան Հայաստանին, Անգլիայի գլխավոր հակառակորդները՝ Ռուսաստանը և Գերմանիան, կարող էին ներթափանցել Ասիայի և Աֆրիկայի խորքերը ու սպառնալ Հնդկաստանին:

Անգլիացիները մեծ կարևորություն էին տալիս նաև այն իրողությունը, որն ակնհայտ էր բոլոր մեծ տերություններին. Արևմտյան Հայաստանին տիրողը փաստորեն անմիջականորեն կարող էր տիրել ինչպես Փոքր Ասիայի արևելյան մասին, այնպես էլ Միջագետքին և Պարսից ծոցին<sup>2</sup>: Այդ իսկ պատճառով էլ Անգլիան ամեն կերպ ձգտում էր դիմադրել այս կամ այն պետություն հատկապես Ռուսաստանի ազդեցության և զիրքերի ամրապնդմանը Արևմտյան Հայաստանում: Անհրաժեշտ է նշել նաև, որ Անգլիայի «Հայասեր» դիվանագիտության իսկական աղբյուրը և անմիջական առաջնորդ ուժը՝ սկսած 1878թ.-ից, եղել է այն հակամարտությունը, որ ուներ Անգլիան Փոքր Ասիայում և առհասարակ Թուրքիայում Ռուսաստանի դեմ: Հայկական հարցն իր հերթին օգտագործվում էր Անգլիայի կողմից որպես պայքարի գործիք Ռուսաստանի դեմ: Սակայն XX դ. սկզբին նոր, ավելի հզոր հակառակորդի՝ Գերմանիայի դեմ պայքարում աջակցություն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով, Անգլիան ծրագրված ձևով փոխում է քաղաքական մոտեցումները Ռուսաստանի հանդեպ: Ռուսաստանի հետ հարաբերությունները բարելավումը պսակվեց դաշինքով երկու պետությունների միջև: Սակայն դաշինքը չվերացրեց անգլո-ռուսական հակասությունները Արևմտյան Հայաստանում և Թուրքիայում ընդհանրապես: Անգլիան չէր հրաժարվում հակառուսական քարոզչությունից Արևմտյան Հայաստանում և,

<sup>1</sup>Անգլիայի առևտրատնտեսական հետաքրքրությունների մասին տես С.Акопян, Западная Армения в планах империалистических держав, Е- 67, стр. 71-72, 82-83.

<sup>2</sup>П.Рорбах, Воина и Германская политика, Петроград, 1915, стр. 62; Линч, Армения, т.2, Тифлис, 1910, стр.569.

առիթը բաց չլծողնելով, լարում էր նաև գերմանա-ուսսական հարաբերությունները:

Անգլիայի ռազմավարական և առևտրատնտեսական շահերն ապահովելու և ծրագրերն իրագործելու համար Թուրքիայում տիրող կարգերն ամենևին խոչընդոտ չէին, իսկ Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրագործումն էլ անհրաժեշտություն չէր համարվում: Հայկական հարցի վերաբացումը 1912թ. վերջին և 1913թ. սկզբին այնքանով էր համահունչ Անգլիայի շահերին, որքանով դա կարող էր անդրադառնալ Օսմանյան կայսրության status quo-ին:

Վերը շարադրածից հետևում է պաշտոնական Անգլիայի քաղաքական դիրքորոշման անորոշությունը՝ որոշ չափով չեզոք զիրքի դրսևորման ցանկությունը Հայկական հարցի վերաբացման հանդեպ:

1913թ. հունվարի 11-ին փոխնախարար, արտգործնախարարության արևելյան բաժանմունքի պետ Լ.Մալլեթը (L.Mallet) արտգործնախարարի կարգադրությունում տեղեկացրեց Գևորգ եպիսկոպոս Յուլիանին անգլիական թագավորին ուղղված խնդրագրի ստացման մասին, որը Գևորգ V թագավորի կարգադրությամբ փոխանցվել էր է.Գրեյին<sup>1</sup>: Լ.Մալլեթը զգուշացնում էր, որ այսուհետև տվյալ հարցի վերաբերյալ հնարավոր հաղորդագրություններն ու դիմումները հասցեագրվեն Անգլիայի արտգործնախարարությանը<sup>2</sup>:

Պաշտոնական երկխոսությունն այդքանով սահմանափակվեց: Անգլիացիների կողմից որևէ քայլ չէր նախատեսվում: Գևորգ եպիսկոպոսը զրում էր կաթողիկոսին, որ արտգործնախարար Գրեյը, չնայած տված խոստմանը, չէր պատրաստվում ընդունել հայ ներկայացուցիչներին: Մեկամսյա ապարդյուն սպասումից հետո Գևորգ եպիսկոպոսը, որ հատուկ տեսակցություն նպատակով ժամանել էր Լոնդոն, 1912թ. դեկտեմբերի վերջին, վերադարձավ Մանչեսթեր: Գևորգ եպիսկոպոսը տեղեկացնում էր նաև, որ ի պատասխան ուղղված աղերսագրերի մեծ տերություններից, այն էլ ոչ բո-

<sup>1</sup>«Բյուզանդիոն», Կ.Պոլիս, 1913, 18 հունվարի, N 4947.

<sup>2</sup>ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 31, ք. 65:

լորից՝ բացի Անգլիայից, միայն Ֆրանսիայից և ԱՄՆ -ից, ստացվիլ էին պարզ ստացականներ, գրեթե անկարևոր<sup>1</sup>:

Նշված ժամանակահատվածում համեմատաբար պարզ էր Ռուսաստանի դիրքորոշումը<sup>2</sup>: Ռուսական կառավարութ-յունը պահը հարմար չէր գտնում Լոնդոնի կոնֆերանսում Հայկական հարցը արծարծելու համար և խորհուրդ էր տալիս հայերին սպասել<sup>3</sup>: Ըստ ուսսական կառավարության, Հայկական հարցը կրարծրացվեր Բալկանյան պատերազմի կապակցությամբ կայանալիք համաժողովից հետո՝ առանձին կոնֆերանսում<sup>4</sup>: Ռուսաստանի արտգործնախարար Ս.Սազունովը հայոց կաթողիկոսի ուշադրությունն էր հրավիրում այն բանին, որ արևմտահայերի խնդրի քննարկումը առաջիկա կոնֆերանսում չէր համապատասխանում հենց հայերի շահերին: Ռուս դիվանագետը համոզված չէր եվրոպական տե-րությունների հայամեծ դիրքորոշմանը և համաձայնության կայացմանը: Դրանից կարող էին օգտվել թուրքերը: Այդ իսկ պատճառով, ուսսական կառավարությունը խորհուրդ էր տալիս, որ հայերը դիմումներ չհղեին Ռուսաստանին և չբար-դացնեին նրա կողմից արևմտահայերի դրության բարելավ-մանը ուղղված ջանքերը<sup>5</sup>:

Հետևելով ուսսական կառավարության խորհրդին հայոց կաթողիկոսը 1913թ. հունվարի սկզբին հեռագրեց Փարիզ՝ Նուբար փաշայի գլխավորած պատվիրակությանը: Նա գրում էր. «Կշռագատելով տեղն ու հանգամանքները աշխատեք եվ-րոպական դիվանագիտական շրջաններում ստեղծել նպաստա-վոր տրամադրություն, որպեսզի ուսսական կառավարությունը ստանձնի Արևմտյան Հայատանում բարենորոգումներ անց-կացնելու նախաձեռնությունը, անշուշտ մյուս մեծ տերութ-յունների համաձայնությամբ»<sup>6</sup>:

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 31, ք. 92:

<sup>2</sup> 1912-1914թթ. Հայկական հարցի նկատմամբ Ռուսաստանի քաղաքա-կանության մասին մանրամասն տես Ք.Коджоян, Русская дипломатия и проблема реформ в Западной Армении накануне первой мировой войны, дис. канд., ист., наук, Ереван, 1989; Մ.Մարտիրոսյան, Армянский вопрос и рус-ская дипломатия 1912-1914 гг., дис., канд., ист., наук, Ереван, 1990.

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 133, ց. 3, գ. 1011, ք. 1-2:

<sup>4</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, ք. 12:

<sup>5</sup> Նույն տեղում, ք. 6:

<sup>6</sup> Նույն տեղում, ք. 22:

Դեռ 1912թ. դեկտեմբերին՝ մինչ Լոնդոնի Համաժողովի աշխատանքների սկսելը, ռուսական կառավարութիւնը, գիտակցելով Հայկական հարցի լուծման բարդութիւնն ու բոլոր գովարութիւնները, անհրաժեշտ էր համարել սկսել կարծիքների փոխանակութիւն և առաջարկել էր Փարիզին և Լոնդոնին ընդհանուր հայեցակետ և միասնական գործողութիւնների ծրագիր կազմել<sup>1</sup>:

Ռուսաստանի առաջարկութեանը արձագանքեց միայն ֆրանսիական կառավարութիւնը: Ֆրանսիայի վարչապետ Ռ.Պուանկարեն հայտնում էր, որ Հայկական հարցում միանում էր Ս.Սազոնովի տեսակետին և լիազորում համապատասխան հրահանգներով Ռուսաստանում և Թուրքիայում Ֆրանսիայի ղեսսականներին<sup>2</sup>:

Անգլիական կառավարութիւնը լուծիւն պահպանեց: Սակայն այդ լուծիւնն էլ յուրովի պատասխան էր, և ինչպես ֆրանսիական կառավարութեան պատասխանը նշանակում էր, որ Հայկական խնդրի քննարկումն անժամանակ էր համարվում: Նշված ժամանակահատվածում Անգլիայի արտգործնախարարը բաղմամբով անգամ հայտարարել էր խորհրդարանում, որ ցանկալի էր զգուշանալ Արեւմտյան Հայաստանի վերաբերյալ Բ.Դուանը որեէ քաղաքական պահանջներ ներկայացնելուց<sup>3</sup>:

Հայկական հարցով զբաղվելու Ռուսաստանի առաջարկութիւնը չընդունվեց Անգլիայի կողմից: Անգլիական ղրովանագետներն ավելի հակված էին «հավատար» թուրքական կառավարութեան այն հայտարարութեանը, որ Բ. Դուանը սեփական նախաձեռնութեամբ որոշել է արմատական բարենորոգումներ իրագործել Հայկական վիլայեթներում<sup>4</sup>:

Անգլիայի արտգործնախարարութեան պաշտոնյաները համոզմունք էին արտահայտում, թե Քյամիլ փաշայի իթիլաֆական կառավարութիւնը կպաշտպանի հայերին: Իթիլաֆական հեղաշրջումից հետո Կ.Պոլսում անգլիական ղեսսանատան հավատարմատար Չ.Մարլինգը լավատեսութեամբ

<sup>1</sup>Реформы в Армении..., стр. 10.

<sup>2</sup>Там же, стр.15.

<sup>3</sup>«Մշակ», 1914, N 51, մարտի 8:

<sup>4</sup>«Յորիզոն», 1912, N 278, դեկտ.16:

լցված, տեղեկացնում էր Է. Գրեյին հայերի հանդեպ Մուխթար փաշայի կառավարութեան բարյացակամ վերաբերմունքի մասին: Նա նշում էր, որ նախորդ ոչ մի թուրքական կառավարութեան նման լավ տրամադրվածութեամբ չի վերաբերվել հայերին<sup>1</sup>:

Անգլիացիները համարում էին, որ խաղաղ պայմաններում իթիլաֆական կառավարութեանը մեծ հաջողութեաններ չկարող էր հասնել, սակայն Բալկանյան պատերազմը խոչընդոտեց ակնկալվող գործընթացը և բացասաբար անդրադարձավ Թուրքիայի իրավիճակի վրա:

Անհրաժեշտ է նշել, որ Բալկանյան պատերազմի բռնկումը չէր փոխել անգլիացիների վերաբերմունքը դեպի Հայկական հարցը: Արտգործնախարարութեանում տիրող ընդհանուր կարծիքն այն էր, որ Անգլիան ոչինչ չէր կարող անել ի պաշտպանութեան Փոքր Ասիայի հայ բնակչութեան: Այս կարծիքը կարականապես տարբերվում էր Անգլիայի ռազմական նախարարութեան տեսակետից՝ հանձինս պաշտոնյա Աթքինի (Atkin): Նա հայերին պաշտպանելու համար առաջարկում էր ոչ պակաս, քան անգլիական նավերի զավթախուժում<sup>2</sup>:

Անգլիայի արտգործնախարարութեանն անտեսում էր ոչ միայն ռազմական նախարարութեան կարծիքները, այլև անգլիական հասարակական տարբեր կազմակերպութեանների դիտարկումներն ու առաջարկութեանները: Նրանք անհրաժեշտ էին համարում կիրառել հայկական վիլայեթներում Լիբանանի համար հաստատված կառավարման համակարգը, կամ սերուլթեանների կողմից հսկվող քրիստոնյա անկախ կառավարչի նշանակումը հայկական վիլայեթների համար:

Արտգործնախարարութեան մշտական փոխնախարար Արթուր Նիքոլսոնը (Arthur Nicolson) կարծում էր, որ ստեղծված յուրջ զժվարութեանների պայմաններում արգարացի կլինեք ժամանակ տալ զբաղվել առավել կարևոր՝ անհետաձգելի խնդիրներով և չանհանգստացնել թուրքերին այլ հարցերի կապակցությամբ: Իսկ արտգործնախարարութեան արևելյան բաժանմունքի պետ Լ. Մալլեթը այն կարծիքին էր, որ «Ճ1-րդ հոդվածը անհրաժեշտ կլինեք վերաքննարկել միայն այն դեպ-

<sup>1</sup> J. Heller, *Ibid.*, p 5.

<sup>2</sup> Նույն տեղում p.5

քում, երբ Բեռլինի պայմանագիրն ամբողջությամբ վերանայելու համար հատուկ վեհաժողով կզուսմարվեր»<sup>1</sup>:

Անգլիական գլխնագիրտութեան նման վերաբերմունքը Հայկական խնդրի լուծմանը բացատրվում էր մի շարք հանգամանքներով.

1/ Քյամիլ փաշայի՝ իթիլաֆական կառավարութիւնը չթուլացնելու ցանկութեամբ և գերմանամետ իթիլահատականների կողմից իշխանութեան վերագրուման մտավախութեամբ:

2/ անգլիացիները չէին կարող անտեսել այն, որ Հայկական հարցի նկատմամբ աջակցողական գիրքի բացահայտ դրսևորումը կարող էր առաջացնել անգլամետ իթիլաֆական կառավարութեան հիասթափութիւնը անգլիացիների հանդեպ: Դա հակասում էր անգլիացիների նկրտումներին: Առանց այդ էլ անգլիացիների կողմից Բալկանյան պետութիւնների շահերի պաշտպանութիւնը խարխլում էր Թուրքիայում կրկին վերականգնված Անգլիայի ազդեցութիւնը: Օգտվելով իրենց վերահաստատված գիրքից, անգլիացիները ձգտում էին վերջապես լուծում գտնել այն վիճելի հարցերի շուրջ, որ ներկայացնում էին Անգլիայի տնտեսական շահերը Թուրքիայում: Տարիներ շարունակ անգլիական գլխնագիրտութիւնը պայքարում էր Բաղդադի երկաթգծի կառուցման գործում, Մոսուլի և Բազադի նավթային կոնցեսիաների ձեռք բերման, Միջագետքում և Պարսից ծոցում իր գերակայութիւնը հաստատելու համար:

3/ Հայկական հարցի լուծումը, ինչպես սահմանադրական ցանկացած բարեփոխում նշված ժամանակահատվածում, չէր համապատասխանում Անգլիայի հետաքրքրութիւններին: Ավելին, դրանք կարող էին անգամ որոշ բարդութիւններ առաջացնել:

Այդ կապակցութեամբ անհրաժեշտ է նշել, որ հենց երիտթուրքական հեղափոխութիւնն ու սահմանադրութեան հաստատումն անհանգստութիւն էին առաջացրել Անգլիայում, չնայած անգլիական կառավարութիւնը ժամանակին ողջունել էր սուլթանի կողմից սահմանադրութեան հրատարակ-

<sup>1</sup> J. Heller, Ibid., p.6.

կումը: 1908թ. հունիսին արտգործնախարար է. Գրեյը մեծ վե-  
զիր Սաիդ փաշային հայտնում էր անգլիական կառավար-  
ուելթյան համոզմունքը, թե Մակեդոնական, Հայկական և  
նման բոլոր հարցերը կարող էին լուծում ստանալ միմիայն  
այն ղեկավարում, երբ թուրքական իշխանություն տակ գտնվող  
բոլոր տիրույթներում հաստատվեն «լավ կառավարում»<sup>1</sup>:

Ժամանակը ցույց տվեց, որ «լավ կառավարումը» չէր, որ  
մտահոգում էր անգլիացիներին: Թուրքիային օգնելու նրանց  
պատրաստակամությունը բխում էր Աբդուլ Համիդի օրոք  
Թուրքիայից Անգլիայի դուրս մղված ազդեցություն վերա-  
կանդնման ու անգլո-թուրքական վատթարացած հարաբե-  
րությունների բարելավման ձգտումից: Անգլիացիներն  
ակնկալում էին, որ նոր իշխանությունները կնպաստեն  
Թուրքիայում բրիտանական կապիտալի ներդրումներին: Սա-  
կայն անգլիացիներին չհաջողվեց իթթիհատականների օրոք  
իրականացնել իրենց ծրագրերը: Անգլիայի արտգործնախար-  
արի գաղտնի հրահանգում, հասցեագրված Կ.Պոլսում անգ-  
լիական դեսպանին, ասվում էր. «եթե Թուրքիան իսկապես ի-  
րական սահմանադրություն մտցնի և ամրապնդվի, ապա  
դրա հետևանքները շատ հեռու կտարածվեն, քան կարելի է  
պատկերացնել հիմա»<sup>2</sup>:

Է. Գրեյի մտավախությունները կապված էին առաջին  
հերթին Եգիպտոսի և Հնդկաստանի հետ: Արտգործնախարարը  
նշում էր, որ նախքան երիտթուրքական հեղաշրջումը Անգլիա-  
յի մահմեդական հպատակները համեմատելով սուլթանական  
իշխանության ներքո գոյատևման պայմանները անգլիական  
կառավարման հետ, պատրաստ էին նախապատվությունը տալ  
անգլիացիներին: Մինչդեռ այժմ, երբ երիտթուրքերը պառլա-  
մենտական կարգ էին հաստատել և պատրաստվում էին բա-  
րելավել կառավարումը, Եգիպտոսում ևս մեծ թափ կստանա-  
յին Սահմանադրության պահանջները: Իսկ եթե, նշում էր  
Է. Գրեյը, երիտթուրքական Սահմանադրությունը կանոնավոր  
գործեր, ապա Անգլիայի վիճակն էլ ավելի կբարգանար, քանի

<sup>1</sup>Ա. Կիրակոսյան, նշվ. աշխ., էջ 385:

<sup>2</sup>А. Ф. Муллер, Краткая история Турции, М., 1948, стр. 126-127.

որ անգլիացիներն ստիպված կլինեին ուժի միջոցով ճնշել սահմանադրական պահանջներն Եգիպտոսում<sup>1</sup>:

Պարզ է, որ սահմանադրական բարեփոխումների կենսագործումը Թուրքիայում իրականում չէր համապատասխանում Անգլիայի շահերին: Իրագարծութունների զարգացումը հաստատեց անգլիացիներին, որ այդ կապակցություններ անհանգստություն առաջ էր հանում: «սահմանադրական» երիտթուրքերը ոչնչով չէին տարբերվում իրենց նախորդներից և բարեփոխումներ իրագործելու մտադրություն չունեին: Այդուհանդերձ Հայկական հարցի լուծման այս կամ այն տարբերակն իր հերթին, ըստ անգլիացիների, կարող էր անդրադառնալ Անգլիայի շահերին: Անգամ կիսաինքնավարության հատկացումը հայերին կարող է վատ օրինակ ծառայել անգլահպատակ մահմեդականների համար:

4/ Հայկական հարցին պատշաճ ուշադրություն ցուցաբերելուց անգլիացիներին հա էր պահում նաև հետևյալ շինծու հանգամանքը. Անգլիայի արտաքին գործերի և հասկապես ռազմական նախարարություններում մտավախություն կար, որ Թուրքիան, որպես հատուցում Բալկանյան պատերազմում կրած նվրոպական տարածքների կորուստների, կցանկանար նոր ձեռքբերումներ կատարել այլ ուղղություններում՝ օրինակ Եգիպտոսում<sup>2</sup>: Նման հավանականությունը իրատեսական չէր: Փլուզման ելքին կանգնած Թուրքիան ի վիճակի չէր նոր զավթումների: Այդուհանդերձ, այն «անհանգստացնում էր» անգլիացիներին և հոտ պահում նրանց ավելորդ հրահրումներից Թուրքիային:

Նշված հանգամանքներից բացի, անգլիական դիվանագետները խուսափում էին միջամտությունից Հայկական հարցին և ձգտում էին արգելակել նրա արժարժումն այն պատճառով, որ ավելի չխորացվեր Թուրքիայի ծանր վիճակը: Այն կարող էր նպաստել նվրոպական տիրույթների հետ մեկտեղ նաև Օսմանյան կայսրության ասիական տարածքների անջատմանը: Նման մասնատումը, ըստ անգլիացիների, կբերեր Օսմանյան կայսրության փլուզմանը: Անգլիացիները հա-

<sup>1</sup>British Documents on the Origins of the War 1898-1914 (այսուհետև BDOW), Gough and Temperley, London, 1936, Vol 5, p. 263

<sup>2</sup>FO, 125 / 2452, N 1124, p 208

մողված էին, որ տերություններն առանց հասպաղելու կիրա-  
գործեին իրենց զավթողական ծրագրերը. Ռուսաստանը  
կգրավեր Հայաստանը, Գերմանիան՝ Անատոլիան, Ֆրանսիան՝  
Սիրիան: Թուրքիայի նման վախճանը տվալ սլահին չէր հա-  
մապատասխանում Անգլիայի շահերին: Անգլիական դիվանա-  
պետությունն այն կարծիքին էր, որ անհրաժեշտ էր աջակցել  
Օսմանյան կայսրությանը պահպանվել զոնն որպես ափա-  
կան պետություն<sup>1</sup>:

Դեմ լինելով Հայկական հարցի քննարկմանը Լոնդոնի  
համաժողովում, է. Գրեյը Փարիզում անգլիական դեսպանի մի-  
ջոցով տեղեկացնում էր Նուբար փաշային, թե «դիվանագի-  
տական սեղանն այն աստիճան ծանրաբեռնված էր, որ Հայկա-  
կան հարցի ավելացման դեպքում այն չէր դիմանա և ան-  
պայման կճոճվեր: Հայկական հարցը կքննարկվեր որոշ հար-  
ցերի պակասելու դեպքում»<sup>2</sup>: Հայության դիմումների պա-  
տասխանն էր նաև Անգլիայի վարչապետ Չ.Չ. Ասքուելթի  
Գիլգհոլում արտասանած ճառի այն պարբերությունը, թե  
«պատվիրակները արամադիր չեն արտաքին խնդիրներով  
կնճոռտել դեսպանաժողովի ելքը»<sup>3</sup>:

Ասիայի Բալկանյան առաջին պատերազմում Թուրքիայի  
անհաջողությունները փոխեցին անգլիացիների դիրքորոշու-  
մը: Այժմ և՛ անգլիական կառավարությունը, և՛ արտգործնա-  
խարարությունը չէին կարող անտեսել անգլիական հյուպա-  
տոսների հազորագրությունների հոսքը, ուր մատնանշվում  
էր Հայկական հարցը կարգավորելու թուրքական կառավա-  
րության անկարողությունը<sup>4</sup>:

Արտաքննապետ Անգլիայի արտգործնախարարությունը  
շարունակում էր վերաբերվել Հայկական հարցին որպես թուր-  
քական կայսրության ներքին հարցի, սակայն իրականում

<sup>1</sup>Ավելորդ չի լինի նշել, որ Անգլիայի դիրքորոշումը Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման նկատմամբ կտրուկ կերպով փոխվեց առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երբ թուրքիան հանդես եկավ գերմանական բլոկում: Այդ մասին է վկայում 1915-1916թթ. Սայքս-Պիկոյի պայմանագիրը Ասիական թուրքիայի բաժանման մասին:

<sup>2</sup>«Բյուզանդիոն», 1913թ., 16 հունվարի, N 4945; «Ազատամարտ», 1913, 29 հունվարի, N 1112:

<sup>3</sup>«Ազդակ», Կ.Պոլիս, 1913, հունվարի 13, N 2-1110:

<sup>4</sup>FO. 195 / 24 50, pt. 5, p. 99.

նրա վերաբերմունքը դեպի թուրքական կառավարումը Փոքր Ասիայում հիմնավոր փոփոխություն էր կրում :

1913թ. հունվարի կեսին Անգլիայի արագործնախարարությունը լուրջ անհանդուստություն պատճառեց թուրքիայում անգլիական դեսպան Ջ. Լոութերի (G.Lowther) տեղեկությունները, որ հայերն այլևս չէին բավարարվի «կիսամիջոցներով», այլ կգերադասեին ձգտել խնդրի վճռական լուծման՝ ինքնավարություն Ռուսաստանի հովանավորության ներքո<sup>1</sup>: Լ.Մալլեթը կարծում էր, որ հայերի համակրանքը դեպի Ռուսաստան կարող էր հանգեցնել Փոքր Ասիայի բաժանմանը տերությունների միջև: Ինչը տվյալ փուլում կարող էր ծառայել Ռուսաստանի շահերին: Ա.Նիքոլսոնն ավելի անհանգստացած էր: Հայկական վիլայեթների բռնազավթումը Ռուսաստանի կողմից նա ժամանակի հարց էր համարում: Անգլիայի անհանդուստությունն այդ կապակցությամբ նույն էր, ինչ 1877-1878թթ. ուս-թուրքական պատերազմի բնթացքում: 1877թ. դեկտեմբերի 4-ին Կ.Պոլսում Անգլիայի գեսպան Հենրի Լեյարդը (Henry Layard) արագործնախարար յորդ Դերբիին (Derby) հղած զադանի գեկուցագրում նշում էր, որ, եթե Ռուսաստանը ձեռք բերեր Հայաստանը, կամ նրա մի մասը, ապա դա կփտանգեր Արևելքում Անգլիայի շահերը: Դա նաև խիստ բացասական ազդեցություն կունենար Կենտրոնական Ասիայի մահմեդական բնակչության վրա, կնպաստեր Ռուսաստանի հետագա հաջողություններին Պարսկաստանում և Փ.Ասիայում, կսպառնար Հնդկաստանի հետ Անգլիայի հաղորդակցության ուղիներին և կվնասեր բրիտանական առևտրին<sup>2</sup>:

Նման կանխատեսումների իրականացումը հակասում էր Անգլիայի կենսական շահերին նաև 1913թ: Ռուսաստանի աշխուժացումը Հայկական հարցում մտահոգում էր անգլիական դիվանագետներին: Հասկանալով, որ Հայկական հարցի բարձրացման դեպքում պատիվ դիրքորոշումը կարող էր առավելություններ ապահովել Ռուսաստանին, ինչպես նաև խնդրի նկատմամբ ակտիվություն ցուցաբերող Գերմանիայի

<sup>1</sup> J.Heller, Ibid., p. 6.

<sup>2</sup> British Documents on Ottoman Armenians. Vol.1 /1856-1889 /, Ankara,1982, pp. 135-140.

Համար<sup>1</sup>, անգլիական կառավարութիւնը շտապեց փոխել Հարցի նկատմամբ իր քաղաքական մոտեցումները և ավելի ակտիվ դիրք զբաղել:

Անգլիական կառավարութիւնը մեծ զգուշութեամբ էր վերաբերվում ասիական վիլայեթներում բարենորոգումներ անցկացնելու քաղաքականութեանը: Տերութիւնների հետ դիվանագիտական կարծիքների փոխանակումների ժամանակ անգլիական կառավարութիւնը շարունակում էր լավատեսութիւն արտահայտել Հայկական Հարցը լուծելու Բ. Դռան Հնարավորութիւններին: Սակայն արտգործնախարարութիւնն այլևս չէր փոտահում և մեծ նշանակութիւն չէր տալիս Քյա-միլ փաշայի կառավարութեան գործունեութեանը:

է. Գրեյը Համարում էր, որ ժամանակն էր նկատի առնելով Ռուսաստանի նկրումները պաշտպանել Անգլիայի հավակնութիւնները<sup>2</sup>: Այս մոտեցումն ավելի էր հասունանում 1913թ. հունվարի վերջին: Երիտթուրքերն օգտագործելով օսմանյան բանակի պարտութիւնները Բալկանյան պատերազմում, 1913թ. հունվարի 10-ին հեղաշրջում կատարեցին և բռնազավթեցին իշխանութիւնը:

Գայով իշխանութեան իթիհատականները վերսկսեցին պատերազմը Բալկաններում: Թուրքական բանակը նոր պարտութիւններ էր կրում, որոնք ավելի էին ծանրացնում իրապիճակն Օսմանյան կայսրութեան արևելյան նահանգներում: Երիտթուրքերը, կուրացած այն վախից, որ կայսրութեան արևելյան մասում նույնպես կարող են կորցնել ոչ թուրք շրջանները, այլևս զանազանութիւն չէին դնում թշնամիների և նրանց միջև, ովքեր իրենց հավատարիմ դաշնակիցներ էին եղել: Կարգախոս էր դարձել «Ասիո մեջ բռնի ուժով թրքացնել արաբներին, քրդերին և այս, կամ այն ձևով ազատվել հայերից և հույներից»<sup>3</sup>: «Կավկազ» թերթն այդ օրերին գրելով Վանում, Բիթլիսում, էրզրումում ստեղծված ծանր իրապիճակի մասին, թվարկում էր դյուղեր, որտեղ բա-

<sup>1</sup> 1912-1914թթ. Հայկական հարցի նկատմամբ Գերմանիայի քաղաքականության մասին մանրամասն տես Ա. Խաչատրյան, Կապդերական Գերմանիան եվ հայկական բարենորոգումները 1912-1914թթ.:

<sup>2</sup> J. Heller, Ibid., p 6

<sup>3</sup> Արմեն Գարո, Վերջին տեսակցությունը Թալեատ փաշայի հետ, «Հայրենիք», Բոստոն, 1922, N 2. էջ 39:

խումբները շարունակելի էին դարձել: Թերթը գրում էր, որ նշված օրերին, երբ հայկական վիլայեթներում աննշան սաղմական ուժեր էին կենրարոնացած, միայն ուսական գորքերի ներխուժման վախն էր, որ որոշ չափով դապում էր համիդեական ավազակախմբերի ղեկավարներին<sup>1</sup>:

Հեղաշրջումից հետո՝ արևմտահայերի համար ստեղծված վտանգավոր պայմանների մասին Կ.Պոլսից ստացված տեղեկություններն առանց որևէ կասկածի ընդունվում էին Անգլիայի արագործնախարարությունում: Այստեղ տիրող համոզմունքը, որն արտահայտվում էր արագործնախարարության քարտուղար Հ.Նորմանի (H.Norman) մեկնաբանություն մեջ հետևյալն էր. արևմտահայերի կոտորածը կանխելու և վիճակը բարելավելու միակ ճանապարհն Արևմտյան Հայաստանի բռնագավթումն էր Ռուսաստանի կողմից<sup>2</sup>: Այդուհանդերձ այս կարծիքը չէր հրապարակվում և անգլիացիները գործնական ոչինչ չէին ձեռնարկում:

Է.Գրեյը համաձայն էր ղաշնակիցների՝ Յրանխայի և Ռուսաստանի դիվանագետների հետ, թե տվյալ պահին նպատակահարմար չէր բարձրացնել Հայկական հարցը: 1913թ. հունվարի 23-ին Է.Գրեյն առաջարկում էր առաջին հերթին իսպաղություն հաստատել Բալկանյան պետությունների և Թուրքիայի միջև: Գրեյը հույս էր տածում, որ Բալկանյան պատերազմի ավարտից հետո տերությունները կօղնեին Օսմանյան կայսրությանը ոտքի կանգնել ասիական տիրույթներում և որ այդ դեպքում հնարավորություն կստեղծվեր զբաղվել Փոքր Ասիայի բարենորոգումների խնդրով<sup>3</sup>:

1913թ. փետրվարի 15-ին հայկական պատվիրակության անդամ Հ.Մոստիճյանը Լոնդոնից տեղեկացնում էր Կ.Պոլսի հայոց պատրիարքին, որ Անգլիայի բարեկամների տրամադրությունը փոքր-ինչ փոխվել է: Նրանք նպատակահարմար չէին գտնում տվյալ պահին քայլեր ձեռնարկել Հայկական խնդրի լուծման համար<sup>4</sup>:

<sup>1</sup>“Кавказ”, 1913, 8 февраля, N 32 .

<sup>2</sup>J.Heller, Ibid. p.7.

<sup>3</sup>BDOU, Vol. 10, London, 1936, N 475.

<sup>4</sup>ՀՀ ԳԱԹ, Վահան Մալեգյանի ֆոնդ, գ.382, ք.4:

Հայկական հարցի վերաբացման հանդեպ անգլիական կառավարության խուսափողական դիրքն այժմ բացատրվում էր ոչ միայն բալկանյան խնդիրների լուծման առաջնահերթությունը, այլև թեյազրվում էր գերմանամետ տրամադրվածությունն ունեցող երիտթուրքական կառավարության հետ հարաբերությունների ամրապնդման և զարգացման ցանկությունը, Թուրքիայում դեռ որոշ չափով առկա անգլիական ազդեցությունը պահպանման ձգտումով:

1913թ. մարտի սկզբին սկսում են թուրք-անգլիական բանակցությունները:

Նախկին մեծ վեցիր Հաքքի փաշային, որը գտնվում էր Լոնդոնում այլ հարցերի քննարկման կապակցությամբ, կարգադրվել էր համոզել անգլիական կառավարությանը, որ հայկական վիլայեթներում առանձին բարենորոգումներ մտցնելն անցանկալի էր, որ առավել զերադասելի էր բարենորոգումներ անցկացնել ամբողջ երկրում<sup>1</sup>: Անգլիական կառավարությունը, ինչպեսև մյուս տերություններն ու հատկապես հայերը, լավ էր հասկանում, երիտթուրքերի ծրագրերը: Մի կողմ թողնելով Քյամիլ փաշայի՝ միայն հայկական վիլայեթների համար նախատեսվող սահմանափակ բարեփոխումների ծրագիրը և գիմելով բազմիցս փորձված միջոցի՝ ընդհանուր բարենորոգումներ հայտարարելուն, երիտթուրքերը հետապնդում էին հետևյալ նպատակները. խուսափել օտարերկրյա միջամտությունից և անցանկալի հայկական ինքնավարությունից: Անգլիացիները կարծում էին, որ թուրքական սոլյալ կառավարությունից ոչ մի լուրջ ձեռնարկում սպասել չէր կարելի: Արագործնախարարությունում համամիտ էին դեպքան Լուլթերի հետ: Նա համոզված էր, որ քանի դեռ զործադիր իշխանությունը հայկական վիլայեթներում գտնվում էր Բ. Գուան ձեռքում, հայերի համար հնարավոր չէր որևէ բան անել: Խնդրի միակ լուծումը, բայց դեպքանի, անկասկած օտարերկրյա հսկողության հաստատումը կարող էր լինել<sup>2</sup>: Ավելի ուշ անգլիական գիվանազետները համոզվեցին, որ այդ հսկողությունը նույնպես անօգուտ կլինի, քանի դեռ հենց

<sup>1</sup>Реформы в Армении..., сmp. 21.

<sup>2</sup>J. Heller, Ibid., p. 7-8.

իրենք երիտթուրքերը չէին ցանկանում բարելավել հայերի պայմանները:

Այդուհանդերձ, հայկական վիլայեթներում բարենորոգումներ անցկացնելու նպատակով, անգլիացիները գործնականում բացառում էին ուժային միջոցների գործադրումը: Լոնդոնից Գեորգ եպիսկոպոս Յուլիոսյանը հայտնում էր հայոց կաթողիկոսին, որ անգլիական կառավարութունն ու ղեկավարողներն իրենց պետական շահերին չվնասելու նպատակով գործում էին հօգուտ Թուրքիայի: Նրանք առաջարկում էին չբարձրացնել Հայկական հարցը տերութունների խորհրդատուի մոտ, այլ՝ անհրաժեշտ նյութական և բարոյական օգնություն ցուցաբերելով Թուրքական կառավարությանը, ամբապնդել կենտրոնական իշխանության ազդեցությունը դավառներում և հենց Թուրքերի ձեռքով գործադրել բարենորոգումները: Եզրափակելով իր նամակը, եպիսկոպոսը գրում էր, որ «Անգլիան այժմ հայերի համար անօգուտ եղիվ է, որին բնավ չենք կարող փստահել: Միակ փստահելի և ճշմարիտ դարձանն ու ազատարարը Ռուսաստանն է»<sup>1</sup>:

Պաշտոնական Անգլիան շարունակում էր ծայրագույն զգուշավորություն դրսևորել Հայկական խնդրի նկատմամբ: Քանի դեռ կարգավորված չէին բալկանյան խնդիրներն անգլիացիները միայն խորհուրդներով էին բավարարվում: 1913թ. մարտի վերջին Լոնդոնից Կ.Պոլսի հայոց պատրիարքի ներկայացուցիչ Ա. Գաբրիելյանը տեղեկացնում էր, որ արտգործնախարար Է. Գրեյը խոստացած տեսակցությունը դեռ չէր արժանացրել ինչպես Անգլիայի հայկական դաշնակցի ներկայացուցիչներին, այնպես էլ Ամենայն Հայոց կաթողիկոսի պատվիրակությանը: Ա. Գաբրիելյանն ավելացնում էր, որ Է. Գրեյը կրկին խորհուրդ էր տվել. «առայժմ հապաղել Հայկական հարցի հարուցելուց՝ առավել կարևոր հարցերի լուծման պատճառով»<sup>2</sup>:

Անգլիացիները շարունակում էին հուսալ, թե Բ. Դուռն անհապաղ քննարկման կենթարկի խնդիրը և կկարգադրի վախճաններին բոլոր միջոցները ձեռք առնել հայերին պաշտպա-

<sup>1</sup>ՅԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 152, ք. 12-13:

<sup>2</sup>ՅՀ ԳԱԹ, Ա. Չոպանյանի ֆ., բաժին 2, գ. 783, ք. 2-3:

նելու համար<sup>1</sup>: Անգլիական դիվանագետները ձգտում էին հայկական վիլայեթներում աճող հուզումների դեմն առնել: Նրանք ոչ պաշտոնապես զգուշացնում էին թուրքական կառավարութանը քրիստոնյա բնակչութանն սպառնացող վտանգի մասին, որը կապված էր Բալկանյան թերակղզուց փերադարձող և Փոքր Ասիայում տեղակայվող զորամասերի հետ<sup>2</sup>:

Սակայն լուրերն Արևմտյան Հայաստանից, հատկապես Վանից, ավելի ու ավելի տապնապալից էին<sup>3</sup>: 1913թ. ապրիլին զանգվածային ջարդեր սկսվեցին Դիարբեքիրում: Մի շարք վայրերում Բեգիրխանի գլխավորած քրդական զինված ջոկատներն իշխանությունն իրենց ձեռքն էին վերցրել: Կառավարությունն ստիպված էր գործ ուղարկել վիլայեթում կարգ ու կանոն հաստատելու համար: Տեղեկություններ էին ստացվում Բիթլիսում, Էրզրինջանում, Հաճնում պատրաստվող կոտորածների մասին: Ապրիլի 24-ի հեռագրում ղեսպան Ջ.Լոութերը, Հայտնելով թուրքական կառավարութան թուլության և կառավարելու անկարողության մասին, նշում էր, որ միայն բարենորոգումների արագ իրագործումը կարող էր կարգավորել իրավիճակը Երզնկայում, Դիարբեքիրում, Բիթլիսում<sup>4</sup>:

Ստանալով այդ և նմանօրինակ տեղեկություններ Ազա-նայից, Բեյրութից, Հալեպից, Մոսուլից, Անգլիայի արտգործնախարարությունում տիրեց այն համոզմունքը, որ Օսմանյան կայսրության փլուզումն Ասիայում, ճիշտ այնպես, ինչպես Եվրոպայում, ժամանկի հարց էր<sup>5</sup>:

Ինչպես արդեն նշվել է մեր կողմից, Անգլիան դեմ չէր Օսմանյան կայսրության փլուզման դեպքում ընդլայնել իր գաղութային տարածքները և Թուրքիայի տիրույթների ձեռք

<sup>1</sup>FO, 195 / 2450, pt. 3, p. 111.

<sup>2</sup>Նույն տեղում, p. 33.

<sup>3</sup>Armenia. Political and Ethnic Boundaries 1878-1948. London, 1998, pp 279-286

<sup>4</sup>А.Г.Исмягин, Экспансия германского империализма в Турции и русско-германские противоречия, М. 1959, стр.37.

<sup>5</sup>FO, 195 / 2450, pt. 3, p.74; pt. 6, p.51

<sup>6</sup>Նույն տեղում, pt.3, p.53.

բերման հաշվին մոտեցնել Հնդկաստանի սահմանները Միջերկրականի ափերին: Սակայն տվյալ պահին Անգլիան, ինչպեսև մյուս տերությունները, դեռևս պատրաստ չէր Օսմանյան կայսրության փլուզմանը:

Անգլիան երկուշուրև էր Օսմանյան կայսրության փլուզումից: Իրիտանական քաղաքական շրջանակները ենթադրում էին, որ դրա հետևանքով առաջացած նորանկախ պետությունները կարող էին հայտնվել Ռուսաստանի ազդեցության ոլորտում, ինչը կամրապնդեր ռուսների դիրքերը Փոքր Ասիայում և ամբողջ Մերձավոր Արևելքում: Անգլիայի շահերին հակասում էին նաև մյուս տերությունների՝ հատկապես Գերմանիայի գավթողական ծրագրերը: Այդ պատճառով էլ անգլիական կառավարությունը չէր ցանկանում տերությունների քննարկումների առարկա դարձնել Հայկական վտանգավոր հարցը: Անգլիական դիվանագետները նախընտրեցին այնպիսի քաղաքականություն, որը գոնև մի որոշ ժամանակ դեռ կնպաստեր թուրքական կայսրության ամբողջականության պահպանմանը:

Այսպիսով, մոռացության մատնված Հայկական հարցը 1912թ. աշնանից կրկին միջազգային դիվանագիտության ուշադրությանն արժանացավ: Ժամանակի փորձը ցույց է տալիս, որ Հայկական հարցն այժմեական էր դառնում եվրոպական քաղաքականության համար հատկապես հենց աշխարհաքաղաքական մեծ բախումների ժամանակ: Նույն բախումների ժամանակ էր, որ աշխուժանում էր այդ հարցը նաև հայ հասարակական միջավայրում<sup>1</sup>:

Արևմտահայության սոսկալի վիճակը իտալա-թուրքական և Բալկանյան պատերազմներում Օսմանյան կայսրության կրած պարտություններն այն ներքին և արտաքին պատճառներն էին, որ ստիպեցին հայ հասարակական-քաղաքական շրջաններին կրկին զիմել մեծ տերություններին, առաջին հերթին Ռուսաստանին, որ նկատի առնեն ցավատանջ Հայկական խնդիրը և տերությունների հսկողության ներքո վերջապես գործադրության մեջ դնեն Արևմտյան Հայաստանի համար նախատեսված բարենորոգումները: «Սակայն եվրոպան՝ Մերձավոր Արևելքի հանդեպ Գերմանիայի գավթողական

<sup>1</sup>Աշ. Գովհաննիսյան, Դաշնակցությունը և պատերազմը, Ե., 1924, էջ 5:

ճգտումների պատճառով բաժանվել էր երկու թշնամական ճամբարների, որոնք պայքարում էին Թուրքիայի տարածքը հսկողության տակ առնելու, բայց ամենևին տրամադրված չէին միջամտել այդ պետության ներքին բարեկարգմանը»<sup>1</sup>:

Դիտարկելով արևմտահայության խնդիրն իրենց շահերի տեսանկյունից, անգլիական դիվանագետներն ստեղծված միջազգային պայմաններում 1912թ. վերջին 1913թ. սկզբին խուսափում էին Հայկական հարցի քննարկմանը միջազգային բնույթ հաղորդելուց:

---

<sup>1</sup>B. Papazian, The Tragedy of Armenia, Boston-Chicago, 1918, p. 90

**ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ**  
**ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑՆ ԱՆ ԳԼՈ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱՐԵ-**  
**ՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ / 1913թ. ԱՊՐԻԼ - ՀՈՒԼԻՍ /**

**ԱՆ ԳԼՈ- ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ**  
**ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ 1913թ. ԳԱՐՆԱՆԸ**

1912թ. աշնանից Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու խնդիրը նորից միջազգային շահարկության առարկա դարձավ:

Կանխատեսելով, թե ինչ հետևանքներ կարող էր ունենալ Հայկական Հարցի արժարժուժը միջազգային առկա պայմաններում և խուսափելով եվրոպական միջամտությունից, թուրքական կառավարութունը ոչ միայն աշխատում էր լայնացնել անջրպետ ատերությունների խմբակցությունների միջև, այլև փորձեր կատարեց սեպ խրեյ զաշնակիցների միջև և գոյություն ունեցող տարածայնություններն օգտագործել Հայկական Հարցի լուծումը տասպալելու համար:

Բարձր Դուռն այդ նպատակով որոշեց բարենորոգումների իրագործման հարցով օգնության ակնկալիքով դիմել միայն Անգլիային, վերջինիս հակադրելով Ռուսաստանին և Փրանսիային<sup>1</sup>: Թուրքական կառավարությունը հատկապես անհանգստացած էր ռուս-անգլիական մերձեցմամբ: Նախկին՝ իրար հավասարակշռող անգլիական և ռուսական մրցակցության բացակայությունն այժմ Օսմանյան կայսրության համար լուրջ սպառնալիք էր, քանի որ Թուրքիան իր հարաբերական ապահովությունը հիմնում էր օտարների հակամարտության և պայքարի վրա:

1913թ. ապրիլի 24-ին թուրքական կառավարությունը Լոնդոնում իր գեսպան Թեֆիկ փաշայի միջոցով դիմում է բրիտանական կառավարությանը՝ անգլիացի ծառայողներ վարձելու խնդրանքով<sup>2</sup>: Նրանց անհրաժեշտությունն առաջա-

<sup>1</sup>АВПР,ф.Посольство в Константинополе, д.1605, л.77; Հայաստանը միջազգային դիվանագիտության..., էջ 178:

<sup>2</sup>BDOW, NN 478,480; Ст.Степанян, Армения в политике империализмической Германии (конец 19- начало 20 вв.), Ереван,1975, стр 81.

ցել էր Համաձայն վիլայեթների կառավարման նոր օրենքի, որն ընդունվել էր Թուրքիայի կառավարութան կողմից 1913թ. մարտի 13-ին և պիտի իրագործվեր Անատոլիայի<sup>1</sup> Արևելյան և Հյուսիսային սեկտորներում<sup>2</sup>: Արևելյան սեկտորն ընդգրկում էր Վան, Բիթլիս, Խարբերդ և Դիարբեքիբ (Տիգրանահերա) վիլայեթները, իսկ Հյուսիսային սեկտորն՝ էրզրում, Սյազ (Սերաստիա) և Տրապիզոն վիլայեթները:

Թուրքական կառավարութունն անհրաժեշտ էր համարում բրիտանական կառավարութունից ստանալ 17 բրիտանացի վերատեսուչներ և խորհրդականներ Հայկական վիլայեթներում ծառայելու համար<sup>3</sup>: Թուրքերը խնդրում էին բրիտանական կառավարութային իրենց տրամագրել՝ յուրաքանչյուր սեկտորի համար ժանդարմերիայի մեկական տեսուչ, յուրաքանչյուր վիլայեթի համար ժանդարմերիայի մեկական սպա, գյուղատնտեսութան, հանրային աշխատանքների և ներքին գործերի նախարարութունների համար պահանջվում էր մեկական խորհրդական: Բացի խորհրդականից, ներքին գործերի նախարարութային համար պահանջվում էր նաև պլեսավոր տեսուչ<sup>4</sup>:

Դիմելով Անգլիային, Թուրքական կառավարութունը վկայակոչում էր 1878թ. հունիսի 4-ի անգլո-թուրքական դաշնագիրը, համաձայն որի սուլթանը խոստացել էր Անգլիային բարենորոգումներ անցկացնել՝ նպատակ ունենալով ապահովել քրիստոնյա հպատակների բարվոք կառավարումը և պաշտպանութունը: Թուրքական կառավարութունը, ցուցադրելով իր կեղծ ցանկութունը բարենորոգումներ անցկացնելու վերաբերյալ, իր առաջարկով նպատակ էր հետապնդում նախ և առաջ ապահովելու Անգլիայի օգնութունն ինչպես

<sup>1</sup>Շարադրանքում Արևմտյան Հայաստանի փոխարեն որոշ դեպքերում օգտագործվել է Արևելյան Անատոլիա, քանի որ նյութը մեջքերվում է աղբյուրներից՝ օտարերկրյա դիվանագետների գրագրումներից: Վերջինները Արևմտյան Հայաստանն անվանել են Արևելյան Անատոլիա՝ համաձայն ժամանակաշրջանի ընդունված բուրբակյան տարբերակի:

<sup>2</sup>А.Н.Мандельштам, Младотурецкая держава. Историко-политический очерк, Москва, 1915, сmp. 35.

<sup>3</sup>W.J. Van der Dussen, The Question of Armenian Reforms in 1913-1914, "Armenian Review", Spring, 1986, vol.39, p. 17; Sidney Fay, Ibid, p. 504.

<sup>4</sup>BDOW, vol. 10, N 480.

Թուրքական վարչակարգի բարելավմանը, այնպես էլ Ռուսաստանի հնարավոր զավթախուժումը կանխելու համար:

Թուրքիայի առաջարկը լուրջ քննարկման առարկա դարձավ անգլիացիների կողմից: Արտգործնախարարութիւնում տարբեր կարծիքներ էին տիրում: Անգլիայի արտգործնախարարութեան քարտուղար Հ. Նորմանը և փոխարտգործնախարարի օգնական, Արևելյան զեպարտամենտի պետ Լ. Մալլեթը մեծ աշխուժութիւն էին ցուցաբերում այս հարցի կապակցութեամբ և գտնում էին, որ առաջարկն անմիջապես պետք է ընդունվեր ինչպես նշում էր Լ. Մալլեթը, հարցն ինքնին կարևոր քաղաքական բնույթ ունենէր: Սակայն արտաքին գործերի մշտական փոխնախարար Ա. Նիքոլսոնի կարծիքով առաջարկի ընդունումը փոանգավոր էր և կարող էր նոր խնդիրներ ու բարդութիւններ առաջ բերել թե՛ Անգլիայի և թե՛ Բ. Դոան համար<sup>1</sup>: Ա. Նիքոլսոնին անհանգստացնում էր առաջին հերթին այն, որ Թուրքիայի առաջարկը չէր ընդգրկում ողջ Փոքր Ասիայի տարածքը:

Արտգործնախարարութեանը մտահոգող հանգամանքներն հետևյալն էին. 1/ ընդունել՝ Թուրքական խնդրանքն ընդհանրապես, թե՞ ոչ 2/ ընդունել ամբողջութեամբ, թե՞ միայն առաջարկութեան մի մասը, 3/ ինչպիսին կլինէր մյուս տերութիւնների արձագանքը՝ առաջարկութեան բնութենման դեպքում:

Առաջին կետի վերաբերյալ քննարկումը ձեռական բնույթ էր կրում: Անգլիական կառավարութիւնն իհարկէ հասկանում էր, որ Թուրքիայի ընտրութիւնը պատահական չէր և ուղղված էր առաջին հերթին դաշնակիցների հետ Անգլիայի հարաբերութիւնների լարմանը: Սակայն նկատելի է, որ և՛ անգլիական կառավարութիւնը, և՛ ղրվանազետները ոչ մի դեպքում չէին հրաժարվի այն փայլուն հնարավորութիւններից, որ ստեղծում էր Թուրքիայի առաջարկութիւնը: Դրա ընդունումն Անգլիայի համար հնարավորութիւն կընձեռեր ուժեղացնել իր ազդեցութիւնը Փոքր Ասիայում, աստիճանաբար իրազործել իր անտեսական, առևտրական և քաղաքական նպատակներն այս տարածաշրջանում, ինչպես նաև նվազեցնել Գերմանիայի աճող ազդեցութիւնը Թուրքիայում: Անգ-

<sup>1</sup>BDOW, vol. 10, N 479.

լիան շատ կարևոր էր համարում նման հնարավորության ձևաքերուամբ:

Անգլիացիները փորձում էին իրենց այս շահամոլ քաղաքականությունը թաքցնել «մարդասիրական» քողի տակ: Լ.Մալլեթը նշում էր, որ քանի դեռ բարենորոգումների նախագիծը հաստատված չէր, թուրքական իշխանություններն անպայման կփորձեին խուսափել դրանց իրագործումից: Այս հանգամանքը կնպաստեր զանգվածային նոր կոտորածների կազմակերպմանն այն նահանգներում, ուր պետք է իրագործվեին բարենորոգումները: Լ.Մալլեթը գտնում էր, որ «անգլիացիները միակ ժողովուրդն են, որ պետք է հանձն առնեն այդ պատասխանատվությունը և հաջողությամբ իրագործեն, ելնելով այն հանգամանքից, որ Անգլիան միակ պետությունն է, որին այդ հնարավորությունը կտրվի մյուս երկրների կողմից»<sup>1</sup>:

Անգլիացիների համոզմունքները՝ իրենց բացառիկության և իրենց նկատմամբ մյուս պետությունների վերաբերմունքի հետ կապված, անհիմն էին ու անբացատրելի: Սակայն Լ.Մալլեթը բացատրություն էր տալիս դրան: Նա ընդգծում էր, որ Անգլիան նշված նահանգների հետ կապված ոչ մի կարգի՝ ո՛չ քաղաքական, ո՛չ տարածքային նկրտումներ չուներ: Բացի այդ, դեսպանը գտնում էր, որ թուրքական առաջարկն անգլիացիներին տալիս էր այնպիսի արտակարգ հնարավորություն՝ որևէ բան անելու հայերի համար, որպիսին նրանք երբեք մինչ այդ չէին ունեցել: Նա պնդում էր, որ եթե տվյալ պահին անգլիացիները հրաժարվեին և ղիջեին այդ հնարավորությունը մյուս տերություններին, ապա ի չիք կդառնար անգլիացիների նկատմամբ վստահությունն ու նրանք քննադատության կարծանանային հայերի կողմից<sup>2</sup>:

Միևնույն ժամանակ արտգործնախարարության ղեկավարները հոգատարություն էին ցուցաբերում ղեպի թուրքիան և նրա շահերը պաշտպանելու պատրաստակամություն արտահայտում: Անգլիացիներին մտահոգում էր այն հարցը, որ թուրքիան ծառայողներ վարձելու առաջարկով դիմել էր միայն Անգլիային, և երկյուղում էին, որ միայն մեկ տե-

<sup>1</sup>BDOW, vol. 10, N 479.

<sup>2</sup>Նույն տեղում, N 479.

բուժյան հպատակների ներդրումը թուրքական վարչական ապարատի տարրեր ճյուղերում կարող էր հարուցել մյուս սերուժյունների զգուհուլթյունը և բարգուլթյուններ առաջացնել թուրքիայի համար<sup>1</sup>:

Անգլիայի արողործնախարար է. Գրեյը գետպան Զ. Լոուլթերին հասցետարած նամակում նշում էր. «Անգլիական կառավարուլթյունը չի ցանկանում նման բարգուլթյուններ առաջացնել թուրքիայի համար, քանի որ ամեն կերպ աշխատում է և հնարավորուլթյունների սահմաններում պատրաստ է օգնել թուրքական կառավարուլթյանն իրագործել բարենորոգումների վերաբերյալ Բ. Դոան հիանալի մտադրուլթյունները»<sup>2</sup>:

Անգլիացիները փորձում էին հավաստել, որ իրենց ամենամեծ ցանկուլթյունն էր պահպանել թուրքիայի իշխանուլթյունն Ասիայում, անցկացնել բարենորոգումներ հայերի համար: Իրականում անգլիական կառավարուլթյանը բոլորովին չէր հուգում ոչ հայերի ճակատաղիրն բնդհանրապես, ոչ էլ բարենորոգումների հարցը: Անգլիան ցանկանում էր, որպետ գլխավոր խաղաքարտ, կրկին Հայկական հարցը ծառայեցնել իր նպատակներին: Կասկած չկա, որ Անգլիան սեփական շահերից ելնելով պլտի ընդունել թուրքիայի առաջարկը, սակայն դետ երկար ժամանակ անգլիացիները, վարելով իրենց դիվանագիտական խաղերը, ձգտում էին ստեղծել տպավորուլթյուն, թետ ցանկանում էին իմանալ իրենց գաշնակիցների կարծիքը և մինչև անգամ դեկավարովել գրանով:

Արտգործնախարարուլթյան երկրորդ խնդիրն այն էր, թետ ինչ շրջանակներում ընդունել առաջարկուլթյունը: Այսինքն ընդունել առաջարկն ամբողջովին և թուրքիա ուղարկել ծառայողներ բոլոր այն ասպարեզների համար, որ խնդրել էին թուրքերը, թետ ընտրովի միայն այն բնագավառների համար, որոնք անգլիացիներին թվում էին կարեոր իրենց իսկ շահերից ելնելով:

Զ. Լոուլթերն ինչպետ և Ա. Նիքոլտոնը գտնում էր, որ առաջարկը կարելի էր ընդունել մասամբ: Անգլիացիների տեսակետից առաջարկի ամենակարևոր մասը վերաբերում էր

<sup>1</sup>BDOW, vol. 10, N N 479, 480

<sup>2</sup>FO, 195 /2450, pt. 1, p 117

ժանդարմերիային<sup>1</sup>: Իրենց Համաձայնությունն անգլիացիները պատճառաբանում էին նրանով, որ պարզ է էր, թե ինչպիսի պատասխանատվության առջև նրանք կկանգնեին, եթե ժանդարմերիայում սպաների և տեսուչների պաշտոններն անգլիացիների փոխարեն գրավեին այլ տերությունների ներկայացուցիչները<sup>2</sup>:

Եթե երկար քննարկումներից Հետո արտգործնախարարության պատասխանատու աշխատակիցները է. Գրեյի գլխավորությամբ միասնական կարծիք ունեին ժանդարմերիայի հարցի շուրջ, ապա մյուս ասպարեզներում ծառայողներ ունենալու հարցում դեռևս հստակություն չկար: Բանն այն էր, որ անգլիական դիվանագետները մեծ կարևորություն չէին տալիս գյուղատնտեսության, անտառապահության, արդարադատության նախարարությունների տեսուչների պաշտոններին և համարում էին, որ զրանք կարելի էր զիջել գերմանացիներին, կամ Ֆրանսիացիներին:

Անգլիացիները վերաբերմունքը փոքր-ինչ տարբերվում էր հանրային աշխատանքների նախարարության տեսչի պաշտոնի նկատմամբ: Այս պաշտոնը ցանկալի էր անգլիացիների համար, քանի որ այդ դեպքում թուրքերը Հենց Անգլիայի ներկայացուցիչներին հետ պետք է քննարկեին և խորհրդակցեին նավթի և այլ կոնցեսիաների հարցերը: Սակայն Լոռեթերի հետ խորհրդակցվելուց հետո Ֆորին-օֆիսում տիրեց այն կարծիքը, որ այդ պաշտոնը ևս կարելի էր զիջել օտարերկրացիներին:

Անգլիացիները բավական կարևոր և բնդունելի էին համարում ծառայությունը ներքին գործերի նախարարության ասպարեզում: Սյուրհանդերձ, այստեղ նույնպես անգլիացիները նախապատվություն տալով ներքին գործերի նախարարության գլխավոր տեսչին, որը կգործեր որպես կապող օղակ կառավարության և ժանդարմերիայի տեղական տեսուչների միջև: Ինչ վերաբերում էր ներքին գործերի նախարարության խորհրդականի պաշտոնին, ապա անգլիացիները կարծում էին,

<sup>1</sup>BDOW, vol.10, N 479

<sup>2</sup>FO, 195 /2450, pt.1, pp.119-120.

<sup>3</sup>Նույն տեղում, pt 1, p.117.

որ այն պետք է ամբողջովին յուծարվիր: Գլխավոր տեսուչի պաշտոնը համարվում էր բավարար<sup>1</sup>:

Անգլիային անհանգստացնող երրորդ խնդիրն էր մեծ տերությունների վերաբերմունքն անգլիացիների զրահան պատասխանի նկատմամբ: Անգլիական կառավարութայան համար պարզ էր, որ բոլորից շատ անհանգստացած կլինի այս դեպքում Ռուսաստանը՝ միակ պետությունը, որն ուղղակիորեն սահմանակցում էր Թուրքիային<sup>2</sup>: Այդ հանգամանքը կարող էր լարել Անգլիայի հարաբերություններն իր զաշնակից Ռուսաստանին հետ: Սակայն անգլիացիները թաքցնում էին իրենց անհանգստացնող այդ հանգամանքը: Միևնույն ժամանակ, չցանկանալով կորցնել իրենց հեղինակությունը Թուրքիայի մոտ, պատկերը նրան ներկայացնում էին այնպես, որ Ռուսաստանի դժգոհությունը կարող է բարդություններ առաջացնել հենց Թուրքիայի համար: Այդ պատճառով էլ է. Գրեյն առաջարկում էր թուրքական կառավարութայանը նախապես որոշ չափով տեղեկացնել Ռուսաստանին իրենց թուրք-անգլիական ծրագրերին: Անգլիացիներն այն կարծիքին էին, թե Ռուսաստանին տրվելիք տեղեկությունները կարող էին ինչ-որ կերպ փարատել Ռուսաստանի կասկածներն Անգլիայի դիրքորոշման վերաբերյալ<sup>3</sup>:

Ռուսաստանին տեղյակ պահելու հարցը զիմազրություն չառաջացրեց թուրքական կառավարութայան շրջաններում, սակայն թուրքական կառավարությունը բացարձակ դեմ էր Ռուսաստանի մասնակցությանն առաջարկված դործին:

Ինչ վերաբերում էր Ֆրանսիային և Գերմանիային, ապա անգլիական դիվանագետները չէին կարծում, թե թուրքական վարչակազմի տեղական օղակներում ծառայողների նշանակումը կարող էր հակասել նրանց շահերին: Այդուհանդերձ անգլիացիները համարում էին, որ ներքին գործերի նախարարութայան համար առաջարկված երկու բարձրաստիճան պաշտոնների հանգամանքը կարող է դժգոհության ու նախանձի տեղիք տալ<sup>4</sup>: Ելնելով այս հանգամանքից, անգլիացիները

<sup>1</sup>Նույն տեղում, p 118

<sup>2</sup>Նույն տեղում, p.119; BDOW, vol 10, N 482.

<sup>3</sup>Philip P.Graves, Ibid., p.186.

<sup>4</sup>BDOW, vol.10, N 479.

խորհուրդ էին տալիս Թեֆիկ փաշային իրագործել այնպիսի քայլեր, որոնք կսաստեին նաև այս հնարավոր և ոչ ցանկալի երևույթները:

Անգլիական կառավարութունը պատրաստվում էր դրական պատասխան տալ Թուրքիային, սակայն դեռ չէր դիմել գործնական քայլերի, երբ ուսական կառավարութունը փորձեց կանխել զբանք: 1913թ. մայիսի 15-ին ուսական կառավարութունն իր շնորհակալութունն էր հայտնել անգլիական կառավարությանը Թուրքիայի առաջարկի մասին տեղեկացնելու համար: Միևնույն ժամանակ, Ռուսաստանի արտգործնախարար Ս.Սազոնովը Լոնդոնին իր զարմանքն էր հայտնում անգլո-թուրքական համաձայնության վերաբերյալ, որն ըստ էության հակասում էր Բեռլինի 1878թ. դաշնագրի 61-րդ հոդվածի պահանջներին: Նա Գրեյի ուշադրութունը հրավիրում էր այն բանի վրա, որ Ռուսաստանը մեծ կարևորութուն է տալիս ժանդարմերիայի հարցին և, որ այն ոչ մի կերպ չէր անջատում Ասիական Թուրքիայում կատարվելիք բարենորոգումների ընդհանուր ծրագրից: Այդ իսկ պատճառով էլ Ռուսաստանն առաջարկում էր խնդրո առարկա հարցի քննարկումը հանձնարարել Կ.Պոլսում երեք ղեկավարներին: Այսինքն Ռուսաստանը բացահայտ դեմ էր Անգլիայի ձեռնարկած միակողմանի քայլերին: Ռուսաստանի դիմադրութունն ավելի էր խստանում կապված այն հանգամանքի հետ, որ, ինչպես նշել էր Սազոնովը Ռուսաստանում Ֆրանսիայի ղեկավարին, անգլիացիները ժանդարմերիայում ծառայելու համար սպաներ կընտրեին Հնդկաստանից, ուր դեռ տիրում էր Ռուսաստանի հանդեպ անվստահության ոգին<sup>2</sup> :

Անգլիական կաբինետը ոչ մի կերպ չէր պատրաստվում հրաժարվել Թուրքիայի կատարած առաջարկից և համարում էր, որ անհրաժեշտ էր հաղթահարել Ռուսաստանի և Ֆրանսիայի դիմադրութունն այդ հարցում: 1913թ. մայիսի 21-ին նշված երկրների ղեկավարներին հետ Լոնդոնում կայացած հանդիպման ժամանակ, Ա. Նիքոլսոնը նշեց, թե ակնհայտ է, որ Ռուսաստանը ցանկանում է հարցի լուծումը սառեցնել այնքան ժամանակ, մինչև որ Փոքր Ասիայում կատարվելիք բա-

<sup>1</sup>Նույն տեղում, N 484.

<sup>2</sup>Յայտատանը միջազգային դիվանագիտության..., էջ 179:

բենորոգումների վերաբերյալ համաձայնություն կընդունվիր: Ա.Նիքոլսոնը բացատրում էր, որ իրոք Հայաստանի համար բարենորոգումները հրատապ էին, սակայն դրանք ընդհանրապես հնարավոր չէր լինի իրագործել, եթե սվյալ պահին մերժվեր ժանդարմների վերաբերյալ արված առաջարկը: Դա կարող էր թուրքիային ետ կանգնեցնել բարենորոգումներ կատարելու ցանկությունից<sup>1</sup>: Անգլիացիները փորձում էին համոզել ռուսներին, թե իրենք ոչ մի շահ չէին հետապնդում այս գործում և, որ միայն բարենորոգումներ կատարելու միտումն էր, որ ստիպում էր իրենց գոնև մասամբ ընդունել այդ առաջարկը: Է.Գրեյը աշխատում էր համոզել Սազոնովին, որ թուրքիա գործողված անգլիական սպաները ոչ մի կերպ չէին խոչընդոտի բարենորոգումների ընդհանուր ծրագրի իրագործմանը և ինքը՝ Գրեյը, պատրաստ էր անմիջապես հենց Լոնդոնում անցնել հարցի քննարկմանը<sup>2</sup>:

Սակայն անգլիական զիվանապիտություն ջանքերն սպարդեյուն էին: Ռուսական կառավարությունը չէր ցանկանում փոխել իր տեսակետը: Նման զիմադրություն Ռուսաստանի կողմից անգլիացիները չէին սպասում, քանի որ նախապես բավականին մեծ սահմանափակումներ էին արել թուրքիայի առաջարկության հետ կապված՝ ընդունում էին այն մասամբ:

Ի տարբերություն Ռուսաստանի, Ֆրանսիան ամբողջովին կիսում էր Անգլիայի այդ կարծիքը: Լոնդոնում Ֆրանսիական դեսպանը, արտահայտելով իր կառավարության տեսակետը, աշխատում էր համոզել ռուսական դեսպան Բենկենդորֆին, որ, եթե թուրքական կառավարությունն իրոք մտադրվել էր վերակազմակերպել ժանդարմների ֆոքր Ասիայի վիլայեթներում, Անգլիայի մերժումը չէր, որ նրանց ետ կկանգնեցներ այդ ծրագրից: Ըստ Ֆրանսիական դեսպանի, թուրքերը՝ քաջայերուցյուն չգտնելով կշրջվեին մի այլ կողմ և դա, անշուշտ, չէր լինի Ռուսաստանի կողմը<sup>3</sup>:

1913թ.մայիսի 24-ին Է.Գրեյը տեղեկացնում է թուրքական կառավարությանն իր կառավարության համաձայնությ-

<sup>1</sup>BDOW, vol 10, N 485.

<sup>2</sup>Նույն տեղում, N 489

<sup>3</sup>Հայաստանը միջազգային դիվանագիտության ..., էջ 182:

յան մասին: Նա նշում էր, որ անգլիացիները պատրաստ են օգնել օսմանյան կառավարութեան իրագործել բարենորոգումների վերաբերյալ մտադրությունները: Այդուհանդերձ արտագործնախարարը հայտնում էր թուրքական կառավարութեանը, որ անգլիական կառավարութեանը թուրքիայի համար բարդություններ չստեղծելու նպատակով հարմար էր գտնում սկզբնական շրջանում անգլիական ծառայողների գործունեութունը սահմանափակել համեմատաբար փոքր շրջանում՝ Անատոլիայի 7 վիլայեթների տարածքում<sup>1</sup>: Գրեյը նշում էր, որ այստեղ տեղական ազգագրական պայմանների առումով բարենորոգումների իրագործումն ավելի հրատապ անհրաժեշտություն էր, քան թուրքական կայսրութեան մնացած տարածքում: Այսինքն, անգլիական կառավարութեանը մերժում էր Կ.Պոլսի, Զմյուռնիայի և Բրուսայի վիլայեթներ ծառայողներ ուղարկելու թուրքիայի խնդրանքը: Այդ նոր առաջարկը թուրքերն ավելացրել էին 1913թ. մայիսի 22-ին, որն ամբողջովին փոխում էր Անգլիայի ծրագրերի հետ կապված պատկերը: Թուրքիայի կողմից առաջարկված նոր շրջաններում անգլիացիներ կարող էին բախվել մյուս տերությունների հետ ավելի, քան հայկական վիլայեթներում<sup>2</sup>: Բացի այդ, ինչպես նշում էր առաջարկի քննարկման ժամանակ Լ.Նորմանը, անգլիական սպաներն առանց այդ էլ արդեն ծառայում էին Զմյուռնիայի ժանդարմերիայում:

Է.Գրեյը տեղեկացնում էր թուրքական կողմին, որ իր կառավարութեանը սահմանափակում էր թուրքիայի առաջարկի աշխարհագրական սահմանները և ծառայողներ կուղարկի միայն հայկական վիլայեթների համար: Քանակի առումով նույնպես սահմանափակում էր տեղի ունեցել՝ 17 ծառայողների փոխարեն անգլիացիները համաձայնել էին գործուղել միայն 5 ծառայող<sup>3</sup>: Զբաղվածութեան առումով՝ րացի ներքին գործերի նախարարութեան գլխավոր հսկիչի պաշտոնից, Անգլիան ընդունում էր միայն ժանդարմերիայում ծառայելու առաջարկը: Անգլիայի արտագործնախարարը հավաստիացնում էր Թեֆիկ փաշային, որ «Նորին Մեծութեան կառավարութեանը»

<sup>1</sup>BDOW, vol. 10, N 491.

<sup>2</sup>Նույն տեղում, N 487.

<sup>3</sup>Fay Sidney. Ibid., p. 504

յունն երջանիկ կլինի վերջնականորեն քննարկել անգլիական ծառայողների գործուղման հարցը»<sup>1</sup>: Սակայն անգլիական պաշտոնագրության մեջ Ա.Նիքոլսոնի պահանջով բաց էր թողվել վերջին և շատ կարևոր հատվածը, ուր նշվում էր. «զժխար թե յուրաքանչյուր վիլայեթ ուղարկված մեկական սպաները կարողանան ապահովել ժանդարմերիայի ծառայության արդյունավետութունը»<sup>2</sup>: Այս հատվածն ամբողջովին բացահայտում է անգլիական կառավարության իրական վերաբերմունքը տեղի ունեցող իրադարձություններին և, ինչու էլ, բարենորոգումների գաղափարին ընդհանրապես: Բացահայտ երևում է այն, որ Թուրքիայի առաջարկի ընդունումն Անգլիայի կողմից լուրջ քաղաքականություն էր, զիվանագիտական լազ և ոչ թե օգնելու անկեղծ մտադրություն:

Թեպետև իր համաձայնությունն արդեն հայտնել էր Թուրքիային, Անգլիան շարունակում էր պարզարանել իր քայլերը և բանակցություններ էր վարում Ֆրանսիայի, Գերմանիայի և Ռուսաստանի հետ ինչպես ժանդարմերիայի, այնպես էլ «հայկական բարենորոգումները» շուրջ: Անգլիացիները չէին կարողանում համոզել ուսաներին, թե անգլիական սպաների ներկայությունը հայկական վիլայեթներում չէր հակասում Ռուսաստանի շահերին և, որ նրանց գործունեությունը չէր առաջացնելու Ռուսաստանի դժգոհությունը<sup>3</sup>:

Ռուսաստանը ոչ մի կերպ չէր ցանկանում հրաժարվել իր ներկայացրած պահանջներից և համաձայնել անգլիական սպաների միջոցով Թուրքիայում ժանդարմերիայի վերակառուցմանը: Սազոնովը չէր թաքցնում Ռուսաստանի շահադրդովածությունն Արևմտյան Հայաստանի հարցում և նույնիսկ տեղյակ էր պահել է. Գրեյին, որ արևմտահայերը դիմել էին Ռուսաստանին իրենց երկիրն անեքսիայի ենթարկելու խնդրանքով: Նշելով, որ Արևմտյան Հայաստանն անեքսիայի ենթարկելու մասին խոսք լինել չէր կարող, Սազոնովն ընդգծում էր Ռուսաստանի անդիջում դիրքն այստեղ բարենորոգումներ անցկայանելու նկատմամբ:

<sup>1</sup>BDOW, vol. 10, N 491.

<sup>2</sup>Նույն տեղում:

<sup>3</sup>BDOW, vol. 10, N 492.

Ռուսական կառավարութիւնն այն կարծիքին էր, որ թուրքական ժանդարմերիայի վերակառուցման գործում Անգլիային արվող միակողմանի աւազելութիւնները կարող էին ուժեղացնել Անգլիայի դիրքերը Փոքր Ասիայում՝ ի վնաս Ռուսաստանի շահերի: Ռուսաստանը գտնում էր, որ թուրքիայի ժանդարմերիայի վերակառուցմանը հավասարապէս պետք է մասնակցեին Անտանտի բոլոր պետութիւնները և պետք է բացառվեր Գերմանիայի միջամտութիւնը<sup>1</sup>: Ռուսները հասկանում էին, որ թուրքական կառավարութիւնն աշխատում էր այս հարցում մեկուսացնել Ռուսաստանին և, խաղաղով Անգլիայի և Գերմանիայի հակառակութիւնների վրա, ընդհանրապէս ձախողել որևէ պետութիւնի միջամտութիւնը թուրքիայի ներքին գործերին: Սագոնովը զգուշացնում էր անգլիական կողմին, որ, եթէ թուրքիան մերժի ընդհանրապէս օտարերկրյա ուղաներին ընդունել, ապա Ռուսաստանը պատրաստ է հնարաւոր անկարգութիւնների և ջարդերի դեպքում միջամտել: Այս անգամ, շեշտում էր Սագոնովը, «Ռուսաստանը չի կրկնի անցյալում գործած սխալը և հայկական ջարդերի ժամանակ պատիվ դիրք չի գրավի»<sup>2</sup>:

Ռուսական դիվանագետները շարունակում էին պնդել, որ բարենորոգումների հարցի քննարկումը պետք է տեղի ունենար Կ.Պոլսում և ոչ թէ Լոնդոնում, ինչպէս առաջարկել էր Է.Գրեյը: Այս պահանջը Ռուսաստանը պատճառաբանում էր նրանով, որ անհրաժեշտ էր, որպէսզի ղեկավարներն անմիջական կապի մեջ լինեին հայերի հետ և կարողանային հենց սեղում հայերի մասին տեղեկութիւններ ստանալ, ինչը հնարավոր չէր անել Լոնդոնում:

Անգլիական կաբինետն անհեթեթ և անարդարացի էր գտնում Սագոնովի պահանջը՝ մերժել թուրքիային և անհնար էր համարում իրենց տված խոստումը խախտել: Ինչպէս նշում էր Ա.Նիքոլսոնը, մերժումը ոչ միայն կհանգեցնէր թուրքական կառավարութիւնի դժգոհութեանը, այլ նաև կբարդացներ և կհետաձգէր բարենորոգումների անցկացման հարցն ընդհանրապէս: Իսկ անգլիացիները, ինչպէս հավաստիացնում էր Ա.Նիքոլսոնը, ցանկանում էին այդ հարցը քննարկման ներ-

<sup>1</sup>Նույն տեղում, N 499.

<sup>2</sup>Նույն տեղում, N 492.

կայացնել հնարավորին չափով առանց հետաձգման<sup>1</sup>: Բացի այդ անդլիական դիվանագետները ներկայացնում էին իրենց ձգտումներն իբրև մտահոգվածություն այն հանդամանքի վերաբերյալ, որ Թուրքիան, մերժում ստանալուց հետո, չէր հապաղի անմիջապես դիմել նույն խնդրանքով Գերմանիային և այդ դեպքում ոչ ոք ի վիճակի չէր լինի կանխել դա: Իրադարձությունների նման շրջադարձը չէր համապատասխանի ո՛չ Ռուսաստանի, ո՛չ էլ Անգլիայի շահերին:

Այսպիսով իրավիճակն այնպիսին էր, որ փոխհամաձայնություն չգալը կարող էր հանգեցնել բարդությունների Ռուսաստանի և Անգլիայի միջև: Անգլիայի համար ստեղծվել էին ոչ նախանձելի պայմաններ. մի կողմից Ռուսաստանը, որի հետ Անգլիան չէր ցանկանում հարաբերությունները փչացնել, իսկ մյուս կողմից՝ Թուրքիան, որի աչքում հեյրնակությունն ու վստահությունը կորցնելը ցանկալի չէր: Չցանկանալով «մարտի» ելնել Ռուսաստանի դեմ, Անգլիայի արտգործնախարարությունում նոր ծրագիր ընդունվեց: Այն է՝ հետաձգել անգլիական սպանների առաքումը Թուրքիա մինչև բարենորոգումների ընդհանուր նախագծի պատրաստ լինելը: Ա.Նիքոլսոնին հանձնարարվել էր այս որոշման հետ ծանոթացնել Թուրքական կառավարությանը, իսկ ծառայություն հետաձգումը բացատրելիս շեշտը դնել այն բանի վրա, որ ժանդարմերիայի հարցն ընդհանուր բարենորոգումների ծրագրի բաղկացուցիչ մասն է, և քանի որ բարենորոգումների նախագիծը պատրաստ չէ, ապա սպաներն էլ չեն կարող անցնել աշխատանքի:

Պատրաստվելով նման տեղեկություն ուղարկել Թուրքիա՝ անգլիական կառավարությունը 1913թ. մայիսի 26-ին հայտնում է Ռուսաստանին իր պատրաստակամությունն ընդունել նրա առաջարկը՝ բարենորոգումների հարցը Կ.Պոլսում քննարկման ղենելու վերաբերյալ: Արտգործնախարարության ղեկավարներն իրենց կեղծ գոհունակությունն էին հայտնում բարենորոգումների քննարկման գործում նախաձեռնությունը Ռուսաստանին տրամադրելու կապակցությամբ և համապա-

<sup>1</sup>BDOW, vol. 10, N 492.

տատխան կարգադրություններ էին ուղարկել Թուրքիայում Անգլիայի դեսպան Ջ.Լոութերին<sup>1</sup>:

Սակայն Անգլիայի մտահոգվածությանը վերջ չկար: Է.Գրեյն անգլիական դեսպանների միջոցով Ֆրանսիայի, Ռուսաստանի և մինչև անգամ Գերմանիայի կառավարություններին տեղեկացնում էր, որ մինչև բարենորոգումների նախագծի քննարկումը բավականին ժամանակ կանցնի և այդ ընթացքում կարող էին անգլի ունենալ նոր ջարդեր: Իսկ Թուրքական կառավարությունը կարող էր այս դեպքում արդարանալ, թե իր խնդրանքն Անգլիայի կողմից մերժվել էր և ինքը հնարավորություն չէր ունեցել կանխելու «անկարգությունները»: Գրեյը նշում էր, որ Ռուսաստանը պետք է նկատի ունենար այս հանգամանքը, հակառակ դեպքում անգլիացիները ոչ մի արդարացում չէին ունենա<sup>2</sup>:

Այսպիսով, չնայած «բարյացկամ» հարաբերությունների ցուցադրմանը, և՛ Անգլիային, և՛ Ռուսաստանին պարզ էր, որ հարաբերությունները նրանց միջև լարված էին և բավականին հեռու իրական փոխհամաձայնումից: Այդ ամենն ակնհայտ էր նաև Թուրքիային, որը Անգլիային կատարած իր առաջարկության միջոցով ձգտում էր հասնել անգլո-ռուսական հարաբերությունների լարվածությանը և նրանց միջև տարաձայնությունների սրմանը: Թուրքիան մի փոքր բավարարվածություն պիտի գգար, քանի որ, փաստորեն, իրագործվեց բարենորոգումները ձախողելու իր ավանդական քաղաքականությունը:

<sup>1</sup> Реформы в Армении..., стр. 42.

<sup>2</sup> B'DOW, vol. 10, N N 496, 499.

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ  
ՀԱՐՑՈՒՄ ԵՆԻ-ՔՅՈՅԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ  
ԵՆԽՕՐՅԱԿԻՆ

1913թ. գարնանը, Հայկական հարցի վերաբացման շրջանում, Արևմտյան Հայաստանից ստացված, թե՛ անգլիական, թե՛ ռուսական հյուպատոսների հաղորդագրությունները վկայում էին այն մասին, որ հայերի նկատմամբ գործադրվող բռնությունները շարունակվում էին և դեռ ավելին՝ ավազակային արարքները նրանց նկատմամբ գնալով նոր թափ էին ստանում: Եվրոպական հյուպատոսները ներկայացնում էին երկրում տիրող անիշխանությունն ավելի շատ որպես օրինաչափություն, քան բացառություն<sup>1</sup>: Այս պայմաններում բազմիցս խոստացված և չիրագործված բարենորոգումները հրատապ էին և կենսական նշանակություն ունեին արևմտահայերի համար:

Հայկական վիլայեթներում խաղաղություն հաստատելու գործում մեծ տերությունների շարքում տվյալ պահին բոլորից առավել շահագրգռված էր Ռուսաստանը: Դա բացատրվում էր ոչ միայն նրա և Թուրքիայի միջև ընդհանուր սահմանի և Ռուսաստանում բազմաքանակ հայ բնակչության առկայությամբ, այլև Փոքր Ասիայում Ռուսաստանի գերակայությունն ապահովելու շահերով:

Երբ ավարտվեց Բալկանյան առաջին պատերազմը և 1913թ. մայիսի 30-ին կնքվեց Լոնդոնի պայմանագիրը, ռուսական կառավարությունը համարում էր, որ կարելի է սկսել Հայկական հարցի քննարկումը, չանհանգստանալով, թե դրանով կնպաստեն Օսմանյան կայսրության կործանմանը:

Առկա իրավիճակից ելնելով, Անգլիայի արտգործնախարար է. Գրեյը տեղեկացնում էր ռուս գործընկեր Սաղոնովին, թե ուրախ կլինի, եթե Ռուսաստանն Արևմտյան Հայաստանի համար նախատեսվող բարենորոգումների քննարկման գոր-

<sup>1</sup>Richard Hovhannissian, Armenia on the Road to Independence, 1918. L-A, 1967, p.30.

ծում նախաձեռնութիւնն իր վրա վերցնի<sup>1</sup>: Նա նշում էր, որ չի ցանկանում որևէ դժվարութիւնն հարուցել ռուսական կառավարութեանը<sup>2</sup>:

Սակայն Գրեյը համոզված էր, որ բարդութիւններն անպայման կառաջանային, քանի որ բարենորոգումներն անհրաժեշտ էին ոչ միայն հայկական վիլայեթներին, այլ ամբողջ Թուրքիայի համար: Ուստի Անտանտի պետութիւնների միջև բարենորոգումների վերաբերյալ խոսակցութիւնները կհանգեցնեին մյուս տերութիւնների ընդդիմութեանը: Այդ հանգամանքից ելնելով, է. Գրեյը հանձնարարում է Պետերբուրգում բրիտանական դեսպանութեանը Ռուսաստանի արտգործնախարարին ներկայացնել հետևյալ երկընտրանքը<sup>3</sup>: 1/ Ռուսական կառավարութիւնը կառաջարկի Թուրքական կողմին միասին քննարկել հայկական վիլայեթներում անցկացվելիք բարենորոգումների նախագիծը: Եթե այդ բարենորոգումների շուրջ համաձայնութիւն կայանա Կ. Պոլսի և Պետերբուրգի միջև, ծրագիրը կներկայացվի բոլոր տերութիւններին: Դրա հետ մեկտեղ, Ռուսաստանի արտգործնախարարը կառաջարկի Կ. Պոլսում վեց դեսպաններին քննարկել բարենորոգումների նախագիծ Թուրքիայի մյուս վիլայեթների համար: 2/ Ռուսաստանի արտգործնախարարը, տարբերութիւնն չդնելով վիլայեթների միջև, կառաջարկի բոլոր տերութիւններին Կ. Պոլսում դեսպանների քննարկմանը դնել Ասիական Թուրքիայի ընդհանուր բարենորոգումների նախագիծը:

Անգլիայի արտգործնախարար է. Գրեյը ցանկութիւնն էր հայտնում նաև, որպեսզի Սազոնովը տերութիւնների քննարկմանը ներկայացնէր Ֆրանսիայի, Անգլիայի և Ռուսաստանի կողմից 1895թ. մշակված նախագիծը: Անգլիայի արտգործնախարարը համարում էր, որ եթե Ռուսաստանը բարենորոգումների գործում նախաձեռնութիւնն իր վրա վերցնի, ապա կարող է ընտրել բարենորոգումների նախապատրաստման այն տարբերակը, որն ինքը կգերազանցի<sup>4</sup>:

<sup>1</sup>Реформы в Армении... с.39; М.Ковалевский, Армянский вопрос, „Вестник Европы“, Петроград, 1915, N 6, с. 266; Վ.Փափազյան, Հայկական բարենորոգումները /1912-1914./, «Վեմ», 1934, մարտ-ապրիլ, էջ 57:

<sup>2</sup>Հայաստանը միջազգային դիվանագիտության..., էջ 196:

<sup>3</sup>BDOW, vol 10, N 495.

<sup>4</sup>Նույն տեղում, N 495.

Վերոհիշյալ ընտրությունն առաջարկելով Ռուսաստանին, Անգլիայի արագործնախարարությունը միաժամանակ դեսպանների մակարդակով բանակցում էր Ֆրանսիայի, Գերմանիայի և Թուրքիայի հետ հայկական վիլայեթներում բարենորոգումներ անցկացնելու, Թուրքիա անգլիական սպաներ գործուղելու վերաբերյալ:

Անգլիայի արագործնախարարի և Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան Պ.Կամբոնի միջև կարճ ժամանակում փոխհամաձայնություն հաստատվեց: Ֆրանսիական դեսպանը համաձայն էր նրա հետ և նշում էր, թե ժանդարմերիայի հարցն առանձին հարց էր և ոչ մի կերպ չէր կարող ազդել բարենորոգումներ անցկացնելու խնդրի վրա: Ինչ վերաբերում էր բարենորոգումներ անցկացնելու խնդրին, ապա Պ.Կամբոնը հայտնում էր իր համոզմունքն այն մասին, որ ընդհանրապես ժամանակը չէր հասունացել Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կողմից այդ հարցի քննարկման և միջոցներ առաջարկելու համար<sup>1</sup>: Պ.Կամբոնը բացատրում էր, որ ղեռ որոշ հարցեր լուծված չէին և անհրաժեշտ էր համարում սպասել Թուրքիայի ֆինանսական հարցերի վերաբերյալ Փարիզում գումարվելիք խորհրդածոցովի որոշումներին: Ըստ դեսպանի, Ասիական Թուրքիայում բարենորոգումների իրագործման հսկողությունը պետք է զրվեր ոչ միայն Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի, այլ բոլոր վեց տերությունների վրա:

Ա.Նիքոլսոնը 1913թ. հունիսի 4-ին Լոնդոնում թուրքական դեսպան Թեֆիկ փաշային տեղեկացրել էր այն մասին, որ «տերություններից մի քանիսը ցանկություն էին հայտնել ամրապնդել ու կայունացնել Օսմանյան կայսրությունը և զիմել են Նորին Մեծության անգլիական կառավարությանն Ասիական Թուրքիայի համար, հնարավորին չափ շտապ, բարենորոգումների ծրագիր մշակելու մտադրությամբ, որը կներկայացվի Բարձր Դռանը»<sup>2</sup>: Աշխատելով սահպանել Անգլիայի հեղինակությունը, Ա.Նիքոլսոնը բացատրում էր Թեֆիկ փաշային, որ ստեղծված հանգամանքների պայմաններում, բարենորոգումների գործն ապահովելու նպատակով անգլիական պաշտոնյաների նշանակման գործին անհրաժեշտ էր այլ բն-

<sup>1</sup>Նույն տեղում, N 497.

<sup>2</sup>BDOW, vol 10, N 502

Թացք տալ: Թե.Ֆիլի փաշան համաձայնել էր այն առաջարկութ-  
յան հետ, թե ավելի տրամաբանական և գործնականորեն ճիշտ  
կլիներ սկզբում մշակել և հաստատել բարենորոգումների նա-  
խագիծը և միայն հետո քննարկել օտարերկրյա խորհրդա-  
կանների հարցը<sup>1</sup>:

Այդուհանդերձ, անգլիական կողմը, ձգտելով չկորցնել  
Թուրքիայի վստահությունը, թուրքական դեսպանին հայտ-  
նում էր, որ եթե նրա կառավարությունը հնարավոր անկար-  
գությունների երկյուղ ունի, ապա անգլիական կառավարութ-  
յունը պատրաստ է Թուրքիային տրամադրել մի քանի սպա՝  
ժանդարմերիայի աշխատանքը կազմակերպելու համար: Սա-  
կայն Ա.Նիքոլտոնը նշում էր, որ նրանց ծառայությունը ժա-  
մանակավոր բնույթ պիտի կրի<sup>2</sup>:

Անգլիայի կառավարությունը Փոքր Ասիայում անցկաց-  
վելիք բարենորոգումների հարցում ձգտում էր կարգավորել  
նաև Գերմանիայի հետ իր հարաբերությունները և աշխատում  
էր մեղմել Գերմանիայի անհանգստությունը կապված Թուր-  
քիայի տարածքային ամբողջություն հետ:

1913թ. հունիսի 2-ին, Լոնդոնում Գերմանիայի դեսպան  
Կ.Լիխնովսկու հետ հանդիպման ժամանակ, Անգլիայի արտ-  
գործնախարարը փորձում էր հավաստիացնել գերմանացիներ-  
ին, որ Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև նշված  
հարցի վերաբերյալ ոչ մի համաձայնություն գոյություն չու-  
նի<sup>3</sup>: Է.Գրեյը Կ.Լիխնովսկուն հայտնում էր, որ անհրաժեշտ է  
համարում ըստ անհանգստությունների կողմից բարենորոգումների  
համընդհանուր նախագծի մշակում՝ ամբողջ Ասիական Թուր-  
քիայի և ոչ միայն հայկական վիլայեթների համար: Ավելին՝  
է.Գրեյը նշում էր, որ նախագիծը մշակելիս տերություններն  
անսլայման պետք է խորհրդակցեին Թուրքիայի հետ<sup>4</sup>:  
Միայն դրանից հետո կարող էին նշանակել եվրոպացի պաշ-  
տոնյաներ՝ միջազգային համաձայնությունամբ մշակված բարե-  
նորոգումների նախագծի իրագործումն ապահովելու համար:

<sup>1</sup>Նույն տեղում, N 502.

<sup>2</sup>Նույն տեղում.

<sup>3</sup>Նույն տեղում, N 499.

<sup>4</sup>Հայաստանը միջազգային դիվանագիտության..., էջ 205:

Գերմանական ղեսպանն ընդունելի էր համարում բարենորոգումների լուծմանն ուղղված նման մտտեցումը: Է.Գրեյը Կ.Լիխնովսկուն ծանոթացրել էր նաև Թուրքիայի առաջարկութայն վերաբերյալ Անգլիայի ունեցած դիրքորոշմանը: Հանգամանալից բացատրությունների արդյունքում գերմանական կառավարությունը չառարկեց Թուրքիա անգլիական սպաների գործուղելուն:

Հայացքների և կարծիքների ընդհանրություն ցուցարբելով, տերություններն ընդհանուր առմամբ, փոխհամաձայնութայն եկան: Սակայն այս բանակցություններից ելնելով, Է.Գրեյը տեղեկացնում էր Ռուսաստանի արտգործնախարարին այն մասին, որ խիստ անհրաժեշտ էր բարենորոգումների անցկացման հարցն անմիջապես, առանց հապաղելու ներկայացնել տերությունների քննարկմանը: Է.Գրեյը զգուշացնում էր, որ հակառակ ղեպքում այդ առաջարկը կարող էր անել Գերմանիան<sup>1</sup>: Է.Գրեյի հետ հանդիպման ժամանակ գերմանական ղեսպանը հայտնել էր, որ հրահանգներ ունի Լոնդոնում, 1913թ. հունիսի 5-ի ղեսպանների ժողովին հիշատակել Փոքր Ասիայում անհրաժեշտ բարենորոգումների քննարկման շուրջ մտածելու անհրաժեշտութայն մասին<sup>2</sup>:

Անգլիայի արտգործնախարարը նաև առաջարկում էր Ս.Սազոնովին իր նախընտրած տարբերակը ներկայացնել բոլոր հինգ տերություններին միաժամանակ:

Անգլիայի առաջարկությունը չէր համապատասխանում Ռուսաստանի ծրագրերին: Ռուսաստանի արտգործնախարարը նախընտրել էր Անգլիայի կողմից առաջարկված տարբերակներից հրաժարվել: Նա առաջարկում էր հետևյալ նոր տարբերակը. բարենորոգումների նախագիծը սկզբում կենթարկվեր նախնական և զաղտնի քննարկման Կ.Պոլսում Անտանտի ղեսպանների կողմից՝ հրեք տերությունների միջև լիակատար համաձայնութայն հասնելու համար, որից հետո միայն նախագիծը կներկայացվեր մյուս տերություններին<sup>3</sup>:

<sup>1</sup>FO, 195 /2450, pt. 1, p. 71.

<sup>2</sup>Հայաստանը միջազգային դիվանագիտության..., էջ 206; См.Степанян, Армения в политике империалистической Германии..., стр. 78

<sup>3</sup>BDOW, vol. 10, N 501; Հայաստանը միջազգային դիվանագիտության..., էջ 201;

Ռուսաստանում անգլիական դեսպանությանն ուղարկված հեռագրում է. Գրեյը համաձայնել էր, որ Անտանտի տերությունների միջև ոչ պաշտոնական նախնական քննարկման կարիքը բխում էր նախագծում որոշ կարևոր փոփոխություններ մտցնելու անհրաժեշտությունից: Իսկ պաշտոնական քննարկումը, ըստ է. Գրեյի, չէր կարող տեղի ունենալ, մինչև որ Ռուսաստանը չգիմեր բոլոր հինգ տերություններին՝ բարենորոգումներ անցկացնելու առաջարկությամբ: Անգլիայի արտգործնախարարը գտնում էր, որ Կ. Պոլսում անգլիական դեսպան Զ. Լոութերը կարող էր, ոչ պաշտոնապես, մասնակցել բարենորոգումների նախագծի նախնական քննարկմանը Ֆրանսիական և ռուսական դեսպանների հետ<sup>1</sup>:

1913թ. մայիսի 24-ին/ հունիսի 6-ին Ռուսաստանի արտգործնախարարը Ֆրանսիայում, Անգլիայում, Գերմանիայում, Ավստրո-Հունգարիայում և Իտալիայում ռուսական դեսպանների միջոցով այդ տերությունների ուշադրությունն էր հրավիրում Արևմտյան Հայաստանում խոստացված բարենորոգումների և դրանց իրագործման համար միջոցներ որոնելու անհրաժեշտության վրա: Ռուսական կառավարությունը նպատակահարմար էր գտնում որպես բարենորոգումների ելակետ ընդունել 1895թ. ծրագիրը, լրացնելով և համաձայնեցնելով այն նորագույն պահանջներին<sup>2</sup>: Ռուսական առաջարկությանը հաջորդող մի քանի օրերի ընթացքում, ռուսական դեսպանները Փարիզից, Բեռլինից, Վիեննայից և Լոռնից հայտնում էին, որ նշված տերությունների կառավարությունները համաձայն էին զբաղվել Թուրքիայի հայաբնակ վիլայեթների բարենորոգումների խնդրով:

Այդուհանդերձ առաջարկությունը միանշանակ չէր ընդունվել տերությունների կողմից: Ֆրանսիայից ռուսական դեսպան Ա. Իզվոլսկին տեղեկացնում էր Ռուսաստանի արտգործնախարարությունը, որ Ֆրանսիական կառավարությունը պատրաստվում էր առանց որևէ պայմանի կարգադրություններ ուղարկել Կ. Պոլսում իրենց դեսպանին<sup>3</sup>: Եռյակ միության պետություններն իրենց համաձայնությունը դիմաց պայման-

<sup>1</sup> FO. 195 / 2450, pt 1, p. 71.

<sup>2</sup> Реформы в Армении..., стр. 41.

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 42.

ներ էին ներկայացնում. Մ՝ չխախտել սուլթանի վեհապետական իրավունքները և պահպանել Թուրքիայի տարածքային ամբողջականութունը, Չ՝ Թուրքիայի ներկայացուցչի մասնակցութունը բարենորոգումների քննարկմանը<sup>1</sup>:

Եթե եռյակ միության նման մտեցումը ուստական կառավարութունը բացատրում էր բարենորոգումների գործը ձախողելու միտումով, ապա Անգլիայի գերբորոշումը պարզ էր Ռուսաստանի համար: Բանն այն էր, որ Ս.Սադոնովի առաջարկութունն ստանալուց հետո, անգլիական կառավարութունը որևէ նոր հրահանգ չէր ուղարկել Կ.Պոլիս: Թուրքիայում անգլիական դեսպանը, ստանալով Ռուսաստանում անգլիական դեսպանին ուղղված է. Գրեյի հեռագրի պատճեն, իրեն լիազորված էր համարում մասնակցել մտքերի փոխանակությանը<sup>2</sup>: Անգլիայի կողմից ցուցաբերած նման վերաբերմունքն անհանգստացնում էր ուստական կառավարությանը: Վերջինս աշխատում էր պարզել՝ ուղարկե՞լ էին արդյոք Ջ.Լուսթերին անհրաժեշտ պաշտոնական կարգադրություններ, թե ոչ: Չնայած Կ.Պոլսում՝ ուստական դեսպան Մ. Գիրսից ստացված բացասական պատասխաններին, ուստական կառավարությունը չհանդգնեց մերժել անգլիական ներկայացուցիչների կիսապաշտոնական մասնակցութունը բարենորոգումների նախնական նախագծի քննարկմանը:

1913թ. մայիսի 27-ին/ հունիսի 9-ին/ Կ.Պոլսից ուստական դեսպան Մ. Գիրսը հայտնում էր Ռուսաստանի արտգործնախարարին, որ Թուրքիայում Անգլիայի դեսպանը և Ֆրանսիայի գործերի հավատարմատարը համաձայնել էին կազմել Անտանտի երկրների դեսպանութունների մեկական ներկայացուցիչներից բաղկացած հանձնաժողով: Այդ հանձնաժողովը պետք է մշակեր բարենորոգումների նախագիծը՝ հիմնվելով 1880թ. միջազգային հանձնաժողովի կողմից մշակված օրենքի, 1895թ. բարենորոգումների նախագծի և 1913թ. վիլայեթների մասին նոր օրենքի վրա: Մշակված նախագիծը, Անտանտի երկրների դեսպանների համաձայնութունը ստանալուց հետո, ներկայացվելու էր բոլոր տերությունների դեսպաններին:

<sup>1</sup>Նույն տեղում.

<sup>2</sup>BDOW, vol.10, N 504, АВРР, ф.Политархив, д.3461, л.120; Реформы в Армении..., стр. 42.

Ստեղծված նախապատրաստական հանձնաժողովի կազմի մեջ մտնում էին Կ.Պոլսում Անգլիայի դեսպանության առաջին թարգման Զ.Ֆիցմորիսը, Յրանսիայի դեսպանության քարտուղար կոմս Սեն-Քանթենը և Ռուսական դեսպանության առաջին թարգման և խորհրդական Ա.Մանդելշտամը: Հանձնաժողովը, քննության առնելով Մանդելշտամի կազմած նախնական նախագիծը և միանալով նրա զրույթներին, հունիսի 4-ին/17-ին ներկայացրեց Անտանտի կրկրների դեսպանների քննությանը:

Անգլիական և Ֆրանսիական դեսպաններն իրենց հավանությունն էին ավել ուստական նախնական նախագծին՝ մացնելով նրա մեջ մի քանի չնչին փոփոխություններ<sup>1</sup>: Սակայն Մ.Գիրսը չէր կարող այն ներկայացնել բոլոր մեծ տերությունների դեսպանների խորհրդակցությանը, քանի որ Անգլիայի դեսպանը բարենորոգումների նախագծի քննարկմանը մասնակցելու պաշտոնական հրահանգ գեւ չէր ստացել: Անգլիայի գիրքորոշումը հստակեցնելու համար Մ.Գիրսը պահանջում էր, որպեսզի Զ.Լոութերը հարցում աներ իր կառավարությանը<sup>2</sup>: Սակայն, անգլիական կառավարությունը չէր շտապում հրահանգներ ուղարկել Կ.Պոլիս:

Ավելի ու ավելի հստակ էր դառնում Անգլիայի գիրքորոշումը բարենորոգումների ծրագրի վերաբերյալ: Այն բոլորովին չէր համապատասխանում Ռուսաստանի շահերին և խորացնում էր հակասությունների սրումն Անգլիայի և Ռուսաստանի միջև: Անհամաձայնությունների հիմնական պատճառները վերաբերում էին հետևյալ խնդիրներին. 1/ անգլիական սպանների գործուղմանը Թուրքիա և 2/ Թուրքիայի մասնակցությանը բարենորոգումների քննարկմանը: Առաջին հարցի վերաբերյալ Ռուսաստանի դժգոհությունը տվյալ պահին կապված էր այն փաստի հետ, որ Անգլիայի և Թուրքիայի միջև վերսկսված բանակցություններն ավարտվել էին Թուրքիային տրված Անգլիայի համաձայնությունամբ: Ինչ վերաբերում էր երկրորդ պատճառին, ապա այն նույնպես արտահայտվում էր Անգլիայի համաձայնություն մեջ. Անգլիան, Եռյակ միություն երկրների հետ մեկտեղ, հանդես էր գալիս Արևմտյան Հայաս-

<sup>1</sup> АВПР, ф. Политархив, д. 3462, л. 45.

<sup>2</sup> Там же, л. 15; Реформы в Армении..., стр. 48.

տանի համար բարենորոգումների նախագծի քննարկմանը Թուրքիայի ներկայացուցչի մասնակցութեան օգտին:

Ռուսաստանի արտգործնախարարը կտրականապես մերժեց դեսպանների խորհրդաժողովին Թուրքիայի ներկայացուցչի մասնակցութեան պահանջը: Սազոնովը նշել էր, որ Թուրքիայի մասնակցութեանը միայն կրեբի խարդավանքների առաջացմանը և որ միակ տրամաբանական տարբերակ վեց դեսպանների կողմից բարենորոգումների ծրագրի մշակումն էր, որը տերութունների լիազորութեամբ կներկայացվեր Թուրքիային<sup>1</sup>: Ռուսաստանում անգլիական դեսպանութեան խորհրդական Հ.Օ'Բիրնը (H.O'Beirne) հայտնում էր Գրեյին, որ Ռուսաստանի արտգործնախարարը բավարարված կլինի, եթե իր անգլիացի գործընկերը նման ոգով զրույցներ վարի Բեռլինում և պաշտպանի Ռուսաստանի առաջարկը<sup>2</sup>:

Անգլիական ղեկավանագետները չէին պատրաստվում լիովին համաձայնել Ռուսաստանի հետ: Նրանք գտնում էին, որ անհնարին է բացահայտ մերժել Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի առաջարկը և, որ բանակցութունների որոշակի փուլում անհրաժեշտ կլինի քննարկել բարենորոգումների նախագիծը Թուրքիայի հետ: Է.Գրեյն առաջարկում էր Ս.Սազոնովին հետևյալը՝ Թուրքիան պետք է տեղեկացվի այն մասին, որ դեսպանները ցանկանում էին մշակել բարենորոգումների ծրագիր Ասիական նահանգների համար՝ ցանկանալով իրենց աջակցութունն ու օգնութունը տրամադրել այդ շրջաններին: Այս դեպքում Թուրքիան նույնպես կարող էր դեսպաններին ներկայացնել իր կողմից մշակված բարենորոգումների նախագիծը, որը դեսպանները կարող էին նկատի ունենալ 1895թ. առաջարկների մեջ նորամուծութուններ կատարելիս: Խնդիրն ամբողջովին քննարկելուց հետո դեսպանները կարող էին մտքերի փոխանակում կատարել Թուրքական կառավարութեան հետ: Է.Գրեյը մինչև անգամ հարմար էր գտնում, որ Թուրքական նախագծի մի որոշ հատված հարմարեցվի կամ ամբողջութեամբ ընդգրկվի դեսպանների նախագծի մեջ: Անգլիայի արտգործնախարարը հայտնում էր, թե պատրաստ էր աջակցել Ռուսաստանի նախաձեռնութեանը,

<sup>1</sup>BDOW, vol.10, N 507; Հայաստանը միջազգային դիվանագիտության..., էջ 223:

<sup>2</sup>Նույն տեղում, N 507.

եթե ուսսական արտգործնախարարը համաձայներ նշված առաջարկություններին հետ<sup>1</sup>:

Անգլիայի արտգործնախարարությունում նշված հարցն ավելի խորը քննարկման էր ենթարկվել: Լ.Մալլեթը նշում էր, որ եթե իրենք ցանկանում էին բարենորոգումներ անցկացնել Փոքր Ասիայում, ապա պետք է անպայման ընդգրկեին Թուրքիային, ինչպես նաև Գերմանիային և Ավստրո-Հունգարիային: Լ.Մալլեթը գտնում էր, որ կարիք կար Ս.Սազոնովի ուշադրությունը հրավիրել այն փաստի վրա, թե անհրաժեշտ են որոշ զիջումներ, որոնք կբավարարեին Եռյակ միությանը և Թուրքիային: Եթե այդ զիջումները չկատարվեին, ապա Եռյակ միության կողմից ոչ մի խոսք չօգուտ բարենորոգումների չէր ասվի և բարենորոգումների գործում որևէ առաջընթաց տեղի չէր ունենա: Լ.Մալլեթը է.Գրեյի հետ զրույցում նշել էր, որ Ս.Սազոնովը չէր կարող ենթադրել անգամ, թե Ավստրիան և Գերմանիան կարող էին համաձայնել պարտադրել Թուրքիային ընդունել բարենորոգումների ծրագիր՝ անհրաժեշտության դեպքում անգամ ուժի միջոցով<sup>2</sup>:

Անգլիական բարձրաստիճան գիվանագետների նման զիրքորոշման հիմնական պատճառը Թուրքիայում անգլիական դեսպան Զ.Լոութերի հազորդագրություններն էին: Նա հայտնում էր, որ Թուրքիայում այն հաստատ կարծիքը կար, որ, եթե իշխանությունը գտնվում է «Միություն և առաջադիմություն» կոմիտեի ձեռքում, դա նշանակում էր, որ իշխանությունը Եռյակ միության ձեռքում է: Դրանից հետևում է, որ կայսրության ասիական հատվածին վերաբերող բոլոր հիմնահարցերի լուծման խնդրում հատկապես զգալի է Գերմանիայի ազդեցությունը: Այդ պատճառով էլ Զ.Լոութերը հնարավոր էր համարում, որ Ֆորին-օֆիսի և Լոնդոնում Թուրքական դեսպանատան միջև հայկական վիլայեթների վերաբերյալ տեղի ունեցած բոլոր բանակցությունների մասին անմիջապես տեղեկացնել Լոնդոնի գերմանական դեսպանատանը<sup>3</sup>:

<sup>1</sup>Նույն տեղում, N 508.

<sup>2</sup>BDOW, vol.10, N 507.

<sup>3</sup>Նույն տեղում, N 503.

է. Գրեյի առաջարկութիւնը գործնական չէր թվում Ս.Սաղոնովին: Ռուս ղրվանագետը համոզված էր, որ Բ.Դուռը և նրա հովանավորները կղբմաղբերին ցանկացած փոփոխութեան թուրքական նախագծի մեջ և անկասկած կհանգեցնէին բարենորոգումների ձախողմանը: Ըստ Սաղոնովի, այդ ծրագիրը վստահութիւն չէր ներշնչէ: Հայերին հենց այն պատճառով, որ ներկայացվել էր Բ.Դուռն կողմից: Նրա կարծիքով. «Հայերը կարող էին վստահել միայն այնպիսի նախագծի, որը մշակված կլինէր Եվրոպայի կողմից և կգործադրվէր նրա հակողութեամբ»<sup>1</sup>: Սաղոնովը Ռուսաստանում Անգլիայի դեսպան Ջ.Բյուքենենի (G. Buchanan) միջոցով տեղեկացնում էր Ֆորին-օֆիսին, որ անհրաժեշտ էր համատեղացնել հայերին, թե մեծ տերութիւններն իրենց ձեռքն էին վերցրել բարենորոգումների գործը: Նա նշում էր, որ հայերի վիճակն այն աստիճան ծանր էր, որ այլևս ոչ մի ժամանակի կորուստ թույլատրելի չէր, իսկ թուրքական մասնակցի ներկայութիւնը կբերէր գործի անվերջ ձգձգման և հիասթափութիւն կառաջացնէր հայերի մեջ<sup>2</sup>:

Կարճ ժամանակում է. Գրեյին և Ջ.Բյուքենենին հաջողվում է հարթել առկա տարաձայնութիւնը: Նրանք շահում էին իրավիճակն այն բացատրութիւններով, որ պարզապես թյուրիմացութիւն է տեղի ունեցել՝ միմյանց ճիշտ չըմբռնելու պատճառով: Այսինքն, Անգլիան առաջարկել էր, որպէսզի թուրքական ներկայացուցիչը ևս ներկայացնի իր ծրագիրը: Այդ ծրագիրն ամենևին չէր պարտադրվի բնութենէլ որպէս հիմք: Անգլիացիները հանդատացնում էին ուսանելին, որ այդ գործողութիւնը ժամանակի կորուստ չի առաջացնի: Թուրքիան կներկայացնէր իր նախագիծը միայն պատրաստ լինելու դեպքում: Եթէ այն անմիջապէս չներկայացվի, ապա չի քննարկվի: Ինչ վերաբերում էր այն բանին, թե թուրքական նախագիծը կարող էր՝ առաջին հերթին Գերմանիայի կողմից օգտագործվել ուստական առաջարկութիւնները տապալելու համար, ապա անգլիացիները համարում էին, որ գերմանացիները կարող էին դա իրագործել ավելի մեծ հաջողութեամբ

<sup>1</sup>Նույն տեղում, N 511, 512: Հայաստանը միջազգային դիվանագիտութեան..., էջ 223-224:

<sup>2</sup>Реформы в Армении..., стр. 47-48.

ա՛յն դեպքում, եթե նախագիծը Թուրքիայի կողմից ներկայացվեր ավելի ուշ՝ որպես առանձին, անկախ տարբերակ: Եթե նախագիծը ներկայացվեր դեսպանների քննարկման ընթացքում, ապա նրանք կարող էին Թուրքական նախագծից հեռացնել ցանկացած հատված՝ որպես 1895թ. առաջըկուլթյուններին չհամապատասխանող<sup>1</sup>:

Մեղմելով լարվածությունն այս հարցում՝ Փորին-օֆիսի ղեկավարները ձգտում էին չըջանցել այն հավանական բարդությունները, որոնք կարող էին առաջանալ Թուրքիային տված իրենց համաձայնություն կապակցությունը: Այդ իսկ պատճառով, 1913թ. հունիսի 16-ի հեռագրում, Է.Գրեյը խնդրում է Ջ.Բյուքենենին տեղեկացնել Ռուսաստանի արտգործնախարարին հունիսի 6-ին Թուրքիային տրված ժանդարմերիայի սպանների վերաբերյալ Անգլիայի պատասխանի և գործողությունների մասին: Բանն այն էր, որ խոստանալով Թուրքական կառավարությանն իրականացնել սպանների գործուղումը, Փորին-օֆիսը նամակներ էր ուղարկել Ռազմական և Հնդկական նախարարություններին՝ 7 սպա ընտրելու հանձնարարությունը: Դեսպան Բյուքենենին հանձնարարվել էր ուսանելին տեղեկացնելիս շեշտել, որ սպաների նշանակումը պետք է զիտվի որպես ժամանակավոր երևույթ՝ մինչև որ Թուրքական կայսրությունը կներկայացվեր բարենորոգումների ամբողջական ծրագիր<sup>2</sup>:

Ջ.Բյուքենենին հանձնարարված էր նաև Ս.Սազոնովի ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, թե ցանկալի չէր լինի, որ ռուսական, անգլիական և ֆրանսիական դեսպանները սկզբնական նախագիծը ներկայացնելին մյուս դեսպաններին՝ որպես իրենց մեջ արդեն իսկ կայացած համաձայնության արդյունք: Է.Գրեյը բացատրում էր, որ դա կարող էր բարդացնել գործը, տարաձայնություններ առաջացնել և հակափաստարկների առիթ տալ: Նա առաջադրում էր հետևյալը. քանի որ բարենորոգումների քննարկման գործը նախաձեռնել էր Ռուսաստանը, ուրեմն հենց ռուսական դեսպանը պետք է ներկայացներ նախնական նախագիծը Կ.Պոլսում

<sup>1</sup>BDOW, vol.10, N 512.

<sup>2</sup>Նույն տեղում, N 513; Հայաստանը միջազգային դիվանագիտության..., էջ 238:

դեպպանների քննարկմանը<sup>1</sup>: Է. Գրեյի նշված առաջարկություն հետ ամբողջովին համամիտ էր ֆրանսիական կառավարությունը<sup>2</sup>:

Եթե անգլիական դիվանագետների այս առաջարկությունը ուսասկան կառավարությունն ընդունելի էր համարում, ապա Թուրքիա անգլիական սպաներ գործողելու որոշումը դժգոհություն էր առաջացրել ուսասկան կառավարության շրջաններում: Բյուքենենը ստիպված էր Ռուսաստանի արտգործնախարարին բացատրություններ ներկայացնել: Նրանում մասնավորապես ասվում է. «Անգլիայի արտգործնախարարն այլ կերպ գործել չէր կարող, որ անգլիական կառավարությունը ոչ մի մտադրություն չուներ խոչընդոտելու Ռուսաստանի գործողությունները: Սակայն անգլիական կառավարությունն անհրաժեշտ էր համարում ապահովել և կազմակերպել այն ուժը, որը կպահպաներ կարգ ու կանոնը և կկանխեր նոր ջարդերը հայկական վիլայեթներում՝ մինչև բարենորոգումների նախագծի պատրաստ լինելը»<sup>3</sup>:

Ա. Սագոնովը գտնում էր, որ կարելի է համաձայնվել նման որոշման հետ, եթե, իհարկե, սպաների քանակը լիներ խիստ սահմանափակ և ծառայությունն էլ՝ անպայման ժամանակավոր: Գրեյը շտապում էր Սագոնովին հավաստիացնել, որ սպաների քանակն իրոք սահմանափակ էր լինելու՝ ընդամենը 6 կամ 7 սպա և որ նրանց նշանակումն անպայման ժամանակավոր բնույթ է ունենալու: Նա գտնում էր, որ նշանակված սպաները հետագայում կարող էին նաև ընդգրկվել մշակված բարենորոգումների կենսագործմանը:

Այդուհանդերձ, այդ գիջումներն ու հավաստիացումները չկանխեցին Անգլիայի և Ռուսաստանի միջև վերսկսված տարածայնությունը: Բանն այն էր, որ Ռուսաստանի ռազմական իշխանությունները կտրականապես դեմ էին Թուրքիայի ժանդարմերիան կազմակերպելու համար անգլիական սպաների նշանակմանը<sup>4</sup>: Նրանք շատ անհանգստացած էին, քանի որ հարցը վերաբերում էր Ռուսաստանի սահմանամերձ շրջաններ

<sup>1</sup> BDOW, vol. 10, N 518.

<sup>2</sup> Նույն տեղում, N 522.

<sup>3</sup> Նույն տեղում, N 524.

<sup>4</sup> Նույն տեղում, N 528; Հայաստանը միջազգային դիվանագիտության..., էջ 247:

րին: Բացի այդ, ուսսական ուղղմական իշխանությունների կողմից վերացված չէր վաղեմի անվստահությունը Հնդկաստանի սպանների նկատմամբ: Ռազմական իշխանությունների ճնշման տակ Ս.Սազոնովը՝ չնայած, որ ձգտում էր սերտացնել ուսս-անգլիական հարաբերությունները, նույնպես դեմ էր անգլիացի սպանների գործուղմանը<sup>1</sup>:

Անգլիայի արտգործնախարարությունը բարդ կացության մեջ էր, քանի որ արդեն համաձայնություն էր հայտնել Թուրքիային: Միևնույն ժամանակ, անգլիացիները հասկանում էին, որ իրենց որոշման իրագործումը կարող էր սառնություն առաջացնել անգլո-ուսսական հարաբերություններում և, ավելին, ուսսներին մղել անցանկալի գործողությունների: Անգլիական ղեկմանազետները մեղադրում էին Ս.Սազոնովին, որ նրա նախնական համաձայնությունն այժմ շփոթության մեջ էր դրել իրենց: Ս.Սազոնովը բացատրում էր է. Գրեյին, թե չի պահանջում, որ Անգլիայի արտգործնախարարը հրաժարվի իր խոստումից: Նա խորհուրդ էր տալիս պարզապես՝ հետաձգել անգլիական սպանների գործուղումը Թուրքիա: Ս.Սազոնովի կարծիքով՝ այդ հետաձգումն արդարացնելու համար առիթ կհանդիսանային Կ.Պոլսում գումարվող դեսպանների բանակցությունները: Ըստ նրա, իրավիճակից ելնելու ամենալավ միջոցը հետևյալն էր՝ տեղեկացնել օսմանյան կառավարությանը, որ սպաններն արդեն նշանակված էին, սակայն կժամանեն Թուրքիա, երբ բարենորոգումների ընդհանուր նախագիծը պատրաստ լինի: Իսկ այժմ, ավելացնում էր Ս.Սազոնովը, Թուրքիան պետք է տեղեկացվեր, որ բոլոր տերությունների կողմից բարենորոգումների քննարկման ընթացքում տեղին չէր դիմել Անգլիայի անջատ գործողություններին:

Ս.Սազոնովի առաջարկությունն Անգլիայի արտգործնախարարությունում ընդունվեց բազմաթիվ առարկություններով: Անգլիական ղեկմանազետներն այն կարծիքին էին, որ այդ առաջարկին համաձայնվելը փաստորեն կնշանակեր մի յուրահատուկ՝ Ռուսաստանի ազդեցության գոտու ճանաչում: Ելնելով դրանից, Լ.Մալլեթն առաջարկում էր պարզել, թե որ տարածքներով են շահագրգռված ուսսները և ըստ այդմ գնալ որոշ զիջումների: Այսինքն, նա առաջարկում էր չտարածել

<sup>1</sup>BDOW, vol. 10, N 536.

անգլիական սպաների ծառայությունը Ռուսաստանին սահմանակից տարածքներում՝ էրզրումի վիլայեթում, ի տարբերություն Վանի, Բիթլիսի, Դիարբեքլիի վիլայեթների<sup>1</sup>:

Լավ հասկանալով ռուսների նկրտումները՝ անգլիացիները Ս.Սազոնովին զգուշացնում էին, որ Թուրքիան անկասկած կմերժեր ռուսական սպաների ծառայությունը սահմանամերձ տարածքում, ինչին մեծ եռանդով ձգտում էր Ռուսաստանը: Այդ պատճառով էլ Լ.Մալլեթը հնարավոր էր համարում նաև մեկ այլ տարբերակ՝ միացյալ անգլիական, ֆրանսիական և ռուսական ուժերի գործածում նշված շրջաններում:

Ս.Սազոնովը պատասխանում էր, որ Թուրքիան, իսկապես, չի առարկի ռուս սպաների ծառայության դեմ, եթե այն տեղի ունենա համատեղ՝ անգլիական, գուցե նաև, ֆրանսիական սպաների հետ միասին: Ինչ վերաբերում էր միայն անգլիական սպաներից բազկացած մի փոքր խմբի, ապա նրանք, ըստ Ս.Սազոնովի, չէին կարող կանխել անկարգությունները՝:

Անգլիացիների այն անհանգստությունը, թե իրենց կողմից մերժում ստանալու պեպքում Թուրքիան կարող էր դիմել Գերմանիային, Ռուսաստանի արտգործնախարարը հայտնում էր, թե կկարգադրի Կ.Պոլսում իր ներկայացուցչին հավաստիացնել Բ.Դոանը, որ մինչ բարենորոգումների նախագծի ի կատար ածելը, Ռուսաստանն ընդհանրապես կարականապես դեմ է իր սահմանամերձ վիլայեթներում օտարերկրյա սպաների ծառայությանը<sup>2</sup>:

Ռուսաստանի նման քայլերը, Հ.Նորմանի կարծիքով, վերջ կդնեին մեծ տերությունների համագործակցությունը բարենորոգումների նախագծի մշակման խնդրում, քանի որ Գերմանիան չէր հանդուրժի այդպիսի վերաբերմունք Թուրքիայի նկատմամբ<sup>3</sup>: Հետևաբար, բարենորոգումների նախագիծը դեռ ամիսներ շարունակ պատրաստ չէր լինի և հենց Ռուսաստանը, առաջին հերթին, պատասխանատու կլիներ հնարավոր կոտորածների համար:

<sup>1</sup>Նույն տեղում, N 528.

<sup>2</sup>BDOW, vol.10, N 531.

<sup>3</sup>Նույն տեղում:

<sup>4</sup>Նույն տեղում:

Նկատի ունենալով Ռուսաստանի արտգործնախարարի առարկուծյունները՝ Ֆորին-օֆիսի ղեկավարներն Անգլիայում Թուրքիայի դեսպան Թևֆիկ փաշային հայտնում են այն կարծիքը, որ հավանաբար մասամբ կմերժվի Թուրքիայի խնդրանքը՝ կապված այն վիլայեթների հետ, որոնք սահմանակցում էին Ռուսաստանին:

Ռուսական իշխանությունները դեմ էին անգլիական այս նախաձեռնությանը ևս: Նրանք ավելի հարմար էին գտնում սահմանամերձ վիլայեթներում օգտագործել մեկ այլ՝ փոքր տերությունների ծառայությունը<sup>1</sup>:

Անգլիացիները գտնում էին, որ կարելի էր ընդունել Ռուսաստանի նշված առաջարկությունը, որը տարածայնությունները վերացնելու և ընդհանուր եզրակացություն գալու նպատակ էր հետապնդում: Ավելին, հավանաբար, լարվածությունը վերջնականորեն հարթելու ձգտումն էր, որ թելադրեց Ֆորին-օֆիսի պարագլուխներին վերջապես կարգադրություններ ուղարկել Կ.Պոլսում իրենց գեսպանին՝ գեսպանների բանակցություններին մասնակցելու լիազորությամբ:

1913թ. հունիսի 14/27-ին անգլիական կառավարությունը Լուսթերին հրահանգներ էր ուղարկել<sup>2</sup>: Երեք օր հետո՝ հունիսի 17/30-ին բոլոր վեց տերությունների գեսպանները խորհրդակցության նստեցին: Այս նիստին հաջորդելու էր «Հայկական բարենորոգումների հանձնաժողովի» աշխատանքը Կ.Պոլսի Ենի-Քյոյ արվարձանում՝ ավստրո-հունգարական գեսպանատան շենքում:

Այսպիսով, գեսպանների բանակցությունները Կ.Պոլսում արդեն սկսվում էին, իսկ Անգլիան և Ռուսաստանը ժանդարմերիային վերաբերող հարցի շուրջ ընդհանուր եզրակացություն չէին հանգել: Այս դիվանագիտական քաջքշուկը շարունակվում էր նաև գեսպանաժողովի աշխատանքի ժամանակ:

Ի վերջո անգլիական կառավարությունը հրաժարվում է սպաներ գործուղելու իր մտադրությունից: 1913թ. հուլիսի 4-ին Ֆորին-օֆիսը նամակներ է ուղարկում ռազմական և

<sup>1</sup>BDOW, vol.10, N 536.

<sup>2</sup>АВПР, ф.Политархив, д.3462, л. 59; Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919). Материалы политического архива МИД Каузеровской Германии, Е., 1997, стр.67.

հնդկական նախարարություններ՝ տեղեկացնելով, որ ժամանակավորապես հետաձգվում էր անգլիական սպաների դործուղումը Թուրքիայի ժանդարմերիայում ծառայելու համար: Նույն օրը Լոնդոնում Թուրքական դեսպանը նույնպես տեղեկացվում է այդ մասին: Ա.Նիքոլսոնը բացատրում է Թեֆիք փաշային, որ Անգլիան առայժմ հրաժարվում է սպաներ ուղարկել հայկական վիլայեթներ, քանի որ օսմանյան կառավարութայն կողմի՝ ասիական նահանգների համար բարենորոգումների նախագիծ էր ներկայացվել տերությունների ուշադրութայնն ու քննարկմանը և ղեռ տերությունների միջև այդ կապակցութայմբ համաձայնությունն չէր կայացվել: Անգլիացիներն այն կարծիքին էին, որ Թուրքիայում ծառայելու համար օտարազգի խորհրդականների և տեսուչների հարցն ամբողջովին պետք է քննարկվեր բոլոր տերությունների և Թուրքիայի կողմից համատեղ, իսկ այժմ, երբ քննարկումները դեռ շարունակվում էին, մեկ մեծ տերութայն գործողութայունները կարող էին շփոթությունն առաջացնել, թեպետև ուղղված կլինեին քննարկվող բարենորոգումների օգտին՝:

Ելնելով այս ամենից է. Գրեյը հաղորդում էր Ս.Սազոնովին, որ միանում էր նրա այն կարծիքին, թե պետք է որևէ փոքր տերութայն սպաներ օգտագործվեին հայկական վիլայեթներում: Դրա անհրաժեշտությունը կար, քանի որ անընդմեջ լուրեր էին տարածվում հայկական վիլայեթներում իրագործվող կոտորածների մասին և անհրաժեշտ էր հնարավոր ամեն ինչ անել՝ օգնելու այդ շրջաններում ապահովել կարգ ու կանոնը և անվտանգությունն լ: Այսպիսով, Ջ.Բյուքենենը Ս.Սազոնովին ներկայացնում էր է. Գրեյի այն պայմանը, որ փոքր տերութայն կողմից տրամադրված պաշտոնյաները պետք է իսկույնեթ դործի անցնեին կայսրութայն հյուսիսում և արևելքում<sup>2</sup>: է. Գրեյը Ս.Սազոնովի ուշադրությունը հրավիրել էր այն հանգամանքի վրա, որ եթե Անգլիայի կառավարութայնն առայժմ հրաժարվել է սպաներ տրամադրելու իր մտադրությունից, ապա միայն այն նպատակով, որպեսզի համաձայնություն կայանար այն նախագծի շուրջ, որը կպահպաներ

<sup>1</sup>BDOW, vol.10, N 541, 544; Հայաստանը միջազգային դիվանագիտության..., էջ 253, 255, 258:

<sup>2</sup>Նույն տեղում, N 547.

օսմանյան նահանգների տարածքային ամբողջականութունն Ասիական Թուրքիայում<sup>1</sup>:

Անգլիայի և Ռուսաստանի դործողութունները ցույց են տալիս, որ 1913թ. ամռանը Հայկական հարցը կրկին դիվանագիտական պայքարի առարկա էր դարձել:

Սակայն մարդասիրական ձգտումները չէին ներքաշել տերութուններն այդ պայքարի մեջ: Եվրոպական յուրաքանչյուր տերութւյան շահը թելադրում էր նրա վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ: «Եթե եվրոպան ցանկանում էր պաշտպանել հայերին, ապա միայն այն պատճառով, որ սևփական շահերից ելնելով եվրոպական կապիտալը չէր կարող թույլ տալ կոտորել կամ էլ տնտեսապես թուլացնել Անատոլիայի բնակչութւյան ամենազարգացած և ձեռներեց իւսվը»<sup>2</sup>:

Անգլիայի մտահոգվածութունն Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու հարցում, փաստորեն, ձեռական բնույթ ուներ: Նրա երկակի խաղն զգացվում էր արդեն իսկ Ռուսաստանի կողմից բարենորոգումների նախագծի մշակման վերաբերյալ արված առաջարկից հետո: Անգլիան ցանկանում էր, որ բարենորոգումների խնդրում նախաձեռնութւյունը գտնվի Ռուսաստանի ձեռքում: Սակայն այս նախապատվութւյունը չէր բացատրվում դաշնակցի անկեղծ ցանկութւյամբ: Պարզապես Անգլիան ձգտում էր ավելի ու ավելի խոր ներքաշել Ռուսաստանին Մերձավոր և Միջին Արևելքում խոշոր տերութւյունների սրվող հակասութւյունների մեջ, դրանով իսկ հարված հասցնելով Գերմանիային: Այս հակասութւյունների զոհը դարձավ Հայկական հարցը:

<sup>1</sup>BDOW, vol.10, N 541.

<sup>2</sup>Армянский сборник, Москва, 1915, стр.143.

ԵՆԻ-ՔՅՈՑԻ ԽՈՐՀՐԴԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ  
ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԿՐՏՈՒՄՆԵՐԸ

1913թ. հունիսի 17-ին /30-ին Կ.Պոլսում վեց տերություններին՝ Ռուսաստանի, Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի ղեկավարները Ռուսաստանի նախաձեռնությամբ խորհրդակցության էին նստել: Հայկական հարցի քննարկումը ժամանակագրական առումով զուգարդիակեց Բալկաններում սկսված նոր ճգնաժամի հետ: 1913թ. հունիսի 30-ին սկսվեց Բալկանյան երկրորդ պատերազմը: Հայկական խնդրի լուծման համար ստեղծվեցին անբարենպաստ միջազգային պայմաններ:

Թուրքական կառավարությունն ամենևին հաշվի չառնելով «ռուսական վտանգը», ձգտելով օգտվել բարեհաջող պաշից՝ նույնպես մտավ պատերազմի մեջ: 1913թ. հուլիսի 20-ին, երբ քննարկումները բարենորոգումների շուրջ դեռ չէին ավարտվել, Թուրքիան բուլղարացիներից վերադարձվեց Ադրիանապոլիսը: Թուրքիայի համար բարեհաջող այս փորձողությունները չէին կարող չանբազառնալ Հայկական խնդրի վրա:

Արդեն իսկ ղեկավարների խորհրդակցության ընթացքում ուրվագծվեց Հայկական վիլայեթների համար նախատեսվող բարենորոգումների նկատմամբ այն վերաբերմունքը, որ ցուցաբերվեց հետագա քննարկումների արդյունքում: Կ.Պոլսից Ֆրանսիայի հավատարմատարը հայտնում էր Ֆրանսիայի արտգործնախարար Պիշոնին, որ «Սուլթան Աբդուլ Համիդի սովորեցրած մեթոդին հետևելով՝ իշխան Սաիդ Հալիմը ուզեց, որ նախքան տեղի կունենա նշանակված ժողովը, որին հրավիրված են տերությունների ներկայացուցիչները, նրանց առջև դրվի թուրքական նախաձեռնությունը»<sup>1</sup>: Իրենց նախագծի քննարկման առաջարկով, որը նպատակ ուներ իսպախել ռուսական նախագծի ընդունումը, թուրքերը հաստատեցին, որ ամեն ինչ կանեն, որպեսզի հայկական բարենորոգումների գործը չչարժվի իր մեռյալ կետից:

<sup>1</sup> Հայաստանը միջազգային դիվանագիտության..., էջ 239:

1913թ. Հունիսի 30-ին դեսպանների գումարած նիստում թուրքիայում ուսական դեսպան Մ. Գիրսը Հայտարարեց, որ 1/ Հայկական բարենորոգումների քննարկման նախաձեռնութ-  
յունը պատկանում է իր կառավարությանը, որն առաջնորդ-  
վում էր ուսական տարածքի հարևան ժողովրդի վիճակը բա-  
րելավելու մտահոգությամբ, 2/ Ռուսաստանն ավելի, քան  
մյուս պետությունները, շահագրգռված է Արևմտյան Հայաս-  
տանի և Հայկական հարցի վերաբերյալ, 3/ բարենորոգումների  
հարցի քննարկումը պետք է կատարվի հնարավորինս արագ<sup>1</sup>:

Մ. Գիրսը բարենորոգումների սկզբնական նախագիծը  
ներկայացրել էր ոչ թե որպես իր կառավարության վերջնա-  
կան Հայացքների արտահայտություն, այլ որպես Կ. Պոլսում  
ուսական դեսպանության թարգման Ա. Մանդելշտամի Հայե-  
ցակետ<sup>2</sup>:

Ա. Մանդելշտամի կողմից մշակված նախնական ծրագրի  
համար հիմք էին ծառայել 1895թ. Ֆրանսիայի, Մեծ Բրիտա-  
նիայի և Ռուսաստանի դեսպանների կողմից բարենորոգում-  
ների վերաբերյալ հիշատակագիրը, 1895թ. Ֆրանսիայի, Մեծ  
Բրիտանիայի և Ռուսաստանի կողմից մշակված վարչական  
բարենորոգումների ծրագիրը, 1895թ. հոկտեմբերի 20-ի սուլ-  
թանի հրովարտակը, 1880թ. եվրոպական հանձնաժողովի օրի-  
նագիծը և Լիբանանի արձանագրությունն ու կանոնադրութ-  
յունը:

Ա. Մանդելշտամի նախագծի համաձայն Հայկական՝ վեց՝  
էրզրում, Վան, Բիթլիս, Դիարբեքիր, Խարբեբդ, Սվազ, վիլա-  
յեթներից կազմվելու էր մի նահանգ՝ բացառությամբ որոշ մա-  
սերի, որոնք գտնվում էին սահմանաձայրերում և բնակեցված  
էին մահմեդականներով, մասնավորապես քրդերով<sup>3</sup>: Վարչա-  
կան բաժանումների սահմանումը կատարվելու էր այնպես, որ  
նրանց մեջ եղած առանձին ազգերը միասին բնակվեին:

Նահանգի գերագույն կառավարիչը՝ ընդհանուր նա-  
հանգապետը, պետք է լիներ թուրքահայատակ քրիստոնյա կամ

<sup>1</sup>Реформы в Армении..., стр.70; Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919), стр. 67-68.

<sup>2</sup>BDOW, vol 10, N 529.

<sup>3</sup>Հայաստանը միջազգային դիվանագիտության..., էջ 227; Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919), стр.72.

եվրոպացի, որին նշանակելու էր սուլթանը՝ տերությունների առաջարկութեամբ: Ընդհանուր նահանգապետի ձևաբույժ էր կենտրոնացվելու երկրամասի գերագույն գործադիր իշխանությունը:

Նահանգի ներկայացուցչական ժողովը կազմվելու էր հավասարապես մահմեդականներից և քրիստոնյաներից: Նրանք ընտրվելու էին կազաներում /շրջաններում/՝ գաղտնի քվեարկութեամբ: Ազգային հավասարութեան սկզբունքը կիրառվելու էր նաև վարչական խորհուրդներում, դատարաններում, ոստիկանական և ժանդարմերիայի մարմիններում:

Նահանգի տարածքում արգելվում էր բնակեցնել մուհաջիրներին: Խաղաղ պայմաններում գինապարտները ծառայությունն անցկացնելու էին նահանգի տարածքում: Քրդական հեծելազորը /նախկին «համիդիեն»/ արձակվելու էր: Թուրքերենը, հայերենը և քրդերենը ճանաչվելու էին որպես պաշտոնական լեզուներ: Յուրաքանչյուր ազգություն իրավունք էր ունենալու իր միջոցներով դպրոցներ հիմնել ու կառավարել:

Մի առանձին մասնաժողով ընդհանուր նահանգապետի նախագահութեամբ որոշելու էր այն պայմանները, որով հայերին վերագարձնելու էին հատիշտակված հողերը կամ փոխհատուցելու էին դրանց պիմաց: Մեկ այլ մասնաժողով պետք է մշակեր նահանգի ընդհանուր կարգավիճակը, ինչպես նաև նախագծեր նահանգի շրջանից դուրս, մասնավորապես Կիլիկիայում ապրող հայերի վիճակը բարելավելու նպատակով:

Մեծ տերություններն իրենց հսկողութեան տակ էին վերցնելու այս բարենորոգումների կենսագործումը<sup>1</sup>:

Դեսպանաժողովը որոշեց ռուսական նախագծի քննարկումը հանձնարարել «Հայկական բարենորոգումների հանձնաժողովին», որը կազմված էր յուրաքանչյուր դեսպանութեան մեկ ներկայացուցչից: Հանձնաժողովը աշխատանքը պետք է սկսեր 1913թ. հուլիսի 3-ին Կ.Պոլսի Ենի-Քյոյ արվարձանում՝ ավատրոհունգարական դեսպանատանը:

<sup>1</sup>Բարենորոգումների նախագծի ամբողջական բովանդակությունը տես Реформы в Армении..., стр. 52-69; Լեո, Յայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915, էջ 314-329:

Մ. Գիրսի բավականին կազմակերպված և խիստ գործողութունների արդյունքում գերմանական և իտալական դեսպաններին չհաջողվեց հենց սկզբում տապալել այդ հանձնաժողովի աշխատանքը: Եռյակ միության պետութունների ներկայացուցիչները պահանջում էին ռուսական նախագծի հետ հավասարապես քննության առնել թուրքական նախագիծը: Գիրսը դեմ չէր այդպիսի քննարկման, բայց նկատել տվեց, որ Բ. Դոան մտադրութունները դեռևս վերջնական ձևավորում չէին ստացել և մինչև տվյալ օրը թուրքիան ոչ մի ծրագիր չէր ներկայացրել: Ուստի Գիրսը հօգուտ իր կառավարության պահանջեց առաջնության իրավունք, որի դեմ ոչ ոք չառարկեց: Ժողովը համաձայնեց Գիրսի հետ և որոշեց թուրքական ծրագիրը հանձնաժողովին հանձնել այն ստանալուց հետո: Գիրսի առաջարկութայմբ խորհրդակցությունը սկսվելու էր փակ նիստով, որպեսզի թուրքական ներկայացուցիչը չկարողանար մասնակցել ռուսական նախագծի քննարկմանը<sup>1</sup>:

Այսպիսով, անհաջողության մատնվեցին թուրքական կառավարության ջանքերը՝ հենց սկզբից մասնակցել տեղութունների կողմից բարենորոգումների նախագծի քննարկմանը: Սակայն թուրքական ներկայացուցիչների բացակայությունը վերջ չդրեց Մ. Գիրսի մտավախություններին և չնպաստեց դործի հաջողությանը: Ռուսաստանի արտգործնախարար Ս. Սազոնովը իր հիշողություններում նշում է, որ «առաջին իսկ նիստին միանգամայն ակնհայտ դարձավ, որ հանձնաժողովի աշխատանքներն անհաջողության էին դատապարտված»<sup>2</sup>:

Հուլիսի 1-ին, երբ հանձնաժողովը դեռ չէր սկսել իր աշխատանքը, թուրքական կառավարության կողմից տեղութունների դեսպաններին ներկայացված շրջաբերականը նոր տարաձայնություններ առաջացրեց հանձնաժողովի անդամների մեջ:

Հիմնական բոլոր կետերում շրջաբերականի բովանդակությունը խիստ տարբեր էր: Շրջաբերական հեռագիրը հայտնում էր, որ կայսրությունը բաժանվել էր վեց սեկտորների՝ որով «արևելյան սեկտորները» բաժանվում էին երկու

<sup>1</sup>Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1977, հ. 6, էջ 528:

<sup>2</sup>С. Д. Сазонов, Воспоминания, Берлин, 1927, стр. 172.

սեկտորի առանց սահմանների որոշման: Հայկական վիլայեթների դասավորումն այդ երկու սեկտորների մեջ կբաժաներ Հայերին: Թուրքերի նպատակն էր լուծել Հայերին մահմեդական բնակչության մեջ և վերջ դնել Հայկական հարցին: Որպեսզի շեշտեր իր կամքը, թե չէր թողնելու, որ հայկական նահանգ կազմակերպվի, Բ. Դուռը մինչև խոկ վարչական շրջանների աղյուսակում մեկը մյուսից անջատել էր արևելյան վիլայեթները և բաժանել երրորդ շրջանի (Էրզրումի, Ավազ, Տրապիզոնի, Ջանիքի սանջակների, կամ Սասունի վիլայեթների) և հինգերորդ շրջանի (Բիթլիսի, Դիարբեքի, Մամուրեթ-ուլ-Ազիզի, Վանի վիլայեթների) միջև<sup>1</sup>:

Համաձայն թուրքական նախագծի՝ յուրաքանչյուր սեկտորի գլուխ նշանակվելու էր եվրոպացի ընդհանուր վերատեսուչ: Ի տարբերություն ռուսականի՝ թուրքական նախագիծը չէր նախատեսում թուրքահպատակ քրիստոնյա ընդհանուր վերատեսուչի հավանականությունը: Վերատեսուչները նշանակվելու էին նախարարների խորհրդի կողմից սուլթանի հաստատմամբ, բայց առանց մեծ տերությունների համաձայնություն, ինչպես պահանջում էր ռուսական նախագիծը:

Նախագիծը պահում էր վիլայեթների իրավակարգն անփոփոխ, տալով վերատեսուչներին միայն Ֆինանսների և արդարադատության բոլոր ճյուղերի վերահսկման և պաշտոնյաներին արձակելու իրավունք: Նախագծում ոչինչ չէր ասվում վարչական մարմիններում քրիստոնյաների մասնակցության և նրանց իրավունքների մասին: Ընդհանուր նահանգապետին ենթարկվելու էին եվրոպացի և թուրք մասնագետ օգնականներ:

Փաստորեն, թուրքական նախագիծը ոչնչի էր հանգեցնում բարենորոգումների ռուսական տարբերակը:

Մ. Գիրսը Ս. Սաղոնովին հեռագրում էր, որ Բ. Դուռն ներկայացրած օրենքները կրում էին «անկապ և ծրագրային բնույթ» և շատ հեռու էին թե՛ 1895թ. դեպքանների մշակած բարենորոգումներից, թե՛ Մանդելշտամի կազմած նախագծից: Նա ակնկալում էր, որ պատգամավորները որպես ելակետ կընդունեին ռուսական նախագիծը՝ օգտվելով, իհարկե, այն

<sup>1</sup> Տես Հայաստանի միջազգային դիվանագիտության..., էջ 249:

Թուրքական առաջարկություններին, որոնք ամրապնդում էին ռուսական նախագծի համապատասխան դրույթները:

Սակայն տերությունների պատվիրակների տեսակետները տարբեր էին: Գերմանական, ավստրիական, իտալական պատվիրակները պահանջում էին, որ նախ քննարկվեին Բ. Դոան շրջաբերականով հայտարարված բարենորոգումների ծրագիրը: Անտանտի պետությունների ներկայացուցիչները պնդում էին, որ ռուսական նախագիծը պետք է մնա որպես քննարկումների հիմք:

Չկարողանալով հաշտեցնել իրենց տեսակետները՝ պատվիրակները որոշեցին այդ մասին ղեկուցել իրենց ղեկավարներին՝ և 1913թ. հուլիսի 3-ի առաջին նիստը դրանով ավարտեց իր աշխատանքը<sup>1</sup>: Ավստրո-հունգարական մեքենայությունը պարզ երևում էր: Կ. Պոլսում ֆրանսիական հավատարմատարը Ֆրանսիայի արտգործնախարարին այն կարծիքն էր հայտնում, որ Գերմանիան և Ավստրիան Թուրքիայի կողմից այդ հասկանալի շարադրված փաստաթուղթը օգտագործում էին որպես հարցի քննարկման վրա դրված նախակալանք՝ ռուսական նախաձեռնությունը տապալելու համար<sup>2</sup>:

Կ. Պոլսում անգլիական դեսպանության հավատարմատար Չ. Մարլինգը նույն կարծիքն էր հայտնել Է. Գրեյին<sup>3</sup>:

Ռուսական դեսպան Մ. Գիրսն իր հերթին հեռագրում էր Սազոնովին, որ նախապես ծրագրված ձգտում կար, որպեսզի ռուսական ծրագրին երկրորդական նշանակութուն տրվեր: Նա նշում էր, որ դա չիրագործվեց այն պատճառով, որ անգլիական և ֆրանսիական ներկայացուցիչները պաշտպանեցին ռուսական առաջարկները<sup>4</sup>:

Եթե Կ. Պոլսում Անգլիայի և Ֆրանսիայի դեսպանությունների ներկայացուցիչները կողմ էին ռուսական նախագծի քննարկմանը և պատրաստ էին աջակցել դրա ընդունմանը, ապա նրանց կառավարությունների վերջնական դիրքորոշումները դեռ պարզ չէր: «Հայկական բարենորոգումների հանձնաժողովի» անդամ, Կ. Պոլսում անգլիական դեսպանության

<sup>1</sup>Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919), стр.69; Հայաստանը միջազգային դիվանագիտության..., էջ 245:

<sup>2</sup> Հայաստանը միջազգային դիվանագիտության..., էջ 245:

<sup>3</sup>BDOW, vol. 10, N 540.

<sup>4</sup>Реформы в Армении..., стр.10; АВПР, Ф.Политархив, д.3462, лл. 88-91.

Թարգման Զ.Ֆիցմորիսը /G.Fitsmoris/ Անգլիայի արտգործնախարարութեանն ուղարկված Հաղորդագրութեան մեջ Հայտնում էր, որ իր աշխատանքը սկսել էր ռուսական նախագծին աջակցութիւնն ցուցաբերելով: Սակայն աստիճանաբար նրան պարզ է դառնում, որ բրիտանական կառավարութիւնը չէր պատրաստվում ընդունել ավելին, քան 1895թ. բարենորոգումների առաջարկութիւններն էին: Այս հանգամանքն էլ բավականին դժվար և անորոշ կացութեան մեջ էր դրել Զ.Ֆիցմորիսին, քանի որ և՛ թուրքական և՛ ռուսական նախագծերը տարբերվում էին 1895թ. բարենորոգումների նախագծից: Ռուսական նախագծի առաջարկները վերաբերում էին հիմնականում Հայերով բնակեցված վեց վիլայեթներին: Նրա հիմքում ընկած էր 1895թ. նախագիծը: Իսկ թուրքականը ընդհանուր բնույթ ունեւր և վերաբերում էր ողջ կայսրութեանը: Դա էր պատճառը, որ Ֆիցմորիսը շարունակում է աջակցել ռուսական նախագծին: Այդուհանդերձ, նա աջակցում էր զգուշորեն և իր մասնակցութիւնը՝ Ենի-Քյոյի քննարկումներին Հասցրել էր նվազագույնի՝ բավարարվելով իրավիճակը հանդարտեցնող մի քանի դիտողութիւններով<sup>1</sup>:

Ստանալով թուրքական կառավարութեան շրջաբերականը Չ.Մարլինգը Լոնդոն ուղարկված հեռագրում համոզմունք է Հայտնել, որ դերմանական և ավստրիական դեսպանները անկասկած կպահանջեին, որպէսզի թուրքական նախագիծը տվյալ քննարկումների հիմք հանդիսանա: Այս կապակցութեամբ նա տեղեկացնում է արտգործնախարարութեանը, որ կՀայտնի բարենորոգումների հանձնաժողովին, թե չի կարող գնալ նման պահանջին ընդատաջ և դուրս գալ ռուսական առաջարկութիւնների շրջանակներից առանց՝ Լոնդոնից նոր հրահանգներ ստանալու<sup>2</sup>:

Է.Գրեյը հավանութիւն էր տվել Չ.Մարլինի գիւրքորոշմանը և հեռագրել էր նրան, որպէսզի նա խուսափեր որևէ պարտավորութիւն հանձն առնելուց մինչև ընդհանուր համաձայնութեան կայանալը: Նա ավելացնում էր, որ Հայաստանի համար առաջարկված ռուսական նախագիծը պետք է դիտվեր որպէս քննարկումների հիմք, սակայն արտահայվում

<sup>1</sup>BDOW, vol.10, N 567

<sup>2</sup>FO, 195/2450, pt. 4, p 42; BDOW, vol.10, N 533

էր ի նպատակ Բ. Դուան առաջադրած ծրագրի քննարկմանը: Արտգործնախարարութեան քարտուղար, արևելյան բաժանմունքի պետ Լ. Մալլեթը առաջարկում էր որքան կարելի է շտապ և բացահայտ ձևով տեղեկացնել Ռուսաստանին անգլիական տեսակետը և տեղյակ պահել Պետերբուրգին, որ անգլիական կառավարութիւնը մեծագուշկ կարևորութիւն է տալիս թուրքական նախագծի արգարացի քննարկմանը, քանի որ համոզված էր, որ բարենորոգումների որևէ նախագիծ հաջողութիւն չէր ունենա, եթէ չընդունվեր հավասարապես բոլոր տերութիւնների, ինչպես նաև Թուրքիայի կողմից<sup>1</sup>:

Ի՞նչն էր նման դիրքորոշման պատճառը, որ պիտի նպաստեր Ռուսաստանի և Անգլիայի միջև առանց այդ էլ գոյութիւն ունեցող լարվածութեան խստացմանը: Չէ՞ որ նախորդ ամիսների ընթացքում անգլիական դիվանագետները ջանքերն ուղղված էին ռուս-անգլիական տարաձայնութիւնների հարթեցմանը:

Ստեղծված իրավիճակում ռուսական նախագծի ամբողջութեամբ հաստատումը չէր համապատասխանում անգլիական շահերին: Անգլիայի արտգործնախարարութիւնը գտնում էր, որ ռուսական կառավարութեանը պետք է հիշեցվի, թե որքան մեծ էին Թուրքիայի ամբողջականութեան պահպանման և վերականգնման հետ կապված Անգլիայի ձգտումները:

Արտգործնախարարութիւնը բարենորոգումների խնդրի վերաբերյալ Ռուսաստանի հետ բանակցութիւններում իր առաջին հաղթանակն էր համարում այն, որ Ս. Սազոնովն ընդունել էր անգլիական տեսակետը, թե թուրքական կայսրութիւնը չպետք է բաժանվի սեկտորների (secteurs)՝ ազդեցութեան ոլորտների<sup>2</sup>: Այս կապակցութեամբ Անգլիայի արտգործնախարարութեան տեսակետի հետ համաձայն չէին Կ. Պոլսի դեսպանութեան ներկայացուցիչները, որոնք առաջարկում էին ընդունել ազդեցութեան ոլորտների գոյութիւնը:

Այդ ոլորտների առկայութիւնը, դեսպան Ջ. Լոութերը բացատրում էր հենց Թուրքիայի կողմից Անգլիային արած առաջարկով: Նա հավաստիացնում էր, որ Թուրքիան ձգտել էր լարվածութիւն առաջացնել Անգլիայի և Ռուսաստանի միջև

<sup>1</sup>BDOW, vol. 10, N 535.

<sup>2</sup>Նույն տեղում, N N 511, 519.

դիմելով Անգլիային ծառայողներ վարձելու առաջարկութ-  
յամբ այն տարածքի համար, որն ակնհայտորեն Ռուսաստանի  
ազդեցութեան ոլորտն էր: Ըստ Լոուլթերի, դրան հավանաբար  
կհետևեց գերմանական ծառայողների ներգրավումը Միջա-  
գետքի բարեկարգմանը, որն իր հերթին չէր համապատասխա-  
նի Անգլիայի շահերին: Այդ իսկ պատճառով Զ.Լոուլթերն  
առաջարկում էր ավելի արդարացի համաձայնագիր. հայկա-  
կան վիլայեթներում պետք է ծառայեին ռուսական խորհրդա-  
կաններ, Միջագետքում՝ անգլիական, Սիրիայում՝ ֆրանսիա-  
կան, Ադանայում և Փ.Ասիայի արևելքում՝ գերմանական կամ  
այլ երկրի խորհրդականներ<sup>1</sup>: Իր տեսակետը հիմնավորելու  
համա, նա առաջարկում էր հարցը քննարկել եվրոպական դա-  
շինքների տեսանկյունից:

Զ.Ֆիցմորիսը ավելի ազատ և բացահայտ էր արտա-  
հայտվում թուրքական ինքնիշխանութեան վերացման  
անհրաժեշտության վերաբերյալ: Նա առաջադրում էր Ռուսաս-  
տանին հատկացնել նշված վիլայեթների հսկումը, ինչպես,  
օրինակ, Ալստրիային տրվել էր Բոսնիայի և Հերցեգովինայի  
հովանավորությունը 1878թ., կամ ինչպես Անգլիային էր  
տրվել 1882թ. Եգիպտոսի հովանավորությունը:

Անգլիայի արտգործնախարարությունը չէր ընդունել  
Զ.Լոուլթերի և Զ.Ֆիցմորիսի նման արմատական առաջար-  
կությունները, որը կբերեր թուրքական անմիջական կառա-  
վարման սահմանափակմանը Օսմանյան կայսրությունում:  
Նրանք գտնում էին, որ թուրքական կայսրության ամ-  
բապնդման համար պարզապես անհրաժեշտ էր խուսափել ազ-  
դեցութեան ոլորտների առաջացումից և ապահովել բարենորո-  
գումների իրագործումը:

Թուրքիայի ամբողջականության պահպանման հետ կապ-  
ված Ռուսաստանի ցանկությունն ու անկեղծությունն Անգ-  
լիայի արտգործնախարարության կողմից այժմ կասկածի  
տակ էր դրվում: Է. Գրեյը գտնում էր, որ Հայաստանի հետ  
կապված ռուսական առաջարկները շատ անգամ ավելին էին  
պահանջում, քան Լիբանանի իրավիճակը: Սա կնշանակեր  
հաստատել կատարյալ ինքնավարություն Հայաստանի հա-

<sup>1</sup>J. Heller, Ibid , p 11

<sup>2</sup>Նույն տեղում:

մար և անջատել այն Ասիական Թուրքիայի մնացած տարածքից<sup>1</sup>: Դա, ըստ Գրեյի, վատ օրինակ կհանդիսանար և կնպաստեր թուրքական դոմինիոնների պառակտմանը և ոչ համախմբմանը: Այդ իսկ պատճառով էլ անգլիական զիվանագետները գերադասելի էին համարում բարենորոգումների թուրքական նախագիծը, որը կապահովեր թուրքական կայսրության ամբողջականութունը և որ ամենակարևորն էր, նպատակ ուներ կասեցնել ուսսական հնարավոր թափանցումը հայկական վիլայեթներ:

Ռուսաստանի կողմից Արևմտյան Հայաստանի հնարավոր օկուպացման մտավախությունը դրդեց անգլիական արտգործնախարարության ղեկավարներին ընդունել թուրքական նախագիծը, եթե նույնիսկ դա հանգեցնեց անգլ-ուսսական բախումների: Է. Գրեյի և Լ. Մալլեթի դիտողություններից երևում է, որ արտգործնախարարության ղեկավարները պատրաստ էին մինչև անգամ հրաժարվել իրենց հետագա համագործակցությունից Ռուսաստանի հետ, եթե վերջինս շարունակեր իր քաղաքականությունը, որը կարող էր հանգեցնել Թուրքիայի մասնատմանը<sup>2</sup>:

Ռուսաստանի անհանդուրժողական դիրքը՝ կապված բարենորոգումների խնդրի քննարկման հետ, տարակարծություն էր առաջացրել անգլիական բարձրաստիճան զիվանագետների շրջանում: Անգլիայի հետագա դիրքորոշման վերաբերյալ տարբեր կարծիքներ կային ոչ միայն արտգործնախարարության և Կ. Պոլսում գեսպանության միջև, այլ հենց արտգործնախարարության շրջանում: Այստեղ ձևավորված երկու ուղղությունները հիմնականում արտահայտվում էին Լ. Մալլեթի և Ա. Նիքոլսոնի տեսակետներում:

Բարենորոգումների խնդրում Լ. Մալլեթի վերաբերմունքը տվյալ պահին ավելի թուրքամետ էր, քան երբեք: Նա գտնում էր, որ Թուրքիայի համար նման ճգնաժամային պահին Ս. Սազոնովի առաջարկների ընդունումը պարզապես կնշանակեր նպաստել թուրքական կայսրության փլուզմանը: Սակայն Անգլիան, ըստ Լ. Մալլեթի, հատուկ կարևորություն էր դրան տալիս, քանի որ Թուրքիայի մասնատումը կարող էր

<sup>1</sup>BDOW, vol. 10, N 537

<sup>2</sup>BDOW, vol. 10, N 535.

ծանր անդրադառնալ Անգլիայի ղիրքերի վրա Միջերկրականում և ուղղակի սարսափելի հետևաքնների հանգեցնել Հնդկաստանում<sup>1</sup>: Նա գտնում էր, որ Ս.Սազոնովին անհրաժեշտ է հիշեցնել Բեռլինի 1878թ. դաշնագիրը, որով Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու հարցը վերապահված էր բոլոր մեծ տերություններին:

Ա.Նիքոլսոնն իր հերթին ձգտում էր կանխել հնարավոր բախումները Ռուսաստանի հետ: Մեծ կարևորություն տալով Ռուսաստանի հետ դաշինքի պահպանմանը նա պատրաստ էր ընդունել, որ Ռուսաստանը՝ ավելի, քան մեկ այլ պետություն, անմիջական և ուղղակի շահեր ուներ այս տարածաշրջանում: Նրա ռազմավարությունը հետևյալն էր՝ հանգիստ և զուսպ ձևով համագործակցել Ռուսաստանի հետ: Ա.Նիքոլսոնը համարում էր, որ ռուսական առաջարկները կարելի էր ընդունել՝ նկատի առնելով երկու պարտադիր պայմաններ՝ տերությունների միաբանությունը և նրանց մշակած ծրագրի ընդունումը Թուրքիայի կողմից՝ առանց որևէ առարկություն: Անգլիայում ավստրո-հունգարական դեսպան Յ.Քարթրայթին ուղղված նամակում Ա.Նիքոլսոնը նշում էր, որ, իրոք, ռուսական առաջարկները շատ հեռու գնացող առաջարկներ են: Միաժամանակ, դեսպանի համոզմամբ, ռուսական տարբերակի անաչառ քննությունը ցույց է տալիս, որ միայն նման նախագիծը կարող էր ապահովել ավյալ երկրի խաղաղ կարգավորումը<sup>2</sup>:

Անգլիայի քաղաքականությունը, ըստ Ա.Նիքոլսոնի, մի փորձ էր պահպանել և միախմբել Թուրքիայի ասիական վիլայիթները: Չնայած զրան՝ Ա.Նիքոլսոնն իր կասկածներն էր արտահայտում, թե հնարավոր է՞ր արդյոք պահպանել Թուրքիայի ամբողջականությունը գոնե մի որոշ ժամանակ: Նրա կարծիքով՝ Թուրքիայի հեղինակությունը՝ որպես կոմոդ տարրի և իսլամի զինվորի, ամբողջովին վերացել է: Միաժամանակ, ակնհայտ էր այն, որ Թուրքերը այլևս ի վիճակի չեն պահպանել այն գերիշխող ղիրքը, որ ունեին նախկինում: Ա.Նիքոլսոնը գտնում էր, սբ ասիական վիլայիթներում

<sup>1</sup>BDOW, vol. 10, N 541; A. A. Могилевич, М.Э. Айрапетян, На путях к мировой войне (1914-1918), М., 1940, стр. 107.

<sup>2</sup>J. Heller, Ibid., p. 11.

ստեղծված իրավիճակն անկասկած կհանգեցնե՞ր կայսրութ-  
յան մասնատմանը<sup>1</sup>:

Չնայած կարծիքների տարբերությունը, Լ.Մալլեթը, կիսե-  
լով Ա.Նիքոլսոնի մտավախությունները, անհրաժեշտ էր հա-  
մարում զգուշացնել Լոնդոնում գտնվող Թուրքիայի նախկին  
մեծ վեզիր Հաքքի փաշային<sup>2</sup>, թե Թուրքիայի տարածքային  
ամբողջականությունը պահպանելու համար անհրաժեշտ էր  
վերջ դնել այն սարսափելի իրավիճակին, որ տիրում էր հայ-  
կական վիլայեթներում, հատկապես էրզրումի վիլայեթում:  
Լ.Մալլեթը նշում էր, որ Եվրոպան այսուհետ չի կարող շարու-  
նակել իր նախկին դիրքորոշումը: Նրա համոզմամբ, Բ.Դուռը  
պետք է սաստի քրդերին, հակառակ դեպքում Ռուսաստանը  
կմիջամտի: Իր դիտողություններում դիվանագետը վկայակո-  
չում էր այն փաստը, որ Անգլիան հրաժարվել էր Թուրքական  
ժանդարմերիայում ծառայելու համար սպաների գործուղու-  
մից, ակնկալելով, որ դրանով իսկ կկանխվե՞ր ռուսական մի-  
ջամտությունը տվյալ խնդրի լուծմանը<sup>3</sup>:

Անգլիական արտգործնախարարությունն անհանգստութ-  
յունն ավելի էր խորացրել Եռյակ միություն կողմից ռուսա-  
կան նախագծին ցուցաբերած դիմադրությունը<sup>4</sup>: Գերմանիայի  
վերաբերմունքը ռուսական առաջարկներին անհանդուրժո-  
ղական էր, քանի որ դրանք ամբողջովին հակասում էին Գեր-  
մանիայի շահերին: Կ.Պոլսից գերմանական դեսպան Ն. Վան-  
դենհայմը հայտնում էր իր կառավարությունը, որ քարտեզին  
զցած թուուցիկ հայացքից իսկ արդեն պարզ էր, որ բարենորո-  
գումներ անցկացնելու համար Ռուսաստանի կողմից առա-  
ջարկված տարածքի հարավային շրջանները գտնվում էին  
այն սահմանում, որը Բաղդադի երկաթուղու շինարարության  
հետ կապված՝ Գերմանիայի հետաքրքրությունների ոլորտն  
էր հանդիսանում<sup>5</sup>: Այսինքն, Գերմանիան երբեք չի համա-  
ձայնվի Ռուսաստանի ամրապնդմանը Փոքր Ասիայում:

<sup>1</sup>Նույն տեղում, p. 12.

<sup>2</sup>Джемаль паша, Записки Джемаль паша, 1913-1919. Тифлис, 1923, стр. 61.

<sup>3</sup>J. Heler. Ibid., p. 12.

<sup>4</sup>Е. К. Саркисян, Политика Османского правительства в Западной Армении и державы в последней четверти 19-го и в начале 20-го веков. Ереван, 1972, стр. 280, (далее Политика Османского правительства...).

<sup>5</sup>Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919), стр. 72.

1913թ. հուլիսի սկզբին Ռուսաստանից, Գերմանիայից, Ծրանիայից անդլիական դեսպանները հաղորդում էին արագորժնախարարութեանը, որ Ռուսաստանի առաջարկները չափազանց անհանդստացրել են Գերմանիային և Ավստրո-Հունգարիային:

Կայզերական կառավարութիւնն ամեն կերպ ձգտում էր պահպանել Ասիական Թուրքիայի տարածքային ամբողջականութիւնը: Գերմանական դիվանագետները գտնում էին, որ Ռուսաստանի առաջարկների ընդունումը կարող էր հանգեցնել Թուրքիայի մասնատմանը և Օսմանյան կայսրութեան փլուզմանը<sup>1</sup>: Գերմանացիները համոզված էին, որ հայկական վիլայեթների համար նախատեսված պահանջների իրականացումը ոտքի կհաներ նաև թուրքական կայսրութեան մյուս նահանգները, որոնք կպահանջէին նման արտոնութիւններ<sup>2</sup>:

Ռուսաստանի արտոյոժնախարարութեան հավաստիացումներն այն մասին, թե Ռուսաստանը պատրաստ է ամեն ինչ անել Ասիայում Թուրքիայի տարածքային ամբողջականութիւնը պահպանելու համար, ոչ մի կերպ չէին հանգստացնում գերմանացիներին: Գերմանական կառավարութիւնը հույս ուներ, որ անգլիական կառավարութիւնը նույնպէս կգիմարի ռուսական նախագծի ընդունմանը: Գերմանական դիվանագետներն այն կարծիքին էին, որ, եթե Անգլիան ընդուներ ռուսական առաջարկութիւններն ապա, կհաստատեր, որ չի պատրաստվում կանխել Թուրքիայի մասնատումը: Այս դեպքում, ինչպէս հայտնում էր Վանգենհայմը Գերմանիայի արտոյոժնախարարին, մյուս պետութիւնների բոլոր ջանքերը՝ թուրքական կայսրութեան ամբողջականութիւնը պահպանելու, ապարդյուն կլինեն<sup>3</sup>:

Անգլիայի նկատմամբ Գերմանիայի վերաբերմունքը անհանգստացնում էր բրիտանացիներին ոչ պակաս, քան Թուրքիայի ամբողջականութեան հարցը: Թուրքիայի փլուզման դեպքում Գերմանիան կարող էր բացահայտ մեղադրանք ներ-

<sup>1</sup>Оранжевая книга, № 20, стр. 59; Е.К.Саркисян, Армянский вопрос в Россия в 1912-1914гг., «Պատմա-քանադասական հանդես», Ե., 1995, № 1, էջ 117:

<sup>2</sup>BDOW, vol. 10, N 535; АВПР, ф.Политархив, д.3462, л. 111.

<sup>3</sup>Армянский вопрос и геноцид армян в Турциии (1913-1919) стр. 101; Ст.Степанян, Армения в политике империалистической Германии..., стр. 83.

կայացնել Անգլիային: Իսկ այդ մեղադրանքը, ըստ անգլիացիների, կարող էր խիստ բացասական արձագանք ունենալ: Անգլիայի համար միևնույն չէր, թե ինչպես կրնդունեին դադուլթները՝ հատկապես Հնդկաստանի, մահմեդական բնակչությունն Անգլիայի մասնակցությունը թուրքական կայսրության մասնատմանը: Անգլիացիները գիտակցում էին, որ իրենք կիսում են Գերմանիայի մտավախությունը թուրքիայի տարածքային ամբողջականության վերաբերյալ, որը Գերմանիայի կողմից կարող էր օգտագործվել ռուս-անգլիական հարաբերությունները լարելու համար:

Անհանգստության համար հիմք կար: Արդեն 1913թ. հունիսի սկզբին, Գերմանիայում ռուսական դեսպանը տեղեկացնում էր Ռուսաստանի արտգործնախարարությանը, որ վերջին ժամանակ գերմանացիները ոչ մի առիթ և հնարավորություն բաց չեն թողնում մատնանշելու Գերմանիայի և Անգլիայի տեսակետների նմանությունը և չափազանցված նշանակություն էին դրան վերագրում: Դեսպանը նշում էր, որ գերմանացիները, նպատակ ունենալով Հայկական հարցի խնդրում գտնեցնել Անգլիային և Ռուսաստանին, փորձում էին այդ պատահականությունները մատուցել որպես Գերմանիայի և Անգլիայի քաղաքականությունների նույնացում որոշ հարցերում<sup>1</sup>:

Բացի այդ, Անգլիային անհանգստացնում էր այն, որ թուրքիայի մասնատման դեպքում Գերմանիան, որն այդքան «մտահոգված» էր թուրքիայի տարածքային ամբողջականության պահպանման խնդրով, անհապաղ կձգտեր տիրանալ իր բաժնին<sup>2</sup>: Դեռ ավելին, Գերմանիան, հավանաբար, աչքի տակ ուներ թուրքիայի բաժանման դեպքում նրա հարավարևմտյան անկյունից բաժին հասցնել նաև իր դաշնակցին՝ Իտալիային<sup>3</sup>: Իրադարձությունների նման ընթացքը չէր համապատասխանում Անգլիայի շահերին: Անգլիական կառավարությանն անհանգստացնում էր նաև թուրքական կայսրության պահպանման դեպքում Գերմանիայի կողմից կիրիլիայում ազդեցության ոլորտի ստեղծման հավանականությունը:

<sup>1</sup> АВПР, ф. Политархив, д. 3462, л. 111.

<sup>2</sup> BDOWN, vol. 10, N 532; Հայաստանը միջազգային դիվանագիտության..., էջ 250:

<sup>3</sup> Նույն տեղում, N 567.

Գերմանիայի կայուն հարաբերութիւնների պահպանման ձգտումը ղգալի դեր խաղաց ուստական նախագծի նկատմամբ Անգլիայի կողմնորոշման գործում: Այս շրջանում աչքի էր ընկնում անգլո-գերմանական հարաբերութիւնների որոշակի կայունացում<sup>1</sup>: Կ.Պոլսից Ռուսաստանի ներքին գործերի նախարարութեան տեղեկատվական բյուրոյի գործակալը տեղեկացնում է անգլո-գերմանական թնայետե անհավանական մերձեցման մասին, որն աստիճանաբար իրականութիւն էր դառնում: Ռուսների շրջանում անհանգստութիւն էր առաջանում այն բանի համար, որ այդ մերձեցումը ետին պլան կմդի մյուս խմբավորումները<sup>2</sup>:

Եվրոպական տերութիւններում գերմանական դեռպանները տեղեկացնում էին իրենց կառավարութեանը, թե անգլիացիները նույնպես դեմ էին ուստական նախագծին և որ անգլիական կառավարութիւնը ոչ մի դեպքում չի համաձայնվի այդ նախագծի ընդունման հետ<sup>3</sup>: Չնայած Կ.Պոլսից Վանդենհայմը հայտնում էր, որ Կ.Պոլսում Անգլիայի ներկայացուցիչ Զ.Ֆիցմորիսի գիրքորոշումը չէր համապատասխանում է. Գրեյի հայտարարութիւններին, նրա անհանգստութեան համար հիմք չկար<sup>4</sup>: Ընդհանուր առմամբ Անգլիայի արագործնախարարութեան պարագլուխները Լ.Մալլիթը, Ա.Նիքոլսոնը համաձայն էին գերմանական կառավարութեան հետ: Նրանք գտնում էին, որ թուրքական նախագիծն ավելի ընդունելի էր, քան ուստականը, քանի որ այն ավելի բաղմակողմանի էր և այդ իսկ պատճառով էլ պետք է հանդիսանար քննարկումների հիմք<sup>5</sup>: Նրանք կարծում էին, որ անհրաժեշտ էր Ս.Սազոնովից ավելի շատ խելամտութիւն պահանջել և մինչև Ռուսաստանից պատասխան ստանալը ետ էին կանգնել Կ.Պոլիս վերջնական կարգադրութիւններ ուղարկելուց:

Ինչ վերաբերում էր Կ.Պոլսում անգլիական դեռպանութեանն, ապա վերջինիս վերաբերմունքը թե բարենորոգումների խնդրին ընդհանրապես, թե ներկայացված ուստական և

<sup>1</sup>См.Степанян,Армения в политике империалистической Германии..., стр. 78.

<sup>2</sup>АВПР, ф.Политиархив., д.3462, л. 47.

<sup>3</sup>Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-199), стр. 79.

<sup>4</sup>Там же, стр. 69.

<sup>5</sup>BDOW, vol.10, N 540.

Թուրքական նախագծերին, զգալիորեն տարբերվում էին: Դեսպանությունը ղեկավարվում էր անգլիական դեսպանության հավատարմատար Չ.Մարլինդի և թարգման Ջ.Ֆիցմորիսի կողմից<sup>1</sup>: Բանն այն էր, որ Թուրքիայում անգլիական դեսպան Ջ.Լոութերի դեսպանության 5-ամյա ժամկետը լրացել էր 1913թ. հունիսի 30-ին: Հուլիսի 7-ին նա մեկնում է Կ.Պոլսից և հեռանում դիվանագիտական աշխատանքից: Թուրքիա նոր դեսպան էր նշանակվել Լ.Մայլեթը: Նա ժամանելու էր Կ.Պոլիս 1913թ. հոկտեմբերին<sup>2</sup>:

Անգլիական դեսպանությունում տիրում էին հակադեմանական և ռուսամետ տրամադրություններ: Չ.Մարլինգն իր հազարգազրուծյուններում հայտնում էր արտգործնախարարությանը, որ Թուրքական նախագիծը, ըստ էության, գերմանական թելադրանք էր և նպատակ ուներ «թող փչելու անգլիացիների աչքերին»<sup>3</sup>: Ռուսական նախագծի հետ կապված նա գտնում էր, որ այն, իրոք, բավականին հեռու էր գնում, սակայն եթե բարենորոգումների իրագործման ակնկալիք կար, ուրեմն նախապատվությունը պետք է տրվեր հենց այդ ծրագրին: Չ.Մարլինգը զգուշացնում էր, որ հայերը չէին վստահի գերմանա-թուրքական նախագծին: Նման նախագծի հաստատումը կբերեր նրանց դժգոհությունն ու ելույթներին, որոնց էլ կարող էր հաջորդել Ռուսաստանի ինտերվենցիան:

Դեսպանության տեսակետները տարբերվում էին նաև մի շարք այլ կետերում:

«Հայկական բարենորոգումների Հանձնաժողովի» բոլոր ներկայացուցիչների համար պարզ էր, որ Ռուսաստանին սղակցելու գործում Անգլիայի արտգործնախարարության վերապահությունը որոշ չափով բացատրվում էր պանիսլամիզմի վերաբերյալ նրանց անհանգստությունը: Սակայն դեսպանության ներկայացուցիչները լուրջ չէին համարում արտգործնախարարության կողմից պանիսլամիզմի հանդեպ ձևավորված անհանգստությունը: Ջ.Ֆիցմորիսը ժխտում էր պանիսլամիզմի հետ կապված առասպելային վտանգը: Նա նշում

<sup>1</sup>Philip P.Graves, Briton and Turk London and Melbourne,1940, p.180.

<sup>2</sup>Edvin Pears, Forty Years in Constantinople, London, 1915, p 333; Waugh Teleford, Turkey: Yesterday, Today and Tomorrow, London, 1930, pp. 138, 140.

<sup>3</sup>J.Heller, Ibid., p. 12.

էր, որ, իսկապես, նոր վարչակարգի պայմաններում Թուրքիայում պանիսլամիզմին հետևում էին բոլորը՝ և՛ ավեհաստները, և՛ Վոլթերի հետնորդները, վախ սարածելով այն տերությունների վրա, որոնք մահմեդական հպատակներ ունեին: Մինչդեռ Հնդկաստանում մահմեդական քարոզչությունը կեղծ և շինծու երևույթ էր<sup>1</sup>: Ֆիցմորիսի համոզմունքը բխում էր նրանից, որ տեղի 300 միլիոն բնակչությունից միայն 35 միլիոնն էր մահմեդական: Նրանց 99% որևէ պատկերացում անգամ չուներ սուլթանի կամ Օսմանյան կայսրության մասին<sup>2</sup> և նրանց չէր կարող անհանգստացնել Թուրքիայի ճակատագիրը: Ջ. Ֆիցմորիսը համարում էր, որ եթե Հնդկաստանի մահմեդականության տրամադրությունների հետ կապված անհանգստությունը պետք է ետ պահեր անգլիական կառավարությանը ճնշում գործադրելուց Թուրքիայի նկատմամբ, որպեսզի վերջինին ստիպեր արմատական միջոցներ ձեռնարկել Հայկական հարցի լուծման համար, ապա ավելի լավ կլիներ, որ Անգլիան ընդհանրապես, որևէ շահագրգռվածություն չցուցաբերեր այս հարցում<sup>3</sup>:

Դեսպանության տեսակետից անհիմն էին նաև արագործնախարարության անհանգստությունը Կիլիկիայում, որը հայտնի էր որպես Ֆրանսիայի հետաքրքրությունների շրջան, գերմանական ազդեցության ոլորտի ստեղծման հետ: Չ. Մարլինգը նշում էր, որ Կիլիկիայի նկատմամբ Գերմանիայի հետաքրքրությունն առաջացել էր ընդամենը մի քանի ամիս առաջ: Վերջինս այս տարածաշրջանում ուներ միայն Ֆինանսական հետաքրքրություններ: Դիվանագետը գտնում էր, որ ոչ մի համեմատություն չէր կարող լինել Ռուսաստանի կողմից Հայկական վիլայեթներում ազդեցության ոլորտի ստեղծման և Գերմանիայի Կիլիկիայի հետ կապված նմանօրինակ ցանկություն միջև<sup>4</sup>: Ըստ Չ. Մարլինգի, Ռուսաստանը նոր ազդեցության ոլորտ չէր ստեղծելու Հայկական վիլայեթները օրինական ձևով արդեն ռուսական ազդեցության ոլորտ էին: Մինչդեռ Կիլիկիան երբեք չէր դիտվել որպես գերմա-

<sup>1</sup>BDOW, vol.10, N 567.

<sup>2</sup>P. Tonapetian, Turkey and Her British Friends, London, 1919, p.10.

<sup>3</sup>BDOW, vol 10, N 567.

<sup>4</sup>Նույն տեղում, N 533.

նական ազդեցութեան ուրորտ: Նա նշում էր, որ Կիլիկիան ոչ միայն ընդհանուր սահման չուննէր Գերմանիայի հետ, այլև բաւական հեռու էր գտնւում նրանից: Լավագույն դեպքում, Գերմանիան այստեղ կարող էր հիմնել ընդամենը մի փոքր, մեկուսացված գաղութ, ոչ թե ազդեցութեան ուրորտ<sup>1</sup>:

Կ.Պոլսի դեսպանութեան կարծիքներն ու տեսակետները բարենորոգումների խնդրի վերաբերյալ չէին կարող հիմք հանդիսանալ անգլիական կառավարութեան քաղաքականութեան համար, բայց և այնպէս, դեսպանութեան փաստարկները նկատի էին առնվել արտգործնախարարութեան կողմից:

Անգլիական կառավարութեան տրամադրութեանները Ռուսաստանում անգլիական դեսպան Զ.Բյուքենենի միջոցով հայտնի էին դարձել Ռուսաստանի արտգործնախարարութեանը: Արտգործնախարար Ս.Սազոնովին անգլիական կառավարութեանն իր գոհունակութեանն էր հայտնում Թուրքիա ծառայողների գործուղման հետաձգելու համար: Նա կրկնել էր իր ցանկութեանը՝ բարենորոգումների իրագործման ժամանակ չչեղվել անգլիական և ֆրանսիական կառավարութեանների հետ հայացքների և գործողութեանների համերաշխութեանից<sup>2</sup>: Ս.Սազոնովը հավաստիացնում էր անգլիական կառավարութեանը, որ Ռուսաստանը, ինչպէսև Անգլիան, դեմ է Օսմանյան կայսրութեան անդամահատման ամեն մի գաղափարի: Բացի այդ, Ռուսաստանի առաջարկած բարենորոգումները նպատակ ունեին պահպանել Թուրքիայի տարածքային ամբողջականութեանը<sup>3</sup>:

Ս.Սազոնովը նշում էր, որ իրավիճակն Արևմտյան Հայաստանում շատ լրջանում է: Այստեղ մաքսանենգ ձեռով գնեք էր տեղափոխւում, իսկ Ռուսաստանը չէր կարող հանդուրժել հեղափոխութեան իր կից սահմաններում: Ռուսաստանի արտգործնախարարը կրկնում էր իր համոզմունքը, որ Թուրքիայի ամբողջականութեանը մեծ մասամբ կախված է այդ շրջանների խաղաղեցումից, որոնք տուժել էին ամենախիստ ձեռով, ենթարկվել կամայականութեան և բռնութեանների: Այստեղ կայունութեան կհաստատվի միայն այն ժամանակ,

<sup>1</sup>Նոյն տեղում, N 535; FO, 195 / 2450, pt.4, p. 43.

<sup>2</sup>BDOW, vol. 10, N N 545, 552.

<sup>3</sup>ABПP, 1913, ф.Политархив, д. 3462, л. 108.

եթե տերություններն անհապաղ իրենց ձեռքը վերցնեն անհրաժեշտ բարենորոգումների իրագործումը<sup>1</sup>:

Ջ.Բյուքենենն, արտահայտելով իր կառավարութեան տրամադրությունները, Ս.Սազոնովի ուշադրությունն էր հրավիրում այն հանդամանքի վրա, որ եթե Ռուսաստանը շարունակի պահանջել Արևմտյան Հայաստանին տրամադրել արտոնյալ կարգավիճակ, ապա դա կրերի լուրջ հետևանքների: Գերմանիան դիտում էր ռուսական նախագիծը որպես թուրքական կայսրութեան մասնատման սուսալին քայլ: Դա նշանակում էր, ըստ անգլիացիների, որ նախագիծը հաջողութեան հասնելու ոչ մի հավանականութիւն չուներ, քանի որ ցանկացած նախագիծ պետք է ստանար բոլոր տերությունների հավանութիւնը: Բարդութիւններից խուսափելու նպատակով անհրաժեշտ էր խնդրին մոտենալ Ասիական թուրքիայում ընդհանուր բարենորոգումներ անցկացնելու տեսանկյունով:

Անգլիայի այս նկատառումներին Ս.Սազոնովը պատասխանում էր, թե Գերմանիայի նման զիրքորոշուածը նպատակ ունի Անգլիայի և Ռուսաստանի միջև տարաձայնութիւններ առաջացնել<sup>2</sup>: Արտգործնախարարը պնդում էր, որ ռուսական նախագիծը նվազագույնն էր այն պահանջների, որ իրապես անհրաժեշտ էր Արևմտյան Հայաստանի համար: Ինչ վերաբերում էր Ասիական թուրքիայի մնացած տարածքներին, ապա նա դեմ չէր լինի. 1/ եթե Ռուսաստանի առաջընթաց բարենորոգումները կիրառվեն այստեղ ևս կամ 2/ եթե ռուսական նախագիծը հիմք հանդիսանար ընդհանուր բարենորոգումների ծրագրի համար: Ջ.Բյուքենենի այն առարկութեանը, թե ռուսական նախագիծը չի կարող հիմք հանդիսանալ Ասիական թուրքիայի ընդհանուր բարենորոգումների ծրագրի համար, Ս.Սազոնովը պատասխանում է, որ ընդհանրապես հնարավոր չէր մշակել որևէ ընդհանուր նախագիծ, քանի որ յուրաքանչյուր նահանգի համար պետք է նախատեսվեր առանձին տեղական պահանջներից բխող բարենորոգումներ<sup>3</sup>:

<sup>1</sup>BDOW, vol.10, N 542. АВПР,1913, ф.Политархив, д. 3462, л.108.

<sup>1</sup>Նույն տեղում, N 542.

<sup>2</sup>BDOW, vol.10, N 542.

<sup>3</sup>Նույն տեղում:

Այսպիսով՝ անգլիական դիվանագետները կրկին դժվար կացութեան մեջ էին: Մի կողմից Ռուսաստանի հետ համագործակցելու գաշնակցի պարտավորութիւնն էր, որը զուգակցվում էր Անգլիայի անհանգստութեամբ՝ կապված Թուրքիայի արևելյան սահմաններում Ռուսաստանի ազդեցութեան ամրապնդման հետ: Մյուս կողմից Գերմանիայի հետ հարաբերութիւնների ավելորդ լարման սպառնալիքն էր, որը տվյալ ժամանակահատվածում բոլորովին չէր համապատասխանում Անգլիայի բնդհանուր քաղաքականութեանը: Անգլիայի նպատակն էր չլուսանգել ո՛չ անգլո-գերմանական, ո՛չ էլ անգլո-ուսական հարաբերութիւնները: Այդ կապակցութեամբ Անգլիայի վարչապետ Լ.Չ Ասքուիթը նշում էր. «Մենք, ինչպես և Գերմանիան, ձգտում ենք հարաբերութիւնների փոխադարձ բարելավմանը, որը, սակայն, չպետք է հոտ տանի դեպի նախկին վատ հարաբերութիւնները Ֆրանսիայի և Ռուսաստանի հետ»<sup>1</sup>: Փաստորեն Թուրքիայի ամբողջականութեան պահպանումը յուրովի համապատասխանում էր Անգլիայի շահերին: Անգլիական դիվանագետները գիտակցում էին, որ անհրաժեշտ էր բնդհանուր կերակացութեան գալ: Այս պարագայում անգլիացիների հիմնական հոգան էր ոչ թե բուն բարենորոգումների հարցի քննարկումն ու լուծումը, այլ տերութիւնների իրարամերձ տեսակետների հաշտեցումն ու համաձայնեցումը:

Անգլիական արտգործնախարարութիւնը հավանութեամբ տալով Թուրքական նախագծի վերաբերյալ Գերմանիայի պահանջին՝ ավելի հակված էր հավատարիմ մնալ սկզբնական ընտրութեանը և համագործակցել Ռուսաստանի, քան Եռյակ միութեան հետ: Այս ընտրութիւնն էր ազդել է. Գրեյի այն կարծիքի վրա, որ անհրաժեշտութիւնն է կար՛ ինչպես առաջարկում էին գերմանացիները, քննարկումների ժամանակ առաջնութեամբ տալ Թուրքական նախագծին: Նա պարզապես գտնում էր, որ ուսական նախագիծն անհրաժեշտ էր ենթարկել փոփոխութիւնների՝ անպայման նկատի ունենալով Թուրքական նախագծի որոշ կետեր: Եթե տերութիւնները հաշիի չառնեին Թուրքիայի առաջարկած բարենորոգումների ծրագիրը, ապա, ինչպես հայտնում էր Կ.Պոլսից բրիտանական զինվորական ներկայացուցիչը. «Կ.Պոլսի իշխանութեան գլխին

<sup>1</sup>Herbert Henry Asquith, The Genesis of the War, New-York, 1923, p.192.

գտնվող մարդիկ պիտի ավելի նախընտրեին բոլոր նահանգները հրդեհի մասնել, քան զիջում ընդունել»<sup>1</sup>:

Այսպիսով՝ Անգլիայի արտգործնախարարութունը հետևյալ դիտողութուններն ու առաջարկութուններն էր ուղարկել Ռուսաստանի արտգործնախարարությանը<sup>2</sup>.

1. Բարենորոգումների ցանկացած նախագծի հաջողության համար անհրաժեշտ էին երկու հակառակ պայմաններ. տեղի թուլացումները կատարյալ միաբանութունը և այդ նախագծի կամոսի ընդունումը Թուրքիայի կողմից, առանց հարկադրման միջոցների կիրառման: Եթե Ռուսաստանը պնդեր, թե իր առաջարկութունները պետք է ընդունվեին առանց որևէ փոփոխության, ապա հնարավոր չէր լինի պահպանել առաջին պայմանը: Գերմանիայի կողմից բացահայտ դիմադրութունն արդեն առկա էր: Ինչ վերաբերում էր Թուրքիայի ընդդիմությանը, Գրեյը համոզված էր, որ այն անպայման կառաջանա՝ անգամ այն դեպքում, ինչը գրեթե անհնարին էր, եթե նախագծը միահամուռ կերպով ընդունվեր բոլոր տեղի թուլացումների կողմից: Թուրքիայի թշնամական դիրքը բացատրվում էր նրանով, որ խոշոր և զգալի կառավարելի նահանգում մեծ իշխանությամբ օժտված քրիստոնյա կառավարչի հաստատումը կբերեր այդ նահանգի անկախությանը:

2. Է. Գրեյը հասկացնում էր ուստական կառավարությանը, որ Արևմտյան Հայաստանում անցկացվելիք ցանկացած միջոցառում կանդրադառնար ամբողջ Ասիական Թուրքիայի վրա: Նա նաև հիշեցնում էր, որ եթե Թուրքիայում որևէ տարածքային մասնատում տեղի ունենար, դա կարող էր՝ ազդել Անգլիայի կենսական շահերի վրա:

3. Անգլիայի արտգործնախարարը չէր թաքցնում, որ սկզբունքորեն համամիտ էր , որպեսզի քննարկվեր Թուրքական նախագիծը: Նա նույնիսկ նպատակահարմար էր գտնում Թուրքական առաջարկութուններից ընդունել կիրառելի թվացող դրույթները: Է. Գրեյի անձնական կարծիքն էր. որքան շատ կլինեն նման դրույթներ, այնքան լավ:

<sup>1</sup> Ա. Նասիպեան, Բրիտանիա և Հայկական հարցը 1915-1923, Պեյրուք, 1994, էջ 31:

<sup>2</sup> BDOV, N 555.

4. Է.Գրեյը նշում է, թե ընդունում է, որ Ռուսաստանն ունի հատուկ շահեր իր սահմանամերձ շրջաններում: Ելնելով դրանից, անգլիացիները գտնում էին, որ եթե ռուսական կառավարութան տեսակետից էական անհրաժեշտություն էր ամբողջ թուրքական կայսրության բարենորոգման ծրագրի սահմաններում որպես լրացում ձեռք առնել հայկական վիլայիթների համար նախատեսված հատուկ միջոցառումներ, ապա Կ.Պոլսում տերությունների դեսպանները կարող էին քննարկել նաև այդ առաջարկը:

Վերջապես, Է.Գրեյը իր դժգոհությունն արտահայտելով, հիշեցնում էր Ս.Սազոնովին, որ Անգլիան հրաժարվել է իր սպաների ծառայությունից թուրքական ժանդարմերիայում՝ այն հիմնավոր պայմանով, որ որևէ փոքր պետություն պաշտոնյաներ անհասպաղ հրավիրվեին Անատոլիայի հյուսիսային և արևելյան շրջաններում ծառայելու համար:

Անգլիայի արտգործնախարարության առաջարկները չընդունվեցին ռուսների կողմից: Ս.Սազոնովն առաջին հերթին առարկում էր այն կապակցությամբ, որ ամբողջ Ասիական Թուրքիային վերաբերվող բարենորոգումների ծրագրի մշակումը չի մտնում Կ.Պոլսի դեսպանաժողովի իրավասությունների մեջ: Նա պնդում էր, որ Հայկական հարցի հրատապությունը չի հանդուրժում ժամանակի կորուստ, քանի որ իրավիճակը հայկական վիլայիթներում շատ ավելի լուրջ էր, քան Թուրքիայի որևէ այլ շրջանում: Մինչդեռ դեսպաններն իրենց քննարկումներով բավականին ժամանակ էին վատնում: Սազոնովը գտնում էր, որ հայկական վիլայիթներում բարենորոգումներ անցկացնելու համար թուրքական նախագիծը չի կարող ռուսական նախագծի հետ համատեղ քննարկման հիմք հանդիսանալ, քանի որ «հնարավոր չի դրանք համատեղել ճիշտ այնպես, ինչպես հնարավոր չի համատեղել կրակն ու ջուրը»<sup>1</sup>:

Ս.Սազոնովի կարծիքով միակ բանը, որ կարող էին անել դեսպանները տվյալ պայմանում, դա թուրքական նախագծի մերժումն է: Ռուս դիվանագետը հայտնում էր անգլիական արտգործնախարարությանը, որ պատրաստ էր զգալի փոփոխություններ կատարել ռուսական նախագծում, սակայն մի

<sup>1</sup>BDOW, vol.10, N 554; J.Heller, Ibid., p.12.

չարք կետեր պարտադիր էր համարում՝ եվրոպական հսկողութիւնը, քրիստոնյա գերագույն կառավարչի նշանակումը և վարչակարգում տեղական բնակչութեան մասնակցութիւնը: Ռուսական արտոգործնախարարը համոզված էր, որ հենց Թուրքիայի շահերից էր բխում, որպեսզի նրա նկատմամբ ճնշում գործադրվեր բարենորոգումների ծրագիրն ընդունելու կապակցութեամբ:

Փոքր տերութեան սպաների ծառայութեան հարցին Ս.Սազոնովն այժմ կարևորութիւն չէր տալիս: Նա գտնում էր, որ մինչ նրանց նշանակումն ու ծառայութեան անցնելը ժամանակի մեծ կորուստ կլինէր: Բացի այդ, նա անհավանական էր համարում, թե մի քանի շվեդական սպաներ կարող էին կանխել հնարավոր կոտորածները:

Ռուսաստանի նման վերաբերմունքը, ըստ Անգլիայի արտոգործնախարարութեան ղեկավարութեան, սլարգապես արգելակում էր բարենորոգումների իրագործումը: Ընդհանուր առմամբ՝ անգլիացիների տեսակետը արտահայտվում էր Զ.Քյուբենների այն տեսակետում, թե «միջոցները, որ առաջարկում էին ուսանելը հայկական վիլայեթների համար, կարող են հանգեցնել ավելի մեծ վտանգի, քան գոյութիւնն ունեցող ծանր իրավիճակն է»<sup>1</sup>:

Տվյալ պարագայում Ռուսաստանին դեմ էին Անատոտի և Եոյակ միութեան պետութիւնները: Անգլիան անհնարին էր համարում թուրքական նախագծի մերժումը, քանի որ արդեն համաձայնութիւնն էր հայտնել Հաքքի փաշային: Անգլիացիների հետ այս հարցում ամբողջովին համամիտ էր և աջակցում էր Ֆրանսիան<sup>2</sup>:

Ֆրանսիայի արտոգործնախարար Մ.Ս.Պրչոնն անհրաժեշտ էր համարում, անգլիացիների հետ միասին, հասկացնել ուսական կառավարութեանը, որ նա պետք է ճակատագրի բերումով դեմ առնի Գերմանիայի և Թուրքիայի առարկութիւններին, ուստի և գուցե ավելի նպատակահարմար կլինէր չզնայ ընդառաջ և կրճատել բարենորոգումների ծրագիրը և այն բոլորի համար ընդունելի դարձնել:

<sup>1</sup>BDOW, vol. 10, N 544.

<sup>2</sup>Նույն տեղում, N 550; Հայաստանը միջազգային դիվանագիտութեան..., էջ 252:

Գերմանական խմբակցութեան դիրքն այդ կապակցութեամբ խիստ անհանդուրժելի էր: Բեռլինում անգլիական դեսպանը հաղորդում էր, որ գերմանացիները ոչ միայն պարտագիր էին համարում թուրքական նախագծի քննարկումը, այլ անգամ պահանջում էին, որ այն քննարկվի առաջինը և հիմք հանդիսանա բարենորոգումների ծրագրի համար: Նրանք այդ պահանջը հիմնավորում էին որպես թուրքիայի սուլթանութեան ճանաչում և գտնում էին, որ թուրքական նախագիծը որոշ ճշտումներից և լրացումներից հետո շատ ավելի գերազանցելի կլիներ, քան ուսական նախագիծը:

Կ.Պոլսից Ջ.Ֆիցմորիսը հայանում էր, որ բարենորոգումների հանձնաժողովի աշխատանքը պարզապես վերածվել էր մենամարտի Ռուսաստանի՝ Հանձին Մանդելշտամի և Գերմանիայի՝ Հանձին Շոնբերգի միջև<sup>1</sup>: Նման տեղեկություններ էր ուղարկում Բեռլին նաև Հ. Ֆոն Վանգենհայմը: Նա նշում էր, որ Ռուսաստանի և Գերմանիայի նպատակների միջև հնարավոր չէր գուզահեռ անցկացնել<sup>2</sup>: Անգլիական դիվանագետները գտնում էին, որ Ռուսաստանը որոշ զիջումների պետք է գնա: Դա թույլ կտա հաղթահարել Գերմանիայի և թուրքիայի կողմից հարուցված առարկություններն ու դիմագրությունը:

Անգլիայի արտգործնախարարութեան և Կ.Պոլսում դեսպանութեան տեսակետներն կրկին տարբերվում էին: Հանձնաժողովի աշխատանքի ժամանակ Գերմանիայի և Ավստրիայի առարկությունները, Ջ.Ֆիցմորիսը բացատրում էր պարզապես նրանց այն ցանկությունը, որ հայկական վեց վիլայեթների համար նախատեսված հատուկ բարենորոգումները կիրառվեն ամբողջ կայսրութեան համար: Ջ.Ֆիցմորիսը գտնում էր, որ Գերմանիայի այն բացատրությունները, թե ուսական նախագիծը սուլթանի սուլթանություն լուրջ խախտում էր նախատեսում, իրատեսական չէին:

Ըստ Ջ. Ֆիցմորիսի՝ ուսական նախագծի բուն էությունը ընդգրկված էր նախագծի NN 1, 2, 22 հոդվածներում և վերաբերում էր արտասահմանյան վարչական վերահսկողություն հարցին: Հանձնաժողովի 7րդ՝ 1913թ. հուլիսի 23-ի նիստի ժամանակ Եռյակ միությունների կայացուցիչները հա-

<sup>1</sup>BDOW, vol.10, N 567.

<sup>2</sup>Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919), стр. 106.

մաճայնել էին արտասահմանյան հսկողութեան հետ: Սակայն նրանք կտրականապես մերժում էին N1 և N2 հուլիսի 1991 թ. հունիսի 1991 թ. տերուլթյունների համաձայնութեամբ սուլթանի կողմից նշանակված թուրքահայատակ կամ արտասահմանցի մեկ ընդհանուր նահանգապետի պաշտոնը<sup>1</sup>: Նրանք դերադասում էին վերահսկիչ հանձնաժողովի ստեղծում, որը բաղկացած կլիներ թուրք և հվրոպացի ներկայացուցիչներին, թուրք նախագահի գլխավորութեամբ: Ֆիցմորիսը կարծում էր, որ եթե մեկ օտարերկրացի ընդհանուր նահանգապետն ընդգրկվի թուրքիայի վարչական ծառայութեան մեջ, ապա սուլթանի սուլթանութեանն ավելի քիչ վտանգ կապառնար, քան այն դեպքում, երբ օտար կառավարութեանն են ընտրելին մի շարք տեսուչներ, տարբեր մասնագետներ թուրքիայում ծառայելու համար: Իսկ այն դեպքում, եթե ընդհանուր նահանգապետը ընտրվի թուրքահայատակ, ապա սուլթանութեան խախտման մասին խոսք լինել էր կարող: Ի հաստատումն իր կարծիքի՝ Ֆիցմորիսը վկայակոչում էր նահանգապետի այդօրինակ նշանակումը Լիբանանում<sup>2</sup>: Նա գտնում էր, որ թուրքական կառավարման ձևերը, եթե անգամ նրանցում որոշ փոփոխութեաններ մտցվեին՝ համաձայն բարենորոգումների ծրագրի, անհնարին էր գործածել քրդերով և հայերով բնակեցված նահանգներում:

Ձ. Ֆիցմորիսը առարկում և չափազանցված էր համարում Գերմանիայի ներկայացուցիչների այն պնդումը, թե շատ դժվար կլիներ թուրքական կառավարութեանը ստիպել ընդունել ընդհանուր նահանգապետի վերաբերյալ առաջարկութեանները: Դրա համար, ըստ Ձ. Ֆիցմորիսի, միայն անհրաժեշտ էր, որպէսզի Եռյակ միութեանը ձեռքադատվեր այն գաղափարից, թե ուսասական առաջարկները նախատեսում էին ուսասական ոլորտի ստեղծում, դիտակցեր, որ դրանց ընդունումը բխում էր թուրքիայի շահերից: Հնարավոր է՞ր արդյոք դա, եթե անգամ հենց անգլիական դիվանագետները լիովին չէին ընդունում այդ տեսակետը:

Ձգտելով փոխհամաձայնութեան հաստատմանը կրկու խմբավորումների միջև՝ է. Գրեյը անգլիական պառլամենտի

<sup>1</sup>BDOW, vol. 10, NN 562, 563, 566.

<sup>2</sup>Նույն տեղում, N 567.

Համայնքների պալատում հայտարարում է այն մասին, թե Կ.Պոլսում Հայկական հարցը քննարկող տերուլթյունների ներկայացուցիչները Թուրքական կայսրության տարածքում ազդեցութեան ոլորտներ հաստատելու նպատակներ չունենին: Սակայն կառավարութեան առջև է. Գրեյի ելույթը ավելի անկեղծ էր: Նա նշում էր, որ հայկական բարենորոգումների ուստական նախագիծը հայկական վիլայեթները դարձնում էր ինքնավար մի նահանգ, որը հետագայում կզավթվեր Ռուսաստանի կողմից<sup>1</sup>:

Այդ թեկուզև մասնակի ինքնավարութեան հաստատումը Զ.Ֆիցմորիսը պարտադիր էր համարում հայերի համար: Նման անհրաժեշտութեանը հաստատելու համար նա դիմում էր Եմենի օրինակին: Ժամանակը ցույց էր տվել, որ երիտթուրքերի կողմից Եմենի կիսաինքնավարութեան մերժումը 1908թ. սխալ էր, քանի որ ձախողվեց թուրքերի կողմից նրա կառավարման բոլոր փորձերը: Նորանոր ապստամբութեանները ստիպեցին երիտթուրքերին համաձայնել Եմենի ինքնավարութեան հետ: Ինքնավարութեան առավելութեանը զգալի էր. ամրապնդվել էին և՛ Թուրքիայի կենտրոնական կառավարումը, և՛ հարաբերութեանները թուրքական կառավարութեան ու Եմենի միջև: Այս օրինակով Զ.Ֆիցմորիսը հաստատում էր նաև այն, որ մեկ տարածաշրջանին հատկացրած ինքնավարութեանը ոչ մի կերպ չէր անդրադառնում մյուսներին<sup>2</sup>: Բացի այդ, Զ.Ֆիցմորիսը պնդում էր, որ, եթե հայկական վեց վիլայեթներն անգամ վերածվեին ուստական ոլորտի, ապա ոչ մի հիմք չէին հանդիսանա թուրքական կայսրության փլուզման համար, եթե մյուս տերուլթյուններն Ասիական Թուրքիայի նկատմամբ տարածքային պահանջներ չներկայացնեին:

Դեսպանութեան ներկայացուցիչների նման հայամետ և ուստամետ տրամադրութեանները մասամբ բացատրվում էին Չ.Մարլինգի և Զ.Ֆիցմորիսի անձնական վերաբերմունքով բնդհանրապես Գերմանիայի և մասնավորապես Հ. Ֆոն Վանդենհայմի նկատմամբ: Զ.Ֆիցմորիսի կարծիքով՝ Հայկական հարցը մի յուրահատուկ փորձաքար էր Թուրքիայի նկատմամբ Անգլիայի վարած քաղաքականութեան համար:

<sup>1</sup>J.Heller, Ibid., p.13.

<sup>2</sup>BDOW, vol.10, N 567.

Կ. Պոլսում գեսպանութեան փաստարկներն իրենց դերը խաղացին Անգլիայի արտգործնախարարութեան կողմնորոշման գործում<sup>1</sup>: Դեսպանութեան տեսակետներն ընդունվել էին արտգործնախարարութեան Արևելյան բաժնի նոր գեկավար էյր Քրոուի (Eyre Crow) կողմից, որը նշանակվել էր այդ պաշտոնին Լ. Մալլեթի փոխարեն: Լ. Մալլեթն իր հերթին, չնայած այն հզոր զիմադրութեանը, որ ցուցաբերել էր ուստական նախագծի հանդեպ բարենորոգումների հանձնաժողովի աշխատանքի ընթացքում, ստանալով Չ. Մարրինգի հազորդագրումները, համաձայնել էր երկու՝ ուստական և թուրքական նախագծերի զուգահեռ քննարկմանը<sup>2</sup>: Է. Գրեյը համարում էր, որ բարենորոգումների խնդրի հետ կապված տերությունների երկու խմբերի միջև տարբերությունները վերաբերում էին ոչ այնքան հիմնահարցին՝ բարենորոգումների բովանդակությանը, այլ մեծ մասամբ ձևերին՝ կառուցվածքային հարցերին<sup>3</sup>:

Անգլիացիների տրամադրությունների փոփոխությունները զգացել էին գերմանացիները: Հանձնաժողովի աշխատանքի վերջին օրերին Վանդենհայմը հեռագրում է Բեռլին, թե Անգլիան, որը մինչ այդ մնում էր հավատարիմ Եռյակ միութեանը, սկսել էր հանդես գալ ի պաշտպանություն Ա. Մանդելշտամի նախագծի<sup>4</sup>:

Անգլիացիները, կենդիվ իրենց պետություն շահերից, տվյալ պահին ավելի հարմար էին գտնում աջակցել իրենց զաշնակից ուսաներին<sup>5</sup>: Անգլիական զիմադրատները համամիտ էին Ա. Նիքոլսոնի այն կարծիքին, որ « թեպետև Ֆրանսիան և Ռուսաստանը զժվար զաշնակիցներ են, բայց և այնպես Անտանտի պահպանումը կվրոպական խաղաղության պահպանման լավագույն միջոցն էր»<sup>6</sup>: Է. Գրեյը տրամադրվել էր համաձայնվել Ռուսաստանի բոլոր պահանջներին, քանի որ

<sup>1</sup>FO, 195/2450, pt.4, pp.102-103.

<sup>2</sup>Նույն տեղում, pt.5, p. 90.

<sup>3</sup>Նույն տեղում, p. 87.

<sup>4</sup>Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919), сmp.106.

<sup>5</sup>FO, 195/2450, pt.4, p.103; pt 5, p.88.

<sup>6</sup>И.С.Галкин, К истории английской дипломатии в 1908-1911гг., .. Вопросы истории», 1971, N 8, сmp.100.

Համոզվում էր, թե հնարավոր չի այլևս կանխել Օսմանյան կայսրութւյան փլուզումը:

Այնուամենայնիւ, Անգլիան առայժմ թուրքիայի մասնատումը նպատակահարմար չէր համարում: Է. Գրեյը շարունակում էր բանակցել և՛ Ռուսաստանի, և՛ Գերմանիայի արտգործնախարարների հետ: Անգլիայի արտգործնախարարը մտահոգութիւն էր ցուցաբերում հայկական վիլայեթների բարենորոգումների ծրագրի հրատապութւյան վերաբերյալ: Նա փորձում էր համոզել այդ երկրների իր գործընկերներին, թե արդյունքի հասնելու համար նախ անհրաժեշտ էր համաձայնութւյան գալ երկու նախագծերի քննարկման շուրջ: Ի դեպ, Գերմանիայի աչքում շատ ուսսամետ չերևալու համար, Գրեյը տեղեկացնում էր գերմանացիներին Ռուսաստանին ներկայացված երկու պարտագիր պայմանների մասին: Այդ նույն ժամանակ, Ռուսաստանի հետ բանակցելիս, անգլիացիները նշում էին, որ անհրաժեշտ էր ապահովել ընդհանուր համաձայնագրի ընդունումը, քանի որ այս դեպքում Գերմանիան, որը քննադատում էր Ռուսաստանի ձգտումները, չէր կարողանա թաքցնել իր սեփական ձգտումներն ու նպատակները<sup>1</sup>:

Անդլո-ուսսական և անդլո-գերմանական բանակցութիւնները զգալի արդյունքների չբերեցին: Նախ, ուսսական կառավարութիւնը կրկին հիշեցնում էր, որ ուսսական նախագիծը ներկայացվել էր ենթ-Քյոյի հանձնաժողովի քննարկմանն անգլիական և ֆրանսիական ներկայացուցիչների հավանութիւնը ստանալուց հետո: Բացի այդ հանգամանքը, ուսսական նախագծի մեջ հնարավորինս նկատի էին առնվել խնդրո առարկային վերաբերող թուրքական օրենքները՝ 1895թ. նախագծի հետ միասին<sup>2</sup>: Այդուհանդերձ, ուսսական կառավարութիւնը, մեծ նշանակութիւն տալով տերութիւնների միջև փոխհամաձայնութւյան հատուտմանը, հայտնում էր, որ պատրաստ է համաձայնութւյան հասնելու նպատակով քննարկել ուսսական նախագծին ներկայացվելիք շտկումները և չէր առարկի, եթե բանակցութիւնների արդյունքում

<sup>1</sup>BDOW, vol. 10, NN 558, 559.

<sup>2</sup>FO, 195/ 2450, pt. 5, p. 88.

նախագծի տեքստի մեջ նպատակահարմար լրացումներ կատարվեին<sup>1</sup>:

Գերմանիան ևս համաձայնել էր քննարկել երկու ծրագրերը միևնույն ժամանակ, սակայն նախապատվությունը տալիս էր թուրքական նախագծին:

1913 թ. հուլիսի 23-ին, «Բարենորոգումների հանձնաժողովի» 7-րդ նիստին, արգեն ակնհայտ է դառնում այն, որ եռյակ միության ներկայացուցիչները պատրաստվում էին հանդես գալ որպես բարենորոգումների նոր ծրագրի նախաձեռնողներ: Նրանք ընտրում էին «միջինը՝ շատ հեռու գնացող ուսսական և անբավարար թուրքական ծրագրերի միջև»<sup>2</sup>:

«Շատ հեռու գնացող» նախագծի երկու գլխավոր կետերի շուրջ տարաձայնություններ էին առաջացել Անտանտի տերութունների և եռյակ միության միջև: Դրանք նախագծի հետևյալ կետերն էին. 1/ հայկական մեկ նահանգի հիմնումը և 2/ մեծ տերությունների համաձայնությամբ ընդհանուր նահանգապետի նշանակումը: Ռուսական դիվանագետները հնարավոր էին համարում առաջին կետի վերաբերյալ զիջելը, սակայն երկրորդ կետի վերաբերյալ զիջումը կնշանակեր ընդհանրապես հրաժարվել ամեն մի բարենորոգումից Հայաստանում<sup>3</sup>:

Ենի-Բյոյի հանձնաժողովն ավարտում է իր աշխատանքը 1913թ. հուլիսի 24-ին: Գերմանական, ավստրո-հունգարական և իտալական դեսպանությունների ներկայացուցիչները հրաժարվում էին ընդունել բարենորոգումների ուսսական նախագծի էական դրույթները<sup>4</sup> և հայտարարում էին, որ ընդհանրապես բավարարված են Բ. Դոան կողմից առաջադրված բարենորոգումների նախագծով<sup>5</sup>: Ինչպես նշում էր Ռուսաստանի պատվիրակ Ա. Մանդելշտամը՝ չնայած որոշ հարցերի

<sup>1</sup>BDOW, vol. 10, N 561.

<sup>2</sup>Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919), стр. 115; См. Степанян, Армения в политике империалистической Германии..., стр. 83; Е.К.Саркисян, Политика Османского правительства в Западной Армении..., стр. 295.

<sup>3</sup>АВПР, 1913, ф.Политархив, д.3462, л.108.

<sup>4</sup>Լեո, Հայոց հարցի վավերագրերը, էջ 331-332; Е. К.Саркисян, Политика Османского правительства..., стр.291.

<sup>5</sup>Հայաստանը միջազգային դիվանագիտության..., էջ 269:

չուրջ Համաձայնություն էր կայացվել, ընդհանուր առմամբ Ենի-Քյոյի խորհրդակցությունը Հաջողություն չունեցաւ:

Այսպիսով, մեծ տերութունների միջև ծագած անհամաձայնությունը կրկին փակուղի մայրեց հայկական բարենորոգումների գործը: Մինչդեռ միայն շտապ և հնարավորին չափով լիակատար համաձայնությունը տերութունների միջև կարող էր կանխել մոտալուտ վտանգն Արևմտյան Հայաստանում: Այստեղից ստացված վերջին լուրերը Հաստատում էին և՛ ուռսական, և՛ անգլիական կառավարությունների մտավախությունը, որ քրդերի կողմից սարսափելի ծայրահեղություններ են սպասվում<sup>1</sup>:

Սակայն ի՞նչ էր իրենից ներկայացնում նման սարսափելի իրադարձությունների հավանականությունը մեծ տերությունների շահերի կողքին: Անգլիայի քաղաքականությունը հայկական բարենորոգումների նկատմամբ բխում էր նրա շահերից և ընդհանուր քաղաքականությունից: Այժմ, ինչպես 19-րդ դարի վերջին, անգլիացիները կարող էին իրենց վերաբերմունքը Հայկական հարցին արդարացնել լորդ Ռոզբերիի (Rozbery) այն բացատրությամբ, թև «Բրիտանական քաղաքականությունը բաղկացած է 1000 մասերից ու շահերից և մենք ի զորու չենք զոհարերիկ ընդամենը մեկ շահին մնացած 999, անգամ եթե այն պահանջում է անհետաձգելի գործողություններ»<sup>2</sup>: Ռոզբերին նշել էր, որ հայ ժողովրդի կործանումը կազմում էր Բրիտանիայի հոգսերի մեկ հազարերորդականը: Իրավիճակն Անգլիայի համար չէր փոխվել:

Արևմտյան Հայաստանի համար բարենորոգումների խնդրի հետ կապված Անգլիային անհանգստացնում էին իր անմիջական շահերը և խնդիրները. 1/ Գերմանիայի հետ հարաբերությունների կայունացումը, 2/ Գերմանիայի զավթողական ձգտումների կանխումը, 3/ Թուրքական կայսրության տարածքային ամբողջականության պահպանումը և դրա հետ կապված 4/ անգլիական գաղութների մահմեդական բնակչության տրամադրությունները, 5/ Թուրքիայի տարածքում

<sup>1</sup>FO, 195/ 2450, pt. 5, pp.4749 ; АВПР,1913, ф. Политархив, д.3462, л.87.

<sup>2</sup>А.Киракосян, Политика Англии в Армянском вопросе по материалам еженедельника "Spectator", (90ые годы 19в.),Научно-аналитический обзор, Ереван,1982, стр.10.

ազդեցութեան ոլորտների առաջացման անցանկալի հավանականութիւնը, 6/ Փոքր Ասիայում Ռուսաստանի դիրքերի և ազդեցութեան ամրապնդման ապառնալիքը և 7/ Ռուսաստանի կողմից հայկական վիլայեթների հնարավոր բռնազավթումը:

Նշված բոլոր մտավախութիւնները իրական թե ոչ իրական, որոշում էին Անգլիայի մերթ պատիւ, մերթ բացասական, մերթ դրական դիրքորոշումն ինչպես հայկական բարենորոգումների ուսսական նախագծի քննարկման ընթացքում, այնպես էլ հետագայում:

Այն, որ անգլիական կառավարական շրջանների անհանգստութիւնների մեծ մասն իրոք իրական չէին և արհեստական էին, երևում էր հենց անգլիական դիվանագիտական շրջաններում տիրող տարբեր, հաճախ բևեռված կարծիքներից: Անգլիական դիվանագետների համար պարզ էր, որ Օսմանյան կայսրութեան փլուզումը միայն ժամանակի հարց էր, այն էլ ոչ շատ երկար: Եթե անգլիական կառավարութիւնը իրոք շահագրգռված էր Թուրքիայի ամբողջականութեան խրնդրով և կայսրութեանը սպառնացող վտանգ էր տեսնում, ապա ինչո՞ւ հենց սկզբից Անտանտի տերութիւնների կողմից ուսսական նախագծի նախնական քննարկման ժամանակ, առաջ չէր քաշել իր առարկութիւնները, եթե դրանք դոյութիւնը ունեին: Չէ՞ որ անգլիական և ֆրանսիական դեսպաններն ընդունել էին այդ նախագիծը միայն աննշան փոփոխութիւններ կատարելով, ինչն էլ նշանակում էր, որ այժմ նախագծի համար նաև իրենք էին պատասխանատու: Սակայն Ենի-Քյոյի քննարկումների ընթացքում անգլիացիների կարծիքով ուսսական նախագիծը մի շարք խնդիրներ առաջ բերեց և անընդունելի դարձավ:

Չնայած այդ ամենին, ի վերջո, Անգլիայի արտգործնախարարութեան ղեկավարները նպատակահարմար գտան համաձայնել ուսսական նախագծի հետ:

Ինչ վերաբերում էր Թուրքիային, ապա նրան ամենևին չէին անհանգստացնում Ռուսաստանի և Անգլիայի պահանջները: Թուրքերը համոզված էին, որ և՛ Անգլիային, և՛ Ռուսաստանին ավելի հետաքրքրում էին հայկական հողերի բնա-

կան հարստությունները, քան հայերի ազատագրումը<sup>1</sup>: Թուրքիան աշխատում էր խաղալ տերությունների՝ Անգլիայի և Ռուսաստանի, Անգլիայի և Գերմանիայի հակասությունների վրա և ընդհանրապես ձախողել որևէ պետության միջամտությունն Օսմանյան կայսրության ներքին գործերին:

Այսպիսով, Ռուսաստանը, որի քաղաքական շահերը համրնկնում էին արևմտահայերի պահանջների հետ, իր ձեռքը վերցնելով բարենորոգումների քննարկման նախաձեռնության «իրավունքը», որին ակամայից համակերպվեցին նրա դաշնակիցները և հակառակորդները, հանդիպեց թուրքերի դիմադրությանը: Թուրքերը հնարավոր բոլոր միջոցները գործադրեցին Հայկական խնդրի քննարկումը տապալելու համար՝ հանձին Գերմանիայի ունենալով շահագրգիռ խորհրդատու և աջակից:

Գերմանական խմբակցության բացահայտ դիմադրության հետ մեկտեղ Անգլիայի շահապաշտ քաղաքականությունն իր հերթին նպաստեց ռուսական դիվանագիտության պարտությանը Ենի-Բյոյում Արևմտյան Հայաստանի համար նախատեսվող բարենորոգումների նախագծի քննարկման ընթացքում և կրկին 1913թ. ամռանը արգելակեց «Հայկական բարենորոգումների» խնդրի լուծումը:

---

<sup>1</sup>См.Степанян, Германские источники о геноциде армян, период первой мировой войны, Ереван, 1991, т.1, стр.10.

**ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ**

**ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ  
ՇՈՒՐՋ ԵՎ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
/ 1913թ. ՕԳՈՍՏՈՍ -1914թ.ՕԳՈՍՏՈՍ /**

**ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՌՈՒՍ - ԳԵՐՄԱՆԱԿԱՆ  
ԲԱՆԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ: ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ  
ԽԱՐԴԱՎԱՆՔՆԵՐԸ / 1913թ. ՕԳՈՍՏՈՍ - ՍԵՊՏԵՄԲԵՐ /**

Ենթ-Քյոյի խորհրդակցությունն ընդգծված առաջխաղացում չարձանագրեց հայկական վիլայեթներում բարենորոգումներ անցկացնելու խնդրում: Հայկական հարցը կրկին մեռյալ կետի վրա էր: Եթե Ռուսաստանը փորձում էր այն տեղաշարժել և, ելնելով իր շահերի պաշտպանության անհրաժեշտությունից, որևէ կերպ լուծել բարենորոգումների խնդիրը, ապա նրա զաշնակիցները ոչ մի փորձ չէին անում լրավիճակը հօգուտ հայերի գեթ մի փոքր փոխելու համար: Տվյալ պահին՝ 1913թ. հուլիսի վերջին - օգոստոսին, թվում էր, թե Նոյակ միությունն ի դեմս Գերմանիայի, ավելի էր հետաքրքրված հայկական բարենորոգումների խնդրով, քան Անտանտի պետությունները:

1913թ. օգոստոսի 6-ին Ռուսաստանի արտգործնախարար Ս.Սազոնովը տեղեկացնում էր գերմանական կառավարությունը Հայկական հարցի վերաբերյալ իր տերություն մշտական հետաքրքրություն մասին, որն անհրաժեշտ էր, ըստ Ս.Սազոնովի, «կենդանացնել իր մեռյալ զրույթյունից»<sup>1</sup>: Նա տեղեկացնում է, որ Ռուսաստանը չի ձգձգելու գործը, որպեսզի Բ-Պուռը չենթադրի, թե ամեն ինչ վերջանալու է միայն խորհրդակցություններով և ուսանելը չեն պնդելու իրենց պահանջների վրա:

Ռուսները ձգտում էին վերակենդանացնել հայկական վիլայեթների բարենորոգումների քննարկումը, քանի որ խնդրի լուծման տապալումը կբերեր ավյալ հարցի հետ կապ-

<sup>1</sup>С.Сазонов, Воспоминания, Берлин, 1927, стр.159; Реформы в Армении..., стр. 80.

ված Ռուսաստանի նպատակների խափանմանը: Ռուսաստանը չէր ցանկանում անգոր երևալ Հայերի աչքում և կորցնել նրանց համակրանքը, ինչպես նաև Արևմտյան Հայաստանում իր ազդեցությունն ամրապնդելու հավանական հնարավորությունը:

Գերմանիայի համար ստեղծված իրավիճակը նույնպես անշահեկան էր: Գերմանական կառավարությունը, ընդունելով Ս.Սադոնովի առաջարկությունը, իր պատրաստակամությունն էր հայտնել համաձայնության գալ Հայկական վիլայեթներում բարենորոգումներ անցկացնելու հարցում<sup>1</sup>: Գերմանիայի համաձայնությունը բխում էր նրա՝ քաղաքական նպատակներից. 1/ թույլ չտալ Ռուսաստանին ամբողջովին նախաձեռնությունն իր ձեռքում պահել և ամրապնդվել Փոքր Ասիայում, 2/ մի կողմից շահել Հայերի համակրանքը, մյուս կողմից՝ ցույց տալ Թուրքիային, որ գերմանական դիվանագիտությունը զսպել է ավելի լայն բարենորոգումներ անցկացնելու Ռուսաստանի ձգտումները :

Մինչ հիմնական հակառակորդների՝ Ռուսաստանի և Գերմանիայի միջև համաձայնության քայլեր կիրառործվեին, Անտանտի մյուս անդամները շատ ուշադիր, բայց ոչ բացահայտ ձևով հետևում էին գործողությունների զարգացմանը:

Արևմտյան Հայաստանի համար բարենորոգումների հարցում անդլիսական կառավարության ցուցաբերած պասիվությունը չէր նշանակում, թե Անգլիայի և Թուրքիայի հարաբերություններում ընդհանրապես պասիվություն էր տիրում: Իրավիճակը ճիշտ հակառակն էր: Միջազգային լարված վիճակը և պատերազմի սպառնալիքը թելադրում էին Անգլիային չվատթարացնել հարաբերությունները Թուրքիայի հետ: Այդ ժամանակահատվածում, երբ Անգլիայի հիմնական հակառակորդ Գերմանիայի նկրտումները տիրանալ բրիտանական գաղութներին, դնալով խստանում էին: Վերջինիս շահերից բխում էր ի դեմս Թուրքիայի տեսնել եթե ոչ դաշնակցի, ապա գոնե բարեկամի և ոչ հակառակորդի:

<sup>1</sup>Реформы в Армении..., стр. 83, 84; Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919), стр.110,114.

Անգլիական կառավարութիւնը ձգտում էր Թուրքիայի ասիական շրջանների ամբողջականութեան պահպանմանն ուղղված իր քաղաքականութեան միջոցով ավելի բարելավել հարաբերութիւնները Թուրքիայի հետ: Նա միևնույն ժամանակ փորձում էր կանխել Եռյակ միութիւնը - Օսմանյան կայսրութիւնը հարաբերութիւնների հետագա սերտացումը:

Անգլիական կառավարութեան որդեգրած քաղաքականութիւնն իրագործելու ուղղութեամբ մեծ աշխատանք էին կատարում Թուրքիայում անգլիական հյուպատոսները: Նրանք չանտեսելով ոչ մի մանրուք՝ ընդգծված ուշադրութիւն էին ցուցաբերում թուրքերի նկատմամբ: Դրա վառ ապացույցն էր 1913թ. ամռանն անգլիական հյուպատոսների կողմից՝ մահմեդական տոների կապակցութեամբ բրիտանական դրոշի բարձրացման որոշումը<sup>1</sup>: Մինչդեռ նախորդ 15 տարիների ընթացքում նման բան չէր արվել:

Ավելի ուշ, 1913թ. հոկտեմբերի 5-ին, թուրքերին գոհացնելու համար էրզրումի անգլիական հյուպատոս Մոնահամը (Monaham) գերմանական հյուպատոս Անդերսի (Anders) հետ միասին մեկնում է Էզրումից: Նա չէր ցանկանում մասնակցել հոկտեմբերի 6-ին էրզրում ժամանող նորընտիր հայոց պատրիարք Ջավեն Եղիայանի ղրմավորման արարողութիւններին<sup>2</sup>:

Թուրքիան նույնպէս շահագրգռված էր Անգլիայի հետ լավ հարաբերութիւններ պահպանել, որպեսզի անհրաժեշտութեան դեպքում կարողանար դիմել Անգլիայի օգնութեանը (գերմանամետ քաղաքականութիւնը չէր նշանակում, որ թուրքական կառավարութիւնը լիովին վստահում էր Գերմանիային և վերաբերում էր նրան առանց վերապահութեան):

<sup>1</sup>Armenia. Political and Ethnic Boundaries, 1878-1948, London, 1998, p.267: FO, 195/2450, pt.5, p.25.

<sup>2</sup>ԱՅՈՒՐ, Փ.Ποιμαρχιւս, ձ.3464, Վ. 44. Դետաքրքիր է նշել, որ Դիարբեքիից էրզրում 32- օրյա շրջագայության ընթացքում, բազմաթիվ կանգառների պատճառով հարկադրված, պատրիարք Ջավեն Եղիայանը էրզրում ժամանեց ոչ թե հոկտեմբերի 6-ին, այլ 13-ին: Սեկ շաբաթյա ուշացման պատճառով անգլիացի և գերմանացի գործընկերները ստիպված էին վերադառնալ էրզրում և ի վերջո մասնակցեցին Եղիայանի հետ հանդիպմանը հյուպատոսական կորպուսին տրված ճաշկերույթին:

Նշված ժամանակահատվածում անգլո-թուրքական հարաբերություններում երկու պետությունների շահերից բխող ակտիվությունը հանգեցրեց նրանց միջև համաձայնությունների ստորագրմանը մի շարք հարցերի շուրջ, որոնց վերաբերյալ տարիներ շարունակ համաձայնություն չէր հաստատվում: Անգլիային կատարվող զիջումների և նոր առաջարկությունների միջոցով թուրքիան ձգտում էր Արևմտյան Հայաստանի համար նախատեսվող բարենորոգումների հարցում Անգլիայի «հովանավորական» միջամտությունը հայերի նկատմամբ նվազագույնի հասցնել:

1913թ. հուլիսի 29-ին, Լոնդոնում, փաստորեն Ենի-Քյոյի խորհրդակցությունից ավարտից անմիջապես հետո, Անգլիայի և թուրքիայի միջև կնքվեց նոր Շատ-էլ-Արաբի նավարկության պայմանները բարելավելու նպատակով հանձնաժողովի հաստատման մասին կոնվենցիա<sup>1</sup>: Ըստ կոնվենցիայի՝ հանձնաժողովի երկու անդամներից մեկը ազգությունը պետք է անգլիացի լինի<sup>2</sup>: Բացի սյգ, թուրքական կառավարության ցանկությունը թուրքիայի գետային ծառայության գլխավոր ինժեները և տեսուչը նույնպես անգլիացիներ պետք է լինեն:

Թուրքիայի բարյացակամությունն անգլիացիների նկատմամբ արտահայտվեց նաև 1913թ. նոյեմբերին, երբ թուրքական կառավարության կողմից պայմանագիր կնքվեց ոչ թե գերմանական, այլ անգլիական՝ Արմսթրոնգ-Վիքերս (Armstrong-Vickers) գինագործական ֆիրմայի հետ<sup>3</sup>: Այդ պայմանագրով անգլիացիներին տրվում էր Իզմիտի ծովային բազայի, նավանորոգարանի կառուցման իրավունք, ինչպես նաև ողջ թուրքիայի՝ բացի Պարսից ծոցի և Կարմիր ծովի նավաշինական գործարանների, նավանորոգարանների, գինանոցների վերակառուցման իրավունքը:

Թուրքիայի և Անգլիայի միջև վերսկսված բանակցությունները՝ Բազդազի երկաթուղու վերջին կայարանի, Պարսից ծոցի հետ կապված մի շարք կարևոր հարցերի վերաբերյալ,

<sup>1</sup>Ю.В.Ключников, А.Сабанин, Международная политика в договорах, нотах и декларациях, М., 1925. ч.1, стр. 319.

<sup>2</sup>Harry N.Howard, The Partition of Turkey, A Diplomatic History 1913-1923, Oklahoma, 193, p.51.

<sup>3</sup>Ph.Graves, Ibid., p.181.

ավարտվելու էին նոր պայմանագրերով: Եթե 1912թ. Բ. Դուռը առաջարկում էր բաժանել Պարսից ծոցի ջրերի հսկողությունը, ապա այժմ նա ճանաչում էր այդ հարցում Անգլիայի լիիրավությունը:

1913թ. վերջին թուրքերն Անգլիային պատվիրած մեկ ռազմանավից բացի՝ զնեցին նաև երկրորդը<sup>1</sup>:

Պետք է նշել, որ թուրքական կառավարություն քաղաքական քայլերը չէին սահմանափակվում միայն անգլիացիների հետ պայմանագրերով: Պայմանագրեր էին կնքվում նաև Ֆրանսիայի և Գերմանիայի հետ, որոնք բավարարում էին այդ պետությունների որոշակի հետաքրքրությունները<sup>2</sup>:

Այսպիսով, Հայկական հարցում Անգլիայի ակտիվությունն նվազումը ոչ այլ ինչ էր, եթե ոչ անգլո-թուրքական հարաբերություններից բխող նոր դրսևորում: Այդուհանդերձ, Հայկական հարցի նկատմամբ Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունների ցուցաբերած պասիվությունը ցարական կառավարության շրջաններում ոչ միայն զժգոհություն էր առաջ բերում դաշնակիցների բռնած դիրքից, այլև կասկած, թե որքանով նպատակահարմար էր առհասարակ համագործակցությունը նրանց հետ<sup>3</sup>: Ռուսական դիվանագիտությունը չհապաղեց զգացնել տա դա անգամ փորձելով վախեցնել նրանց սուս-զերմանական մերձեցման հեռանկարով<sup>4</sup>: Ռուսաստանի նման տրամադրությունները փոքր-ինչ սթափեցրեցին անգլիական դիվանագետներին և մի որոշ ժամանակով կարճևս թե կրկին աշխուժություն առաջացրին նրանց շրջանում Հայկական հարցի նկատմամբ: Բացի այդ, Անգլիայի արտգործնախարարությունը չէր կարող անտարբեր մնալ 1913թ. օգոստոսի 4-ին և 5-ին թուրքիայից Անգլիայի դեսպանություն հայտարարած տեղեկությունների նկատմամբ: Դրանցում նշվում էր, թե Ռուսաստանը ռազմական ուժեր էր

<sup>1</sup> Ph.Graves, *Ibid.*, p.184; Г.А.Арш, Британская дипломатия и миссия Лимана фон Сандерса, "Вестник АГУ", 1949, N 11, стр.124

<sup>2</sup> Раздел Азиатской Турции по секретным документам бывшего министерства иностранных дел, М., 1924, стр. 51.

<sup>3</sup> W.J.van der Dussen, The Question of Armenian Reforms in 1913-1914, "Armenian Review", Spring 1986, vol 39, N 1, p.20.

<sup>4</sup> Ն.Վ.Կարապետյան, Հայկական բարենորոգումների խնդիրը 1912-1914թթ., Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1981, հատոր 6, էջ 532:

կենտրոնացնում թուրքական սահմանի մոտ և նպատակ ունի ներխուժել Արևմտյան Հայաստան<sup>1</sup>:

Անգլիական կառավարութայան առջև որոշ խնդիրներ էին առաջացել՝ մի կողմից չլարել Ռուսաստանի հետ հարաբերությունները, մյուս կողմից սահմանափակել և արգելել ռուսական նկրտումների և ցանկությունների մի մասը: Միևնույն ժամանակ անգլիացիները չէին ցանկանում հայերի առջև հեղինակազրկվել: Այս նպատակներով էլ 1913թ. օգոստոսի կեսերին Անգլիայի արտգործնախարարությունը Լոնդոնում թուրքական դեսպան Թե.Ֆրիկ փաշային ներկայացնում է Արևմտյան Հայաստանում կատարված ոճրագործությունների ցուցակը<sup>2</sup>: Անգլիական դիվանագետները թուրքական դեսպանի ուշադրությունը հրավիրում էին այն վտանգի վրա, որ սպառնում էր թուրքիային և նրա արևելյան նահանգներին նմանօրինակ իրադարձությունների կրկնության զեպքում: Իրանով ակնարկվում էր, որ հիշյալ շրջաններում տիրող ոչ խաղաղ ու սպառնալի դրությունը կարող էր օտար միջամտության առիթ տալ: Անգլիական կառավարությունը թուրքիայի անձեռնմխելիության վերաբերյալ իր մտահոգությունն ու ցանկություններն արտահայտելով թուրքական դեսպանին՝ խորհուրդ էր տալիս Բ. Գուանը՝ անհապաղ քննություն կատարել և պատժել մեղավորներին:

Լոնդոնից ստանալով Թե.Ֆրիկ փաշայի հաղորդագրությունը՝ մեծ վեզիրը ներկայացրեց հիշյալ ցուցակը երեք նախարարությունների (ներքին գործերի, ռազմական և արդարադատության)՝ կարգադրելով ընդամին ձևով առնել հնարավոր բոլոր միջոցները և ներկայացնել կատարված քննությունների արդյունքները՝ անգլիական կառավարությանը հաղորդելու համար<sup>3</sup>:

Սակայն այս ամենին չհաջորդեց անգլիական կառավարության հետևողականությունը, որի պատճառն էր տվյալ պահի համար անգլիական դիվանագետների կատարած հաշվարկը՝ սպասողական և գիտորդի գիրքի գրավումը: Ժամա-

<sup>1</sup>FO, 195/2450, pt.5, p. 113.

<sup>2</sup>Նույն տեղում, p.814: АВПР, ф.Политархив, д. 3464,л.58; Реформы в Армениа..., стр.81-82.

<sup>3</sup>FO, 195 / 2450, pt.5, p.13.

նակն ու դեպքերի զարգացման մոտակա ընթացքը պետք է օգնենին անգլիացիներին կողմնորոշվելու ստեղծված երկրնա-  
րանքի միջև. հայերի շահերից բխող որևէ գործնական քայլի  
դիմել, թե՞ ձեռնպահ մնալ ցանկացած քայլից, որ կարող էր  
հարուցել Գերմանիայի դժգոհությունը: Արտգործնախարար-  
ուլթյան ներկայացուցիչներից ոմանք ավելի շատ առավել-  
լուծվուեններ էին տեսնում մեկ այլ քայլի դիմելու մեջ. այն է՝  
ընդհանրապես չմասնակցել հայկական բարենորոգումների  
քննարկմանը: Սակայն այս քայլը շատ կտրուկ ու վճռական  
կլիներ և իր հերթին կհանգեցներ Անգլիայի համար մի շարք  
անցանկալի և անբարենպաստ հետևանքների. Անգլիան  
կլարեր հարաբերուլթյուենները Եռյակ միուլթյան՝ մասնավորա-  
պես Գերմանիայի հետ, առաջ կգար Ռուսաստանի դժգոհուլթ-  
յուենը, ինքը ձեռնաու և շահավետ կլիներ թուրքիայի համար  
և կհանգեցներ հայերին այն կարծիքին, թե անգլիացիները  
թողել էին հայերին իրենց ճակատագրի քմահաճույքին<sup>1</sup>:

Նկատի ուեննալով վերը նշվածը՝ Անգլիայի արագործնա-  
խարարուլթյան ղեկավարները գերադասում էին սպասել և  
տեսնել, թե ինչպես կավարտվեն հայկական վիլայիթների բա-  
րենորոգումների վերաբերյալ սկսված՝ ավելի շատ անձնա-  
կան կարծիքների փոխանակման բնուլթ կրող ոուս-գերմա-  
նական նախնական քննարկումները<sup>2</sup>: Արտգործնախարարուլթ-  
յուենում՝ թե՛ նախարար է. Գրեյը, թե՛ քարուղարներ Ա. Նի-  
քոլսոնն ու Հ. Նորմանը, խնդրի որևէ ղրական լուծման ակն-  
կալիք չուենեին: Նման համոզմուենքը հետևանք էր ոչ թե  
այն բանի, որ դժվար է հաշտեցնել տերուլթյուենների իրարա-  
մերժ տեսակետները, այլ որ ինքը՝ թուրքիան, չէր ցանկա-  
նում համագործակցել բարենորոգումների ծրագրի հարցում:  
Այս հանգամանքը, հատկապես ստեղծված պահին, երբ թուր-  
քերը ոգևորված էին Բալկանյան երկրորդ պատերաղմում  
ձեռք բերած իրենց հաջողուլթյուեններով, անհավանական էր  
թվում անգլիացիներին:

<sup>1</sup>BDOW, vol. 10, N 567

<sup>2</sup>FO, 195 /2450, pt 4, p. 1; BDOW, vol. 10, N 567.

Ռուսաստանն ու Գերմանիան, ստանալով տերուժյունների համաձայնությունը<sup>1</sup>, բանակցություններ են սկսում հայկական վիլայեթներում բարենորոգումներ անցկացնելու ծրագրի շուրջ: Ռուսական դիվանագիտությունը ոչ մի աջակցություն չստանալով Անգլիայի և Ֆրանսիայի կողմից՝ ստիպված էր դնալ փոխզիջման, համաձայնվել Վիլհելմ II-ի կառավարության հետ: Կայգերական կառավարությունը 1913թ. սեպտեմբերին Արևմտյան Հայաստանի համար բարենորոգումների նոր ծրագիր էր առաջ քաշում՝ միջին ծրագիր Թուրքիայի և Ռուսաստանի առաջարկներին<sup>2</sup>: Համաձայնություն հասնելու նպատակով երկու տերուժյուններն էլ դնացին փոխզիջումներին<sup>3</sup>:

Ռուսաստանի դիմագրությունը հիմնականում կապված էր Արևմտյան Հայաստանի հորիզոնական բաժանման հետ: Նշված բաժանումը հակասում էր Ռուսաստանի կողմից առաջարկված՝ ուղղահայաց բաժանման սկզբունքներին: Ըստ այդմ՝ երկու սեկտորների պիտի բաժանվեր միայն այն տարածքը, որ սահմանված էր բարենորոգումների ուսակական ծրագրում և որևէ այլ շրջան դրան չէր ավելանալու: Պնդելով այդ պահանջը, ռուսները փորձում էին ոչ միայն խուսափել մեծ թվով մահմեդականների ընակեցումից հայկական նահանգներում, այլև բարենորոգումները չտարածել այն նահանգների վրա, որոնցով անցնում էր Բեռլին-Բաղդադ երկաթուղին: Հենց այս հանգամանքներից էլ նեղվով՝ ռուսական սկզբնական նախագիծը բարենորոգումների իրագործման շրջանակներից դուրս էր թողել հայկական վիլայեթների հարավային ծայրամասերը, Ադանայի և Ջեյթունի հայկական շրջանները<sup>4</sup>: Ռուսաստանը ձգտում էր ավելորդ հակասություններ չառաջացնել այս շրջաններում ամրապնդվող Գերմանիայի հետ:

<sup>1</sup>R. Davison, The Armenian Crisis 1912-1914, New-York, 1948, p.20; Джемаль паша, Записки..., стр. 81.

<sup>2</sup>Е.К.Саркисян, Политика Османского правительства..., стр. 295; Մ.Արզումանյան, Հայաստան, 1914-1917, Երևան, 1969, էջ 82:

<sup>3</sup>А.Мандельштам, указ. соч., стр.50; С.Сазонов, указ. соч., стр.173; Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919), стр. 118.

<sup>4</sup>Հայաստանը միջազգայի դիվանագիտության..., էջ 232:

Ռուսաստանին հակառակ՝ Գերմանիան՝ Թուրքիայի հետ միատեղ, ձգտում էր հորիզոնական ուղղութիւնով բաժանման միջոցով նոր շրջաններ ընդգրկել և ավելացնելով մահմեդական բնակչութեան թիւը հայկական նահանգներում՝ թույլ չտալ Ռուսաստանին հետագայում ամրապնդվել այստեղ: Գերմանիայի շահերը, ինչպէս հայտնում էր Կ.Պոլսից Հ. Ֆոն Վանգենհայմը Գերմանիայի ռեյսիսկանցիեր Ֆոն Բետման-Հոլվեգին, թելադրում էին մերժել ուսուսկան նախագծում բարենորոգումներ անցկացնելու առումով տեղ գտած տարածքային սահմանափակումները<sup>1</sup>: Գերմանացիների մտավարուցութունները կապված էին այն հանգամանքի հետ, որ, չնայած տարածքային սահմանափակումներին, ուսուսկան նախագիծն ընդգրկում էր Ասիական Թուրքիայի այն շրջանները, որոնք Բաղդադի երկաթուղու երկայնքով նախատեսված ճյուղավորումների հետ կապված, կազմում էին Գերմանիայի հետաքրքրութունների սյուրտը: Գերմանացիների կարծիքով, Ռուսաստանի կողմից կազմակերպված վարչական բարենորոգումների շնորհիվ, կյանքի պայմանների բարելավումն այս շրջաններում կնսեմացներ Գերմանիայի հեղինակութունը բարենորոգումներից դուրս մնացած շրջաններում, ուր բնակչութեան վիճակը կմնար անփոփոխ և համեմատաբար ավելի ծանր: Իրավիճակը շակելու հնարավորութուն կտար բարենորոգումների տարածումն ավելի յայն շրջաններում: Ավելին, Բաղդադի երկաթուղուն կից շրջաններում բարենորոգումների իրադրման միջոցով Գերմանիան ցանկանում էր այդ գործընթացին միջամտել և Ռուսաստանի գործողութունները հակելու հնարավորութուն ձեռք բերել:

Ռուսաստանը համաձայնեց Արևմտյան Հայաստանի բաժանմանը երկու սեկտորների, այն էլ ոչ ուղղահայաց, այլ հորիզոնական գծով՝ ինչպէս առաջարկում էին գերմանացիները ելնելով թուրքական ծրագրից: Ռուսաստանն ընդունել էր այդ բաժանումը՝ հուսալով, որ ժամանակի ընթացքում թերևս կարող էին նորանոր փոփոխութուններ առաջ գալ՝ հօգուտ ուսուսկան ծրագրի<sup>2</sup>:

<sup>1</sup>Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919), стр. 72-73.

<sup>2</sup>Եղիշե ա.քահ. Գեղամյանց, Յայնի ազատագրւիլան շարժումները 20-րդ դ., կամ Յայկական հարցի յոթերորդ շրջանը, Բաքու, 1917, էջ 538:

ի պատասխան Ռուսաստանի այդ քայլի՝ գերմանացիներն այլևս չէին առաքելում, որպեսզի օտարերկրացի ընդհանուր վերատեսուչներ նշանակվեին մեծ տերութունների համաձայնությամբ: Գերմանացիները նաև համաձայնել էին ներկայացուցչական ընտրողական ժողովներում, ինչպես նաև բարձր պաշտոններում մահմեդականների և քրիստոնյաների հավասարության սկզբունքի հետ:

Այսպիսով, երկու տերությունների՝ Ռուսաստանի և Գերմանիայի միջև հայկական վիլայեթներում բարենորոգումներ անցկացնելու խնդրի շուրջ վերսկսված բանակցությունները մոտենում էին դրական ավարտին: 1913թ. սեպտեմբերի 10-ին Կ. Պոլսում ռուսական դեսպան Մ. Գիրսը և գերմանական դեսպան Հ. Փոն Վանդենհայմը կազմեցին 6 կետերից բաղկացած Արևմտյան Հայաստանի համար բարենորոգումների ծրագիր, որը պատրաստվում էին ներկայացնել մեծ վեզիրին<sup>1</sup>:

Ռուս-գերմանական ծրագրի կետերը հետևյալն էին.

1. Արևելյան Անատոլիան բաժանվում էր երկու. 1/ Վան, Բիթլիս, Խարբերդ, Դիարբեքիր և 2/ Էրզում, Տրապիզոն, Աբաստիա սեկտորների, որոնք ղեկավարվելու էին տերությունների համաձայնությամբ նշանակվող եվրոպացի 2 ընդհանուր վերատեսուչների կողմից:

2. Երկու վերատեսուչներն իրավազոր էին ներկայացնել Բ. Դոանը բարձր պաշտոնների և դատավորների թեկնածուների ցուցակը: Նրանց էր պատկանելու սեկտորների բոլոր պաշտոնյաների արձակման իրավունքն՝ առանց որևէ բացառություն:

3. յուրաքանչյուր սեկտորում հաստատվելու էր ընտրական ժողով՝ բաղկացած հավասարապես մահմեդականներից և քրիստոնյաներից:

4. Հավասարության սկզբունքն ընդունվում էր նաև սեկտորներում եղած բոլոր պաշտոնները նշանակելիս:

5. Մեծ տերություններին իրավունք էր վերապահվում իրենց գեսպանների և հյուպատոսների միջոցով հսկել բարենորոգումների գործադրումը:

<sup>1</sup>Реформы в Армении..., стр.93, 94, «Վեմ», 1935, մարտ - ապրիլ, էջ 72:

6. Բ. Դուռը պետք է համադրո՞ւնալիցեր մեծ տերությունների հետ Արևմտյան Հայաստանի երկու սեկտորներում այլ բարենորոգումների առթիվ:

Նկատի ունենալով այն հանգանանքը, որ ստեղծված պայմաններում Հայկական հարցը կրկին սկսել էր դրավել մեծ տերությունների ուշադրությունը, Ռուսաստանի արտգործնախարարությունն անհրաժեշտ էր դառնում հիշյալ հարցի կապակցությամբ իրենց կատարած քայլերի մասին տեղեկացնել Անգլիայի և Ֆրանսիայի կառավարություններին<sup>1</sup>:

Մինչ բարենորոգումների ուս-գերմանական ծրագիրը կներկայացվեր Բ. Դուռը՝ այն Ռուսաստանի կողմից ներկայացվել էր Անգլիայի և Ֆրանսիայի կառավարություններին<sup>2</sup>: Տերություններն իրենց հավանությունն էին տվել այդ ծրագրին<sup>3</sup>:

Ֆրանսիական կառավարությունը ծրագիրը շատնպատակահարմար գտնելով՝ 1913թ. սեպտեմբերի 12/25-ին խոստացավ համապատասխան կարգադրություններ ուղարկել Կ. Պոլսում իր ղեկավարին:

Անգլիայից պատասխանը մի փոքր ուշացավ, ինչը բացատրվում էր Լոնդոնից է. Գրեյի բացակայությամբ: Այդ մասին տեղեկացնում էր Լոնդոնում ռուսական հավատարմատար էտտերը: Նրան հաջողվել էր դեռ սեպտեմբերի 10-ին հանդիպել արտգործնախարարության մշտական քարտուղար Ա. Նիքոլսոնի հետ և հայտնել այն բարեհաջող ընթացքի մասին, որ ընդունել էին ռուս-գերմանական բանակցությունները Հայաստանում անցկացվելիք բարենորոգումների հարցում<sup>4</sup>: Ըստ Ա. Նիքոլսոնի, անգլիական կառավարությունը ողջունում էր հայկական վիլայեթների համար բարենորոգումների շուրջ վերսկսված բանակցությունները: Մշտական քարտուղարը տեղեկացնում էր էտտերին, որ Ռուսաստանի և Գերմանիայի միջև անմիջական բանակցությունները նաև միանգամայն համապատասխանում էին արտգործնախարար է. Գրեյի ցանկությանը: Է. Գրեյն այս գործողության մեջ տես-

<sup>1</sup> АВПР, ф. Политархив, д. 3464, л.39; Реформы в Армении..., стр. 92.

<sup>2</sup> Реформы в Армении..., стр. 95.

<sup>3</sup> Оранжевая книга, док.15, стр.41; R Davison. Ibid., p 21

<sup>4</sup> Реформы в Армении..., стр. 94.

նում էր Փոքր Ասիայում փոխադարձ շահերի բախման հողի վրա վտանգավոր բարդություններից խուսափելու անհրաժեշտ միջոց<sup>1</sup>:

Մի քանի օր անց, Ա.Նիքոլսոնը տեղեկացնում էր էտտերին, որ արդեն հանձնարարական է ստացել Է.Գրեյից՝ հաղորդել Ռուսաստանի արտգործնախարարին «խորին շնորհակալությունը մեծ բավականութամբ ընդունած տեղեկություն համար»<sup>2</sup>: էտտերը հաղորդում է այս մասին Ռուսաստանի արտգործնախարարությունն՝ ավելացնելով, որ տվյալ պահին Ա.Նիքոլսոնը, նախապես համոզված լինելով Է.Գրեյի համաձայնություն մեջ, հարցում էր կատարում նրան ռուս-գերմանական ծրագրին աջակցելու վերաբերյալ:

Ռուս-գերմանական համագործակցության նկատմամբ Է.Գրեյի «բարյացակամ» վերաբերմունքի մասին էտտերին ավելի ուշ հայտնել էր նաև արտգործնախարարության քարտուղար, արևելյան բաժանմունքի պետ Էյու Քրոուն: Ըստ Է.Քրոուի, Է.Գրեյը Արևմտյան Հայաստանում բարենորոգումների խնդրի բարձրացումը համարում էր այն աստիճան անհետաձգելի, որ վերջին ժամանակները հենց ինքն էր փնտրում հարցի լուծման համար լավագույն ելքը: Այդ իսկ պատճառով, խնդրի լուծման նախաձեռնությունն, ըստ Գրեյի, Հայկական հարցում տվյալ պահին առավել շահագրգռված երկու պետությունների կողմից ստանձնելը ողջունելի էր<sup>3</sup>:

Պարզ չէ, թե որքանով էին իրական Է.Գրեյի, ինչպես նաև արտգործնախարարությունից նման ջերմ տրամադրություններն ու բարյացակամ վերաբերմունքը: Ծիշտ է, անգլիական դիվանագետներն իսկապես կողմ էին խնդրի լուծման որևէ չափավոր տարբերակի և ռուս-գերմանական համագործակցությունը համարում էին խնդրի լուծման գործընթացում ևս մեկ քայլ: Սակայն Է.Գրեյը իր գոհունակություն և ոգևորություն արտահայտմամբ առաջին հերթին ձգտում էր մեղմել Ռուսաստանի դժգոհությունը, որի պատճառն էր Անգլիայի կողմից ցուցաբերած՝ դաշնակցին անհամապատասխան

<sup>1</sup>Оранжевая книга, док. 15, стр. 42; Реформы в Армении..., стр. 95.

<sup>2</sup>АВПР, ф. Политархив, д.3464, л.29.

<sup>3</sup>Там же, л.35.

պատիվությունը: Այսինքն, անգլիացիները, զգացնել տալով Ռուսաստանին, թե ամեն դեպքում պատրաստ էին նրան աջակցել, փորձում էին հավաստիացնել, որ հիշյալ խնդրի լուծմանը պետք է մասնակցեին առավել շահագրգռված տերությունները: Այդպես էին անգլիացիները բացատրում իրենց ակտիվության սահմանափակումը<sup>1</sup>:

Միևնույն ժամանակ Անգլիայի արտգործնախարարությունում տիրում էր այն կարծիքը, որ անհրաժեշտ է վերանայել և հստակեցնել Հայկական վիլայեթներում բարենորոգումներ անցկացնելու վերաբերյալ իրենց տեսակետներն ու վերաբերմունք իրագործությունների դարդացման նոր ընթացքին համապատասխան:

Բարենորոգումների խնդրի հետ կապված Թուրքիայի նկատմամբ դիրքորոշման դրսևորումը տարակուսանք էր առաջացրել Անգլիայի գլխավորապես շրջաններում: Եթե մինչ ռուս-գերմանական համադործակցությունն անգլիացիներն առաջնորդվում էին իրենց առաջարկած երեք պարտադիր պայմաններից ելնելով՝ այն է՝ տերությունների միարանությունը բարենորոգումներ անցկացնելու հարցում, Թուրքիայի կողմից բարենորոգումների նախագծի հոժարակամ ընդունումը և բարենորոգումների շրջանակների համապատասխանեցումը 1895թ. նախագծին, ապա այժմ իրավիճակը փոխվել էր: Կ.Պոլսի անգլիական դեսպանության ներկայացուցիչների կարծիքով՝ այդ պայմաններն ուղղակի բարդացրել ու ավելի խճճել էին խնդիրը: Արտգործնախարարության առաջին քարտուղար Հ.Նորմանը, հաշվի առնելով նաև դեսպանության նկատառումները, առաջարկում էր հրաժարվել վերը նշված պայմաններից:

Հ.Նորմանը համարում էր, որ երրորդ պայմանից հրաժարվելու դեպքում անգլիացիները «խղճի ոչ մի խայթ չպետք է զգան»<sup>2</sup>, քանի որ հենց թուրքերը բարենորոգումների իրենց առաջարկած նախածում ավելի հեռու էին գնացել 1895թ. նախագծից: Երկրորդ պայմանի հետ կապված՝ Հ.Նորմանը այժմ չէր առարկում Թուրքիայի նկատմամբ գործադրվելիք հարկադրանքի հավանականության դեմ, եթե, իհարկե, բոլոր տե-

<sup>1</sup>BDOW, vol.10, N 568.

<sup>2</sup>Նույն տեղում, N 567, Minute

րությունները կողմ լինեին դրան և նրանց միջև կերտվելիք հարկադրության միջոցների շուրջ համաձայնություն հաստատվեի: Ինչ վերաբերում էր առաջին պայմանին՝ տերությունների միաբանությանը, ապա, ըստ Հ.Նորմանի, այն կարելի էր շրջանցել, քանի որ «դա ոչ այլ ինչ էր, քան տափակաբանություն և դրանից հրաժարվելու ձևը հենց սվյալ խնդրի քննարկումներից իսպառ հրաժարվելն էր»<sup>1</sup>:

Անգլիայի արագործնախարարությունում ստույգ գործելակերպ դեռ ձևավորված չէր: Այդուհանդերձ անգլիական կառավարությունն իր համաձայնությունն էր հայտնում Ռուսաստանի կառավարությանը Բ. Դուան առաջ պաշտպանել Կ. Պոլսում ռուսական և գերմանական դեսպանների կողմից մշակված բարենորոգումների ծրագիրը<sup>2</sup>: Ընդ որում, արագործնախարարության ղեկավարներն ամենևին էլ չէին կարծում, որ Անգլիայի և Ֆրանսիայի կողմից ռուս-գերմանական ծրագրին տված համաձայնությունը կարող էր նպաստել դրա ընդունմանը թուրքական կառավարության կողմից :

Ռուս-գերմանական ծրագիրը դիմադրության հանդիպեց առաջին իսկ քայլից, երբ ռուսական դեսպան Գիրսը մասնավոր դրությամբ Մեծ վեզիր Սաիյ Հալիմին հանձնեց ծրագրի վեց կետերը<sup>3</sup>: Այլ կերպ, ըստ երևույթին, չէր էլ կարող լինել: Գերմանիան Ռուսաստանի հետ համաձայնության գալու հետ մեկտեղ խրախուսում էր Բ. Դուանը և դրդում նրան հրաժարվել անդամ ամենասահմանափակ բարենորոգումներից: Թուրքերը ոգևորված էին Գերմանիայի այն հայտարարությամբ, թե «Եվրոպան Թուրքիայի նկատմամբ ոչ մի հարկադրական միջոցի չի դիմելու, այդ իսկ պատճառով էլ անհրաժեշտ էր նրան առաջարկել բարենորոգումների այն ծրագիրը, որ Թուրքիան կընդուներ կամովի»<sup>4</sup>: Թուրքիան քաջալերվել էր Գերմանիայի դեսպանի հայտարարությունից, թե Հայկական հարցի միջազգայնացումն իրական բարիք է Թուրքիայի համար, որովհետև Ռուսաստանն այդ խնդրում այլևս Թուրքիայի նկատմամբ չէր կարող դիմել բռնի միջոցների՝ առանց նա-

<sup>1</sup>BDOW, vol.10, N 567.

<sup>2</sup>Նույն տեղում, N 567; АВПР, ф Политархив, д.3464, л.55.

<sup>3</sup>ՀԱԱ, ֆ. 133, ց.3, գ.1011, ք.14; Оранжевая книга, док.16, стр.42.

<sup>4</sup>Реформы в Армении..., стр. 89-90.

խօրոք համաձայնեցնելու մյուս տերությունների հետ<sup>1</sup>: Հիշենք, որ նմանատիպ հայտարարություններ էին անում նաև Անտանտի պետությունները<sup>2</sup>:

Թուրքերն իրենց դիմադրելու ընդունակ էին համարում, քանի որ օգտվում էին Գերմանիայի հովանավորությունից և տվյալ շրջանում Անգլիայի և Ֆրանսիայի հաշվարկված պատվությունից: Թուրքերի ոգևորությունն ու դիմադրության ոգին բացատրվում էր նաև Բալկանյան Երկրորդ պատերազմում ունեցած հաջողությամբ՝ Ադրիանապոլսի վերագրավմամբ<sup>3</sup>:

Այսպիսով, ինչպես հայտնում էր Կ.Պոլսից Չ.Մարլինգը, Մեծ վեզիրը դրական կարծիք էր հայտնել ռուս-գերմանական ծրագրի կապակցությամբ, սակայն դա դեռ սչինչ չէր նշանակում: Մեծ վեզիրի ազդեցությունը ներկա կառավարության վրա մեծ չէր և Չ.Մարլինգի կարծիքով, դժվար թե նման հեռահար նախագիծն ընդունվեր թուրքական կառավարության կողմից առանց տերությունների հղոր և միահամուռ ճնշման գործադրման<sup>4</sup>: Սակայն, ըստ Չ.Մարլինգի, նման ճնշման կողմնակից կլինեն միայն Ռուսաստանը, իսկ Գերմանիան, ինչպես նաև Իտալիան, անպայման կառարկին: Այսինքն, ահնհայտ է, որ անգլիական դիվանագետները համոզված էին նրանում, որ ռուս-գերմանական ծրագիրը նույնպես հաջողություն չէր ունենալու:

Ռուս-գերմանական ծրագրի վերաբերյալ մեծ վեզիր Սաիդ Հալիմի անհամաձայնության հիմնական պատճառը օտարերկրյա վերահսկողությունն էր<sup>5</sup>: Ռուս-գերմանական ծրագրով երկու սեկտորների համար նախատեսված եվրոպացի ընդհանուր վերատեսուչների փոխարեն թուրքերն առաջարկում էին ազգությամբ թուրք վերատեսուչներ: Վերջինների համար թուրքերն առաջարկում էին եվրոպացի խորհրդականներ, որոնք կունենաին լիակատար իրավունքներ: Ընդհանուր վերատեսուչներն ըստ անհրաժեշտության կկատարեն նրանց

<sup>1</sup>Ա.Մանդելշտամ, Ռուսաստանի քաղաքականությունը Թուրքիայում, «Վեմ», 1935, մարտ - ապրիլ, էջ 72:

<sup>2</sup>R.Davison, Ibid., p. 21; Оранжевая книга, стр. 86, 88

<sup>3</sup>BDOW, vo 10, N 567; АВПР, ф. Политархив, д.3465, л.21.

<sup>4</sup>FCO, 195 / 2450 pt.5, p.49.

<sup>5</sup>Ս Լասիպեան, նշվ. աշխ., էջ 31; R.Davison, Ibid., p.21.

խորհուրդները<sup>1</sup>: Խորհրդականների լայն իրավունքների ապահովման հնարավորությունը հաստատելու համար, Սաիդ Հալիմը Մ. Գիրսի հետ ունեցած հանդիպման ժամանակ մատնացույց էր անում Թուրքիայում անգլիական խորհրդականին: Վերջինս ղեկավարում էր Օսմանյան կայսրութայան մաքսատները և միայն անվանապես էր ենթարկվում Թուրքական մաքսային կառավարչին<sup>2</sup>:

Թուրքական կառավարութայան համոզմունքներն ու ձգտումները տվյալ հարցում հնարավորինս բացահայտելու նպատակով, 1913թ. սեպտեմբերի 30-ին Չ. Մարլիգը Կ. Պոլսից անգլիական արտգործնախարարին ուղարկում է «Վիլայեթներ-րի մասին» նոր օրենքում տեղ դրած ապագա վերատեսուչ-ներին վերաբերող իրավասությունների և կարգադրություն-ների պատճեն: Սաիդ Հալիմը պնդում էր, որ Բ. Դուռը չէր կարող բնդունել Եվրոպայի մասնակցությունն ընդհանուր վերատեսուչների նշանակման հարցում: Նա նշում էր, որ ամբողջ կայսրութայան տարածքում անհրաժեշտ բարենորոգում-ների շտապիտույթ իրագործման համար Թուրքական կառավարությունը հույս ուներ ամենաընդարձակ կերպով օգտվել մեծ տերությունների բազմիցս խոստացած բարոյական և նյութական օժանդակությունից և պատրաստվում էր դիմել նրանց՝ խնդրելով տրամադրել մասնագետներ, որոնց աջակցութայան կարիքը Թուրքիան զգում էր<sup>3</sup>:

Նույն ժամանակում, երբ մեծ վեզիրը հանդիպում և բանակցում էր ռուսական դեսպանի հետ, ծանոթանում բարենորոգումների ռուս-գերմանական ծրագրին, Թուրքական կառավարությունը կրկին դիմում է իր ավանդական և փորձված խարդավանքին, նպատակ ունենալով. 1/ եթե ոչ իսպառ տապալել, ապա գոնե հետաձգել, խճճել բարենորոգումների խնդրի լուծումը, 2/ տարաձանություններ առաջացնելով, լարվածություն ստեղծել տերությունների միջև: Այսինքն, օգտվելով Եվրոպային դիմելու դադափարից, Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալիաթը դիմում է անգլիացիներին նոր

<sup>1</sup>Реформы в Армении..., стр.99.

<sup>2</sup>Там же, стр.101; Оранжевая книга, док.16, стр.44; АВПР, ф.Политархив, д. 34-64, л. 71.

<sup>3</sup>FO, 195 / 2450, pt.4, p 31.

<sup>4</sup>Реформы в Армении..., стр.100.

առաջարկուեթյամբ<sup>1</sup>: 1913թ. հոկտեմբերի 6-ին Թալեաթը զրույցի հրավիրելով Թուրքական կառավարության ֆինանսների և մաքսային նախարարության անգլիացի խորհրդական Ռիչարդ Քրոուֆորդին (Richard Crowford) և Թուրքական կառավարությանն առընթեր ծառայող Ռոբերտ Գրեյվսին (Robert Graves), առաջարկում է նրանց «Հյուսիս-արևելյան Անատոլիայի երկու սեկտորների համար նախատեսվող ընդհանուր վերաատեսուչների պաշտոնները»<sup>2</sup>: Թուրքերը հասկապես ձգտում էին օգտվել Ռ.Քրոուֆորդի ծառայություններից: Նրա աշխատանքը մաքսատանը գնահատվում էր Թուրքամես<sup>3</sup>:

Թուրքական առաջարկությունը, սակայն, ողևորություն չհառաջացրեց ոչ նշված անգլիացի պաշտոնյաների մոտ, ոչ էլ Անգլիայի արտգործնախարարությունում: Ռ.Քրոուֆորդը կարուկ հրաժարվել էր առաջարկությունից, պատճառաբանելով, թե ինքը Թուրքերեն վատ է տիրապետում և անտեղյակ է նահանգների վարչական խնդիրներին: Ինչ վերաբերում էր Ռ.Գրեյվսին, ապա նա մերժումը հիմնավորում էր իր նշանակման դեմ լուրջ առարկումների կանխատեսմամբ: Ռ.Գրեյվսը բացատրում էր Թուրքիայի ներքին գործերի նախարարին, որ տվյալ պարտականությունը բնորոշ զժվարություններին բացի, չէր կարելի անտեսել այն միջազգային նախանձախնդրությունն ու կասկածները, որ կարող էր առաջացնել իր նշանակումը: Ռ.Գրեյվսը նաև նշում էր, որ Թուրքերը պետք է չմոռանային այն հանգամանքը, որ ինքն ընդամենը անգլիացի ծառայող էր, որը ժամանակավորապես գործուղվել էր Թուրքիա՝ ֆինանսական, ոչ թե քաղաքական ասպարեզում աշխատելու համար և չէր կարող ստանձնել առաջարկված պաշտոնը առանց իր կառավարության Թուլլովություն և հաստատման:

Թուրքիայի ներքին գործերի նախարարն առաջարկում էր Ռ.Գրեյվսին ղիմկ անգլիական կառավարությունը՝ նոր լիազորություններ ստանալու նպատակով և ավելացնում էր իր նոր դատողություններն ու եզրահանգումները՝ կապված

<sup>1</sup>R.Davison, Ibid., p.22; B.DOW, vol.10 N 569.

<sup>2</sup>J.Heller, Ibid., p.14.

<sup>3</sup>Ph.Graves, Ibid., p.136; R.Davison, Ibid., p. 22.

Ռ.Քրոուֆորդի մերժման հետ: Ըստ Թալեաթի, քանի որ Քրոուֆորդը հրաժարվել էր արած առաջարկից, ապա կարելի էր լիովին բավարարվել միայն մեկ սեկտորով: Ռ. Գրեյվսին նոր պաշտոն առաջարկելու կապակցությամբ Թալեաթը դիմում էր անգլիական կառավարությանը նաև անգլիացի Ռ. Գրեյվսի փոխարեն նոր ծառայող Թուրքիա գործուղելու խնդրանքով՝ Ֆինանսների հանձնաժողովում աշխատելու համար<sup>1</sup>:

Իհարկե, Անգլիան ամենևին դեմ չէր լինի ուսագերմանական ծրագրի հաստատման ղեկգրում ընդհանուր վերատեսուչների պաշտոններում անգլիացիների նշանակմանը: Սակայն տվյալ պահին, երբ Թուրքերն ընդհանրապես դեմ էին ընդհանուր վերատեսուչի պաշտոնին, Թուրքերի կողմից կատարված վերատեսուչների վերաբերյալ առաջարկը չէր կարող առաջացնել Անգլիայի արտգործնախարարության ոգևորությունն ու կասկածների հիմք էր հանդիսանում: Պատճառները բավականին շատ էին: Ստեղծված իրավիճակի վերլուծությունը Թուրքի տալիս եզրակացնել, որ անգլիական կառավարության կողմից առաջարկի մերժումը հետևյալ լուրջ հիմքերը ուներ.

1. Ինչպես հայտնում է Չ.Մարլինգը Կ.Պոլսից, նշված առաջարկություններն անգլիացիներին դիմելու նախաձեռնողը Կ.Պոլսի գերմանական ղեկավարն էր<sup>2</sup>: Այդ եզրակացությունն էր հանդել նաև Ռ.Գրեյվսը Թալեաթի հետ զրույցներից հետո: Գերմանական ղեկավարն այդ կերպ փորձում էր տարածանություններ առաջացնել Անգլիայի և Ռուսաստանի միջև ու սահմանափակել արդեն համաձայնեցված բարենորոգումների ծրագիրը<sup>3</sup>: Թուրքիայի առաջարկը մի նոր խնդիր էր դնում անգլիական կառավարության առջև: Բ.Դուան կողմից անգլիացի ներկա պաշտոնյաներին բարձր պաշտոններ առաջարկելն անպայման կհարուցեր մյուս տերությունների, հատկապես Ռուսաստանի կասկածներն ու ղեգոհությունը: Անգլիացիներն աշխատում էին ամեն կերպ խուսափել Ռուսաստանի հետ ընդհարվելուց և ելնելով դրանից չէին ընդունում

<sup>1</sup>FO, 195 /2450, pt. 5, p.72: BDOW, vol.10, N 569.

<sup>2</sup>BDOW, vol.10, N 569.

<sup>3</sup>J.Heller, Ibid., p.15.

Թուրքիայի կողմից կատարված միակողմանի առաջարկը: Դա վկայում է է. Գրեյը: Նա նշում էր, որ անգլիացիներն. «արդեն խոսք են տվել դառնալ ռուսգերմանական համաձայնությամբ կազմված ծրագրի աջակիցը, որն ընդունվել է նաև մյուս տերությունների կողմից և այժմ չեն կարող գործել այդ ծրագրից դուրս և անկախ»<sup>1</sup>:

2. ըստ Չ.Մարլինգի դիտարկումների, իշխանության այն շրջանակները, որոնք համաձայն թուրքական առաջարկի հատկացվում էին Գրեյվսին, ավելի սահմանափակ էին, քան այն, որ տրվելու էր ընդհանուր փերատեսուչներին՝ համաձայն ռուսական ծրագրի:

3. բացի վերը նշված հանգամանքից՝ փերատեսուչի իշխանության և դիրքի թուլացման, Թալեաթի առաջարկությունը, փաստորեն, լրացուցիչ նորամուծություն էր նախատեսում կապված ընդամենը մեկ ընդհանուր փերատեսուչի նշանակման հետ: Սա այն առաջարկը չէր, որի համար պայքարում էր Ռուսաստանը՝ Հայկական բոլոր վեց վիլայեթներից կազմել մեկ սեկտոր, մեկ ընդհանուր փերատեսուչի հետ միասին: Թալեաթը պարզապես առաջարկում էր բարենորոգումների ծրագրից դուրս թողնել երկու սեկտորներից մեկը<sup>2</sup>: Թուրքիայի ներքին գործերի նախարարը գտնում էր, որ մասնավորապես Սերաստիայի նահանգը կարելի էր ամբողջովին դուրս թողնել բարենորոգումների իրագործման սահմաններից:

4. Անգլիայի կողմնորոշման համար մեծ դեր խաղաց նաև մեկ այլ հանգամանք: 1913թ. հոկտեմբերի 7-ի հեռագրում Չ.Մարլինգը անդեկացնում էր արտգործնախարարությանը, թե Գերմանիան և Ավստրո-Հունգարիան ցանկանում էին իրենց ներկայացուցիչներն ունենալ թուրքական կառավարությանն առնթիր ֆինանսական հանձնաժողովում: Չ.Մարլինգը անդեկացնում էր, որ արդեն բարձրացվում էր մաքսային վարչությունում Գերմանիայի ներկայացուցչի նշանակման հարցը<sup>3</sup>:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ հայկական վիլայեթներում անգլիացիներին պաշտոններ առաջարկելով, դեր-

<sup>1</sup>BDOW, vol.10, N 569, Minute

<sup>2</sup>Նույն տեղում:

<sup>3</sup>FO, 195 / 2450, pt.5, p.74

մանացիները նպատակ ունենին Թուրքիայի Ֆինանսների և մաքսային ասպարեզում, որտեղ շատ կարևոր էր օտարերկրյա ազդեցությունը, ազատվել երկու անգլիացի ծառայողներից և նրանց թափուր տեղերում տեղափոխել Գերմանիայի ներկայացուցիչներին: Իսկ անգլիական ծառայողների նոր նշանակման արդյունքը անպայման բացատսական կլիներ անգլիացիների համար: Փաստորեն անգլիացիները կտեղափոխվեին մի այնպիսի ոլորտ, ուր, անկասկած, կհանգիստեին բազմաթիվ դժվարությունների, որոնք էլ իրենց հերթին կրեռեին Ռուսաստանի հետ հարաբերությունների վատթարացմանը<sup>1</sup>:

Անգլիական գիվանագետներն էլքը տեսնում էին հետևյալ որոշման մեջ. անպայման տեղեկացնել ռուսական կառավարությանը Թուրքիայի առաջարկի մասին:

1913թ. հոկտեմբերի 14-ին Չ.Մարլինգը տեղեկացնում է Բ. Դոանը իր կառավարության մերժման որոշման մասին: Ինչպես նախորդ առաջարկությունների դեպքում, Չ.Մարլինգը կրկին բացատրում է, որ անգլիական կառավարությունը չի կարող մյուս տերություններից անկախ, միակողմանի համաձայնություն կնքել Թուրքիայի հետ, քանի որ տվյալ վիլայեթների բարենորոգումների խնդիրն ամբողջությամբ քննարկվում էր բոլոր տերությունների կողմից: Մարլինգն ավելցնում էր նաև, որ բարենորոգումների ծրագրի շուրջ որոշակի և ընդհանուր համաձայնության ակնկալման իրավիճակում անգլիացի ծառայողներ Ռ. Բրոուֆորդն ու Ռ. Գրեյվսը չէին կարող լիազորվել ստանձնելու առաջարկված պաշտոնները<sup>2</sup>:

Անհրաժեշտ էր նշել նաև այն հանգամանքը, ինչն անբարենպաստ տալափորություն էր թողել Անգլիայի արտգործնախարարության վրա: Անգլիացիները թուրքական կառավարությանն իրենց որոշման մասին տեղեկացնելիս պարզեցին, որ Մեծ վեդիր Սայիդ Հալիմը տեղյակ չէր Թալեաթի կողմից իրենց արված առաջարկի մասին<sup>3</sup>: Դա վկայում էր, որ Մեծ վեդիրի սպեցիալությունը թուրքական կառավարությունում, մեղծ

<sup>1</sup>J.Heller, Ibid., p. 15; BDOW, vol 10, N 569.

<sup>2</sup>FO, 195 / 2450, pt.5, pp.78, 80; BDOW, vol.10, N 570.

<sup>3</sup>J.Heller, Ibid., p.25.

ասած, աննշան էր<sup>1</sup> և ընդհանրապես կասկածելի էր դառնում նրա դերը կառավարութունում: Կարելի էր նզրակացնել, որ անկախ նրանից կհամաձայնե՞ր Մեծ վեղիրը բորենորոգումների ուս-գերմանական ծրագրի հետ, թե ոչ, ծրագրի ընդունումը կախված էր միայն կառավարութունից, իսկ ավելի ճիշտ՝ արդեն ձևավորված էնվիր, Թալեաթ և Ջեմալ եռիշխանութունից: Վերջիններս 1913թ.հունիսին սպանելով Մեծ վեղիր Շեքեթ փաշային, իշխանութունը կենտրոնացրել էին իրենց ձեռքում, հաստատելով ռազմակուսակցական դիկտատուրա<sup>2</sup>:

Վերը նշվածից պարզ է, որ թեպետև հոկտեմբերի վերջին Մեծ վեղիրը արդեն պատրաստ էր ծրագրի մեջ խորհրդականների և վերատեսուչների հետ կապված փոփոխութուններ կատարելու դեպքում զբաղված կարծիք հայտնել բարենորոգումների ծրագրի ընդունման վերաբերյալ<sup>3</sup>, դեռ հիմք չկար հուսալու, թե հնարավոր կլինե՞ր մի համաձայնութուն կայացնել, որն ընդունելի լինե՞ր և Թուրքիայի, և հայերի համար:

Թալեաթն իր հուշերում գրում է, որ բարենորոգումների ծրագրերի ուս-թուրքական քննարկումների ժամանակ ինքր հայկական վիլայեթների համար բարենորոգումներին դեմ էր քվեարկել: Նա անընդմեջ կրկնում էր, որ հայերը արևելյան նահանգներում փոքրամասնութուն էին կազմում և այդ իսկ պատճառով բարենորոգում անցկացնելու ոչ մի անհրաժեշտութուն չկար<sup>4</sup>: Ինչպես նշում էր Մ.Գիրսը 1913թ. հոկտեմբերի 16/29-ին արտգործնախարար Ս.Սաղոնովին ուղղված հեռագրում. «Ընդհանրապես թուրքերը ձգտում էր թաղել Հայկական հարցը»<sup>5</sup>: Եվ իսկապես, առջևում ուստական գեոպան Մ.Գիրսի և Մեծ վեղիր Սաիգ Հալիմի միջև երկարատև և փաստորեն ոչ արդյունավետ բանակցութուններն էին:

Այսպիսով, հաջողությամբ չավարտված ուս-գերմանական բանակցութուններին հաջորդեցին ուս-թուրքական

<sup>1</sup>Оранжевая книга, док. 25, стр. 67.

<sup>2</sup>Дж.Киракосян, Младотурки перед судом истории, Е., 1989, стр. 110.

<sup>3</sup>ВДОУ, N 573; АВПР, ф.Политархив, д.3464, л. 48.

<sup>4</sup>Е.К.Саркисян, Армянский вопрос в Россия в 1912-1914гг., «Պատմա-բանասիրական հանդես», 1995, N 1, էջ 122:

<sup>5</sup>Реформы в Армении..., стр.102; Оранжевая книга, док. 17, стр.45.

բանակցությունները հայկական վիլայեթներում բարենորոգումներ անցկացնելու հարցի շուրջ: Ռուս-գերմանական բանակցությունների ընթացքում Անգլիայի ոչ ակտիվ դիրքորոշումն իրականում Հայկական հարցի նկատմամբ անտարբերության արտահայտում չէր: Այն, ուղղակի, Անգլիայի մերձավոր արևելյան քաղաքականության դրսևորումներից մեկն էր:

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՌՈՒՍ - ԹՈՒՐՔԱԿԱՆ ԲԱՆԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԸՆԹԱՑՔՈՒՄ /1913թ. ՀՈԿՏԵՄԲԵՐ - 1914 ՀՈՒՆՎԱՐ/ :  
ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ 1914թ. ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի  
ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐԸ

1913թ. հոկտեմբերի վերջերին Գերմանական կառավարութիւնը դադարեց անմիջական մասնակցութիւն ցուցաբերել Արևմտյան Հայաստանի համար բարենորոգումների ծրագրի քննարկումներին: Բանակցութիւնների նոր փուլ էր սկսվել Ռուսաստանի դեսպան Մ.Գիրսի և Մեծ վեզիր Սաիդ Հալիմի միջև: Սակայն Մեծ վեզիրի կողմից ուս.գերմանական ծրագրում կատարված փոփոխութիւններն ու առաջարկութիւնները պաշտոնական ուժ չունեին<sup>1</sup>: Այդ իսկ պատճառով, երկարաձիգ ամիսների բանակցութիւնները կարելի է համարել ասպարդյուն: Բանակցութիւնների բնթացքում ուսական հյուպատոսները դեսպան Գիրսին հայտնում էին իրենց կասկածները, թե հնարավոր է՞ր հաստատել բարենորոգումների այնպիսի մի ծրագիր, որը միաժամանակ կբավարարեր և՛ թուրքերին, և՛ քրդերին, և՛ հայերին<sup>2</sup>:

Մինչդեռ արևմտահայութեան վիճակը շարունակում էր մնալ չափազանց ծանր: Օր-օրի աճում էր դժգոհութիւնն ու լարվածութիւնը քրդական շրջաններում: Նրանք կտրակասնապէս դեմ լինելով հայերի օգտին ցանկացած բարենորոգման ոչ միայն շարունակում էին ճնշել հայերին, այլև զինված ապստամբութեան էին պատրաստում կառավարութեան դեմ<sup>3</sup>:

Արևմտահայութեան անպաշտպանվածութիւնն ու անմխիթար վիճակը պատճառ դարձավ արտագաղթի նոր ալիքի: Էրզրումի անգլիական հյուպատոս Մոնահեմը (Monaham) 1913թ. հոկտեմբերին Չ.Մարլինգին տեղեկացնելով գաղթողնե-

<sup>1</sup>Оранжевая книга, док.17, стр. 45; Реформы в Армении..., стр.102.

<sup>2</sup>РГВИА, ф. 450, оп.1, д.150, л.1.

<sup>3</sup>“Кавказ”, 1913, 21 сентября, N 215; 3 ноября, N 252.; Վ.Ա. Բայրուրտյան, Հայկական բարենորոգումների խնդիրն Արևմտյան Հայաստանում և հայքրդական հարաբերությունները, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1986, N 1, էջ 58-59:

րի թվաքանակի մասին նշում էր, որ «հենց թուրքական կառավարութիւնն էր նպաստում հայերի գաղթին»<sup>1</sup>:

Հուսալքված արեւմտահայութեանը ոգեշնչելու համար, 1913թ. աշնանը կոչով հանդես եկավ պատրիարք Զավեն արքեպիսկոպոս Եղիայանը<sup>2</sup>: Դիմելով հայ ժողովրդին հոգեւոր առաջնորդը կոչ էր անում այդ դժվարին պահին, երբ ավարտված էր այն գործը, որ պիտի հային ազատ կյանք ապահովել, երբ կարիք կար մեծ ճիգերի և զոհողութիւնների, գործադրել բարոյական և մտավոր բոլոր կարողութիւնները և հրաժարվել վեճերից, ետսիրական ձգտումներից, երկպառակտումներից: Նա նշում էր, որ հաջողութեան հասնելու պայմանը համազգային համագործակցութիւնն ու համերաշխութիւնն էր:

Միևնույն ժամանակ 1913 հոկտեմբերին, թուրքիայում գործող բոլոր հայ ազգային կուսակցութիւնները՝ Հ.Յ.Դաշնակցութեան Արեւմտյան բյուրոն, Ս.Դ.Հնչակյան կուսակցութեան Տաճկական կենտրոնը, Սահմանադրական Ռամկավարների Կենտրոնական Ակումբը, Վերակազմյալ Հնչակյան Կենտրոնի Վարչութիւնը գիտակցելով քաղաքական բոլոր ուժերի ներդաշնակ գործունեութեան կարևորութիւնը, համաձայնութիւն կնքեցին<sup>3</sup>: Միջկուսակցական այդ համերաշխութեան նպատակն էր բոլոր ուժերը ի սպաս դնել հայկական բարենորոգումներին, ծառայել հայ ժողովրդին: Չնայած այդ համաձայնութիւնն ամուր հիմք չգարձավ կուսակցութիւնների միջև փոխպատահութեան հաստատման և համագործակցութեան համար, նշված ժամանակահատվածում կուսակցութիւնները փորձում էին համախմբել արեւմտահայութեանը: Նրանք հույս ունեին, որ սկսված բանակցութիւնները կավարտվեն եվրոպական հսկակշռով ապահովված բարենորոգումների հաստատմամբ:

Սակայն, երիտթուրքական կառավարութիւնը, դեմ լինելով եվրոպական հսկողութեանը, շարունակում էր ձգձգել բարենորոգումների խնդրի լուծումը: Իրենց դիվանագիտական խաղերով երիտթուրքերը ձգտում էին միևնույն ժամանակ

<sup>1</sup>FO, 195 / 2450, pt 6, p 9.

<sup>2</sup>ԳԱԹ, Ենովք Արմենի ֆոնդ, գ.1351, ք.1:

<sup>3</sup>Գ.Լագեան, Հայաստանը և հայ դատը ըստ դաշնագրերու, Գահիրե, 1942, էջ 141-142:

բարեկամի հարաբերությունները մեծ տերություններից յուրաքանչյուրի հետ և հակադրել վերջիններին Հայկական հարցում:

Այդ ընթացքում Թուրքիայի իշխանավորները նորանոր առաջարկություններ էին հղում անգլիական կառավարութայնը: Թուրքերը բացատրում էին այդ քաղաքականությունը նրանով, որ ցանկանում էին ստեղծված՝ ռուս-գերմանական, ռուս-թուրքական բանակցությունների պայմաններում լավ հարաբերություններ պահպանել Անգլիայի և Ֆրանսիայի հետ: Նրանք ճգնում էին համոզել այդ տերությունների կառավարություններին, թե իրենց գլխավոր նպատակն էր հայրենիքի բարեկեցության բարձրացումը և ռուսական վտանգից անջրպետվելը<sup>1</sup>: Երիտթուրքերի պարագլուխները շարունակում էին խուսանավել եվրոպական տերությունների դեսպանների հետ ունեցած զրույցներում, ձգտելով սուլթանական հին ձևերով մի կերպ պահպանել ոչ կայուն հավասարակշռությունը<sup>2</sup>:

1913թ. հոկտեմբերի 17-ին Չ.Մարլինգը տեղեկացնում էր է.Գրեյին, որ թուրքական կառավարությունը մտադրվել է Հայաստանում ժանդարմերիայի տեսչի պաշտոնին նշանակել անգլիացի գնդապետ Ք.Ջ.Հոուքերին (C.J.Hawker)<sup>3</sup>: է.Գրեյն իր պատասխանում նշում էր, որ Թուրքիայի համար ավելի լավ կլիներ տերությունների հետ բարենորոգումների ծրագրի քննարկման ընթացքում ոչ մի նոր նշանակումներ չկատարել: Սակայն անգլիացիների խորհուրդն անտեսվեց: Դեռ ավելին, Կ.Պոլիս ժամանած նոր դեսպան Լ.Մայլեթը հոկտեմբերի 31-ին հաղորդում էր արտգործնախարարութայնը թուրքերի մեկ այլ առաջարկության մասին ևս: Թուրքական կառավարությունը պատրաստվում էր Ռ.Բրոուֆորդին առաջարկել նախագահի պաշտոն ոչ պաշտոնական մի հանձնաժողովում, որը կոչված կլիներ աջակցել բարենորոգումների թուրքական ծրագրի մշակման գործին<sup>4</sup>:

<sup>1</sup> Джемаль паша, Записки..., стр.81.

<sup>2</sup> Д.ж. Куркосян, Младотурку..., стр.151.

<sup>3</sup> BDOW, vol. 10, N 577.

<sup>4</sup> Նոյն տեղում, N 573

Առաջարկը հրապուրելիչ էր և շահավետ, քանի որ թուրքական կառավարութունը լիովին համոզված լինելով Քրոուֆորդի որակավորման մեջ և մեծ վստահություն ունենալով նրա նկատմամբ, հակված էր անմիջապես ընդունել նրա խորհուրդերն ու առաջարկները: Անգլիական դիվանագետները՝ ցանկության և անհրաժեշտության դեպքում, կարող էին օգտագործել այս հանգամանքը: Բացի այդ, Քրոուֆորդի կարծիքով այս անգամ նա չէր կարող հրաժարվել, քանի որ առաջարկած նոր ծառայությունն ընդգրկելու էր բազմաթիվ տնտեսական և ֆինանսական հարցերի կարգավորում:

Անգլիայի արտգործնախարարութունը կրկին մտահոգված էր: Անգլիան, փաստորեն, կրկին կանգնած էր Հայկական հարցի մեջ ուղղակիորեն ներքաշվելու փաստի առջև<sup>1</sup>: Հայկական միլիայեթների համար բարենորոգումների խնդրի զարգացման տվյալ փուլում դիտորդի դերը լիովին համապատասխանում էր Անգլիայի հետաքրքրություններին: Ընդ որում, այդ «դիտորդը» պատրաստակամություն էր ցուցաբերում մյուս տերությունների կողմից մշակված՝ Անգլիայի շահերին չհակասող ծրագրի պաշտպանության հարցում: Այդ առերևույթ պասիվությունը երևում է Կ.Պոլսում գերմանական դեսպան Վանդենհայմի՝ Գերմանիայի պետքարտուղարի օգնական Յիմերմանին ուղղված այն հաղորդագրությունից, թե 1913թ. հոկտեմբերի վերջերին, «Ռուսաստանից բացի թուրքիային փաղաքշանքով էին շրջապատում նաև Ֆրանսիան, Ավստրո-Հունգարիան և Իտալիան: Միայն Անգլիան էր, որ կարծես թե հեռացել էր բեմից»<sup>2</sup>:

Անգլիայի կառավարության համար դեսպան Լ.Մալլեթի առաջարկն, իսկապես, հիանալի էր թվում: Սակայն արտգործնախարարության դիրքորոշումն այլ էր: Նրանք կարծում էին, որ Քրոուֆորդի նշանակումը նշված հանձնաժողովում կարելի էր հաստատել միայն այն դեպքում, եթե Բ.Պուռն ընդուներ ռուս-գերմանական ծրագիրը<sup>3</sup>: Ինչպես ենթադրում էին անգլիական դիվանագետները, տվյալ ոչ պաշտոնական հանձնաժողովը կոչված էր ռուս-գերմանական ծրագրի մեջ մտցնել

<sup>1</sup>FO, 195 /2450, pt. 5, p.80; J.Heller, Ibid., p.16.

<sup>2</sup>Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919), стр.128.

<sup>3</sup>BDOW, vol.10, NN 573, 574, 575.

որոշ, ոչ շատ կարևոր փոփոխություններ, որպեսզի հետո այդ ծրագիրը թուրքերի կողմից ներկայացվեր որպես իրենց սեփական ծրագիր: Այս դեպքում Քրոտուֆորդի նշանակումը որպես նախագահի մեծ առավելություններ կտար անգլիական կառավարութայնը: Սակայն, եթե թուրքերին նպատակ ուներ մերժել ուսուցիչական ծրագիրը և անդրադառնար մեկ այլ՝ ոչ գործնական ծրագրի, որը չէր հաստատվի ո՛չ Ռուսաստանի, ո՛չ էլ Անգլիայի կողմից, ապա ցանկալի չէր լինի, որ նման ծրագիրը նեկայացվեր Քրոտուֆորդի պատասխանատվութայն ներքո: Բացի այդ, Քրոտուֆորդի նշանակումը կարող էր դիտվել որպես միակողմանի գործողություն Անգլիայի կողմից և հանգեցնել լուրջ բարդությունների:

Ելնելով նշված հանգամանքներից, Անգլիայի արտգործնախարարությունը որոշեց հրաժարվել Բ. Դուան առաջարկությունից<sup>1</sup>: Նկատի առնելով, որ բարենորոգումների խնդրի հետ կապված նախաձեռնությունները գտնվում էր Ռուսաստանի և Գերմանիայի ձեռքին, արտգործնախարարությունում հարմար էին գտնում ետ կանգնել և հրաժարվել թուրքիքայի վարչական համակարգի վերակառուցման հետ կապված ցանկացած առանձին գործողությունից:

Անգլիացիներն իրենց որոշման մասին տեղեկացնում էին նաև ուսսական, գերմանական ու ֆրանսիական կառավարություններին: Նրանք ձգտում էին հավաստիացնել, թե Անգլիայի «ամենամեծ ցանկությունն էր ի վերջո լուծել Արևմտյան Հայաստանի բարենորոգումների խնդիրը»<sup>2</sup>: Է. Գրեյը կարծես թե բողոքելով, նշում էր, որ թուրքական կառավարությունը անընդմեջ առաջարկություններ էր անում անգլիացիներին՝ տարբեր բնագավառներում անգլիական ծառայողներ վարձելու համար: Անգլիայի արտգործնախարարը հավաստիացնում էր, որ ինքը զեմ է ցանկացած միակողմանի քայլերի և այդ իսկ պատճառով կոչ էր անում չհետաձգել Արևմտյան Հայաստանում բարենորոգումների անցկացումը: Քանի որ Գերմանիան ու Ռուսաստանն էին ներկայացնելու բարենորոգումների ծրագիրը մեծ վեղիրին, ապա Անգլիայի կարծիքով, հենց նրանք էլ պետք է պահանջեին Բ. Դուից հան-

<sup>1</sup>FO, 195 /2450, pt. 6, p.80; BDOW, vol.10, N 574; J.Heller, Ibid., p. 16.

<sup>2</sup>FO, 195 /2450, pt.6, p.80; BDOW, vol.1, N 575.

դեռ գալ իր իսկ ծրագրի հետ կապված առաջարկությամբ<sup>1</sup>: Անգլիայի նման «Հոգատար» քայլին հետևում է ուսական կառավարության շնորհակալագիրն Անգլիային՝ թուրքական առաջարկին ցուցաբերած վերաբերմունքի համար<sup>2</sup>:

Թուրքիան, անտեղյակ լինելով անգլիական կառավարության որոշմանը, 1913թ. նոյեմբերի սկզբին նոր նշանակում էր կատարել: Գնդապետ Հոուքերը նշանակվել էր հայկական վիլայեթների ժանդարմերիայի տեսչական կոմիտեի նախագահ: Նրան լայն լիազորություններ էին տրվել<sup>3</sup>:

Հոուքերի նշանակման կապակցությամբ է. Գրեյը Լ.Մալլեթին կարգադրում է. 1/ մեկ անգամ ևս խորհուրդ տալ Բ.Դոանը ժամանակավորապես հետաձգել վարչական փոփոխությունները, 2/ մանրամասն տեղեկացնել գնդապետ Հոուքերին անգլիական կառավարության տեսակետներին<sup>4</sup>:

Արագործնախարարության կողմից Լ.Մալլեթին հանձնարարվում է Բ.Դոանը ներկայացնել նաև անգլիական կառավարության ցանկությունը՝ որքան հնարավոր է շտապ հաստատել բավարար ծրագիր հայկական վիլայեթների համար: Անգլիական կառավարությունը հուսով էր, որ Թուրքիայի կողմից ուս-գերմանական ծրագիրը լուրջ քննարկման կենթարկվեր, քանի որ նման ծրագրի ընդունումը մեծապես կամրայններ օսմանյան կառավարության դիրքերը և կպահպաներ Ասիական Թուրքիայի ամբողջականությունը: Միաժամանակ անգլիական կառավարությունը տեղեկացնում էր, թե պատրաստ է հնարավորությունների սահմաններում աջակցել Բ.Դոանը, սակայն գժվարություններ էր կանխատեսում թուրքական կառավարության համար, եթե տվյալ պահին նա առաջ քաշեր նոր, անկախ ծրագիր: Ավելին, եթե այդ ծրագրի իրագործման համար թուրքերը նախատեսել էին դիմել միայն անգլիացիներին օգնությանը, ապա այդ դեպքում տարածայնություններ կառաջանային Անգլիայի և մյուս տերութ-

<sup>1</sup>Նույն տեղում:

<sup>2</sup>BDOW, vol.10, N 576.

<sup>3</sup>Armenia: Political and Ethnic Boundaries 1878-1948, p.317; BDOW, vol.10, N 577; FO, 195 / 2450, pt.6, pp. 155-156.

<sup>4</sup>FO, 195 /2450, pt. 6,p. 91; BDOW, vol.10, N 579.

յունները միջև: Իսկ դա լուրջ խոչընդոտներ կառաջացնեն նաև թուրքական կառավարութեան համար<sup>1</sup>:

Այսպիսով, անգլիական դիվանագետները ձգտում էին թուրքերին համոզել, որ միայն տերութեան շրջանների բարի կամքի և փոխհամաձայնութեան շնորհիվ կարելի է արդյունավետ օգտագործել օտարերկրյա օգնութեանը:

Այս շրջանում Անգլիան արդեն լիովին ընդունում էր թուրքիայի նկատմամբ ճնշում գործադրելու հնարավորութեանը: Է. Գրեյը հանձնարարել էր Բեռլինում անգլիական դեսպանին հայտնել գերմանացիներին, թե անհրաժեշտ է որպեսզի Գերմանիան և Ռուսաստանը ճնշում գործադրեն թուրքիայի նկատմամբ բարենորոգումների ծրագրի ընդունման նպատակով<sup>2</sup>: Սակայն Կ. Պոլսում Լ. Մալլեթը շարունակում էր մտահոգութեան ցուցաբերել Բ. Դոան նկատմամբ<sup>3</sup>: Է. Գրեյին ուղղված պատասխանում նա առաջարկում էր պաշտոնական ոչ մի դիմում կամ բողոքարկում չներկայացնել թուրքերին, «քանզի նրանք շատ զգայուն են» և ընդհանրապես արամադրված էին մերժել ցանկացած համատեղ ծրագիր: Լ. Մալլեթն առաջարկում էր ուղղակի տեղեկացնել Բ. Դոանն Անգլիայի վերաբերմունքի մասին: Դիտարանը գտնում էր, որ իր միջոցով թուրքերին հայտնվող դիտողութուններն ու խորհուրդներն ավելի ազդեցիկ կլինեն, քանի որ թուրքերը դեսպանների փոփոխմանը մեծ նշանակություն էին ավելի<sup>4</sup>:

Կարևոր է նշել, որ նոր դեսպան Լ. Մալլեթի նշանակումը, իրոք, մեծապես համապատասխանում էր թուրքական կառավարութեան ցանկություններին: Ի տարբերություն նախկին դեսպան Զ. Լոութերի, Լ. Մալլեթը թուրքամետ էր: Թուրքերի նկատմամբ նրա չափից ավելի բարյացակամ վերաբերմունքը հիմք էր հանդիսացել թուրքական կառավարութեան համար դիմել նոր դեսպանին անգլիական դեսպանութեան թարգման Զ. Ֆիցմորիսին և անգլիական ռազմական կցորդ Թիոնիլին Կ. Պոլսից հեռացնելու առաջարկութեամբ<sup>5</sup>: Երիտթուրքերի կարծիքով «Միութեան և առաջադիմութեան» կուսակցության

<sup>1</sup>FO, 195 /2450, pt.6, p. 92.

<sup>2</sup>Реформы в Армении..., сmp.107.

<sup>3</sup>Ph.Graves, Ibid., p.16.

<sup>4</sup>J.Heller, Ibid., p.16.

<sup>5</sup>Джемаль паша, Записки..., сmp. 82.

նկատմամբ Անգլիայում համակրանքի բացակայության պատճառը Ֆիցմորիսի գործողություններն էին դեսպան Զ.Լոութերի ծառայության օրոք: Չնայած Լ.Մալլեթը հայտարարել էր, որ Ֆիցմորիսը իրեն անհրաժեշտ էր ծառայության համար, նա չմերժեց «Միություն և առաջադիմություն» կուսակցությանը:

Լ.Մալլեթը չչարունակեց իր նախորդի քաղաքականությունը: Դա առաջին հերթին արտահայտվում էր Հայկական հարցի նկատմամբ Լ.Մալլեթի վերաբերմունքի մեջ, որը խիստ տարբերվում էր իր նախորդից: Իհարկե Լ.Մալլեթը չէր կարող անտեսել տարբեր վիլայեթներից ստացված անգլիական հյուպատոսների հաղորդագրությունները, սակայն նա ամենեւին համաձայն չէր նրանց այն կարծիքին, թե արմատական միջոցառումներ էին անհրաժեշտ Հայկական վիլայեթներում իրավիճակը բարելավելու համար<sup>1</sup>: Իրականում, դեսպանը վստահություն էր տածում երիտթուրքերի, հատկապես Թալեաթի և Ջեմալի նկատմամբ: Լ.Մալլեթը չափազանց դրական էր նկարագրում նրանց կերպարներն ու վարած քաղաքականությունը և գարմանալի չէ, որ նույնպիսի վերաբերմունք ու ջերմ բնութագրում էր ստանում երիտթուրքերի կողմից և արժանանում նրանց բարեկամությանը<sup>2</sup>:

Մալլեթն անգամ համոզված էր, որ Թալեաթը չափազանց մտահոգված էր հայերի ճակատագրով: Ըստ դեսպանի դրա վառ ապացույցն էր Վանի վիլայեթում երկու քրդական հրոսակախմբերի ղեկավարների ձերբակալման մասին հրամանները: Լ.Մալլեթը չէր հայանում իր կառավարությանը, թե որքանով էին հեռուողական երիտթուրքերն իրենց տված խոստումներում, սակայն համոզված էր, որ նման «մտահոգ» քաղաքականությունը վարվում էր բոլոր վիլայեթներում և երիտթուրքերը մտադիր էին խիստ միջոցներ ձեռք առնել նաև ազրարային խնդիրը լուծելու համար: Լ.Մալլեթը հիացմունքով հայտնում էր հայոց այբուբենի ստեղծման 1500 ամյակի կապակցությամբ ազգային տոնակատարությանը Թալեաթի և Ջեմալի մասնակցության մասին և ներկայացնում էր այդ որպես ամենամեծագույն բարեկամական վերաբեր-

<sup>1</sup> J. Heller, Ibid., p. 13.

<sup>2</sup> Д жемаль наша, Записки..., стр. 82.

մունքի դրսևորում: Լ.Մալլեթը նշում էր, որ իրենց էլույթներում երկուսն էլ հայերի նկատմամբ համակրանք արտահայտելով, հիշեցին Բալկանյան պատերազմում հայերի մասնակցության մասին և իրենց ցանկությունն էին հայտնել հայերի հետ ձեռք ձեռքի աշխատել Օսմանյան կայսրության վերածննդի համար<sup>1</sup>: Իսկ հայերը, ըստ Լ.Մալլեթի, ձգտում էին օգտվել և առավելություններ ձեռք բերել երիտթուրքերի բարեկամությունից ու հասնել իրենց կյանքի բարելավմանը:

Եթե անգամ մի կողմ թողնենք մեր ազգային բայց և այնպես անաչառ մոտեցումները խնդրո առարկային և որակավորենք անգլիական դեսպանի նման մոտեցումն ու վերաբերմունքը հայ-թուրքական հարաբերություններին, ապա միևնույն է, այլ եզրակացություններ չեն կարող լինել բացի այն, որ. 1/ Լ.Մալլեթը վարում էր լավ մշակված խաղ, որը թերևս բխում էր իր շահամոլությունից, կամ 2/ Մալլեթի լավատեսությունը թուրքերի նկատմամբ պարզապես դիվանագիտական «կարճատեսություն» էր: Նրա հետագա գործունեության ուսումնասիրությունը թույլ է տալիս ընդունելի համարել երկրորդ կարծիքը:

Ինչևէ, Լ.Մալլեթը ստիպված էր մի կողմ թողնել իր թուրքամետ հայացքները և ընդունել Անգլիայի արագորձնախարարության տեսակետները:

1913թ. նոյեմբերի 13-ին Լ.Մալլեթը հանդիպում է մեծ վեզիր Սաիդ Հալիմի հետ և ներկայացնում անգլիական կառավարության բոլոր ցանկություններն ու առաջարկները: Դեսպանը հայտնում է, որ Անգլիայի կարծիքով Բ.Դուան կողմից սերունդների ներկայացրած ծրագրի ընդունումն ամբողջովին համապատասխանում էր Թուրքիայի շահերին և կենսական նշանակություն ուներ: Մեծ վեզիրն առարկում էր, պնդելով, թե Բ.Դուանը երբեք չի ընդունի այնպիսի ծրագիր, որը եվրոպական ընդհանուր վերատեսուչներ կնախատեսեր, այն էլ անպիսի լրագորությունների, որոնք փաստորեն կնշանակեին ստեղծել «կայսրություն կայսրության մեջ» և կխախտեին սուլթանի ինքնիշխան իրավունքները<sup>2</sup>: Իսկ այդ դեպքում, ինչպես նշում էր վեզիրը, եթե Բ.Դուանը բացառում

<sup>1</sup>J.Heller. Ibid., p.16

<sup>2</sup>FO, 195 /2450, pt. 6, p. 113; BDOW, vol.10, N 582, J Heller, Ibid., p.16

էր Անգլիայի շահախնդրությունը, ապա մյուս տերությունների համար նույնն ասել չէր կարող:

Հասկանալով, որ Թուրքիայի հիմնական անհանգստությունը Ռուսաստանի ձգտումների հետ էր կապված, Լ.Մալլեթը փորձում էր Մեծ վեզիր Սաիդ Հալիմին հավաստիացնել, որ հենց Ռուսաստանի առաջարկած ծրագիրը լավագույն երաշխիք կհանդիսանա ցանկացած տերության ունեցողությունների դեմ: Լ.Մալլեթը լիազորված չլինելով քննարկումների կատարել «վերատեսուչ-խորհրդական» թեմայի շուրջ, որին անդրադարձել էր Մեծ վեզիրը, պարզապես պնդում էր, որ եվրոպական հսկողության որևէ ձև անհրաժեշտ էր, քանի որ միայն այդ դեպքում կարելի էր հավատել ինչպես տերություններին, այնպես էլ հայերին, որ բարենորոգումները կարող էին իրականություն դառնալ:

Լ.Մալլեթն անդրադառնալով Անգլիայի վարչապետ Հ.Ասքվիթի, 1913թ. նոյեմբերի 10-ին, Գիլդհոլում արտասանած ճառին, պարզաբանում էր, որ վեց վիլյայեթների «յավ կառավարումը» պարզապես այն հիմնախնդիրն էր, որն անմիջականորեն կապված էր Օսմանյան կայսրության ամբողջականության հետ<sup>1</sup>:

Նշված հանդիպմանը Լ.Մալլեթը, առաջին անգամ իր ծառայությունների ընթացքում, խստություն ցուցաբերեց զրույցի ժամանակ, նշելով, որ Բ. Դուռն արվեն բազմիցս բարենորոգումներ անցկացնելու մտադրություն էր ցուցաբերել, սակայն ոչինչ չէր արվել: Նոր վարչակարգի անհաջողություններն այդ կապակցությամբ հանգեցրել էին անգլիական կառավարության անփստահությունն ապագա հաջողությունների նկատմամբ<sup>2</sup>:

Լ.Մալլեթի մեղադրանքն առաջացնում է Սաիդ Հալիմի վրդովմունքը: Նա փորձում էր արդարացնել նոր վարչակարգը պատճառաբանելով, որ երիտթուրքերն ընդամենը մի քանի տարի է, ինչ դեկավարում են Թուրքիան, որն այդ ընթացքում ոչ միայն պատերազմում էր, այլ պայքարում էր ներքին երկպառակությունների դեմ: Մեծ վեզիրը պնդում էր, որ այժմ իրավիճակը բավականին կայունացել էր, դժվարությունները

<sup>1</sup>FO, 195 /2450, pt. 6, p. 113; BDOW, vol.10, N 582; J.Heller, Ibid., p.16

<sup>2</sup>FO, 195 /2450, pt. 6, p. 116.

Հաղթահարվում էին և զգալի առաջադիմություն էր տեղի ունեցել: Մաիդ Հալիմը հավաստիացնում էր, որ օսմանյան կառավարութունը տրամադրված էր շարունակել այդ ուղին և հուսով էր Անգլիայի օգնութունն ու աջակցութունը ստանալ:

Այսպիսով, Մալլեթն արտգործնախարարութեանը Հայտնում էր իր տեսակետը, որ թուրքական կառավարութունը վերջնականորեն տրամադրված է մերժել տերութունների կողմից կատարվող դանկացած պահանջ և ձգտում էր բարենորոգումների իրականացման գործում որքան հնարավոր է քիչ գիմել օտարերկրյա օգնութեանը: Դեպքանը տեղեկացնում էր նաև, որ Թալեաթ փաշան մտադրվել էր անձամբ այցելել արևելյան վիլայեթներ ավելի յավ իրականութեանը ծանոթանալու և կառավարման ճիշտ ձևեր հաստատելու նպատակով<sup>1</sup>: Ըստ Մալլեթի, Թալեաթի այցը անկասկած կրեր զբաղական արդյունքների: Միևնույն ժամանակ դեպքանը մեծ թերահավատութեամբ էր վերաբերվում բարենորոգումների իրականացման դեպքում այդ գործընթացի տեսականութեանը:

Լ.Մալլեթը նույնպես համոզվեց, որ խնդիրը շատ ավելի բարդ էր, քան պատկերացնում էր: Նա համոզվեց, որ ստեղծված իրավիճակում ամենակարևորն էր խուսափել այնպիսի քայլերից, որոնք կարող էին առաջացնել Բ. Դուան դժգոհութունը, որն էլ իր հերթին կհանգեցներ այնպիսի մի վիճակի, որից «ազատվելը շատ դժվար կլինի»<sup>2</sup>: Դեպքանը համարում էր, որ տվյալ պարագայում անհրաժեշտ էր բանակցութունների ընթացքն ամբողջովին թողնել Ռուսաստանի Հայեցողութեանը և չէր կասկածում, որ ռուսական դեպքանն ի վերջո կգտնի Հարցի յավագույն լուծումը:

Տեղեկացնելով արտգործնախարարութեանը ռուսական դեպքանի և Մեծ վեդիրի միջև բանակցութունների մասին, Մալլեթն իր կարծիքն էր հայտնում, թե Մաիդ Հալիմի կողմից ներկայացված պայմանը՝ բնդհանուր վերատեսուչների փոխարեն խորհրդականների նշանակումը, ընդունելի էր համարում<sup>3</sup>: Լ.Մալլեթն անգամ ցանկանում էր այդ պաշտոններին

<sup>1</sup>J.Heller. Ibid., p. 17.

<sup>2</sup>FO, 195 /2450, pt. 6, p.122.

<sup>3</sup>BDOW, vol.10, N 584.

անգլիացիներ տեսնել և շատ ափսոսում էր, որ դժվար թե անգլիացի խորհրդական նշանակվեր: Դեսպանի տեսակետն ավելի հաստատովեց ավստրո-հունգարական և իտալական դեսպանների հետ նրա ունեցած հանդիպման ժամանակ: Ավստրիական դեսպանը Մ. Գիրսի հետ ունեցած իր անձնական զրույցից գատում էր, որ Ռուսաստանը դեմ էր խորհրդականի պաշտոնին որևէ անգլիացու նշանակմանը: Իտալական դեսպան Պալավիչինին ավելացրել էր, որ Ռուսաստանը դեմ էր նաև գերմանացիների նշանակմանը: Այսպիսով դեսպանները կարծում էին որ խորհրդականների պաշտոններին կհրավիրվին որևէ փոքր պետությունների կայացուցիչներ: Լ. Մալլեթը համաձայն էր նրանց հետ, սակայն համարում էր, որ անգլիացիները շատ անգամ ավելի հարմար կլինեին<sup>1</sup>:

1913թ. նոյեմբերի 25-ին ռուսական դեսպանին այցելություն ժամանակ, Լ. Մալլեթը տեղեկացավ, որ Բ. Դուան կողմից նախագծի ընդունման ակնկալիքները չէին արդարացվել և դա այն գեպքում, երբ թվում էր, թե վերատեսուչների և խորհրդականների հարցի հետ կապված բոլոր վիճելի կետերում Սախո շալիմի և Մ. Գիրսի միջև համաձայնություն էր կայացվել:

Բարենորոգումների գործը չստապալելու նպատակով Ռուսաստանը գեռ հոկտեմբերի վերջին համաձայնել էր վերատեսուչների փոխարեն խորհրդականների նշանակմանը: Սակայն Մեծ վեզիրը հայտնել էր Գիրսին, որ նախարների խորհրդում իր ներկայացրած հարցերը լուրջ առարկումների հանդիպելին<sup>2</sup>: Մեծ վեզիրն անգամ լուրջ քննադատություն էր արժանացել նախարարների խորհրդի կողմից այդքան հեռու գնալու համար: Նոյեմբերի 27-ին Մալլեթը տեղեկացավ Գիրսից, որ Սախո շալիմի հետ կայացած նրա հաջորդ հանդիպումը նույնպես անարդյունք էր ավարտվել<sup>3</sup>: Ելնելով դրանից, Լ. Մալլեթն աջակցման կարգով ռուսական դեսպանին առաջարկում էր իր միջամտությունը և կարծիք էր հայտնում, որ ժամանակն էր իր համար կրկին զրուցել Մեծ վեզիրի հետ: Ռուսական դեսպանը ողջունեց անգլիացիներին

<sup>1</sup> FO, 195 /2450, pt. 6, p. 136

<sup>2</sup> Նույն տեղում, p. 135; BDOW, vol. 10, N 584.

<sup>3</sup> BDOW, vol. 10, N 585.

առաջարկը: Ռուսաստանի և Անգլիայի դեսպանների կողմից որոշվեց, որ Լ.Մալլեթը կհանդիպի Մեծ վեզիրին ու կհորդորի նրան ընդունել ռուս-գերմանական առաջարկները: Նման օգնութան ակնկալիքով ռուսական դեսպանը դիմելու էր Կ.Պոլսում բոլոր տերությունների ներկայացուցիչներին:

Փաստորեն Լ.Մալլեթը, ղեկավարվելով արտգործնախարարութան կարգադրություններով, պետք է փորձեր ազդել Սաիդ Հալիմի վրա և համոզեր նրան գնայ փոխզիջման: 1913թ. դեկտեմբերի 1-ին Սաիդ Հալիմի հետ Լ.Մալլեթի հանդիպումը բավականին բովանդակալից էր<sup>1</sup>: Դեսպանը նախ և առաջ իր պարմանքն էր հայտնել այն կապակցությամբ, որ արդեն համաձայնութան եկած հարցի շուրջ կրկին տարաձայնություն էր առաջացել: Մեծ վեզիրը պատասխանել էր, թե թուրքական կառավարությունը չէր կարող հանդուրժել մեծ տերությունների կողմից խորհրդականներ նշանակելու իրավասությունը: Նրա համոզմամբ այդպիսի կետ ընդգրկող ծրագիրը պարզապես փրավորում էր թուրքերի արժանապատվությունը և չէր կարող գործնական կիրառում ստանալ: Լ.Մալլեթն այս դժգոհությանը նույնպես պատասխան գտավ, ասելով, որ չի հասկանում, թե այդ ինչպես ղեռ մի քանի ամիս առաջ, հուլիսի 13-ին Բ.Դուռը դիմել էր մեծ տերություններին եվրոպական ընդհանուր վերատեսուչներ թուրքիային տրամադրելու խնդրանքով, իսկ նշված պահին չէր համաձայնում ընդհանուր վերատեսուչներին կից եվրոպական խորհրդականներ ընդունել, որոնք օսմանյան հպատակներ պետք է լինեին<sup>2</sup>:

Հասկանալով, որ Սաիդ Հալիմը անձամբ դեմ չէր եվրոպական խորհրդականների նշանակմանը, Մալլեթը պնդում էր այն առաջարկի վրա, որ Մեծ վեզիրը բոլոր ջանքերը գործադրի Բ.Դուռն կողմից ծրագիրն ընդունելու ուղղությամբ: Դեսպանը հավաստիացնում էր Մեծ վեզիրին, որ անգլիական կառավարությունը ոչ մի գաղտնի նպատակ չունի: Անգլիացիները, ըստ Մալլեթի, ղեկավարվում էին միայն որքան հնարավոր էր շուտ արևելյան նահանգներում բարվոք կառավարում տեսնելու ցանկությունը: Դեսպանը նշում էր, թե անգլիական

<sup>1</sup>FO, 195 /2450, pt. 6, pp. 147-152.

<sup>2</sup>Նույն տեղում, p. 150.

կառավարութիւնը համոզված էր, որ հայկական բնակչութ-  
յունը պատշաճ կառավարման դեպքում կդառնար Բ. Դոան  
համար «կայունութեան գործոն»<sup>1</sup>: Անդրիացի ղեկնազետը  
բացատրում էր, որ հայերն անցյալում այնքան շատ են հիաս-  
թիափփել, որ այժմ առանց հիմնավոր երաշխիքների չեն կա-  
րող հավատալ բարենորոգումների արդյունավետութեանը:  
Բացի այդ, Լ. Մալլեթը նշում էր, որ Եվրոպայում և հատկա-  
պես Անդրիայում, ուր ժողովուրդը խորապես մտահոգված էր  
քննարկվող ինդրով «ցավալի տպավորութիւն կձևավորվեր»,  
եթե այն ամենից հետո, երբ անդրիական կառավարութիւնն  
առաջարկում էր իր անկեղծ օգնութիւնը, մերժվեր Եվրոպայի  
օգնութեանը: Լ. Մալլեթը ավելացրել էր նաև, որ, եթե Հայկա-  
կան հարցին գոհացուցիչ վերաբերմունք ցուցաբերվի, ապա  
մի քանի տարի անց Արեւելյան նահանգները ոչ մի հսկո-  
ղութեան կարիք չէին ունենա և իրոք կդառնան Օսմանյան  
կայսրութեան համար «վստահութեան և կայունութեան  
աղբյուր»: Սաիդ Հալիմը չէր առարկել Լ. Մալլեթի ղիտոողութ-  
յուններին: Նա խոստացավ անել ամեն ինչ, որպեսզի ուսուս-  
կան առաջարկութիւններին կառավարութիւնում վերաբեր-  
վեն հանդուրժողականութեամբ:

Լ. Մալլեթի գործունեութիւնը, նրա պահածքն ու մո-  
տեցումները մեծ հավանութիւն էին ստացել Է. Գրեյի կողմից<sup>2</sup>:  
Սակայն Մալլեթի լավատեսութիւնը վեցիբի տված խոստում-  
ների հանդեպ հանդիպեց հակահարվածի<sup>3</sup>: 1913թ. դեկտեմբերի  
սկզբին Լ. Մալլեթը հաղորդում էր Լոնդոն, որ «հանկարծակի»  
հարցի ամբողջ ընթացքը փոխվել էր, այն էլ ոչ դեպի լավը:  
Այժմ Լ. Մալլեթն ավելի լավ ծանոթացավ Հայկական հարցի  
հետ և անմիջականորեն բախվեց կատաղի հակահայկական  
գործողութիւններին: Մալլեթը հայտնում էր, որ նոր հայ  
պատրիարք Զավին Եդիսյանն ահարեկչական նամակներ էր  
ստանում, հայկական եկեղեցականները քարկոծվում էին փո-  
ղոցներում թուրք երիտասարդների կողմից<sup>4</sup>: Մայրաքաղա-  
քում հայկական եկեղեցին ողողվել էր կարմիր ներկով<sup>5</sup>: Հակա-

<sup>1</sup>BDOW, vol. 10, N 586; FO, 195 /2450, pt.6, p. 152.

<sup>2</sup>FO, 195 /2450, pt.6, p. 170

<sup>3</sup>J. Heller, Ibid., p. 18.

<sup>4</sup>BDOW, vol. 10, N 586.

<sup>5</sup>Ա. Նասիպեան, Ընված աշխատութիւն, էջ 31:

Հայկական, ինչպեսև հակառուսական հողվածներ էին տպագրվում թերթերում: Սպրդում էին նաև հակաեվրոպական<sup>1</sup>, մասնավորապես հակաանգլիական<sup>2</sup> հողվածներ: Որոշ թերթեր իրավիճակը ներկայացնում էին այնպես, թե բարենորոգումների խնդիրը ոչ այլ ինչ է, եթե ոչ քան քրիստոնյա եվրոպայի պայքարն ընդդեմ իսլամի<sup>3</sup>: Նման բնույթի հողվածները չէին կարող չբորբոքել մահմեդական կրքերը:

1913թ. դեկտեմբերին «Կավկազ» թերթը, գրելով ահաբեկչական բազմաթիվ փաստերի մասին, նշում էր, որ ահաբեկչական նամակներ էր ստանում նաև Նուբար փաշան: Նրանից մահվան սպառնալիքով պահանջում էին դադարեցնել գործունեությունը եվրոպայում<sup>4</sup>:

Բարենորոգումների վերաբերյալ բանակցություններ վարելու հետ մեկտեղ թուրքերը ոչ միայն պահանջում էին հայերից հրաժարվել եվրոպայի միջամտությունից և փոռահել Օսմանյան կառավարությունը, այլև սպառնում էին ջարդով, եթե եվրոպական դիվանագիտությունն իրական քայլեր ձեռնարկեր Հայկական հարցի կապակցությունը<sup>5</sup>:

Անգլիական դեսպան Լ.Մալլեթը խնդրի գրական լուծման հեռանկար այլևս չէր տեսնում: Արագործնախարարության արևելյան դեսպարտամենտի աշխատակից Դևիդ Աքոթթի (David Scott) կողմից Հայկական հարցի վերաբերյալ վերջին շրջանի ստացված փաստաթղթերի և տեղեկությունների հիման վրա կազմվել էր համառոտագրություն, որը ներկայացվել էր քննարկման: 1913թ. դեկտեմբերի 20-ին կայացած քննարկմանն անգլիական դիվանագետները փորձում էին մշակել տվյալ պահին և հանգամանքներին առավել համապատասխան քայլեր: Նրանք հանգեցին այն եզրակացություն, որ Արևմտյան Հայաստանի համար բարենորոգումների ծրագիրն ի հեճուկս թուրքիայի, այն աստիճան էր արդեն փոփոխությունների ենթարկվել, որ հետագա ցանկացած կրճատումն

<sup>1</sup>FO, 195 /2450, pt 6, p. 156.

<sup>2</sup>Նույն տեղում, pt. 5, p. 42.

<sup>3</sup>BDOW, vol. 10, N 586

<sup>4</sup>«Кавказ», 1913, 7 декабря, N 278.

<sup>5</sup>Там же, 6 декабря, N 277.

ամբողջովին վերջ կղներ այդ ծրագրի գործնական արժեքին<sup>1</sup>:

Է.Քրոուեն գտնում էր, որ անկասկած, եթե երբևէ Թուրքիայի կողմից ծրագիր ընդունվեր, ապա դա տեղի կունենար միայն բոլոր մեծ տերությունների կողմից համատեղ ճշման գործադրման արդյունքում: Սակայն նա համոզված չէր, որ երբևէ հնարավոր կլիներ արդեն հասկանալի պատճառով, ընդհանուր ճշման գործադրումը: Ելնելով նշվածից, Լ.Մայլեթն առաջադրում էր արտգործնախարարութայնը հետեյալը. ուստիական ծրագրի տապալման դեպքում, որևէ պատասխանատվություն բարենորոգումների իրականացման հետ կապված, չստանձնել և թողնել որպեսզի երիտթուրքերն ինքնուրույն՝ սեփական ծրագրի հիման վրա, կազմակերպեն և տպահովեն իրենց փրկությունը, կամ հակառակը՝ կործանումը Արևմտյան Հայաստանում<sup>2</sup>:

Արտգործնախարարությունն իր հավանությունն է տալիս Լ.Մայլեթի առաջարկությանը, հավանաբար ելնելով նրանից, որ այլ մտայնում չէր տեսնում: Ճիշտ է, Է.Քրոուեն այն բանի կողմնակիցն էր, որ Բ.Պան կողմից ծրագրի մերժման դեպքում Թուրքիային սպառնային կոնկրետ թշնամական գործողություններով: Սակայն, նա շատ լավ էր հասկանում, որ դա անհնար էր կիրառել, քանի դեռ, ինչպես նշել էր Է.Քրեյբ, տերությունների միջև ընդհանուր համաձայնություն չկար գեներալ Լիման Փոն Զանդերսի առաքինության և Էդեյան կղզիների խնդրի կապակցությամբ:

Անգլիայի արտգործնախարարությունում գտնում էին, որ թուրքական կառավարության վրա ճշման գործադրման հարցում ղեկավարող դիրքը և բացահայտ աչքի ընկնելը չէր համապատասխանում Անգլիայի շահերին: Անգլիական կառավարությունը չէր ցանկանում իր դիրքերը թուլացնել Թուրքիայում և լուրջ հույս ունենալ առաջացնել Հնդկաստանում և Եգիպտոսում: Է.Քրեյբ գտնում էր, որ այլընտրանք չկար, բացի Բ.Պան տեսակետին համաձայնվելը: Նրա կարծիքով ավելի լավ կլիներ կրճատել ծրագիրն այն աստիճան, որ այն ընդունելի լիներ Բ.Պան կողմից, քան պահպանել այն տարբե-

<sup>1</sup>BDOW, vol. 10. N 586.

<sup>2</sup>J. Heller, Ibid., p. 18.

րակը, որը դիմագրութեան տեղիք էր տալիս<sup>1</sup>: Փաստորեն, արտգործնախարարութիւնում առաջնութեանը տրվեց Լ.Մալլեթի դիրքորոշմանը, որը դեռ ավելի վաղ գնահատվել էր որպէս «չստ ողջամիտ»:

Չնայած անգլիական կառավարութեան դիրքորոշմանը, Բ. Դոան և անգլիացիների միջև 1913թ. վերջին որոշ լարվածութիւն էր նկատվում: Դա պայմանավորված էր թուրքերի կողմից արտահայտած՝ քաղաքական հաշվարկ ներկայացնող դժգոհութեամբ: Լ.Մալլեթը Ձեմալ փաշայի հետ իր գրույցում, ստիպված էր պաշտպանել 1913թ. հուլիսին անգլիական կառավարութեան կողմից թուրքական կառավարութեան՝ արևելյան վիլայեթներ անգլիացի ծառայողներ գործուղելու խնդրանքի մերժումը: Ձեմալ փաշան քննադատում էր Անգլիային Ռուսաստանին ենթարկվելու համար: Մալլեթը չէր ժխտում մեղադրանքը, սակայն բացատրում էր, թե, քանի որ Անգլիան պարտավոր էր աջակցել Եռյակ համաձայնութեանը, ապա անգլիացիների գործողութիւնները պետք է դիտվին որպէս անհրաժեշտ նախապայման տերութիւնների միջև քաղաքական հավասարակշռութիւն պահպանելու համար: Նա ճզնում էր ապացուցել, թե Անգլիայի վարած քաղաքականութիւնն ամեն գեպքում Բ. Դոան օգտին էր, այսինքն՝ անգլիական կառավարութիւնը երբեք չէր ցանկանա թուրքիային զցել այնպիսի վիճակի մեջ, որից Անգլիայի համար անհնար կլիներ դուրս բերել նրան<sup>2</sup>:

Սակայն Անգլիայի արտգործնախարարութիւնում ոչ մի մեկնաբանութիւն չէր տրվել Ձեմալի այն խնդրանքի վերաբերյալ, թե ցանկալի կլիներ որ Անգլիան թուրքիայի նկատմամբ նոր վերաբերմունք ձևավորեր և մեղմեր վերջին երկու տարիների ոչ դրական դրսևորումը<sup>3</sup>: Այս շրջանում, ինչպէս գրում է իր հիշողութիւններում Ձեմալ փաշան, Բ. Դոանը ամեն կերպ աշխատում էր վերացնել թուրքիայի նկատմամբ Անգլիայի նախապաշարմունքները, վերականգնել այն հարաբերութիւնները, որ գոյութիւն ունեին Անգլիայի և թուրքիայի միջև մինչ Ռուսաստանի հետ Անգլիայի հա-

<sup>1</sup>BDOW, vol.10, N 586, Minute.

<sup>2</sup>J.Heller, Ibid., p. 20.

<sup>3</sup>J.Heller, Ibid., p. 20.

մաճայնագրի կնքումը և հասնել անդյու-թուրքական մերձեցմանը<sup>1</sup>: Այս նպատակին հասնելու համար թուրքերը ձգտում էին բարեկամական կապեր հաստատել ոչ միայն Կ.Պոլսում անդլիական դեսպանի և դեսպանության մյուս անդամների հետ, այլև բազմաթիվ նշանավոր անդլիացիների հետ, ամեն կերպ աշխատում էին իրենց կողմը տրամադրել այնպիսի անձանց, ինչպիսին էր, օրինակ, նշանավոր քաղաքական գործիչ Թոմաս Բարսեյը, որն անդյու-ոուսական համաձայնագրի կատարի հակառակորդն էր<sup>2</sup>:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ թուրքերի հաշվարկված նուրբ քաղաքականությունը ևս իր բաժինն ուներ նրանում, որ 1913թ. դեկտեմբերի վերջին Անդլիան ամբողջովին հակված էր աջակցել Բ.Դռանը:

Մինչդեռ բարենորոգումների վերաբերյալ ուս-թուրքական բանակցություններում առաջինթաց չէր նկատվում: Մեծ վեզիրին ոչինչ չէր մնում, քան համաձայնվել Մ.Գիրսի առաջարկի հետ: Որոշվեց տարածայնությունները վերացնելու նպատակով վերադառնալ ուս-գերմանական նախնական առաջարկությունը, այսինքն՝ եվրոպացի ոչ թե խորհրդականների, այլ ընդհանուր վերատեսուչների նշանակմանը:

Մեծ վեզիրը դա հնարավոր էր համարում և պատրաստ էր այդ տարբերակը ներկայացնել նախարարների խորհրդում<sup>3</sup>: Այս փաստը մեկ անգամ ևս հաստատում է, որ բարենորոգումների ծրագրի ընդունումը քննարկումների միջոցով փաստորեն ձգձգվում էր: Ինչևէ; եթե խորհրդականների և ընդհանուր վերատեսուչների հետ կապված տարածայնությունները կարծես թե շտկվում էին, ապա ընտրական ժողովներում /օրենսդիր և գործադիր մարմիններում / քրիստոնյաների և մահմեդականների հավասար ներկայացուցչության շուրջ դեռ համաձայնություն չկար:

Լ.Մալլեթը պատրաստ էր ողջունել Բ.Դռան հնարավոր համաձայնությունն այս կետի վերաբերյալ, բայց հենց ինքն էլ հասկանում էր որ թուրքերը թույլ չէին տա ազատ ընտրություններ: Նման քաղաքականությունը, րոտ Լ.Մալլեթի,

<sup>1</sup> Джемаль паша, Записки..., стр. 84.

<sup>2</sup> Там же, стр. 83.

<sup>3</sup> Реформы в Армении..., стр. 125

բացատրվում էր թուրքերի «ինքնապահպանման բնական բնազգով»։ Թուրքերը փոքրամասնություն էին կազմում կայսրությունում և զիջում էին արաբներին, հույներին, հայերին և հրեաներին իրենց մտավոր ու գործարար կարողություններով<sup>1</sup>։ Անդլիայի արտգործնախարարությունում նույնպես լավ էին հասկանում ներկայացուցչության հարցի հետ կապված օսմանյան խորհրդարանում թուրքական տարրին սպառնացող վտանգը։ Դա թուրքերին «խեղդելու», հետին պլան մղելու միջոց էր։

Հավանաբար նշված սպառնալիքից խուսափելու համար թուրքերը դիմել էին Կ.Պոլսում Ֆրանսիայի դեսպանին օսմանյան տեսակետները պաշտպանելու խնդրանքով։ Սակայն նրա կարծիքը հակառակ էր թուրքական տեսակետներին։ Դեսպանը հեռեկայ կարծիքն էր հայտնել Ֆրանսիայի արտգործնախարարին. «Արդարև, առևտրական գործունեությամբ և իր կրթությամբ հայկական տարրը հանդիսանում է երկրի բարգավաճման գլխավոր գործոնը՝ միանգամայն գերազանցելով թուրքական տարրը։ Այդ հանգամանքը կարող էր հակակշռել հայերի թմական ցածր քանակը»<sup>2</sup>։

Անդլիայի արտգործնախարարությունում է. Բրոուն մեկնաբանում էր նշված հարցը հետեյալ կերպ. «Այնպիսի երկրում, ինչպիսին Օսմանյան կայսրությունն է, ազատ ընտրություններն ու հավասար ներկայացուցչությունը միայն կարող է «Ֆարս» լինել»<sup>3</sup>։

Այսպիսով, ընտրությունների հանգամանքը իր հերթին ձգձգում էր բարենորոգումների խնդրի լուծումը։ Խնդիրը կարծես թե լուծվում էր 1913թ. վերջին օրերին։

Ինչպես հայտնում էր Լ.Մալլեթը, գեկտեմբերի 31-ին Մեծ վեդիլրի հետ ունեցած իր հանդիպումից հետո, Բ. Գուռը, փաստորեն, համաձայնել էր խորհրդականների փոխարեն ընդհանուր վերատեսուչների պաշտոններին և պատրաստվում էր բանավոր դիմում հղել տերություններին Արևելյան վիլայեթների համար ընդհանուր վերատեսուչների թեկնածուներ

<sup>1</sup> J. Heller, Ibid., p. 19.

<sup>2</sup> Джемаль наша, Записки..., стр. 313.

<sup>3</sup> J. Heller, Ibid., p. 19.

տրամադրելու խնդրանքով<sup>1</sup>: Վեգիրի Հեա ունեցած Հանդիպումից Հեաո Լ.Մալլեթն այցելել էր ուսուսական դեսպան Մ.Գիրսին և Համոզվել Սախ Հալիմից արդեն ստացված տեղեկության վերաբերյալ: Ռուսական դեսպանն, ըստ Մալլեթի, բավարարված էր բանակցությունների արդյունքով<sup>2</sup>: Մ.Գիրսն, իրոք, հեռագրում էր Ս.Սագոնովին, թե Համոզված էր, որ այժալ պահին ուսաներն ավելի մեծ արդյունքների հասնել չէին կարող<sup>3</sup>:

Ընդհանուր վերատեսուչների պաշտոնների ընդունման Համաձայնությունը չարագացրեց գործի ընթացքը: Զգազումների պատճառն այժմ վերատեսուչների իրավասությունների և պարտականությունների Հաստատման վերջնական որոշումն էր: Այդ հարցերի կապակցությամբ Թալեաթ փաշայի Հեա գրույցներ էր ունեցել նույն Լ.Մալլեթը<sup>1</sup>: 1914թ. հունվարի 15/28-ին Լ.Մալլեթը, ինչպես նաև ուսուսական և Փրանսիական դեսպանները Հայտնում էին իրենց կառավարություններին, որ ուսաների և թուրքերի միջև դեռ երեք հարցերում Համաձայնություն չէր կայացվել: Առաջինը՝ ընդհանուր և վարչական խորհուրդների կազմի և պաշտոնների քաշիման հարցն էր: Բ.Դուռը ընդունում էր, որ մինչև մարդահամարը քրիստոնյաները և մահմեդականները Հավասարապես ներկայացվին ընտրական ժողովներում, բայց միայն Վանում և Բիթլիսում: Ռուսական դեսպանությունը պահանջում էր, որ այդ կարգադրությունը տարածվեր արևելյան մյուս վիլայեթների վրա նույնպես: Երկրորդ վիճելի հարցը զպրոցների հարցն էր: Գիրսը պահանջում էր, որպեսզի օսմանյան կառավարությունը չառարկի, որ կրոնական Համայնքներն ապահովին իրենց զպրոցների պահպանումը: Երրորդ հարցը՝ զինվորական ծառայության և Համիդյան զորագնդերի Հեա կապված վիճելի խնդիրն էր: Բ.Դուռը Համաձայնվում էր շրջանային զինծառայության, սակայն պահպանում էր Համիդյան զորապնդերը, որոնք արձակելու փոխարեն պետք է վերակազմավորվեն:

<sup>1</sup>BDOW, vol. 10, N 587.

<sup>2</sup>FO, 195 / 2450, pt. 6, p. 168.

<sup>3</sup>Реформа в Армении..., сmp. 129, 146.

<sup>4</sup>BDOW, vol. 10, N 590.

1914թ. հունվարի կեսերին, թուրքերը և գերմանացիները, որոնք կրկին սկսել էին ընդգծված ակտիվություն ցուցաբերել քննարկումներին, նոր փորձ կատարեցին էլ ավելի բարդացնել բանակցությունների առանց այն էլ ոչ սահուն ընթացքը: Նրանք մեղադրում էին ուսաներին նոր պահանջներ ներկայացնելու համար<sup>1</sup>: Դա, սակայն, չէր համապատասխանում իրականությանը: Ինչպես Լ.Մալլեթն էր տեղեկացնում և բացատրում Անգլիայի արտգործնախարարությանը, ուր կարծես թե բողոքի կարգով պիմել էին գերմանացիները, ուստական դեսպան Գիրսը ոչ մի նոր առաջարկ չէր արել: Սակայն Լ.Մալլեթը հատուկ նշում էր որ ուսաները սկսել էին անհանդուրժողականություն և խստապահանջություն հանդես բերել<sup>2</sup>:

Բարենորոգումների քննարկման տվյալ փուլում Ռուսաստանի նման դրսևորումը հալանաբար թելադրվում էր Լիման ֆոն Ջանդերսի նշանակմանը դեմ լինելուց: Այս մոտեցումն էլ իր հերթին, առաջացնելով Գերմանիայի պժգոհությունն ու անհանգստությունը, ստիպեց գերմանացիների իրավիճակը շտկելու նպատակով թելադրել թուրքերին համաձայնվել Ռուսաստանի առաջարկություններին՝ ընդունել համամասնական ներկայացուցչությունը:

Միանգամայն ակնհերև է, որ Գերմանիան հանդես էր գալիս գիջողի դերում միայն Հայկական հարցում համաձայնություն ձեռք բերելու պատրաստակամության տպավորություն ստեղծելու համար<sup>3</sup>: Իրականում Գերմանիան ստիպված էր հորդորել թուրքերին պիջումներ կատարել բարենորոգումների խնդրում, քանի որ ձգտում էր վերջնականորեն հաստատել Լ.ֆոն Ջանդերսի ռազմական առաքելությունը Կ.Պոլսում: Գերմանական դեսպան Լ.ֆոն Վանդենհայմը երիտթուրքերի ուշադրությունը հրավիրում էր Հայկական հարցի և գերմանական ռազմական առաքելության միջև եղած կապի վրա: Նա բացատրում էր թուրքերին, որ գերմանա-ուսական-թուր-

<sup>1</sup>R.Davison. Ibid. . p. 23; BDOW, vol 10, N 588.

<sup>2</sup>BDOW, vol.10, NN 589. 590; Оранжевая книга, док 25, стр. 69.

<sup>3</sup>См.Степанян, Армения в политике империалистической Германии. ., стр.88.

քական համաձայնությունը կհարթեր առաքելության շուրջ տարաձայնությունները:

Դեռ աշնանը, 1913թ. հոկտեմբերի 14-ին, Վանգենհայմը համոզելով Թուրքերին ընդունել բարենորոգումների ուսգերմանական ծրագիրը, հայտարարում էր Մեծ վեզիր Սաիդ Հալիմին, թե Գերմանիայի միջամտության շնորհիվ Ա.Մանգելշտամի ծրագիրը հասցված է նվազագույնի, բայց այդ նվազագույնի հետ բոլոր սերությունները համաձայն էին, այնպես որ Թուրքիան գտնվում էր միացյալ Եվրոպայի առջև<sup>1</sup>: Սակայն, նշված ժամանակ Վանգենհայմը մի կողմ էր թողել միացյալ Եվրոպայի գաղափարը: Այժմ նա «անհրաժեշտ» էր համարում Թուրքերի համար բարենորոգումների ծրագրի ընդունումը և բացատրում էր, որ հակառակ դեպքում Ռուսաստանը կարող է բռնազրավել Արևմտյան Հայաստանը<sup>2</sup>: Գերմանիայի դեսպանի պնդմամբ Բ.Դուռը տվեց իր համաձայնությունը: Բայց Գերմանիայի նման խորհուրդը Թուրքիայում ընդունվել էր որպես Ռուսաստանի հզորության ընդունում: Թուրքիան երկյուղում էր, որ Եռյակ միության կողմից չի պաշտպանվի սուսական վտանգից<sup>3</sup>: Թուրքերը Գերմանիային չվստահելու իրենց պատճառներն ու հիմքերն ունեին: Նրանց մոտ մտավախություն կար, թե Գերմանիան ևս ընդունելի էր համարում Ասիական Թուրքիայի բաժանումը մեծ սերությունների միջև:

Անգլիայի համար գաղտնիք չէր այն երկակի խաղը, որ վարում էին տվյալ պահին Ռուսաստանը և Գերմանիան, շրջանցելով և միևնույն ժամանակ օգտագործելով հայկական վիլայեթներում բարենորոգումների խնդիրն իրենց հետաքրքրությունների համար: Այդուհանդերձ, Լ.Մալլեթի այն հազորդադրությունը, թե Ռուսաստանի և Գերմանիայի միջև Կ.Պոլսում անհամաձայնություններ երևույթներ չկային, ամբողջովին համապատասխանում էր Անգլիայի արագորձնախարարության դիրքորոշմանը: Տվյալ պահին Ռուսաստանի և Գերմանիայի միջև Հայկական հարցի շուրջ անգամ բաղաձայն

<sup>1</sup> «Վեմ», 1934, մարտ-ապրիլ, էջ 72.

<sup>2</sup> АВПР, ф. Политархив, д. 3470, л.1; Е.К.Саркисян, Политика османского правительств..., стр.295.

<sup>3</sup> Джемаль паша, Записки..., стр. 81; Ст.Степанян, Армения в политике империалистической Германии..., стр.88.

չինծու համաձայնությունը ձեռնառու էր Անգլիային: Բաննայն էր, որ Լ. Փոն Զանդերսի առաքելություն հետ կապված՝ դեռ 1913թ. նոյեմբեր - դեկտեմբերից, Ռուսաստանի և Անգլիայի միջև լարվածությունն առաջացման սպառնալիք կար: Թուրքական բանակի վերակազմավորման նպատակով 1913թ. հոկտեմբերի 15/28-ին - նոյեմբերի 14/27-ին տեղի ունեցած բանակցությունների արդյունքում Գերմանիայի և Թուրքիայի միջև գերմանական ռազմական առաքելության հաստատման մասին գաղտնի պայմանագիր էր կնքվել<sup>1</sup>: Համաձայն այդ պայմանագրի գեներալ Լ. Փոն Զանդերսի համար սահմանվել էր հնգամյա ծառայություն ժամկետ թուրքական բանակում:

Ռուսաստանը բացահայտ դեմ էր Թուրքիայում գերմանական ռազմական առաքելության առկայությունը և բազմիցս բողոքարկել էր Գերմանիայի կառավարությունը, սակայն ապարդյուն<sup>2</sup>: Ցարական կառավարությունը աջակցություն ստանալու ակնկալիքով դիմել էր Լոնդոն և Փարիզ: Փրանսիական կառավարությունը, որ նույնպես անհանդուստացած էր Թուրքիայում գերմանական ռազմական առաքելության գործունեությունը կապակցությամբ, աջակցելու պատրաստակամություն էր հայտնել Ռուսաստանին, սակայն Անգլիան խուսափողական դիրք էր գրավել<sup>3</sup>: Դա բացատրվում էր առաջին հերթին նրանով, որ անգլիացիները բողոքարկելու պատճառ չունեին, քանի որ թուրքական նախատորմի վերակառուցման առիթով անգլիացի հրահանգիչները արդեն գործում էին Թուրքիայում<sup>4</sup>, իսկ անգլիացի ծովակալ Լիմպուսը նշանակվել էր թուրքական նախատորմի հրամանատար<sup>5</sup>: Այս հանգա-

<sup>1</sup>Хрестоматия по истории международных отношений, выпуск 2, М., 1972, стр. 233-234.

<sup>2</sup>Джемаль паша, Записки..., стр. 57-58; Е.В.Тарле, указ. соч., стр. 259; Ст.Степанян, Армения в политике империалистической Германии..., стр. 104-105.

<sup>3</sup>История дипломатии, т.2, стр.761.

<sup>4</sup>Harry N. Howard, The Partition of Turkey. A Diplomatic History 1913-1923, Oklahoma, 1931, pp. 40, 393; Ph.Graves, Ibid., p 183.

<sup>5</sup>Sidney B. Fay, Ibid., p. 501; Материалы по истории франко-русских отношений за 1910-1914гг. Сборник секретных дипломатических документов Бывшего Императорского Российского министерства иностранных дел, М., 1922, стр.654; В.В.Готлиб, Тайная дипломатия во время первой мировой войны, М. 1960, стр. 30

մանքը ռուսներին մատնացույց էին անում և գերմանացիները<sup>1</sup>, և թուրքերը<sup>2</sup>: Բացի այդ, դեռ 1913թ. մայիսին գերմանական դիվանագետներն անգլիացիների հետ անջատ բանակցությունների ժամանակ պարզել էին անգլիական դիվանագետների կարծիքը թուրքիա լայն լիազորություններով գերմանական ռազմական առաքելության գործուղման վերաբերյալ: Գերմանացիները բավարարված էին բանակցությունների արդյունքով: Գաշնակիցներից գաղտնի Անգլիան սիրախաղում էր Գերմանիայի հետ<sup>3</sup>:

Անգլիային ձեռնառու չէր առայժմ լարել հարաբերությունները և պատերազմել Գերմանիայի հետ Լ.Ձանդերսի առաքելության պատճառով: Գաղտնի բանակցություններ վարելով Գերմանիայի հետ անգլիական դիվանագետները հավաստիացնում էին գերմանացիներին, որ Արևմտյան Հայաստանի համար բարենորոգումների ինդերում ռուսական առաջարկություններին իրենք չէին աջակցի: Բայց և այնպես Անգլիան, երկակի խաղ վարելով և՛ Ռուսաստանի, և՛ Գերմանիայի հանդեպ, հրաժարվում էր բացահայտ համագործակցությունից Գերմանիայի հետ ընդդեմ Ռուսաստանի և արաաքուստ հավատարիմ էր իր դաշնակցին: Անգլիան պարզապես բավարարված էր նրանով, որ իր փոխարեն Ռուսաստանի դեմ բացահայտ և համառ պայքարը փոքրասիական խնդիրներում այժմ մղում էր Գերմանիան:

Ընդհանրապես, ինչպես հայտնում էր 1913թ. դեկտեմբերի 17-ին Լոնդոնից ռուսական դեսպան Բենկենդորֆը Սազոնովին, Իռլանդիայի հետ կապված Անգլիայի ներքին ճգնաժամային վիճակը կարծես թե վերացրել էր նշված ժամանակահատվածում Անգլիայի հետաքրքրությունն արտաքին գործերի նկատմամբ<sup>4</sup>: Իրականում Անգլիան շարունակում էր արտաքին քաղաքականության ասպարեզում իր չափազանց նուրբ խաղերը: Անգլիայի նպատակն էր լարել ռուս-գերմանական հարաբերությունները, քանի որ անգլիացիները հենց Ռուսաստանին էին հատկացնում այն ուժի դերը, որը կկործաներ

<sup>1</sup> E. В. Тарле, указ. соч., стр. 259.

<sup>2</sup> Д жемаль паша, Записки..., стр. 545, 558.

<sup>3</sup> Г. А. Арш, Британская дипломатия и миссия Л. фон Сандерса, "Вестник АГУ", 1949, N11, стр. 114.

<sup>4</sup> E. В. Тарле, указ. соч., стр. 261.

Գերմանիային՝ անգլիական կապիտալի հիմնական մրցակցին: Այս նպատակով անգլիական դիվանագետները 1913թ. աշուն-ձմեռ շրջանում բաժանել էին իրենց գործունեությունը երկու փուլի: Սկզբում (1913թ. հոկտեմբերի 25-ից 1913թ. դեկտեմբերի 2-ը) աջակցել Ռուսաստանին, այսինքն հավաստիացնել Ռուսաստանին այդ աջակցություն մեջ, հետո (1913թ. դեկտեմբերի 25-ից 1914թ.- հունվարի 15-ը) զրկել Ռուսաստանին այդ օգնությունից<sup>1</sup>:

Մասնավոր նամակագրություն մեջ անգլիական դիվանագետները գրում էին, որ Ռուսաստանի հեռահար գործողություններն աջակցություն չէին ստանա Անգլիայի կողմից: Ա. Նիքոլսոնը է. Գրեյին գրում էր, որ Ռուսաստանի կողմից չափազանց համարձակ ենթադրություն էր կարծել թե Անգլիան ու Ֆրանսիան ակտիվ մասնակցություն կցուցաբերեն Ռուսաստանի կողմից ձեռնարկած ցանկացած քայլերին: Նա նշում էր, որ սվյալ պահին՝ 1914թ. հունվարի սկզբին, Անգլիան համաձայնագրի հաստատման նպատակով կարող էր օգտվել Գերմանիայի հետ իր լավ հարաբերություններից, ինչպեսև չառարկել Ռուսաստանի ձեռնարկած գործողություններին<sup>2</sup>: Որևէ այլ բան Ա. Նիքոլսոնը անհրաժեշտ չէր համարում անել:

Այդպիսով, 1914թ. հունվարի կեսերին Ռուսաստանի անհանդուրժողական դիրքը հայկական բարենորոգումների հարցում ցանկալի և ձեռնուող չէր Անգլիային: Ինչպես հայտնում էր Կ. Պոլսից Ֆրանսիական դեսպանն իր կառավարությանը, Անգլիայի դեսպանը քննադատում էր Ռուսաստանի կեցվածքը և խնդրում էր Անգլիայի արագործնախարարությունը համաձայնություն եզրեր գտնելու առաջարկություն միջամտել Պետերբուրգում<sup>3</sup>: Լ. Մալլեթը համոզված էր, որ բարենորոգումների վերաբերյալ բանակցությունների ընդհատումը վտանգի տակ կդներ այն օգուտը, որ Ռուսաստանը կարող էր քաղել արդեն իսկ ձեռք բերած դիջումներից: Պետերբուրգում անգլիական դեսպան Զ. Բյուքենենն իր կառավարության

<sup>1</sup>Г. Арш, указ. соч., стр. 116.

<sup>2</sup>Хрестоматия по истории международных отношений, Африка и Передняя Азия. Выпуск 2, Москва, 1972, стр. 236.

<sup>3</sup>Հայաստանը միջազգային դիվանագիտության..., էջ 536:

անունից խորհուրդ էր տվել Սազոնովին ընդունել Արևմտյան Հայաստանի համար նախատեսվող բարենորոգումների վերջին ձևակերպումը<sup>1</sup>:

1914թ. հունվարի 26-ին/փետրվարի 8-ին/ Լ.Մալլեթը Կ.Պոլսից հեռագրում էր Անգլիայի արտգործնախարարությանը, որ Ռուսաստանի և Բ.Պռան միջև՝ չնայած ներկայացուցչության կապակցությամբ նրանց միջև տարաձայնություններին, համաձայնություն էր կայացել<sup>2</sup>: Մալլեթն ուղարկել էր արտգործնախարարությանը դիմումի պատճեն, որով Մեծ վեզիրը պատրաստվում էր դիմել տերություններին հենց որ հաստատվեն ընդհանուր վերատեսուչների թեկնածությունները: Արտգործնախարար Է.Գրեյն իր հավանություն էր տվել Բ.Պռան այդ դիմումին, ինչի մասին էլ տեղեկացնում էր հունվարի 29-ին / փետրվարի 11-ին/ Լ.Մալլեթին<sup>3</sup>:

Լ.Մալլեթն իր հերթին գտնում էր, որ ընդհանուր առմամբ թուրքական կառավարությունն այդ համաձայնությունը զայտով, բավական խելամտություն էր դրսևորել, քանի որ, հասկանալով հարցի ամբողջ բարդությունն ու այն հանգամանքը, որ իրար հակասող շահեր էին բախտախաղի դրվել, բավարարել էր և՛ մեծ տերությունների և՛ հայկական պատրիարքի ցանկությունները: Անգլիական դեսպանը հավանություն էր տալիս նաև ռուսական դեսպանության կատարած աշխատանքին: Նա նշում էր, որ դեսպան Գիրսը համաձայնության ստորագրման պահին արձակուրդում էր և նրա աշխատանքը հաջողությամբ ավարտել էր ռուսական դեսպանության հավատարմատար Կ.Գուլկելիչը՝ «խելամիտ և հաշտվողական վերաբերմունք ցուցաբերելով խնդրին»<sup>4</sup>:

Լ.Մալլեթը հայտնում էր Անգլիայի արտգործնախարարությանը, որ բանակցությունների ընթացքում ռուս-թուրքական պարզաբանումների ժամանակ, նա սերտ շփման մեջ էր ռուսական դեսպանատան հետ ու հաճախ աջակցել էր դեսպան Գիրսին և ավելի ուշ՝ Կ.Գուլկելիչին իրենց դիմումների և առաջադրումների կապակցությամբ: Նա նշում էր, որ

<sup>1</sup>Նույն տեղում, էջ 537:

<sup>2</sup>BODOW, vol. 10, N 591.

<sup>3</sup>Նույն տեղում, N 590.

<sup>4</sup>Նույն տեղում, N 591.

ամեն կերպ նպաստել է Ռուսաստանի և Թուրքիայի միջև փոխըմբռնման հաստատմանը<sup>1</sup>:

Այսպիսով, 1914թ. հունվարի 26-ին / փետրվարի 8-ին / Թուրքիայում Ռուսաստանի դեսպանության հավատարմատար Կ. Գուլկելիչը և Մեծ վեզիր Սաիդ Հալիմ փաշան ստորագրեցին ռուս-թուրքական համաձայնագիրն Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու վերաբերյալ:

Ըստ համաձայնագրի հիմնական դրույթների արևելյան յոթ վիլայեթներից կազմվում էր երկու սեկտոր. էրզրում, Տրապիզոն, Սեբաստիա և Վան, Բիթլիս, Խարբերդ, Դիարբեքիր: Սեկտորները կառավարվելու էին տերությունների համաձայնությամբ Բ. Դուան կողմից նշանակվող երկու օտարերկրյա ընդհանուր վերատեսուչների կողմից: Այգ սեկտորների վարչության, արդարադատության, ոստիկանության և ժանդարմերիայի վերահսկողությունը կազմելու էր ընդհանուր վերատեսուչների իրավասությունը: Անհրաժեշտության դեպքում զինվորական ուժերը նույնպես կդրվեին վերատեսչի իշխանության տակ: Վերատեսուչներն իրավունք էին ստանում նշանակել և պաշտոնանկ անել պաշտոնյաներին, օրինախախտման դեպքում դատարանին հանձնելով նրանց: Առանձին դեպքերում վերատեսուչները կարող էին նաև արձակել դատական պաշտոնյաներին: Նրանք իրավունք ունեին սուաջարկություններ անել կառավարությանը բարձրաստիճան պաշտոնյաների նշանակման մասին:

Հողային հարցերը պետք է վճռվեին վերատեսչի անմիջական վերահսկողությամբ:

Նախատեսվում էր ընդհանուր վերատեսուչների իրավունքներին և պարտականություններին վերաբերող ավելի մանրամասն հրահանգներ տալ նրանց նշանակումից հետո:

Պաշտոնական հարաբերություններում բավական տեղ էր տրվում մայրենի լեզվին: Օրենքները, հրովարտակները և կառավարչական հաղորդագրությունները հայտարարվելու էին տեղական լեզուներով:

Հայկական դպրոցները պետք է ֆինանսավորվեին պետական բյուջեից, սակայն թուրքական կառավարությունը դեմ

<sup>1</sup> Armenia. Political and Ethnic Boundaries 1878-1948, p. 323.

չէր լինի, եթե համայնքները մասնակցեին համայնական ուսումնարանները պահելու ծախսերին:

Խաղաղ ժամանակ յուրաքանչյուր օսմանահայատակ կատարելու էր իր գինվորական պարտականությունն այն զինվորական շրջանում, որտեղ որ բնակվում էր:

«Համիդիե» հեծելազորները վերափոխվում էին պահեստի հեծելազորի:

Վիլայեթների ընդհանուր խորհուրդների իրավասությունը որոշվում էր 1913թ. մարտի 13-ի օրենքով:

Երկու սեկտորներում գոյություն ունեցող զանազան կրօնների, ազգությունների և լեզուների համաչափությունը պետք է որոշվեր վերջնական ցուցակագրության (մարդահամարի) միջոցով վերատեսուչների հսկողությամբ, ոչ ավելի, քան մեկ տարվա ընթացքում: Մինչև հիշյալ ժամանակը Վանի և Բիթլիսի վիլայեթներում ընդհանուր խորհուրդների և կոմիտեաների անդամները ընտրվելու էին հավասար թվով մահմեդականներից և ոչ մահմեդականներից:

Եթե էրզրումի վիլայեթում վերջնական ցուցակագրությունը մեկ տարվա ընթացքում չվերջանար, ապա ընդհանուր խորհրդի անդամներն ընտրվելու էին նույն հավասարության սկզբունքի հիման վրա:

Սերասիայի, Խարբերդի և Դիարբեքիլի ընդհանուր խորհուրդներն ընտրվելու էին համեմատական սկզբունքով:

Վերատեսուչների որոշմամբ հավասարության սկզբունքը կարող էր կիրառվել ոստիկանության և ժանդարմերիայի, ինչպես նաև մյուս պաշտոնյաների նշանակումների դեպքում<sup>1</sup>:

Այսպիսով, 1914թ. հունվարի 26-ի համաձայնագրերը մի քայլ առաջ էր Բիւլիսի պայմանագրի 61-րդ հոդվածի համեմատությամբ: Այն անշուշտ առավելություն ուներ նաև 1895թ. Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կողմից Բ. Դուսնը ներկայացրած բարենորոգումների մայիսյան ծրագրի համեմատ: 1895թ. ծրագրում խոսք չկար ինչպես հայկական մեկ, կամ երկու նահանգներ, կամ սեկտորներ հիմնելու մա-

<sup>1</sup>Համաձայնագրի ամբողջական բովանդակությունը տես Реформа в Армении..., стр.162-165; Сборник договоров России с другими государствами (1856-1917), под редакцией Е.А.Адамова. И.В.Козьменко, Москва,1952, стр.421-424; Հայաստանը միջազգային դիվանագիտության..., էջ 339-342 ; ՀԱԱ, ֆ. 57, ց.5, գ. 59, ք.14:

սին, այնպես էլ հայկական վիլայեթների համար քրիստոնյա օսմանահպատակ, կամ եվրոպացի կառավարիչ նշանակելու և այդ կապակցութեամբ տերութիւնների համաձայնութեան մասին:

Նորութիւնն էին նաև պաշտոնական հարաբերութիւններում ազգային լեզուներին տեղ տալը, համայնքների կողմից կրթութեան ծախսերին մասնակցելը, խաղաղ ժամանակ բնակավայրում գինվորական ծառայութեան վերաբերյալ կետը:

Այս ամենի հետ մեկտեղ 1914թ. հունվարի 26-ի համաձայնագիրը մի քայլ հետ էր բարենորոգումների ուսսական ծրագրի համեմատ: Չափավոր և սահմանափակ՝ բարենորոգումների նվազագույնին հասցված այս համաձայնագիրը ոչ միայն հեռու էր ուսսական նախնական նախագծից, այլև չէր ընդգրկում ուսս-գերմանական ծրագրի գրույթների մի մասը:

Նախագիծը խուզիլ էր հայերի իրավունքները<sup>1</sup>: Այստեղ առաջին հերթին չէր խոսվում Հայկական մարզի մասին, ինչպես կար ուսսական նախնական նախագծում, այլ հիշատակվում էր Արևելյան Անատոլիան, որը պետք է բաժանվեր երկու սեկտորների: Այս սեկտորների մեջ ընդգրկվում էին հայկական, նաև ոչ հայկական վիլայեթներ՝ մահմեդական բնակչութեամբ բնակեցված շրջանները, ինչ բացառում էր ուսսական նախագիծը: Հակառակ ուսսական նախագծի «համիդիե» դորագնդերը փաստորեն պահպանվում էին: Հայերից բռնազրաված հողերը վերադարձնելու, հայկական վիլայեթներում մուհաջիրների բնակեցումը արգելող հողվածները դուրս էին նետվել համաձայնագրից:

Ռուսական դիվանագիտութիւնը հաշիվ առնելով այն բոլոր դժվարութիւններն ու խոչընդոտները, որոնք հաղթահարելով հասել էր համաձայնագրի այդ վերջնական ձևին, ընդունում էր այդուհանդերձ, որ 1913թ. հունվարի 26-ի համաձայնագիրը ուսսական դիվանագիտութեան խոշոր հաղթանակն էր: Ծիշտ է, ուսսները խոստովանում էին, որ համաձայնագիրը չէր տալիս հայերին ինքնավարութեան այն ընդարձակ իրավունքները, որ ուզում էր նրանց համար ասլահովեյ ուսսական ծրագիրը: Բայց և այնպես, ինչպես պնդում էր Կ. Գուլկեի-

<sup>1</sup> Ս. Արզումանյան, Յայաստան 1914-1917, էջ 86:

չը, «այդ ակտը անկասկած մատնանշում էր նոր, ավելի բախտավոր մի շրջանի սկիզբ հայ ժողովրդի պատմության մեջ»<sup>1</sup>:

Ռուսական դիվանագիտության ակնկալիքները մեծ էին<sup>2</sup>: Նրանց կարծիքով համաձայնագիրը, քանի որ այն երկկողմանի էր, հաղթանակ էր նախատեսում և Թուրքիայի, և Գերմանիայի նկատմամբ: Ս. Սազոնովին ուղարկած հեռագրում Կ. Գուլկեիչը նշում էր, որ «այդպիսով պաշտոնապես ընդգծվում է Ռուսաստանի դեկավար դերը հայկական վիլայեթների բարենորոգումների հարցում, թերևս հաստատվում է Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածը: Այդ հանգամանքը, իհարկե, չի կարող չունենալ ամենանպաստավոր հետևանքը Ռուսաստանի միջազգային հեղինակության համար...»<sup>3</sup>:

Անշուշտ, Ռուսաստանի դիվանագիտական հաղթանակներից կարելի է համարել այն հանգամանքը, որ հորիզոնական ուղղությամբ սեկտորների բաժանման զիջման դիմաց հայկական սեկտորի կազմի մեջ էր ընդգրկվել նաև ոչ հայկական Տրապիզոնի վիլայեթը: Այդ հանգամանքը հետագայում կարող էր շահավետ լինել Ռուսաստանի համար: Վերջինս, փաստորեն, ոչ միայն տարածքային առումով էր ընդլայնում իր ազդեցությունը գոտին, այլև առևտրատնտեսական և ռազմավարական դերի խանություն էր ունենում, քանի որ Տրապիզոնի վիլայեթը ելք էր ապահովում Սև ծով: Այս փաստը չէր կարող անտեսվել դարեր շարունակ դեպի ծով ելք չունեցող հայ ժողովրդի կողմից ևս:

Այլ հարց է, թե որքանով էր հունվարի 26-ի համաձայնագիրը համապատասխանում հայ ժողովրդի ակնկալիքներին: Հայ իրականության մեջ կարծիքները տարբեր էին. 1/ շատ դրական և լավատես, որը կիսում էր նաև Պողոս Նուբար փաշան: Նա Փարիզից հեռազրույց էր կաթողիկոսին, թե արևմտահայությունն այսուհետև կապրի «արդարադատ և ապահով վարչության ներքո»<sup>4</sup>: 2/ Կային իրատես բացասական

<sup>1</sup> Реформы в Армении..., стр. 170.

<sup>2</sup> А. Мандельштам, Младотурецкая держава, стр. 51; С. Сазонов, Воспоминания, стр. 173-174.

<sup>3</sup> Հայաստանը միջազգային դիվանագիտության..., էջ 351:

<sup>4</sup> «Արարատ», Էջմիածին, 1914, փետրվար, էջ 121:

կարծիքներ, որոնք ամփոփ ձևով կարելի է բերել «Մշակում» տեղ գտած հոդվածից. «Հայկական բարենորոգումների նախագիծը ոչ մի պատասխան չի տալիս այն «անիծյալ հարցին», որի անունն է «թուրքական ինդիր»<sup>1</sup>: Յ/ Հայության մի որոշ մասն էլ զուգադրելով համաձայնագրի բացասական և դրական կետերը, հաշվի առնելով հայության ակնկալիքներն ու տաճկահայ իրականությունը, գալիս է այն եզրակացություն, որ համաձայնագիրն իրոք չի իրականացնելու Հայկական հարցի լուծումը, սակայն հուսով էր, որ այն կստեղծեր պայմաններ, որոնք կտանեին ապագայում դեպի այդ հարցի լուծումը<sup>2</sup>:

1914թ. հունվարի 26-ի համաձայնագիրը տարբեր ձևով էր ընդունվել ատուրքյունների կողմից:

Գերմանացիները, ճիշտ է, համաձայնագիրը համարում էին Ռուսաստանի հաղթանակ<sup>3</sup>, սակայն չէին կարող նաև չնշել թուրքական դիվանագիտության մեծ հաջողությունը, որին, ի դեպ, մեծ չափով նպաստել էին իրենք՝ գերմանացիները: Նրանք պարզապես համոզված էին, որ համաձայնագիրը գործնական կարևորություն չէր ունենա<sup>4</sup>:

Ինչ վերաբերում էր անգլիացիներին, ապա՝ ի տարբերություն թուրքամետ Լ.Մալլեթի, որը չափից պակի լավատեսորեն էր վերաբերվում բարենորոգումների հարցին և համարում էր այն լուծված, Անգլիայի արտոգործնախարարությունում լավ էին հասկանում, որ, եթե հունվարի 26-ի համաձայնագիրը փրկեց թուրքական կայսրությունը մասնատումից, իսկ պետություններին էլ իրենց բաժինը գավթելու պայքարից, ապա հայերը այս անգամ էլ պարտվեցին: Անգլիական դիվանագետները համոզված էին, որ համաձայնագրից իրենց օգուտն էին քաղելու միայն Գերմանիան և Թուրքիան<sup>5</sup>: Ա.Նիքոլսոնի կարծիքով, այդ նախագիծը սրբազան պատկանում էր մինչ այդ մշակված այն հիանալի ծրագրերի շարքին, որոնցից ոչ մեկն անգամ արդյունք չէր ունեցել<sup>6</sup>:

<sup>1</sup> «Մշակ», 1914, փետրվարի 7, N 28:

<sup>2</sup> «Յորիզոն», 1914, փետրվարի 18, N 35.

<sup>3</sup> R. Davison, *Ibid.*, p. 24.

<sup>4</sup> «Վեմ», 1934, մարտ-ապրիլ, էջ 75:

<sup>5</sup> J. Heller, *Ibid.*, p. 20.

<sup>6</sup> Նույն տեղում:

Այդուհանդերձ Անգլիան, ինչպեսև Ֆրանսիան<sup>1</sup>, գոհու-  
նակուլթյուն էին հայտնում հունվարի 26-ի համաձայնագրի  
վերաբերյալ, ինչը բացատրվում է նրանով, որ երկարատև  
պայքարից հետո ոչ Ռուսաստանին, ոչ էլ Գերմանիային չհա-  
ջողվեց հիմնավոր ձևով իր դերակալուլթյունը հաստատել Օս-  
մանյան կայսրուլթյան նշված տարածաշրջանում:

Այսպիսով, երկար ամիսների դիվանագիտական պայքա-  
րը՝ հայկական բարենորոգումների ծրագրի ընդունման վե-  
րաբերյալ, կարծես թե ավարտվեց անկախ նրանից, թե ինչ  
ակնկալիքներ ունեին «քաղաքակիրթ» տերուլթյունները  
հարցի լուծումից:

Ինչպես տեսնում ենք վերը շարադրվածից, ճիշտ էէ այն  
տեսակետը, թե 1913թ. աշնանն ու ձմռանը և 1914թ. սկզբին  
հայկական հարցի նկատմամբ Անգլիայի կողմից պատիվուլթ-  
յուն էր ցուցաբերվել, և որ այն ամբողջովին թողնվել էր  
Ռուսաստանի ու Գերմանիայի, ինչպես նաև Թուրքիայի  
անօրինուլթյանը: Ռուս-դերմանական և ռուս-թուրքական բա-  
նակցուլթյունների ընթացքում Անգլիան վարում էր իր ավան-  
դական քաղաքականուլթյունը: Հայ ժողովրդի ճակատագրի  
նկատմամբ անտարբերուլթյունը պարզ և հայտնի պատճառ-  
ներով անգլիական դիվանագետների կողմից կեղծ հետաքրք-  
րուլթյամբ և մտահոգուլթյամբ էր գունավորվում, երբ ինչ որ ձ-  
ևով այս կամ այն խնդրի հետ կապված, հայկական վիլայեթ-  
ներում բարենորոգումներ անցկացնելու ինդիքն առնչվում էր  
Անգլիայի պետական շահերի հետ: Այդ դիրքորոշումը, որը  
Անգլիայի կողմից պատիվուլթյան և հայկական հարցի  
քննարկումներից հետանալու և չմիջամտելու տպավորուլթյուն  
էր ստեղծել, անգլիական կառավարուլթյան և դիվանագետների  
կողմից հմտորեն մշակված քաղաքականուլթյան բաղկացուցիչ  
մասն էր: Անգլիան չէր առարկում և որոշ աջակցուլթյուն էր  
ցուցաբերում ռուս-դերմանական ծրագրին, իսկ հետո՝ ռուս-  
թուրքական բանակցուլթյունների ժամանակ ռուսական առա-  
ջարկներին, քանի որ դրանք չէին հակասում Անգլիայի շահե-  
րին:

<sup>1</sup>Международные отношения в эпоху империализма. Документы из архивов царского и временного правительств, 1878-1917, серия 3, т.1, М., 1931, стр. 260.

Անգլիայի պործողությունները թելադրվում էին քաղաքական հաշվարկներից և տվյալ պահին՝ իր շահերից բխող, տերությունների միջև քիչ թե շատ կայուն հարաբերությունների ձևավորումից և հաստատումից:

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ  
ՌՈՒՍ - ԹՈՒՐ-ՔԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՐՁԵՐԸ  
ԵՎ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՆ

1914թ. հունվարի 26 /փետրվարի 8-ի/ ռուս-թուրքական համաձայնագրի ստորագրմամբ հաղթահարվեց ղրվանագիտական ճգնաժամը: Անշուշտ, համաձայնագիրը թուլացրեց միջազգային լարվածությունը, որ առաջացել էր Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման խնդրի հետ կապված: Սակայն համաձայնագրի իրագործման սկիզբը դեռ չէր երևում:

Ռուս-թուրքական նախագիծը չէր ապահովում հայ ժողովրդի ո՛չ անձնական անվտանգությունը, ո՛չ էլ նրա դույքի և սևփականության անձեռնմխելիությունը: Հայերին, ինչպես նախկինում, սպառնում էին ճնշումներ, հայածանք, ջարդեր և ավերումներ:

Նախագծի իրագործման դեպքում որոշ դրական արդյունքների ակնկալիքներ կարող էին լինել: Բայց անգամ այդ պոզատ բարենորոգումների իրագործումը, որը Բ. Գուռը պարտավորվել էր իրականացնել, տարբեր պատճառներով ձգձգվում էր:

Ռուսաստանը, որին տրված էր ընդհանուր հսկողության իրավունք, շարունակ ճնշում էր գործադրում Բ. Գուռն վրա: Ռուսաստանի արագործնախարար Ս. Սազոնովն իր հիշողություններում նշում է, որ 1914թ. մայիսին Լիվադիայում (Ղրիմում) կայացած հանդիպման ժամանակ, ամեն կերպ փորձում էր հավաստիացնել Թալեաթին, որ ռուսները շատ լուրջ են վերաբերվում Հայկական հարցին և հաստատ մտադրություն ունեն անդադրում հետևել թուրքահայերի մարդավայել գոյությունը երաշխավորող բարենորոգումների իրագործմանը<sup>1</sup>:

Չնայած Ռուսաստանի վճռականությանը, թուրքերը ձգտում էին տապալել հայկական վիլայեթներում բարենորոգումների իրականացումը, որպեսզի ցույց տան, որ Եվրոպան,

<sup>1</sup>С.Сазонов, Воспоминания, стр. 163.

և մասնավորապես Ռուսաստանը, չէին կարող իրենց Հայեցողությամբ իրականացնել դրանք Թուրքիայում<sup>1</sup>: Ջեմալ փաշան իր հիշողություններում խոստովանում է, որ «Հայկական բարենորոգումների հարցում մենք ձգտում էինք խույս տալ այն պարտավորություններից, որ մեր վզին էին փաթաթել ուսանելը»<sup>2</sup>: Այսպիսով Ջեմալ փաշան, փաստորեն, վկայում է, որ 1914թ. հունվարի 26-ի համաձայնագիրը ևս մի խաղ էր Թուրքական իշխանությունների կողմից՝ մոլորություն մեջ գցելու միջազգային հանրությանը, թե Թուրքական կառավարությունը իբր սլաոթաստ էր բարենորոգումներ անցկացնել հայկական վիլայեթներում:

Բարենորոգումների իրականացումը հետաձգելու համար լավ առիթ էր վերատեսուչների ընտրություն ու նշանակման հարցը: Որոշումների և բանակցությունների ևս երկու ամիսներ էին հարկավոր, որպեսզի գանվեին ընդհանուր վերատեսուչների այնպիսի թեկնածուներ, որոնք կընդունվեին և կգոհացնեին միաժամանակ և՛ Թուրքերին, և՛ հայերին, և՛ վեց տնօրինողներին: Այս ընթացքում Թուրքիան նոր փորձեր էր անում՝ դեռ չսկսած, խափանել բարենորոգումների իրականացումը: Վերատեսուչների խնդրով գրադվելու փոխարեն Թուրքական կառավարությունը՝ սուս-Թուրքական համաձայնագիրը ստորագրելուց մի քանի օր անց, նոր առաջարկություններ դրանց անգլիական կառավարությունը:

1914թ. փետրվարի 4/17-ին Լ.Մայլեթը հեռագրում էր է. Գրեյին այն մասին, որ Թուրքիայի ներքին գործերի նախարարը խնդրում էր իրեն՝ ոչ պաշտոնապես պարզել՝ կարող էր արդյոք անգլիական կառավարությունը Թուրքիային տրամադրել Արևելյան վիլայեթների վերատեսուչների համար ընդհանուր կառավարչի պաշտոնակատար ծառայող<sup>3</sup>: Ընդհանուր կառավարիչը կցված էր լինելու ներքին գործերի նախարարությանը և խորհրդակցանի դեր էր կատարելու վիլայեթների կառավարման բոլոր ոլորտների համար:

Անգլիայի կողմից նոր առաջարկությունն ընդունման Թուրքերի ակնկալիքը համաձայնաբար ըխում էր Անգլիայի հետ

<sup>1</sup> Д.х.Куракосян, Младотурки перед судом истории, стр.154.

<sup>2</sup> Ջեմալ փաշա, Հայկական հարցը, Երևան, 1927, էջ 49

<sup>3</sup> B D O W. vol 10, N 592.

կնքած նոր համաձայնագրից: Անգլիական կառավարութեան և Բ. Դոան միջև 1914թ. հունվարի 25-ին /փետրվարի 7-ին/՝ հայկական բարենորոգումների վերաբերյալ ուսու-թուրքական համաձայնագրի ստորագրումից մեկ օր առաջ, կնքվել էր մի համաձայնագիր<sup>1</sup>, որը, փաստորեն, ավյալ պահի և հանգամանքների բերումով չէր կարող ինչ-որ ձևով չառնչվել Հայկական հարցին: Ըստ կնքված հանաձայնագրի՝ Թուրքիան զիջում էր Անգլիային Քուվեյթը, իսկ անգլիական կառավարութեանը պարտավորվում էր բոլոր ջանքերը ներդնել հայերին հանգստացնելու և չեղոքացնելու արտասահմանյան միջամտությունը Հայկական հարցում:

Մեկ անգամ ևս բացահայտվում է Անգլիայի քաղաքականութունը Հայկական խնդրում: Առավել քան տեղին և արդիական կհնչեին 19-րդ դ. վերջին Բաֆֆու կողմից արված Անգլիայի քաղաքականութեան բնութագրումը: Բաֆֆին նշում էր, որ հայերի վիճակը ամենևին չէր հետաքրքրում անգլիացիներին, որ « նրանց այլ բան է պետք՝ հզոր պատնեշ կանգնեցնել Ռուսաստանի դեմ»<sup>2</sup>:

Ինչևէ, Լ. Մալլեթը համարում էր, որ կարելի է ընդունել թուրքական նոր առաջարկը: Դեսպանի այս կարծիքը հավանաբար ձևավորվել էր այն եզրակացություն հիման վրա, որ Ռուսաստանը մինչ թուրքերի այդ առաջարկը, իբր արդեն տեղյակ էր նրանց մտադրություն մասին և կարող էր նախապես՝ նման արամադրվածություն ունենալու դեպքում՝ առարկել: Բանն այն է, որ մինչ հունվարի 26-ի համաձայնագրի ստորագրումը, հունվարի 18/31-ին, Թալեաթ փաշան Լ. Մալլեթի և Կ. Գուլկելիչի հետ ունեցած իր խիստ մասնավոր զրույցի ժամանակ՝ հավաստիացնելով բարենորոգումների իրադրման Բ. Դոան ամենաանկեղծ ցանկություն մասին, ի հաստատումն իր խոսքերի՝ հայտնել էր, թե ծրագրել է կազմել նախարների օգնականներից կազմված անգլիացի Ռիչարդ Քրոուֆորդի գլխավորությամբ մի հանձնաժողով, որը կհակեր ընդհանուր վերասևտուհների կողմից ներկայացվող գործերի անհապաղ

<sup>1</sup>Раздел Азиатской Турции по секретным документам бывшего министерства иностранных дел. Под ред. Е.А.Адамова, Москва, 1924, стр. 49; Материалы по истории франко-русских отношений..., стр. 380; Ph. Graves. Ibid., p. 182.

<sup>2</sup>Բաֆֆի, Տաճկահայք, Թիֆլիս, 1895, էջ 41:

կատարումը<sup>1</sup>: Այդ ամենից բխող Լ. Մալլեթի այն համոզմունքը, թե Ռուսաստանը առարկություն չէր ունենա, հաստատում էր Լ. Մալլեթի, մեղմ ասած, անհեռատես զիվանագետ լինելը:

Ինչ վերաբերում էր Ռուսաստանին, ապա նա՝ ոչ պաշտոնական տեղեկությունների հիման վրա, պաշտոնապես իր զժգոհությունը չէր կարող հայտնել, մանավանդ, երբ Թուրքիայի կողմից Անգլիային առաջարկությունը զեռ չէր արվել: Ակնհերև է, որ Ռուսաստանը տվյալ պահին կանտեսեր այլ առաջարկը:

Թուրքերը զիտակցում էին այդ ամենը: Նրանք անմիջապես պաշտոնական զիմում չէին ուղարկել անգլիական կառավարությունը: Լ. Մալլեթի և անգլիական արտգործնախարարությունից միջոցով Թուրքերը տեղյակ էին պահում անգլիական կառավարությունը, թե մեծ նշանակություն են տալիս Անգլիայի համաձայնությունը և պատրաստ էին պաշտոնապես զիմել անգլիական կառավարությունը նրա նախնական համաձայնությունն ստանալուց հետո:

Այսպիսով, ուս-թուրքական համաձայնագրի ստորագրումից հետո էլ Հայկական հարցի հետ կապված հանգամանքները կրկին դարձան քննարկումների առարկա Անգլիայի արտգործնախարարությունում:

Թուրքական նոր առաջարկի հետ կապված կարծիքները հետևյալն էին: Է. Քրոուն գտնում էր, որ Թուրքիայի ներքին գործերի նախարարության ներկայացուցիչը ընդհանուր վերատեսուչների աշխատանքը հսկելու և ընդհանրապես նրանց նկատմամբ իշխանություն բանեցնելու ոչ մի իրավունք չէր կարող ունենալ<sup>2</sup>:

Ա. Նիքոլսոնը կարծում էր, որ որևէ ստույգ պատասխան տալու համար յրացուցիչ տեղեկություններ էին անհրաժեշտ ընդհանուր կառավարչի իրավասությունների իր կարգավիճակի վերաբերյալ: Նա համոզված էր, որ մեծ տերություն ներկայացուցչի նշանակումը ընդհանուր կառավարչի պաշտոնին կարող էր լուրջ զժգոհություններ առաջ բերել, քանի որ հենց նման զժգոհություն պատճառով էր, որ ավելի ցածր պաշտոնների պիտի նշանակվեին փոքր տերությունների ներկայա-

<sup>1</sup>АВПР, ф. Политархив, д. 3472, л.39.

<sup>2</sup>BDOW, vol.10, N 592, Minute

ցուցիչներ: Ըստ Ա. Նիքոլսոնի, մեծ տերության ներկայացուցչի նշանակումն ավելի բարձր պաշտոնի կհակասեր բարենորոգումների իրականացման ընդհանուր ուղղվածությունը<sup>1</sup>:

Արագործնախարար Է. Գրեյը կիսում էր Նիքոլսոնի տեսակետը և հրավիրում գեսպան Լ. Մալլեթի ուշադրությունը այն բանին, որ Արևմտյան Հայաստանի համար նախատեսված բարենորոգումների նախագծի մեջ ոչ մի նշում չկար որևէ ընդհանուր կառավարչի գործողության վերաբերյալ: Նոր պաշտոնյայի նշանակումը կարող էր դիտվել որպես ընդհանուր վերաատեսչներին հատկացված անկախություն և լայն ու բազմակողմանի իրավունքների նվազեցման ձգտում<sup>2</sup>:

Է. Գրեյը համարում էր, որ կարիք չկար նշանակել մեծ տերության ներկայացուցչի: Նրա կարծիքով դա ոչ միայն կքայքայեր բարենորոգումների նախագիծը, այլև կխարխլեր համաձայնությունը, որ հաստատվել էր Թուրքիայի և տերությունների միջև:

Միևնույն ժամանակ Է. Գրեյը չէր ցանկանում մերժել թուրքական կառավարության խնդրանքը: Նա Լ. Մալլեթին հանձնարարում է պարզել, ի՞նչ թուրքական կառավարությունը պարզապես ցանկանում էր տվյալ առաջարկի միջոցով ներքին գործերի նախարարության համար խորհրդականի ծառայություն ասպահովել, ինչպիսին ասպահովում էր արդարագատություն նախարարության խորհրդականը, ապա Է. Գրեյը պատրաստ էր ընդունել նրանց առաջարկը:

Ո՞րն էր անգլիացիների նման որոշման դրդապատճառը: Արդյո՞ք այն մտահոգությունը, թե բարենորոգումների ծրագրով չնախատեսված նոր պաշտոնի առաջարկությունը փակուղու առջև կկանգնեցներ գործը, կբերեր տերությունների միջև նոր տարաձայնությունների, կհանգեցներ միջազգային ճգնաժամի խորացմանը, թե՞ միանշանակ անտարբերության հայ ժողովրդի ճակատագրի նկատմամբ: Վերջինը բավականին շոշափելի էր Անգլիայի մոտեցումներում և քաղաքականություն մեջ:

1914թ. մարտին, երբ Կ. Պոլսից տեղեկություններ էին հասնում անգլիական արտգործնախարարությունը ինչպես

<sup>1</sup>BDOW, vol.10, N 592.

<sup>2</sup>Նույն տեղում, N 593.

Հայ-թուրքական, այնպես էլ Հայ-քրդական Հարաբերությունների լարված և վտանգավոր վիճակի մասին, Է.Քրոուեն գայրացած նշում էր, որ այդ բոլորն ամենեին չպետք է անհանգստացնեն անգլիացիներին<sup>1</sup>: Եթե Է.Քրոուեի նման արտահայտությունը նշանակում էր, որ անգլիացիները ամենեին գործ չունեն Հայկական ինզրի Հետ, ապա տեղին էլի անգլիական կառավարության գծոհուությունը: Անգլիացիների կարծիքով, ոուսներն ընդհանուր վերատեսուչների ընտրության Հարցին մոտեցել էին որպիս «միանգամայն» ոուսական գործի ոուսական մտահոգության: Քրոուեն Համարում էր, որ անգլիական կառավարույունն այդպիսով զրվել էր «բավականին անարժան» իրավիճակի մեջ<sup>2</sup>:

Այնուամենայնիվ անգլիական դիվանագետները սկսեցին ակտիվություն ցուցաբերել նաև վերատեսուչների ընտրության Հարցում: Փետրվարի 4/17-ին անգլիացիները Համաձայնել էին Ռուսաստանի արտոգործնախարարի այն տեսակետին, որ Հայկական վիլայեթներում ընդհանուր վերատեսուչների պաշտոններ ստանձնողների թեկնածությունները Բ.Գուանր ներկայացնելու Համար, պետք է Հաստատելն բոլոր տերություններն միասին<sup>3</sup>: Անգլիացիների ակտիվությունը ավյալ Հարցի Հետ կապված Հասնում էր նրան, որ գարնանը նրանք ընդհանուր վերատեսուչների նշանակման ուշացումը մատնացույց էին անում ոուսական կառավարությանը և նշում, որ դրանից կոգտվի Թուրքիան ու Հնարավոր անկարգությունների դեպքում, անպայման կմեղադրի տերություններին: Անգլիացիներն իրենց կարծիքն ու ցանկություններն էին Հայտնում, որ եթե ոուսները առարկություններ չունենան, ապա կարելի էր վերատեսուչներին նշանակել Հոլանդական ծառայողներից<sup>4</sup>: Պետք է նշել, որ Հոլանդացիների թեկնածության վերաբերյալ ոուսների և անգլիացիների, ինչպես Հայերի Հայացքները Համընկնում էին:

1914թ. մարտի 10/22-ին Կ.Պոլսում անգլիական դեսպանը, ստանալով իր կառավարության լիազորությունը, ընդու-

<sup>1</sup>J.Heller, Ibid., p. 149.

<sup>2</sup>Նույն տեղում:

<sup>3</sup>Реформы в Армении..., стр. 177; Հայաստանը միջազգային դիվանագիտության..., էջ 354:

<sup>4</sup>BDOW, vol.10, N 594.

նում է ընդհանուր վերատեսչության Հինգ թեկնածուների ռուսական ցուցակը, որը պիտի ներկայացվեր Բ. Դուանը<sup>1</sup>: Այդ ցուցակը ընդունել էին նաև Կ. Պոլսում ֆրանսիական, ավստրո-հունգարական և իտալական դեսպանները:

Վերջապես, 1914թ. ապրիլի 15-ին Լ. Մալլեթը հեռագրում էր Անգլիայի արտգործնախարարությանն այն մասին, որ նա պաշտոնապես տեղեկացվել էր Բ. Դուան ընտրության կապակցությամբ: Արևելյան վիլայեթների համար ընդհանուր վերատեսուչներ էին ընտրվել նորվեգացի գնդապետ Ն. Հոֆը և հոլանդացի ղեկմանագետ Լ. Ս. Վեսթենենկը<sup>2</sup>:

Վեսթենենկը տեսուչ նշանակվեց էրզրումի, Տրապիզոնի և Սերաստիաի վիլայեթները կազմող սեկտորի /նստավայր՝ Սերաստիա/, իսկ Հոֆը՝ Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբեքի-րի վիլայեթները կազմող սեկտորի համար /նստավայր՝ Վան/:

Արևմտահայերի հոգևոր առաջնորդ Զավին արքեպիսկոպոսը գրում էր, որ Կ. Պոլիս ժամանած ընդհանուր վերատեսուչները մեծ խանդավառություներ էին ստեղծել հայկական շրջանների մեջ: Ապրիլի 26-ին/ մայիսի 8-ին/ նա ընդունել էր վերատեսուչներին<sup>3</sup>:

Եվրոպացի վերատեսուչների և Բ. Դուան միջև սկսված բանակցություններն ավարտվել էին 1914թ. մայիսի 10-ին կնքված պայմանագրերով<sup>4</sup>: Պայմանագրերը զգալիորեն կրճատել էին վերատեսուչների իրավունքները և նրանց գործունեությունը ամբողջովին ենթարկել թուրքական կառավարությանը: Պայմանագրերի ստորագրումից անմիջապես հետո Ջեմալ փաշան հայտարարեց, թե նշված վերատեսուչներին դիտում է «սչ թե իբր Եվրոպայի ներկայացուցիչներ, այլ իբր պարզապես օսմանցի պաշտոնյաներ»<sup>5</sup>: Փաստորեն վերատեսուչները վերածվում էին թուրքական կառավարության հյուսիսային տարրերի:

<sup>1</sup>Реформы в Армении..., стр.177; «Բյուզանդիոն», 1914, 25 մարտի, N 5308:

<sup>2</sup>BDOW, vol.10, N 595.

<sup>3</sup>ՀԱԱ, ֆ. 57, ց.5, գ.65, ք.53; Զավեն արքեպիսկոպոս, Պատրիարքական հուշեր, վավերագրեր և վկայություններ, Գահիրե, 1947, էջ 41:

<sup>4</sup>Այդ մասին մանրամասն տես Լեո, Հայոց հարցի վավերագրերը, էջ 342, 350: Реформы в Армении..., стр.180.

<sup>5</sup>Ա.Չոպանյան, Հայաստանը թուրք լուծին տակ, Պոստոն, 1918, էջ 37:

Անգլիայի արտգործնախարարությունում այդ պայմանագրերը գնահատել էին որպես «ցավալի սկիզբ»<sup>1</sup>: Անգլիացիները, փաստորեն, լավ էին հասկանում, որ, ըստ էության, եվրոպացի ծառայողները ոչ թե վերատեսուչներ էին դառնալու, այլ թուրքական իշխանության ներկայացուցիչներ և որ իմաստ չուներ շատ բան սպասել անձնավորություններից, որոնց ազահության մասին արհամարանքով էր խոսում Հենց Մեծ վեզիր Սաիդ Հալիմ փաշան: Լ.Մալլեթի խորին համոզմամբ ևս վերատեսուչները բարենորոգումներն իրագործելու համար որե՛կ աջակցություն չէին ստանալու Բ.Պոան կողմից<sup>2</sup>:

Ինչ վերաբերում է ընդհանուր վերատեսուչներին, ապա նրանք չհասցրեցին գործնականում, անցնել իրենց պարասկանությունների կատարմանը: Զավեն արքեպիսկոպոսը վկայում է, որ 1914թ. հունիսի 19-ին/ հուլիսի 2-ին/ զնդապետ Հոֆը իր քարտուղարների բնկերակցությամբ Պատրիարքարան է ներկայանում հրաժեշտի այցի համար: Նա նշում է, որ մի քանի օր հետո «Հոֆը Կարնո Ճանապարհով մեկնում է Վան, իսկ Վեսթենենկը մեկ-երկու շաբաթ ևս մնում է Կ.Պոլսում և աակավին դեպի Հայաստան ճանապարհ չի բնկնում»<sup>3</sup>:

Հոֆի մեկնումն իր պաշտոնատեղը առաջացրել էր Իթթի-հատի դժգոհությունը և անշուշտ նրա թեկադրությամբ էր, որ դժգոհությունը ծայր առավ նաև դավառներում: Մահմեդական խուժանն այնպիսի վայրի աղաղակներով և սպառնալիքներով դիմավորեց Հոֆին, որ նրան ուղեկցող թուրք ժանդարմները ստիպված էին պաշտպան կանգնել<sup>4</sup>: Վանի թուրք պաշտոնյաները նույնիսկ հրաժարվել էին ենթարկվել Հոֆին<sup>5</sup>:

Եթե Հոֆը ժամանել էր հայկական վիլայեթ, ապա Վեսթենենկն այդպես էլ չհասցրեց ուղեորվել Արևմտյան Հայաս-

<sup>1</sup>J.Heller, Ibid., p. 92.

<sup>2</sup>Նույն տեղում, p.22

<sup>3</sup>Զավեն արքեպիսկոպոս, նշված աշխ., էջ 41:

<sup>4</sup>Ա.Չոպանեան, նշված աշխ., էջ 37:

<sup>5</sup>«Բյուզանդիոն», 1914, հուլիսի 15, N 5401; Ս.Սերոբյան, Հայկական հարցը և անոր փուլերը, Պեյրուք, 1937, էջ 140:

տան<sup>1</sup>, քանի որ շուտով պայթեց առաջին համաշխարհային պատերազմը:

Օդավելով պատերազմի առիթից՝ Բ. Դուռը շտապեց դեֆակտո չեղյալ համարել բարենորոգումների ծրագիրը: Թուրքական կառավարությունը հա էր կանչում վերատեսուչներին և կասեցրնում նրանց աշխատանքը<sup>2</sup>: Այն, որ բարենորոգումների պայմանագիր կնքվել էր միայն Ռուսաստանի հետ, ավելի հեշտացրեց նրա փոփոխումը թուրքերի կողմից: Իրականությունից շատ հեռու էին Մեծ Բրիտանիայի վարչապետ Ասքուիթի և արտգործնախարար Է. Գրեյի այն ակնկալիքները, թե սկսված պատերազմը ազատագրական էր փոքր ժողովուրդների համար և մեկընդմիջտ կապտեեր նրանց թուրքիայի, Ավստրիայի և Գերմանիայի լծից:

Առաջին համաշխարհային պատերազմը, փաստորեն, ոչ միայն պատեհ առիթ դարձավ երիտթուրքերի համար Արևմտյան Հայաստանի բարենորոգումների խնդրին վերջ դնելու, այլև մեծադույն չարիք եղավ հայ ժողովրդի համար: «Օսմանյան կառավարությունը նախընտրեց լուծել Հայկական հարցը իրեն հոգեհարազատ միջոցով հեռևողականորեն իրազործելով իր կողմից մշակված և բնդունված բնաջնջման քաղաքականությունը»<sup>3</sup>: Արևմտյան Հայաստանը շարունակեց մնալ տերությունների պայքարի ոլորտում և դարձավ երիտթուրքերի սճրագործությունների գոհ: «Մենք ջարդվեցինք թուրքի ձեռքով, բայց եվրոպական դիվանագիտության երեսին: Անոնց յուրաքանչյուրը իր շահը միայն փնտրեց մեր արյուններուն, մեր բնաջնջումին մեջ»<sup>4</sup>:

Այսպիսով, մեծ տերությունների վարած քաղաքականությունն էր, որ նպատակե երիտթուրքերի դիվային ծրագրերի իրազործմանը: Այդ առումով Մեծ եղեռնի պատասխանապետությունը բնկնում է բոլոր մեծ տերությունների, այդ

<sup>1</sup> «Վեմ». 1935, հուլիս-օգոստոս, էջ 1; J. Heller, Ibid., p. 22.

<sup>2</sup> А. Манделъштам, Младомурецкая держава, сmp. 34; L. C. Westenenk, The Diary Concerning the Armenian Mission, "Armenian Review", Spring 1986, vol. 39, N1. p. 81.

<sup>3</sup> Դ. Д. Мнацаканян, Разрешение Армянского вопроса, Москва, 1914, сmp. 17.

<sup>4</sup> J. A. R. Marriot, The Eastern Question. A Study in European Diplomacy, Oxford, 1917, p. 417.

<sup>5</sup> Մուշեղ արքեպիսկոպոս, Յայկական մղձավանջը, Բոստոն, 1916, էջ 65:

Թվում նաև Անգլիայի վրա: Անգլիան, ելնելով իր քաղաքական շահախնդրություններից, անտեսում էր փոքր ժողովրդի հայերի համար ստեղծված արհավիրքային վիճակը: Առաջին համաշխարհային պատերազմին նախորդող ամիսներին Անգլիան, ինչպես միշտ, շարունակում էր իր ավանդական երկդիմի քաղաքականությունը հայ ժողովրդի նկատմամբ:

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔՆ ՈՒ ՄԱՄՈՒԼԸ  
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Աշխատութիւնում ուսումնասիրված նյութերը վկայում են, որ Հայկական Հարցում Անգլիայի քաղաքականութեան հիմքում ընկած էին պետական եսասիրական շահերն ու հետաքրքրութիւնները, որոնց էլ ծառայեցվում էր Հայկական Հարցը:

Գիտական հետաքրքրութիւն է ներկայացնում Հայկական Հարցի նկատմամբ Անգլիայի Հասարակական շրջաններին և մամուլի դրսևորած վերաբերմունքը:

1912թ. աշնանը՝ մինչ Բալկանյան առաջին պատերազմը, անգլիական մամուլը հաճախ անդրադառնում էր արևմտահայութեան աղետալի վիճակին: 1912թ սեպտեմբերին «Թայմսը» ("The Times") գրում էր, որ հայերի գրութիւնը գնալով ավելի էր ծանրանում. աճում էին սպանութիւնների, առևանգումների, ավազակութիւնների թիվը, սակայն երիտթուրքական իշխանութիւնները ոչինչ չէին ձեռնարկում և անուշադրութեան էին մատնում անդամ հայոց պատրիարքի բոլոր բողոքներն ու դիմումները<sup>1</sup>: «Մորնինգ փոսթը» ("Morning Post") մասնավորապես նշում էր, որ հայերից ոչ ոք էլ չէր հավատում, թե թուրքական կառավարութիւնը երբևէ կբարեկամի իրենց գրութիւնը, քանի որ բաղմիցս տված խոստումները երբեք չէին իրականացվել<sup>2</sup>:

Անգլիայի Հասարակութեան առաջադեմ շրջանները ավելի քան 30 տարի արժարժում էին Հայկական խնդիրը: Արևմտահայութեան նկատմամբ երիտթուրքերի քաղաքականութիւնից վրդովված Հայկական Հարցի վերաբացման օրերին, նրանք հայերին աջակցելու ուղիներ էին փնտրում: Այդ օրերին, ինչպես և հետագայում, անգլիական խորհրդարանի անդամ Ջ.Ա.Բրայսը նշում էր, որ «անգլիացիները մեղավոր են հայերի առջև: Եթե մենք Բեռլինի վեհաժողովում չփոխեինք 16-րդ հոդվածը 61-ով, ապա Ռուսաստանը վաղուց ազա-

<sup>1</sup>ՀԱԱ, ֆ. 412, ց. 1, գ. 606, ք. 35:

<sup>2</sup>Նույն տեղում, ք. 34:

տաղրած կլինեն բազմատանջ հայ ժողովրդին բարբարոս Թուրքիայի լծից: Անգլիան պարտավոր է իր մեղքը քափել հայ հասարակության առջև»<sup>1</sup>:

1912թ.նոյեմբերի 29-ին անգլիական խորհրդարանի անդամ Նոյել Բաքսթոնի (Noel Buxton) ղլխավորած Լոնդոնում գործող «Բակլանյան կոմիտեն» արտոգործնախարար Է. Գրեյին հղած դիմումում առաջարկում էր ստանձնել Հայկական հարցի կարգավորման նախաձեռնությունը և հայկական նահանգների համար սահմանել 1864թ. Լիրանանի համար հաստատված կառավարման համակարգը<sup>2</sup>:

1912թ. դեկտեմբերի 12-ին, արևմտահայությանն օգնելու խնդրանքով Է. Գրեյին դիմել էր «Հայաստանի բարեկամներ» ("Friends of Armenia") կազմակերպության նախագահ լեդի Ֆրեդերիք Գավենդիշը (Frederick Cavendish)<sup>3</sup>: Նա նշում էր, որ ստեղծված իրավիճակում անհրաժեշտ էր հայկական վիսայեթների համար քրիստոնյա կառավարիչներ նշանակել, որոնք անկախ կլինեն Բ. Դոնց և կհսկվեն տերությունների կողմից<sup>4</sup>: 1913թ. հունվարի 15-ին անգլիական բազմաթիվ թերթեր տպագրեցին «Հայաստանի բարեկամներ» կազմակերպության կողմից: Հայաստանի բարեկամները դիմում էին անգլիական հասարակությանը՝ երկու պատերազմների արդյունքում սովամահության դատապարտված ժողովրդի համար նպաստ հավաքելու խնդրանքով<sup>5</sup>:

Հայաստանում հասարակական կազմակերպությունների առաջարկները մերժվել էին Անգլիայի արտոգործնախարարության կողմից: Պաշտոնական Անգլիայի նման դրսևորումն իր ազդեցությունն ունեցավ անգլիական մամուլի վրա, որը փաստորեն, Հայկական հարցի վերաբացման օրերին լուծյուն էր պահպանում Հայկական խնդրի կապակցությամբ<sup>6</sup>:

<sup>1</sup> „Кавказское слово“, 1918, 17 декабря, N 272.

<sup>2</sup> J. Heller, Ibid., p. 6.

<sup>3</sup> «Հայաստանի բարեկամներ» կազմակերպության մասին տես А.Киракосян, Великобритания и Армянский вопрос, Е., 1990, стр.164; Ա.Նախապետ, նշվ. աշխ., էջ 47:

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> «Բուքսնիա», 1913, 22 հունվարի, N 281106:

<sup>6</sup> ՅԱԱ, ֆ. 57, ց.5, գ.31, ք.9:

Անգլիական մամուլի ծայրագույն զգուշավորութիւնը Հայկական հարցի լուսարանման խնդրում շարունակվեց գրեթե մինչև 1913թ. գարնան վերջը: Եվրոպայի հայոց առաջնորդ Գևորգ եպիսկոպոս Յութուշյանը բացատրում էր այդ դիրքը նրանով, որ «անգլիական ազգեցիկ մամուլն այդ կապակցութ-յամբ հավանաբար հատուկ կարգադրութիւն էր ստացել և Հայկական հարցին անդրադառնալու համար սպասում էր արտգործնախարար Է.Գրեյի կողմից խնդրի վերաբերյալ Անգլիայի բոնելիք ուղղութեան ուրվագծմանը»<sup>1</sup>: Անգլիայի հանրային կարծիքը ոչ մի բացատրութիւն չէր կարողանում տալ Հայկական հարցում անգլիական խորհրդարանի, մամուլի և քրիստոնյա եկեղեցու լուսթյանը: Այդ կապակցութեամբ «Դեյլի Թեյլեգրաֆը» (*The Daily Telegraph*) 1913թ. հունվարի 16-ին գրում էր, որ «քրիտանական մայրաքաղաքում զարմա-նում էին, որ այն պահին, երբ Մակեդոնիայի ճակատագիրը վիճաբանութեան առարկա էր դարձել, կարծես թե բոլորովին մոտացութեան էր մասնակցել տառապանքի և ցավի նրա քույրը՝ Հայաստանը»<sup>2</sup>:

Այդուհանդերձ 1913թ. հունվարին առանձին հոդվածներ են տպագրվում անգլիական մամուլում: Այդ հոդվածներում նշվում էր, թե թուրքերի կողմից հրավիրված անգլիացիների հսկողութեան ներքո Բրդստանում և Թուրքահայաստանում նախատեսվում էր բարենորոգումների իրագործում<sup>3</sup>: Պարզ է, թե որքանով էին հիմնավորված այս տեղեկութիւնները, բայց և այնպես նշված օրերին անգլիական հանրութեան մի մասն ի դեմս լեդի Բալենդիշի և մյուսների համոզված էր, որ Հայկական խնդրի միակ լուծումը անկասկած օտարերկրյա հսկո-ղութեան հաստատումն էր: Այդ մասին լեդի Բալենդիշը կրկին 1913թ. հունվարի 16-ի իր նամակում գրում էր Է.Գրեյին<sup>4</sup>: Այլ կարծիք էր հայտնում արտգործնախարարին ««Հայաստան» բրիտանական կոմիտեի» (*British Armenia Committee*) քարտուղար Ա.Ջ.Սայմոնսը (*A.G.Symonds*): Անդրա-

<sup>1</sup>Նույն տեղում, գ.152, ք.13:

<sup>2</sup>«Բյուզանդիոն», 1913, 18 սեպտեմբերի, N 5149:

<sup>3</sup>ABПP, ф. Посольств в Константинополе, 1913, д.1605, л. 67; «Բուրբանիա», 1913, 18 հունվարի, N 261104:

<sup>4</sup>J.Heller, *Ibid.*, p 7.

դառնալով հայերի աղետալի կացությանը՝ Սայմընդսը նշում էր, թե վերջինների վիճակը բարելավելու ամենալավ միջոցը կարող էր լինել Ռուսաստանի կողմից Արևմտյան Հայաստանի անեքսիան<sup>1</sup>։

Անգլիական իշխանությունների գիրքսրոշման մասին բավական հստակ 1913թ. փետրվարի 15-ին զրոււմ էր «Դեյլի թելեգրաֆը»։ Թերթը եզրակացնում էր, որ Անգլիան Հայկական Հարցի ուղղությամբ որևէ քայլ առայժմ չէր պատրաստվում անել<sup>2</sup>։

Անգլիական կառավարութայն կողմնորոշման վրա ազդեցություն չունեցավ նաև, 1913թ. ապրիլի 25-ին Լոնդոնում կայացած, միջազգային խորհրդաժողովի կողմից Է.Գրեյին փոխանցված բանաձևը։ Խորհրդաժողովին ներկա էին Արևմտյան Հայաստանի շահերը պաշտպանելու նպատակով Անգլիայում<sup>3</sup> ինչպես անգլիական, այնպես էլ հայկական, Ֆրանսիայում, Գերմանիայում, Շվեյցարիայում ստեղծված կոմիտեների պատվիրակները և Եվրոպայում հայ ազգային պատվիրակութայն ներկայացուցիչներ Պողոս Նուբարը և Գ.Մոստիճյանը<sup>3</sup>։

Խորհրդաժողովն, անգլիացի հայտնի հասարակական և քաղաքական գործիչ, անգլիական խորհրդարանի անդամ Անեւրին Ուելլսամսի (Aneurin Williams) նախագահությամբ որոշեց՝ ներկայացնելով իրողությունը, Եվրոպայում հասարակական կարծիքը տրամադրել հօգուտ հայերի, ճնշում գործադրել տերությունների կառավարությունների վրա՝ Բալկանյան պատերազմի ավարտից անմիջապես հետո ստանձնել բարենորոգումների իրագործումը հայկական վիլայեթներում, տերությունների արագորձնախարարներին փոխանցել հանձնաժողովի ընդունած բանաձևերի հետ մեկտեղ հայկական վիլայեթների համար ներկայացվող բարենորոգումների ծրագիրը<sup>4</sup>։

Երկու շաբաթ անց՝ 1913թ. մայիսի 8-ին Անգլիայի հայասեր ներկայացուցիչներն այս անգամ անգլիական պառլամեն-

<sup>1</sup>Նույն տեղում։

<sup>2</sup>Ե. Չ. ՊԱՊ, ֆ. 100, գ. 382, ք. 4։

<sup>3</sup>АВПР, ф. Политархив, 1913, д. 3480, л. 140; Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919), стр. 40-41.

<sup>4</sup>Բանաձևի ամբողջական տեքստը տես АВПР, ф. Политархив, 1913, д. 3460, лл. 141-144.

տուժ, դիմեցին արտգործնախարարութեանը Հայկական Հարցով պատասխանելու խնդրանքով<sup>1</sup>: Խորհրդարանի անդամներ Ջեյմս Աննան Բրայսը (James Annan Bryce) և Թ.Փ.Օ'Քոննըրը (T.P.O'Connor), ելույթ ունենալով Համայնքների պալատում, առաջարկեցին հանրութեան առջև դնել Հայկական Հարցը:

Ջ.Ա.Բրայսը մանրամասն ներկայացնելով արևմտահայութեան վիճակը ընդգծեց, որ խնդրի լուծումն անհրաժեշտ էր նաև Անգլիայի և մյուս տերութիւնների շահերն ապահովող բազմաթիւ պատճառներով: Անդրադառնալով Կիպրոսի համաձայնագրով Թուրքիայի ամբողջականութեան պահպանման վերաբերյալ Անգլիայի պատասխանատւութեանը՝ Բրայսը նշում էր, որ անգլիական կառավարութիւնը բարենորոգումներ պահանջելու իրավունք ուներ: Նա համառոտ ձևով ներկայացրեց խորհրդարանին հայերի կողմից ներկայացված բարենորոգումների ծրագիրը և այն հայտարարելով խիստ չափավոր, խնդրեց արտգործնախարարութեանը նպաստավոր կերպով նկատի առնել հայկական պատվիրակութեան պահանջները:

Օ'Քոննըրը բաժանելով Բրայսի կարծիքը՝ հայտարարեց, որ Եվրոպայի հանրային կարծիքն անհանգստացած է և միակամ է Հայկական Հարցի լուծման կապակցութեամբ: Նա նշում էր, թե խորհրդարանում Հայկական Հարցի բարձրացումը կառավարութեան վրա ճնշում գործադրելու նպատակ չէր հետապնդում, որովհետև վստահ էր, որ կառավարութիւնը կպաշտպաներ արևմտահայութեան խնդիրը: Պարզապես, ըստ Օ'Քոննըրի, անհրաժեշտ էր հայ բարեկամներին հավաստել, որ անգլիացիները համակրում են հայերին և գործելու են ճշգրտ նրանց:

Ջ.Ա.Բրայսի և Թ.Օ'Քոննըրի ելույթներին հետևած արտգործնախարարութեան խորհրդական Պ.էքլընդի (P.Acland) պատասխանն ամբողջովին համահունչ էր անգլիական դիվանագիտութեան մշակած դիրքին: Խորհրդականը նշեց, որ Հայկական խնդրի արծարծման հետ կապված նախևառաջ անհրաժեշտ էր նկատի առնել Անգլիայի պետական շահերը: Այդ կապակցութեամբ էլ բարենորոգումները պետք է քննարկվեն

<sup>1</sup> Լ.Քոնքանսոն, Հայկական հարցին վերջին փուլերը, Կ.Պոլիս, 1921, էջ 65:

և իրագործվեն մյուս տերությունների հետ համահունչ և ոչ անջատ ու մասնավոր գործողությամբ: Միայն այդ դեպքում, ըստ արտգործնախարարության, հնարավոր էր հասնել որևէ արդյունքի<sup>1</sup>:

1913թ. մայիսի 29-ին Հայկական հարցը կրկին քննարկման առարկա դարձավ անգլիական պառլամենտում: Իր խոսքում Օ՝Քոննորը այս անգամ խորհրդարանին ներկայացնելով հայերի պահանջները, նշեց, որ Մ/ հայերը անջատողական ձգտումներ չունեն, այլ միայն բարենորոգումներ անձի և գույքի ապահովման երաշխիքներ էին գանկանում և Չ/ որն ամենակարևորն էր, հայերը բարենորոգումները միայն իրենց համար չէին պահանջում, զրանցից կօգտվեին նաև մյուս ազգերը: Օ՝Քոննորը գոհունակությամբ էր վերաբերում Թուրքիայի ապագան որոշող առաջիկա խորհրդաժողովում Հայկական հարցի բարձրացման խոսամանը:

Ի տարբերություն Օ՝Քոննորի խորհրդարանի անգամ Ա.Փոնսոնբին (A.Ponsonby) լավատեսորեն չէր արամադրված: Նա նշում էր, որ Հայկական հարցը երբևք այդքան հեռու չի եղել իր լուծումից: Ա.Փոնսոնբին համոզված էր, որ խնդրի լուծումը ոչ թե բարենորոգումներ իրագործելու որոշման մեջ էր, այլ այդ բարենորոգումներն իրագործելու երաշխիքների ապահովման:

Մայիսի 29-ին Է.Գրեյը պառլամենտում ունեցած իր ելույթում Հայկական հարցին առանձնապես մեծ կարևորություն չտալով՝ պարզապես հայտարարեց, որ Հայկական բարենորոգումների խնդրով պետք է զբաղվեն Ասիական Թուրքիայում հետաքրքրություններ ունեցող բոլոր տերությունները և Թուրքիան: Է.Գրեյի կարծիքով Թուրքական կառավարությունը չահագրգռված էր կարգավորել և ամրապնդել իր իշխանությունն ասիական նահանգներում:

Այն հանգամանքը, որ քաղաքական նկատառումներով անգլիական կառավարությունը ստիպված էր հրաժարվել իր պատիվ դրսևորումից Հայկական հարցում, կողմնորոշեց նաև անգլիական մամուլը:

<sup>1</sup>Նույն տեղում, էջ 74:

<sup>2</sup>«Ararat», London, 1913, July, vol.1, N 1, pp 12-13.

1913թ. մայիսին Արևմտյան Հայաստանի, Հայկական Հարցի մասին մեծ թվով հողվածներ տպվեցին անգլիական մամուլում: Մայիսի 23-ին «Թայմսը» տպագրեց Պողոս Նուբար փառալուսի հողվածը<sup>1</sup>, որը նոր փաստերի հիման վրա լրացնում էր մայիսի 12-ի նույն թերթում խմբագրության կողմից տպագրված Հայկական Հարցի մասին հողվածը: Նուբար փառալուսի արևմտահայերի ձգտումների և պահանջների վերաբերյալ որոշ պարզաբանումներ և ճշտումներ կատարելով՝ բացատրում էր նաև, որ Հայկական վիլայեթների համար պահանջվող բարենորոգումները նախատեսվում էին բոլորի՝ և՛ քրիստոնյաների և՛ մահմեդականների համար:

Մայիսի 30-ին «Գլազգոու Հերալդը» (“Glasgow Herald”) տեղեկացնում էր Շոտլանդական եկեղեցու (Church of Scotland) և Միացյալ Ազատ եկեղեցու (United Free Church) հոգևոր առաջնորդների կողմից Եվրոպայի հայոց առաջնորդ Գևորգ Կալսկոպոս Յուլիանի ընդունելության մասին և տպագրում էր հայության անունից ներկայացրած օգնության խնդրագիրը<sup>2</sup>:

1913թ. հունիսից անգլիական մամուլը պարբերաբար նոր տեղեկություններ էր հաղորդում հասարակությանը: Լրագրերը տպագրում էին սեփական թղթակիցների հողվածները, հյուպատոսներից և միսիոներներից ստացված տեղեկությունները:

Հունիսի սկզբին «Բնթեմփրըրի Ռեյուն» (“Contemporary Review”) տպագրեց անգլիացի հայտնի լրագրող, մի քանի տասնյակ տարիներ թուրքիայում բնակված էդվին Փիրսի (Edvin Pears) ընդարձակ հողվածը Արևմտյան Հայաստանի և Հայկական Հարցի մասին<sup>3</sup>: Նա գրում է, որ վերջին վեց շաբաթների ընթացքում լարվածությունը հայ բնակչության և իշխանությունների միջև սարսափելի սրվել էր: Լրագրողը տեղեկացնում էր, որ հայոց պատրիարքը՝ ի նշան բողոքի, սպառնում է հրաժարականով: Է. Փիրսի համոզմամբ՝ Ռուսաստանը միակ պետությունն է, որ ի վորու է պաշտպանել հայերին:

<sup>1</sup>Ե. Օտյան, “Պողոս փառալուսի նուբար, էջ 7476; Ա. Եսայիան, Եզվ. աշխ., էջ 24:

<sup>2</sup>ՅԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 152, ք. 9, 10:

<sup>3</sup>“Ararat”. 1913, July, vol. 1, N 1, p. 16.

Հայկական հարցում տերությունների քաղաքականութ-  
յանն էր անդրադարձել հունիսի 7-ին «Նեյշնը» (“The  
Nation”)<sup>1</sup>, որը նշում էր, թե տերությունները պետք է աջակ-  
ցեին Թուրքիայի ֆինանսական և սնտեսական ճգնաժամի  
հաղթահարմանը՝ այն պայմանով, ու վերջինս հայերի ապա-  
զան ապահովելու երաշխիքներ ստեղծեր:

1913թ. հունիսի 18-ի «Թրութում» (“Truth”)<sup>2</sup> տեղ գտած  
տեղեկությունների համաձայն՝ Արևմտյան Հայաստանում ահա-  
բեկչություններին վերջ չկար, և նոր աղետների սարսափը  
գնալով աճում էր: Նման պայմաններում, ինչպես հուլիսի 3-  
ին գրում էր հայտնի հասարակական գործիչ, լրագրող Հա-  
րոլդ Սփենդերը (Harold Spender) «Դեյլի նյուս Ընդ Լիդերում»  
 (“The Daily News and Leader”), հայերը անգամ չէին մտածում  
անկախություն մասին. նրանք ավելի գերադասում էին և՛ վրո-  
պայի պաշտպանությունը, և՛ թե իհարկե այդ պաշտպա-  
նությունը լինեք հրատապ և կայուն<sup>3</sup>:

1913թ. հունիսի վերջերից անգլիական թերթերն արդեն  
սկսեցին գրել Հայկական հարցի շուրջ զուգարվելիք դեպա-  
նաժողովի մասին:

Հունիսի 24-ին «Մորնինգ փոսթը» համառոտակի ներկա-  
յացնում էր ուսսական կառավարությունների կողմից կազմված  
Հայաստանի համար նախատեսվող բարենորոգումների ծրագրի-  
րը, որը պիտի քննարկեին դեսպանները<sup>4</sup>: Իսկ թուրքական կա-  
ռավարությունների կողմից դեսպաններին ներկայացրած Ասիա-  
կան վիրայեթների համար ընդհանուր նախագծի մասին գրում  
էր հուլիսի 3-ի «Թայմսը»<sup>5</sup>: Հուլիսի 4-ին, 5-ին, 7-ին «Դեյլի  
թեյնդեյլի» մանրամասն տեղեկություններ է հաղորդում բա-  
րենորոգումների քննարկումների մասին<sup>6</sup>: Թերթը տեղեկաց-  
նում է դեսպանների նախնական հանդիպման, «Հայկական  
բարենորոգումների հանձնաժողովի» ստեղծման, քննարկում-  
ները սկսելու, թուրքերի կողմից ներկայացրած բարենորո-

<sup>1</sup>Ibid., p. 15.

<sup>2</sup>Ibid., p. 20.

<sup>3</sup>Ibid., pp 19-20.

<sup>4</sup>Ibid., pp. 13, 21.

<sup>5</sup>Ibid., p. 22; BDOW, N 527.

<sup>6</sup>“Ararat”, 1913, July, vol. 1, N 1, pp. 22, 24.

գումաների ըհգհհանուր նախագծի, ինչպես նաև քննարկումները տասպալելու թուրքական ճիգերի մասին:

Հուլիսի 5-ին «Արարատի թերթը» շարաթարթերթը հանդես եկավ «Պատրանքային խոստումներ» խորագրված հոդվածով: Պարբերականը հուլիս էր հայտնում, որ դեսպաններին վերջացես կհաջողվի համաձայնության գալ Բ. Դոան հետ և ընդունել բարենորոգումների այնպիսի ծրագիր, որը կիրագործվեր ի տարբերություն Բեռլինի դաշնագրում տեղ գտած խոստումների<sup>1</sup>:

Սակայն Հայկական խնդրի յուժման հետ կապված անգլիական հանրության ակնկալիքներն ի չիք դարձան դեսպանաժողովի աշխատանքների ավարտի հետ մեկտեղ: 1913թ. հուլիսի 25-ին «Դեյլի թեյեգրաֆը» գրում էր, որ Ենի-Քյոյում ոչ մի համաձայնություն չկայացավ<sup>2</sup>: Իսկ «Թայմս» կը հուլիսի 26-ին տեղեկացնում էր, որ իրավիճակն Արևմտյան Հայաստանում գնալով ավելի ու ավելի է վատթարանում է<sup>3</sup>: Միաժամանակ «Դեյլի թեյեգրաֆը» տեղեկացնում է, որ Ռուսաստանը զորքեր է կենտրոնացնում Թուրքիայի սահմանին<sup>4</sup>: Անգլիայի վարչապետ Հ. Հ. Ասքվիթը հուլիսի 25-ին Բիրմինհեմում արտասանած ճառում ընդգծեց Ռուսաստանի կողմից Արևմտյան Հայաստանի հնարավոր օկուպացիայի վերաբերյալ իր մտավախությունը<sup>5</sup>: «Դեյլի նյուսի» կողմից առևտրական զորքերի նոր տեղարաշխումը բացատրվում էր Թուրքիան ազգեցության ոլորանների բաժանելու Ռուսաստանի մտադրություններ և պատրաստակամություններ<sup>6</sup>:

Հուլիսի 6-ին «Արարատի թերթը» տպագրված նամակում հայերի սղբալի վիճակի մասին է գրում իր հայանպաստ գործունեություններ հայտնի հասարակական գործիչ Էմիլի Ռոբինսոնը (Emily Robinson)<sup>7</sup>: Նա հավաստիացնում է, որ հայերը ինքնավարական ձգտումներ չունեն և խնդրում են միայն արդարագատություն ու օրինական կառավարում: Ռոբինսո-

<sup>1</sup>“Ararat”, 1913, August, vol. 1, N 2, p. 58.

<sup>2</sup>Ibid., p. 59.

<sup>3</sup>Ibid., p. 58.

<sup>4</sup>R. Davison, Ibid., p. 18.

<sup>5</sup>“Ararat”, 1913, August, vol 1, N 2, p. 52.

<sup>6</sup>Ibid., N 2, p. 51

<sup>7</sup>“Ararat”, 1913, September, vol. 1, N 3, p. 96.

նի համոզմամբ՝ Հայաստանում խաղաղությունն չի հաստատվի, մինչև չհնչանակվի եվրոպացի կառավարիչ: Իր գրքերում է.Ռոբինսոնը գրում է հայերի անփոփոխ ծանր կացության, Աբղուլ Համիդին փոխարինած երիտթուրքերի կողմից կազմակերպված ջարդերի մասին<sup>1</sup> և հույս հայտնում՝ որ Եվրոպայի առաջադեմ հասարակությունն իր ձայնը կբարձրացնի՝ ի պաշտպանություն տառապյալ ժողովրդի<sup>2</sup>: Է.Ռոբինսոնի հողվածները, որ գարնան և ամռան ամիսներին տպագրվել էին «Դեյլի նյուս քնդ քրոնիքլ», «Սփեքթեկլթր», «Դեյլի քրոնիքլ», «Մանչեսթեր գարդիան», «Նյու իսթ» թերթերում, լայն, արձագանք էին ստացել ոչ միայն անգլիական, այլև գերմանական հասարակայնության մեջ: Այդ մասին Ռոբինսոնը գրում էր «Լոնդոնի Հայկական միացյալ ընկերության» (“The Armenian Association of London”) օրգան «Արարատ» ամսագրում: Նա տեղեկացնում է ստացված բազմաթիվ նամակների մասին: Նրանց հեղինակներն էին հայտնի ու ազդեցիկ մարդիկ և՛ շարքային անգլիացիները: Նրանք հայերին օգնելու ցանկություն էին հայտնում<sup>3</sup>:

Արևմտյան Հայաստանն ու Հայկական հարցը անգլիական մամուլում հաճախ ներկայացնում էր նաև լրագրող Հարոլդ Սփենդերը: Անգլիացի ընթերցողներն իրենց շնորհակալական և գովեստի խոսքերն էին հղում է.Ռոբինսոնին և Հ.Սփենդերին՝ նրանց կատարած մեծ գործի համար և հույս հայտնում հայերի գրությունն բարեկաման կապակցությամբ<sup>4</sup>:

Որքան էլ մեծ էր անգլիացիների կարեկցանքն ու մարդասիրական ձգտումները, դրանք զործուն ազդեցություն չունեցան Հայկական հարցում անգլիական կառավարության քաղաքական դիրքորոշման վրա: Այդ դիրքորոշումը, որը տվյալ պահին արտահայտվում էր հայկական վիլայեթների համար բարենորոգումների քննարկումների վերսկսումից հեռանալով, առաջացրել էր անգլիական հանրության վրդովմունքը:

<sup>1</sup>E. Robinson, Armenia and the Armenians. London, 1916, pp 79.

<sup>2</sup>E. Robinson, The Armenians. London, 1918. pp. 910.

<sup>3</sup>“Ararat”. 1913, August, vol. 1, N 2, p. 41.

<sup>4</sup>Նույն տեղում:

«Հայաստան» բրիտանական կոմիտեի» ("British Armenia Committee")<sup>1</sup> անուկնից խորհրդարանի անդամներ Թ.Օ'Քոննըրը և Զ.Ա.Քրայսը 1913թ. օգոստոսի 14-ին այցելում են արտագործնաիրարար Է. Գրեյին և նրան հանձնում Արևմտյան Հայաստանի համար բարենորոգումներ պահանջող հանրագիր<sup>2</sup>: Կոմիտեի անդամները նույնպես ունենին անգլիական կառավարության և հանրության ուղղորդումները հրավիրել Հայաստանի հանդեպ Եվրոպայի պարտքի և հատկապես Անգլիայի պատասխանատվության վրա: Նրանք, անհայտ թարեհորոգումներ պահանջելով Արևմտյան Հայաստանի համար՝ պնդում էին, որ թուրքահայատակ հայ ժողովրդի նորմալ կառավարման միակ երաշխիքը կարող էր լինել միայն եվրոպական տերությունների հսկողությունը:

Օգոստոսի 15-ին «Թայմսը» տպել էր նշված հանրագրի ամբողջ տեքստը և տեղեկացրել, որ այն ստորագրել էին Անգլիական եկեղեցու 14 բարձրաստիճան հոգևորականներ, 4 առաջնորդող ազանդների աստվածաբաններ (4 Leading Nonconformist Divines), խորհրդարանի 24 անդամներ և 55 այլ հայտնի հասարակական և քաղաքական գործիչներ<sup>3</sup>:

Հաջորդ օրը՝ օգոստոսի 16-ին, Է.Ռոբինսոնը, հանդես գալով «Ափեթթեյթրում» «Հայաստանը և հուսալքությունը» ("Armenia and Apathy") հոդվածով, հարցնում էր՝ կբարձրացնի՞ արդյոք անգլիական ժողովուրդն իր ձայնն ի պաշտպանություն արևմտահայերի՝ 35 տարուց ի վեր խոստացած բարենորոգումներին<sup>4</sup>:

1913թ. աշնան ամիսներին Է.Ռոբինսոնը շարունակում էր տպագրել իր նամակները տարբեր լրագրերում: Նա գրում էր, որ հնագույն մշակույթ ունեցող ժողովուրդներից մեկի լինելը չլինելու հարցն է դրված: Է.Ռոբինսոնը Արևմտյան Հայաս-

<sup>1</sup>"British Armenia Committee." կազմավորվել էր 1912թ. նոյեմբեր-1913թ. հունվարի 30 ընկած ժամանակահատվածում: Հայանպաստ քաղաքական կազմակերպություն էր, որի անդամներն անգլիական քաղաքական, հասարակական և մշակութային հայտնի գործիչներ էին: Կազմակերպության մասին տես Յայկական հարց, հանրագիտարան, Ե., 1996, էջ 91; Ա.Նասիպեան, Եզվ.աշխ., էջ 49-51; Համբավաբեր, 1917, N 22, էջ 481:

<sup>2</sup>"Ararat", 1913, September, vol.1, N 3, pp 81, 82

<sup>3</sup>ԱՅՈՒՐ, փ.Սոլուարխս, 1913, ռ. 3464, Վ. 45; "Ararat". Ibid.

<sup>4</sup>"Ararat", 1913, N 3, pp. 96-97.

տանին օգնելու և բարենորոգումների քննարկումներին միջնորդելու կոչերով դիմում է մեծ տերություններին՝ մասնավորապես անգլիական կառավարությանը:

Սակայն, ինչպես արդեն նշվել է մեր կողմից, անգլիական կառավարությունը նպատակ հետապնդելով ապահովել իր շահերը, խնդրի լուծումն այս շրջանում փաստորեն թողնելով Գերմանիային և Ռուսաստանին, ամբողջ եռանդ չէր դրսևորում Հայկական խնդրում, ինչ էլ իր արտահայտությունն էր գտել անգլիական մամուլում, որը աշնանը կրկին թուլացրել էր հետաքրքրությունը Հայկական հարցի նկատմամբ: Ոչ մեծ թվով հոդվածներ շարունակում է տպագրել «Դեյլի թեյեզ-րաֆը», որը Հայկական հարցի լուսարանման առումով առավել ակտիվ և անաչառ լրագրերից էր: Հոկտեմբերի 11-ին թերթը տպում է Կ. Պոլսի իր սեփական թղթակցի այն կարծիքը, թե թուրքական կառավարությունը մտադիր է հայկական բարենորոգումների խնդիրը լուծել «ոչ թե եվրոպական կամ ուսսական, այլ միմիայն թուրքական տարբերակով»<sup>1</sup>:

Անգլիական մամուլի պասիվ և անտարբեր դրսևորման հենքի վրա, աչքի է ընկնում և կարևոր նշանակություն ստանում հոկտեմբերի 1913թ. 31-ի «Թայմսի» առաջնորդող «Հայկական Բարենորոգումներ» հոդվածը<sup>2</sup>: Թերթը մանրամասն ու անաչառ ներկայացնում է արևմտահայությունը դրսևորումն ու բարենորոգումների խնդրի հետ կապված իրավիճակը: «Թայմսի» պնդմամբ՝ Հայկական հարցը կարող է հանգեցնել միջազգային նոր բարդությունների: Օրակարգում Ասիական թուրքիայի ամբողջականության հարցն էր: Ըստ «Թայմսի» խնդրի լուծումը թուրքական կառավարության ձեռքում էր:

1913թ. նոյեմբերի 3-ի «Թայմսի» համարում տպագրվեց խմբագրությունն ուղղված ««Հայաստան» բրիտանական կոմիտեի» անդամ, հասարակական գործիչ Հարոլդ Բաքսթոնի (Harold Buxton) նամակը: Ելբոր անգլիական խորհրդարանի անդամ Նոել Բաքսթոնի (Noel Buxton) հետ հոկտեմբերի վերջերին, Արևմտյան և Արևելյան Հայաստան կատարած ճամփորդությունից վերադարձած Հ. Բաքսթոնն իր նամակում, որպես ականաաես, փորձում էր լրացնել և պարզաբանել «Թայմ-

<sup>1</sup> "Ararat", 1913, October, vol. 1, N 4, p 118

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, զ. 57, ք. 35:

սի» հոկտեմբերի 31-ի համարում Արևմտյան Հայաստանի և Հայկական հարցի հետ կապված տեղեկությունները: Հ.Բաքսթոնը գրում է արևմտահայություն տառապանքների, քրդերի կամայականությունների, թուրքական կառավարության անտարբերության մասին:

Հայասեր անգլիացիները ձգտում էին հասարակության հետ մեկտեղ նաև կառավարության ուշադրությունը հրավիրել Հայկական հարցի վրա: Նոյեմբերի 26-ին ««Հայաստան» րրիտանական կոմիտեի» պատգամավորությունը՝ նախագահ Ա.Սելվյամս, քարտուղար Ա.Սայմոնդս (Arthur Symonds), խորհրդարանի անդամներ Ն.Բաքսթոն և Ջ.Բեյքեր (J.A.Baker), Ք.Ռոբինսոն (Cannon Robinson) կազմով, հանրագիր տալու նպատակով կրկին այցելեց արտոգործնախարար Է.Գրեյին<sup>1</sup>: Հանրագիրը հետևյալ պահանջներն էր ներկայացնում անգլիական կառավարությանը. 1/ հնարավոր ամեն բան անել թուրքական կառավարության կողմից բարենորոգումների նախագծի ընդունման ուղղությամբ, 2/ հաստատել եվրոպական վերահսկողություն և ասրահովել բարենորոգումներն իրագործելու երաշխիքներ, 3/ թուրքիային ցուցաբերվելիք ֆինանսական աջակցությունն օգտագործել որպես ճնշման միջոց, այն է թուրքիային փոխառություններ, ներդրումներ տրամադրել և համաձայնել մաքսային տուրքերի և այլ հարկերի բարձրացմանը՝ միայն բարենորոգումներ անցկացնելու համաձայնության դեպքում:

1913թ. նոյեմբերի 30-ին նման բանաձև ընդունվեց նաև Փարիզում՝ «Ասիական Ֆրանսիա կոմիտեի» նախաձեռնությամբ հրավիրված կոնֆերանսում<sup>2</sup>: Կոնֆերանսի աշխատանքներին մասնակցեցին Ֆրանսիայի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Իտալիայի, Ռուսաստանի, Շվեյցարիայի և Անգլիայի ներկայացուցիչները: Անգլիայի պատգամավորներ Ա.Սելվյամսի, Հ.Բաքսթոնի, Թ.Օ'Քոննորի ելույթների հիմնական դրույթները՝ տեղ դտան կոնֆերանսի բանաձևում, որը պիտի ներկայացվեր մեծ տերությունների կառավարություններին:

<sup>1</sup>“Ararat”, 1913, December, vol.1, N 6, p 170

<sup>2</sup>Ibid, pp. 174,176.

<sup>3</sup>Տես «Արարատ», Էջմիածին, 1914, հունվար, էջ 53-55:

1913թ. դեկտեմբերի 9-ի «Դեյլի նյուսօֆ» առաջնորդող հոդվածն անդրադառնում է Հայկական հարցի խնդրում մեծ տերությունների դիրքորոշմանը: Մեղադրելով տերություններին իրենց պարտականությունները չկատարելու մեջ՝ թերթը գրում էր, որ նրանք Հայկական հարցում ցուցաբերում են այն նույն անորոշությունը, ինչ մակեդոնական հարցում<sup>1</sup>:

1914թ. հունվարի 1-ին «Դեյլի թեյկոգրաֆը», հենվելով Կ.Պոլսում իր թղթակցի հաղորդած տեղեկությունների վրա, գրում էր, որ բարենորոգումների վերաբերյալ Ռուսաստանի և Թուրքիայի միջև հիմնական տարաձայնությունները կարծես թե հաղթահարվել են և Հայկական խնդիրը, հավանաբար, կլուծվի նոր տարվա առաջին օրերին<sup>2</sup>: Իսկ «Մանչեսթեր գարդիանի» («Manchester Gardian») սեփական թղթակիցը հունվարի 16-ին տեղեկացնում էր, որ հայերը ոգևորված են և այլևս չեն սպասում, թե ինչով կավարտվեն բանակցությունները, զինվում են և սրոշ վայրերում զիմադրում են քուրդ հրոսակիներին, սպանելով քուրդ ավազակախմբերի առաջնորդներին<sup>3</sup>:

Հայկական բարենորոգումների շուրջ 1914թ. հունվարի 26-ի համաձայնագրի ստորագրումն առանձնակի ակտիվությամբ չլուսաբանվեց անգլիական մամուլում: Փետրվարի 18-ին «Մանչեսթեր գարդիանը» տպագրել էր Պողոս Նուբարի հետ իր թղթակցի հարցազրույցը<sup>4</sup>: Իսկ փետրվարի 20-ին «Թայմսը» տպագրեց թերթի խմբագրին Պողոս Նուբարի՝ բարենորոգումների համաձայնագրի ստորագրման կապակցությամբ հղած նամակը<sup>5</sup>:

Հայկական հարցի վերաբերյալ պաշտոնական տեղեկությունների բացակայությունը ստիպեց Ն.Բաքսթոնին 1914թ. մարտի 5-ին Համայնքների պալատում հարցով զիմել արտադրծնախարարին: Է.Գրեյը չկարողացավ բավարար պատասխան տալ՝ պատճառաբանելով, որ Թուրքական կառավարությունը բարենորոգումների ծրագիրը դեռ չի ներկայացրել տե-

<sup>1</sup>“Ararat”, 1913, December, vol.1, N 6, p.185.  
<sup>2</sup>“Ararat”, 1914, January, vol.1, N 7, pp. 190,191.  
<sup>3</sup>ibid., p. 242.  
<sup>4</sup>“Ararat”, 1914, February, vol.1, N 8, p.248.  
<sup>5</sup>ibid., pp.246-247.

բություններին<sup>1</sup>: Մարտի 17-ին է. Գրեյը դարձյալ չկարողացավ որոշակի բան ասել բարենորոգումների ծրագրի կապակցութ-  
յամբ: Չցանկանալով անդրադառնալ բարենորոգումների հա-  
մաձայնագրի մանրամասներին՝ նա հույս հայտնեց, որ բարե-  
նորոգումները շուտով կիրադործվեն, իսկ համաձայնագիրը  
կբավարարի ե՛կվրոպական տերություններին, և՛ թուրքական  
կառավարությանը: Թուրքիայի կապակցությամբ է. Գրեյը  
հայտնեց, որ Անգլիայի քաղաքականությունն ուղղված է  
Թուրքիայի անձեռնմխելիության սլահպանմանը<sup>2</sup>:

Մարտի 18-ին Անգլիայի ասպործնախարարն ավելի հու-  
սադրող պատասխան տվեց Համայնաքնների պալատին:  
Ա. Ուելլյամսի այն հարցին, թե կա՞րողյոք Հայկական հարցի  
լուծման մեջ որևէ առաջխաղացում, է. Գրեյը հավաստիաց-  
րեց, թե «...շուտով կոնկրետ քայլեր կիրականացվեն բարենորո-  
գումների իրագործման ուղղությամբ, քանի որ Թուրքիան,  
եյնևրով ցավալի փորձից, շահագրգռված է և հոժարկամ  
ձգտում է վերացնել թերի կառավարման արդյունքում առա-  
ջացած վտանգը, որն արդեն բերել է մի շարք կորուստնե-  
րի»<sup>3</sup>: Խորհրդարանի ապրիլի 8-ի նիստում է. Գրեյը, պատաս-  
խանելով Ա. Ուելլյամսի հարցին, որը վերաբերում էր Բիթլիս  
կատարած քրդական արշավին, անդրադարձավ նաև բարենոր-  
ոգումների խնդրին: Նա հայտարարեց, որ իրավիճակը  
նույնն էր, ինչ մարտի 18-ին և ինքն ավելացնելու ոչինչ չու-  
նի<sup>4</sup>:

Անգլիայի արտգործնախարարն իսկապես ավելացնելու  
ոչինչ չուներ: Ինչպես հայտնի է, անգլիական կառավարութ-  
յունը միայն ապրիլի 15-ին տեղեկացվեց թուրքական կառա-  
վարության կողմից բնդհանուր վերատեսուչների նշանակման  
մասին: Այդ կապակցությամբ պաշտոնական հրապարակումներ  
չեղան: Մամուլն այժմ գրեթե չէր անդրադառնում Հայկա-  
կան խնդրին:

1914թ. ամռան սկզբին Հայկական ինդրի վերաբերյալ  
տեղեկությունների բացակայությունը կրկին քննարկման

<sup>1</sup> "Ararat", 1914, March, vol. 1, N 9, p. 282.

<sup>2</sup> «Մշակ», 1914, 8 մարտի, N 51:

<sup>3</sup> "Ararat", 1914, March, vol. 1, N 9, pp. 282-284.

<sup>4</sup> "Ararat", 1914, April, vol. 1, N 10, p. 301.

առարկա դարձավ անգլիական խորհրդարանում: 1914թ. հունիսի 16-ին, 18-ին, 29-ին, ապա հուլիսի 8-ին, 10-ին Համայնքների պալատում Ն.Բաքսթոնի և Ա.Ուիլյամսի եռանդուն և ընդարձակ ելույթներն արևմտահայուլթյան և Հայկական հարցի մասին ավարտվել էին արտգործնախարարութայանն ուղղված մի շարք հարցերով Արևմտյան Հայաստանում տիրող իրավիճակի, քարենորոգումների ծրագրի, ընդհանուր վերատեսուչների անձանց և նրանց պարտականութունների, ծառայութայան անցնելու մասին<sup>1</sup>: Թե՛ արտգործնախարարի, և թե՛ արտգործնախարարութայան քարտուղար էքլենդի պատասխանները բավարար չէին: Նրանք սեղմ և ընդհանուր տեղեկութայուններ էին ներկայացնում ընդհանուր վերատեսուչների վերաբերյալ, նշելով, որ թուրքական կառավարութայան կողմից մանրամասն տեղեկացված չեն վերատեսուչների լիազորութայունների մասին:

Պարզ չէ՝ Անգլիայի արտգործնախարարութայան վաստեղեկացված լինելու հայտարարութայունը համապատասխանում է իրականութայանը, թե ոչ: Բանն այն է, որ, ինչպես 1914թ. հունիսի 16-ին Համայնքների պալատում հայտնել էր է.Գրեյը, Թուրքիան ընդհանուր վերատեսուչների աշխատանքները հսկելու համար վարձել է 2 անգլիացի հսկող: Տրամաբանական է այն եզրակացութայունը, որ անգլիացի հսկողները, բնականաբար, նաև անգլիական կառավարութայունը, պետք է որ տեղյակ լինեն վերատեսուչների լիազորութայուններին՝ դրանք հսկելու համար:

Այսպիսով, ակնհայտ է արտգործնախարարութայան կողմից Հայկական խնդրում արտաքննապես շահագրգռվածութայուն չցուցաբերելու միտումը: Դրան հակառակ՝ Անգլիայի առաջադեմ հանրութայունը, ի դեմս պառլամենտականներ Ն.Բաքսթոնի և Ա.Ուիլյամսի, գտնում էր, որ անգլիական կառավարութայունն ակտիվութայուն պիտի դրսևորի հայկական բարենորոգումների յուժման խնդրում՝ ելնելով ոչ միայն մարգասիբական զաղափարներից: Ինչպես նշում էր Ա.Ուիլյամսը, խնդիրը կապված էր Անգլիայի բարի համբավի հետ, քանի որ հենց Անգլիան էր, որ ավելի քան 30 տարի առաջ արդեւակեց Հայկական խնդրի յուժումը: Այդ իսկ պատճառով

<sup>1</sup>"Ararat", 1914, July, vol.2, N 13, pp 13,20.

անհրաժեշտ էր ոչ թե պարզապես բարեկամական չեզոքութ-  
յուն որդեգրել, այլ աշխույժ և գործուն հետաքրքրություն  
ցուցաբերել Հայկական հարցի նկատմամբ<sup>1</sup>: Ի դեպ, Ուիլյամսը  
հայանպաստ իր ելույթում նշեց նաև, թե չպետք է մոռանալ,  
որ Հայկական խնդրի լուծումն անդրադառնում է նաև Անգլի-  
իայի անմիջական շահերին: Խորհրդարանի համոզմամբ՝ դա  
կապահովեր Թուրքիայի տարածքային ամբողջականությունը,  
որն էլ իր հերթին կայունություն կապահովեր Անգլիայի  
մահմեդական բնակչության ունեցող գաղութներում: Ըստ  
Ուիլյամսի, տվյալ խնդրի լուծումը կարող էր նաև ազդել մեծ  
տերությունների միջև խաղաղության հաստատման վրա: Կար-  
ելի է եզրակացնել, որ միայն մարդասիրական ձգտումները  
չէին, որ անգլիական հասարակության հայասեր ներկայա-  
ցուցիչներին շատերին մղում էին հանդես գալ հոգևտ  
արևմտահայերի: Նրանց կողմից նույնպես մոռացված չէին  
տրվում Անգլիայի շահերը և Հայկական հարցի հետ առնչվող  
հետաքրքրությունները:

Այսպիսով, 1912-1914թթ. անգլիական մամուլը պարբե-  
րաբար անդրադառնում էր Հայկական հարցին: Սակայն անգլի-  
իական թերթերը՝ առանձին բացառություններով, մեծ ուշադ-  
րություն չէին դարձնում խնդրի լուսաբանմանը: Անգլիական  
մամուլի հետաքրքրությունը Հայկական հարցով, ինչպես և  
սուլադրվող նյութերի բովանդակությունը հիմնականում որոշ-  
վում էր Հայկական հարցում անգլիական կառավարության  
յիրքորոշմամբ: Պաշտոնական դիրքորոշումն արտացոլող  
անգլիական թերթերը հիմնականում տեղեկատվական բնույթի  
հոդվածներ էին տպագրում: Բայց և այնպես, մամուլում տեղ  
գտած անգլիական առաջադեմ հանրության ներկայացուցիչ-  
ների հոդվածներում, նամակներում և դիմումներում հնչում  
էին ոչ միայն պահանջներ, այլև մեղադրականներ և հիշեցում-  
ներ մեծ տերությունների մասնավորապես անգլիական կառ-  
ավարության հասցեին, Հայկական հարցի վերաբերյալ իրենց  
պատասխանատվության և պարտքի մասին: Այդուհանդերձ,  
այդ ազնիվ և ոգեշունչ ելույթներն ու կոչերը չփոխեցին  
անգլիական կառավարության քաղաքականությունը Հայկա-  
կան հարցում և անդոր եղան թեթևացնել արևմտահայերի վի-  
ճակը:

<sup>1</sup> "Ararat", 1914, July, vol 1, N 13, p 17.

Ոնդրո առարկա հարցի վերաբերյալ հայերեն, ռուսերեն և անգլերեն աղբյուրների և գրականության մանրակրկիտ և համակողմանի ուսումնասիրությունը թույլ է տալիս հանգելու հետևյալ եզրակացությունների.

1. 1912թ. աշնանը նախադրյալներ էին ստեղծվել Հայկական հարցի վերաբացման համար: Արևմտահայության կողմից Հայկական հարցի վերաբացման դլխավոր պատճառը երիտթուրքերի հետադիմական, ազգայնամոլ քաղաքականության հետևանքով ստեղծված հայերի ծանր վիճակն էր: Հայկական հարցի վերաբացման համար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին 1912թ., երբ իտալա-թուրքական և Բալկանյան առաջին պատերազմներում թուրքիայի կրած պարտությունների հետևանքով Օսմանյան կայսրությունը թուլացել և փլուզման եզրին էր գտնվում:

Ոչ միայն հայությանը, այլև մեծ տերություններին՝ մասնավորապես անգլիական դիվանագետներին, պարզ էր, որ եթե թուրքական կառավարության այդ ճգնաժամային պահին Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ չիրագործվեն, ապա արևմտահայությունը սոսկալի հարվածների կենթարկվի թուրքական իշխանությունների կողմից:

2. 1912թ. աշնանը վերաբացված Հայկական հարցը կրկին զրավեց միջազգային դիվանագիտության ուշադրությունը: Սակայն, մեծ տերություններից ոչ մեկը չէր ցանկանում արձարձել Հայկական հարցը, քանի որ այն բերելու էր բախումների և հակասութունների խորացմանը: Այդուհանդերձ, ինդրի արձարձումից ծուսափելը յուրաքանչյուրի համար կնշանակեր հրաժարվել և կորցնել իր տեղն ու դիրքը ոչ միայն Օսմանյան կայսրության շուրջ ձևավորված միջպետական հարաբերություններում, այլև ողջ Մերձավոր արևելյան քաղաքականության ասպարեզում:

Հայկական հարցը մեծ տերություններին հետաքրքրում էր այնքանով, որքանով այն կարող էր ծառայել իրենց նվաճողական քաղաքականության շահերին: Դա էր պատճառը, որ Բալկանյան պատերազմների ընթացքում վերաբացված Հայկական հարցի շուրջ ծավալված դիվանագիտական պայ-

քարն ավելի սրվեց առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, երբ օրակարգի մեջ էր դրվել աշխարհի վերաբաժանման հարցը: Հայկական հարցը դարձել էր Փոքր Ասիայում մեծ տերությունների հակասությունների հանդուցներից մեկը:

Ինչպես մյուս տերությունները, Անգլիան ևս Հայկական հարցում ղեկավարվում էր բացառապես իր պետական շահերով: Արևմտահայության ողբերգական ճակատագիրն իրականում ամենևին էլ չէր հետաքրքրում անգլիական կառավարությանը, թեպետև նա հաճախ հանդես էր գալիս որպես հայերի պաշտպան և հայկական վիլայեթների համար բարենորոգումների իրագործման կողմնակից: Այդ «հոգատարությունը» գրեթե միշտ՝ այս կամ այն հարցի լուծման կապակցությամբ Թուրքիայի վրա ճնշում գործադրելու միջոց էր:

3. XX դարի սկզբին տիրող միջազգային իրադրությունը հնարավորություն էր ընձեռում Անգլիային մոտենալ Հայկական հարցին՝ որպես առանձի՝ մեկուսացված խնդրի: Այն դիտվում էր Անգլիայի պետական շահերին առնչվող բազմաթիվ խնդիրների. 1/ եվրոպական գաշինքների փոխհարաբերությունների, 2/ Օսմանյան կայսրության ամբողջականության պահպանման, 3/ Փոքր Ասիայում ազդեցության ոլորտների առաջացման անցանկալի հավանականության, 4/ անգլո-թուրքական հարաբերությունների և Թուրքիայում Անգլիայի հետաքրքրությունների, 5/ անգլո-ուսական հարաբերությունների և Հայկական հարցում հակասությունների, 6/ Փոքր Ասիայում Ռուսաստանի դիրքերի և ազդեցության ամրապնդման սպառնալիքի, 7/ Ռուսաստանի կողմից Արևմտյան Հայաստանի հնարավոր բռնագավթման, 8/ անգլո-գերմանական հարաբերությունների, 9/ Գերմանիայի զավթողական ձգտումների և Թուրքիայի նկատմամբ ստնձգությունների, 10/ Հնդկաստանում, Պարսից ծոցում, Միջագետքում անգլիական շահերի պաշտպանության տեսանկյուններից:

Հայկական խնդրի նկատմամբ Անգլիայի վերաբերմունքը ձևավորվում է Մերձավոր Արևելքում ուժերի փոխհարաբերությունների թելադրանքով: Հենց այդ հանգամանքն էր պայմանավորում Անգլիայի մերթ պասսիվ կամ չեզոք, մերթ ակտիվ. դրական՝ բարեկամական կամ բացասական՝ թշնամա-

կան դիրքորոշումները Հայկական Հարցում: Այդ դիրքորոշումներն անգլիական կառավարության լավ մշակված, միշտ կայուն՝ շահագրիտական քաղաքականութայան դրսևորումներն էին:

4. 1912թ.վերջին - 1913թ. սկզբին Անգլիան դեմ էր Հայկական Հարցի վերաբացմանը: Դա բացատրվում է նրանով, որ Հայկական խնդրի արծարծումն անգլիական կառավարության համար օրվա խնդիր չէր: Թուրքիայում Անգլիայի ռազմավարական և առևտրատնտեսական ծրագրերի իրագործման համար Հայկական վիլայեթներում բարենորոգումների իրագործումն անհրաժեշտություն չէր: Ավելին, Հայկական Հարցի արծարծումը կարող էր խոչընդոտել Թուրքիայում Անգլիայի՝ դեռ որոշ չափով պահպանված ազդեցություն խորացման ձգտումներին և Թուրքիայի հետ հարաբերությունների հետագա զարգացմանը:

Անգլիական կառավարության անհամաձայնությունը Հայկական խնդրի վերաբացման հարցում բացատրվում է նաև բալկանյան խնդիրների լուծմանը տրվող կարևորությունը ու առաջնահերթությունը և, որ ամենակարևորն էր, Օսմանյան կայսրության փլուզման երկյուղով: Անգլիացիները համոզված էին, որ Հայկական Հարցի արծարծումն ավելի կբարդացներ Թուրքիայի ծանր վիճակը և կարող էր նպաստել նաև Օսմանյան կայսրության ասիական տարածքների անջատմանը:

Հայկական Հարցն այնքանով էր անհանգստացնում Անգլիային, որքանով այն կարող էր անդրադառնալ Օսմանյան կայսրության status-quo-ի խախտմանը: Իսկ Թուրքիայի մասնատումը և Օսմանյան կայսրության փլուզումը ավյայ ժամանակ չէր համապատասխանում Անգլիայի շահերին, քանի որ դրա հետևանքով ավելի կսաստականային Գերմանիայի զավթողական ձգտումները, կամրապնդվեին Ռուսաստանի դիրքերն ամբողջ Մերձավոր Արևելքում, քանի որ թուրքական կայսրության փլուզման դեպքում ստեղծվելիք նորանկախ պետությունները կարող էին հայտնվել Ռուսաստանի ազդեցության ոլորտում: Թուրքիային տիրանալու դեպքում թե՛ Գերմանիայի, թե՛ Ռուսաստանի համար կբացվեին ճանապարհները գեպի Հնդկաստան: Անգլիան չէր կարող հանդուրժել, որ Թուրքիայի՝ ավելի ստույգ Արևմտյան

Հայաստանի վրայով ցամաքային կամուրջը դեպի Անգլիայի ամենանշանավոր գաղութն ընկներ մեկ այլ տերության ձեռքը: Անգլիական կառավարությունը վախենում էր, որ Օսմանյան կայսրության փլուզման նպաստելը կարող էր հարուցել իր գաղութների մահմեդական ընկալության դժգոհությունը, ինչպես նաև նպաստել բուն Անգլիայի գաղութներում ազգային ազատագրական պայքարի ծավալմանը և ինքնավարական ձգտումների դարգացմանը:

5. Տեսնելով իր ախոյաններ՝ դաշնակից Ռուսաստանի և հակառակորդ Գերմանիայի շահագրգռվածությունը Հայկական խնդրում, անգլիական կառավարությունը ստիպված էր 1913թ. դարնանը հրաժարվել պասսիվ դիրքորոշումից և մշակված ու ծրագրված ակտիվությունն ցուցաբերել Հայկական հարցի վերաբացման հարցում:

1913թ. ապրիլի վերջից անգլիական իշխանությունները սկսեցին հանդես գալ հօգուտ Հայկական փիլայնիթների համար նախատեսվող բարենորոգումների քննարկումների: Այժմ անգլիացիները բարենորոգումների անհրաժեշտությունը կապում էին Թուրքիայի ամբողջականությունից պահպանման հետ:

Անգլիայի աշխուժացումը բացատրվում էր անգլո-ռուսական հարաբերություններում՝ Թուրքիայի կողմից անգլիացի ծառայողներ վարձելու կապակցությամբ սրված տարածայնությունները հարթելու ցանկությամբ: Փորձելով շտկել իրավիճակը և չվատթարացնել հարաբերությունները ոչ՝ Ռուսաստանի, ոչ՝ էլ Թուրքիայի հետ, անգլիացիները հավաստիացնում էին երկու տերություններին, որ Անգլիայի ամենամեծ ցանկությունն էր պահպանել Թուրքիայի տարածքային ամբողջականությունը և անցկացնել բարենորոգումներ արեմտահայությունից համար: Անգլիական կառավարությունը նույնիսկ հոժարակամ Ռուսաստանին է զիջում բարենորոգումների քննարկումների կազմակերպման նախաձեռնությունը: Այս քայլը, սակայն, բացատրվում էր ոչ թե դաշնակցի նկատմամբ ունեցած անկեղծ ցանկությամբ, այլ այն հանգամանքով, որ Անգլիան ձգտում էր ավելի խոր ներքաշել Ռուսաստանին Մերձավոր և Միջին Արևելքում մեծ տերությունների սրվող հակասությունների մեջ: Անգլիական կառա-

վարությունը միաժամանակ քայլեր էր ձեռնարկում անգլո-թուրքական հարաբերությունների կայունությունն ապահովելու ուղղությամբ:

6. 1913թ. հունիսին անգլիական կառավարությունը բարենորոգումների նախագծի քննարկումները սկսելու վերաբերյալ Ռուսաստանի առաջարկությանը պաշտոնական համաձայնություն չէր տալիս: Նա փորձեր էր կատարում թուրքիայի հետ պաշտպանական դաշինք ստեղծելու և պայմանագրեր ստորագրելու, թուրքիայում ժանդարմերիայի հարցի և զրա հետ կապված անգլո-ռուսական հակասությունների կարգավորման ուղղությամբ:

1913թի ամռանն Անգլիայի մեղքով հետաձգված հայկական փլյայեթների բարենորոգումների նախագծի քննարկումը, փաստորեն, դատապարտվեց անհաջողության:

1913 թ. հուլիսին բարենորոգումների նախագծի քննարկումները համընկան Բալկանյան երկրորդ պատերազմին: Եթե Բալկանյան առաջին պատերազմի՝ Ադրիանապոլսի ճգնաժամի ընթացքում թուրքիան պատրաստ էր բնգունել բարենորոգումների ուստական նախագիծը, ապա Բալկանյան երկրորդ պատերազմի սկզբին՝ թուրքիայի կողմից Ադրիանապոլսի վերագրավումից հետո, իրավիճակը փոխվեց: Որոշակի մտահոսություն ձեռք բերելով՝ թուրքիան խստացրեց դիմադրությունը Ռուսաստանի հանդեպ և Գերմանիայի աջակցությամբ հնարավոր բոլոր միջոցները գործադրեց Հայկական խնդրի քննարկումը տապալելու համար:

7. 1913թ. հուլիսին Ենի-Բյոյում Արևմտյան Հայաստանի համար նախատեսվող բարենորոգումների նախագծի քննարկումների ժամանակ թուրքիայի և Գերմանիայի բացահայտ դիմադրության հետ մեկտեղ Անգլիայի շահապաշտ քաղաքականությունն արգելակեց «հայկական բարենորոգումների» խնդրի լուծումը:

Անգլիական դիվանագիտությունը, հանդես գալով թուրքական նախագծի օգտին, բարենորոգումների հարցը քննարկելիս նպաստեց ուստական դիվանագիտության պարտությանը:

Անկախ այն հանգամանքից, որ ստեղծված միջազգային պայմաններում անգլո-գերմանական հակամարտությունը

կրկրորդ պլան էր մղել անգլո-ուսական հակասությունները, այնուամենայնիվ վերջինների առկայությունն իր ազդեցիկ դերը խաղաց Հայկական հարցի քննարկումների տապալման գործում: Անգլիան անհրաժեշտ աջակցություն չցուցաբերեց բարենորոգումների ուստական նախագծին, թեպետ համոզված էր, որ եթե անաչառ մոտեցում դրսևորվեր հայկական խնդրին, ապա միայն ուստական նախագիծը կարող էր ապահովել նրա խաղաղ կարգավորումը: Եթե Անգլիան իրականում բարենորոգումներ իրագործելու ցանկություն ունենար, ապա մի կողմ թողնելով Ռուսաստանի հետ հակասությունները, պետք է սլաշտպաներ ուստական նախագիծը, ինչը չարեց:

Անգլիական դիվանագետներն իրենց դիրքորոշումը փորձում էին հիմնավորել այն մտավախությամբ, թե հայկական վիլայեթների համար ուստական նախագծով նախատեսված բարենորոգումների իրագործումը կբերեր թուրքական կայսրության փլուզմանը: Իրականում՝ անգլիացիների համար սլաշտ էր, որ Թուրքիայի ամբողջականության պահպանումը ղուրս էր մղվում մեծ տերությունների կողմից հետապնդվող նպատակներից և անմիջականորեն կախված է էր Հայկական հարցից: Բացի այդ, անգլիական դիվանագիտական շրջաններում սիրում էր այն համոզմունքը, որ ոչ միայն բարենորոգումների իրագործումը, այլ անգամ ինքնավարության հատկացումը կայսրության որևէ մեկ շրջանին է էր փոխելու իրերի զրությունը:

Այսպիսով, անգլո-ուսական հակասություններն այն հիմնական պատճառներից մեկն էր, որ նպաստեց բարենորոգումների ուստական նախագծի ձախողմանը:

Ց.Առանձին աշխատություններում արծարծված այն կարծիքը, թե 1913թ. աշնանն ու ձմռանը Անգլիան գրեթե ամբողջովին հեռացել էր Հայկական հարցի կարգավորումից, մենք չենք բնութևնում: Անգլիական կառավարությունը շարունակում էր իր քաղաքական գիմանոցում պահել Հայկական հարցը, չնայած որ նշված ժամանակաշրջանում Անգլիան շահադիտական նկատառումներով սլասիվ դիրք էր գրավել Հայկական խնդրի կարգավորման գործում:

Հայկական խնդրի լուծմանն իր մասնակցությունը սահմանափակելով հանդերձ՝ անգլիական կառավարությունը է էր

կարող լիովին թողնել հարցի լուծումը Գերմանիային և Ռուսաստանին: Ինչպես նախկինում, անգլիական դիվանագետներն աշխատում էին ժամանակ չկորցնելով՝ ուղևորմանական և ուղևորքական բանակցությունների ընթացքում օգտագործել Հայկական հարցն՝ իրենց նպատակներին հասնելու համար: Անգլիական կառավարությունը թուրքական կառավարության վրա որոշ ճնշում գործադրելու համար շարունակում էր շահարկել Հայկական հարցը իր առևտրատնտեսական և ռազմաքաղաքական ծրագրերն իրականացնելու նպատակով:

9. 1913թ. վերջին անգլիացիներին հաջողվեց խուսափել հայկական բարենորոգումների քննարկումներին մասնակցելուց: Սակայն ամիսներ շարունակ՝ ուղևորքական բանակցությունների ընթացքում, Անգլիան միջնորդի դեր խաղալով՝ աշխատում էր հարթել բանակցող տերությունների միջև Հայկական հարցի շուրջ գոյություն ունեցող անհամաձայնությունները, ինչը որոշ չափով նպաստեց 1914թ. հունվարի 26-ի ուղևորքական համաձայնագրի ստորագրմանը:

Անգլիական կառավարությունը բավարարված էր, որ հունվարի 26-ի համաձայնագիրը տերություններից ոչ մեկին՝ ո՛չ Ռուսաստանին, ո՛չ էլ Գերմանիային գերակայություն չէր ապահովում Օսմանյան կայսրության արևելյան շրջաններում: Անգլիական դիվանագետները համոզված էին, որ հունվարի 26-ի պայմանագիրը զասվելու էր մինչ այդ մշակված այն ծրագրերի շարքին, որոնցից և ոչ մեկն արդյունք չէր ունեցել:

Այսպիսով, փաստական նյութի վերլուծությունը ցույց է տալիս, որ ճիշտ չէ այն կարծիքը, թե 1912-1914թթ. Անգլիան հետաքրքրված չէր և ակտիվ դեր չի խաղացել Հայկական հարցում: Արևմտյան Հայաստանի համար նախատեսված բարենորոգումների խնդրի վերաբացումը, քննարկումներն ու, վերջին հաշվով, բացասական լուծումները որոշակիորեն պայմանավորված էին նաև Հայկական հարցում Անգլիայի որդեգրած քաղաքականությամբ:

## РЕЗЮМЕ

*Данное исследование посвящено раскрытию политики Великобритании в Армянском вопросе в период возобновления последнего в 1912-1914 гг.. Армянский вопрос вновь стал предметом дипломатических переговоров между Великими державами и Турцией.*

*Работа состоит из введения, трех глав, заключения и списка использованных источников и литературы.*

*В исследовании, на основании впервые вводимых в научный оборот британских дипломатических документов и архивных первоисточников, научной и мемуарной литературы, материалов армянских и английских периодических изданий, проанализирована политика Великобритании в Армянском вопросе.*

*Политика Великобритании рассмотрена на фоне общего развития международной ситуации на Ближнем Востоке, позиций европейских держав и отношения английской общественности к проблеме западных армян.*

*В период переговоров вокруг Армянского вопроса, Великобритания вела по отношению к Армянскому вопросу свою традиционную политику. Безразличие к судьбе армянского народа английское правительство скрывало проявлениями интереса к Армянскому вопросу исходя из того, насколько в тот или иной момент переговоров проблема реформ в Западной Армении отражалась на интересах Великобритании. Относительная активность Великобритании в июне-июле 1913г., во время переговоров шести Великих Держав (России, Великобритании, Франции, Германии, Италии и Австро-Венгрии) в Ени-Кей (Константинополь), была не долгой. С августа 1913 г. по 26-ое января 1914г., в период русско-германских и русско-турецких переговоров вокруг Армянского вопроса, позиция Великобритании, которая оставляла впечатление пассивности, невмешательства и полного удаления от обсуждений Армянского вопроса, была составной частью детально обдуманной политики правительства и дипломатов Великобритании. Правительство Великобритании не протестовало и даже способствовало принятию русско-германского проекта реформ со стороны турецкого правительства, а позднее, в период русско-турецких переговоров оказывала поддержку русским предложениям, так как они не противоречили интересам Великобритании.*

*Действия Великобритании исходили из реальной политики и, в данный момент соответствующей ее интересам, стремлением установ-*

ления более или менее устойчивых отношений между Великими державами.

Последовательный анализ политики Великобритании дает основание утверждать, что проблема решения вопроса реформ в Западной Армении в 1912-1914 гг. не увенчалась успехом, в определенной степени, в виду позиции Великобритании в данном вопросе.

## SUMMARY

*The present research is dedicated to the revealing of Great Britain's policy in the Armenian question in the period of reopening of latter in 1912-1914. The Armenian question again became a subject of diplomatic negotiations between the Great Powers and Turkey.*

*The work consists of introduction, three parts, conclusion and bibliography.*

*The policy of Great Britain in the Armenian question is analysed on basis of the British diplomatic documents and archival original sources put into scientific circulation for the first time, scientific literature and memoirs, the materials of the Armenian and British press.*

*The policy of Great Britain is examined against the background of general development of international situation at Near East, the European Powers' position and the British public's attitude towards the western Armenians' problem.*

*In the period of negotiations on the Armenian question, Great Britain conducted her traditional policy. The British Government showed the interest towards the Armenian question as much as it affected her state interests.*

*Great Britain's relative activity in June-July, 1913, during the negotiations on the Armenian question between six Great Powers (Russia, Great Britain, France, German, Italy, and Avstro-Hungary) in Yeny-Kioy (Constantinople) was not durable.*

*From August 1913 to 26-th of January, 1914, during the period of Russo-German and Russo-Turkish negotiations on the Armenian question, the passive position of Great Britain and her non-interference in the discussions of the problem of reform for Western Armenia was in fact the constituent part of in detail considered policy of the British Government and diplomats. The British Government did not deny and even contributed to the adoption of the Russo-German scheme by the Porte and later supported the Russian proposals because they did not contradict the British interests.*

*Britain's conduct was based on real politik and on a desire to achieve more or less stable relations between the Great Powers.*

*The successive analysis of the British policy gave good reasons to affirm that the problem of solution of the question of reforms in Western Armenia in 1912-1914 was not crowned with success because of Great Britain's position in the given question.*

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՑԱՆԿ

1. ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

Հայաստանի Ազգային Արխիվ  
.. (ՀԱԱ)

- 1.1. Ֆ.43, ց.1, գգ. 33, 50:
- 1.2. ֆ. 57, ց.5, գգ. 3,15,19,24,27,29,31,53,55,57,58,59,65,152:
- 1.3. ֆ.113, ց.3, գ. 1011:
- 1.4. ֆ.227, ց.4, գ. 39:
- 1.5. ֆ.282, ց.21, գ. 38:
- 1.6. ֆ.412, ց.1, գ.606:
- 1.7. ֆ.1120,ց.1, գ.55:

Հայաստանի Հանրապետության Ե.Չարենցի անվան արվեստի եւ  
զրահանութայան թանգարան  
(ՀՀ ԳԱԹ)

- 1.8. Արշակ Չոպանյանի Ֆոնդ, Չրդ բաժին, գ.783:
- 1.9. Ենույր Արմենի ֆոնդ, գ.1351:
- 1.10. Վահան Մալեգյանի ֆոնդ, ց.7, գգ. 123, 382, 738:

Архив внешней политики России  
(АВПР)

- 1.11. ֆ. Посольство в Константинополе, дд. 1603,1605.
- 1.12. ֆ. Политический архив, дд1645,1646,1647,1648,3462,3464,3480.

Российский государственный военно-исторический архив  
(РГВИА)

- 1.13. ֆ.450, оп. 1, д.150.
- 1.14. ֆ. 2000, оп.1, д.3845.

1.15. Foreign Office 25 / 2452; 195 / 2375; 195 / 2449; 195 / 2450 ,  
Parts 1,2,3,4,5,6.

## 2 ՏՊԱԳԻՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

- 2.1.16 Հայաստանը միջազգային դիվանագիտությունից և սովետական արտաքին բաղադրականությունից փաստաթղթերում (1828-1923), խմբ. Կիրակոսյան Ջ., Սահակյան Ռ., Երևան, 1972:
- 2.2.17. *Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919). Материалы политического архива министерства иностранных дел кайзеровской Германии, сборник под ред. Микаеляна В.А., Ереван, 1995.*
- 2.3.18. *Будущее устройство Армении. По официальным дипломатическим документам: Оранжевой книги, трактующей реформы в Армении (Дипломатический архив т.8), Петроград, 1915.*
- 2.4.19. *Геноцид армян в Османской империи, сборник документов и материалов под ред. Нерсисяна М.Г., Ереван, 1983.*
- 2.5.20. *Ключников Ю. Сабанин А., Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, ч.2, Москва, 1926.*
- 2.6.21. *Материалы по истории франко-русских отношений за 1900-1914г, сборник секретных документов бывшего императорского российского министерств иностранных дел, Москва, 1926.*
- 2.7.22. *Международные отношения в эпоху империализма. Документы из архивов царского и временного правительств 1878-1917, серия 2, 1900-1913, т.20, ч.2, 14 08. 1912-17. 10. 1912, Москва, 1940.*
- 2.8.23. *Раздел Азиатской Турции. По секретным документам бывшего министерства иностранных дел , под ред. Адамова Е.А., 1924.*
- 2.9.24. *Сборник дипломатических документов. Реформы в Армении. 26 ноября 1912-10 мая 1914 года (Министерство иностранных дел), Петроград, 1915.*
- 2.10.25. *Сборник договоров России с другими государствами (1856-1917), под ред. Адамова Е.А, Козьменко И.В., Москва, 1952.*
- 2.11.26. *Хрестоматия по истории международных отношений, выпуск 2, Африка и Передняя Азия, Москва, 1972.*
- 2.12.27. *Armenia. Political and Ethnic Boundaries. 1878-1948, Editor Anita L.P. Burdett, London, Archive Editions, 1998.*
- 2.13.28. *British Documents on the Origins of the War ( 1898-1914). vol 5,10, Edited by G.P. Gooch and H. Temperley, London, 1936*
- 2.14.29 *British Documents on Ottoman Armenians, vol. 1, Ankara, 1982.*

### 3. ՊԱՐՔԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒՂ

- 3.1.30. Ազատամարտ, Կ.Պոլիս, 1913:  
3.2.31. Ազգակ, Կ.Պոլիս, 1913:  
3.3.32 Արարատ, Էջմիածին, 1914:  
3.4.33. Բանբեր Հայաստանի արխիվների, Երևան, 1986, N 1:  
3.5.34. Բյուզանդիոն, Կ.Պոլիս, 1913,1914:  
3.6.35. Բուժանիա, Կ.Պոլիս, 1913:  
3.7.36. Լրարեր Հասարակական գիտությունների, Երևան, 1977, N 1:  
3.8.37. Հայրենիք, Բոստոն, 1922, N 2:  
3.9.38. Համրավարեր,Թիֆլիս, 1917, N 22:  
3.10.39.Հորիզոն, Թիֆլիս,1912,1913,1914:  
3.11.40. Մշակ, Թիֆլիս,1913,1914:  
3.12.41. Պատմա-Բանասիրական Հանդես, Երևան, 1995, N1:  
3.13.42. Վեմ, Փարիզ, 1933, 1934,1935:  
3.14.43. Փորձ, Թիֆլիս, 1879, N 78:  
3.15.44. Вестник Европы, Петроград, 1915, N 6.  
3.16.45. Вестник ЛГУ, Ленинград, 1949, N11.  
3.17.46. Вопросы истории, Москва, 1971, N 8.  
3.18.47. Кавказ, Тифлис, 1913.  
3.19.48. Кавказское слово, Тифлис, 1918.  
3.20.49. Литературная Армения, Ереван, 1965, N 6.  
3.21.50. Ararat, London, 1913, NN 1,2,3,4,5,6; 1914, NN 1,2,3,4,5,6.  
3.22.51. Armenian Review, Boston.1986, vol.39, N 1.  
3.23.52. Middle Eastern Studies, London. 1971, N 1; 1980, N 6.

### 4. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԵՐԵՆ

- 4.1.53. Ա-Դո, Վանի, Բիթլիսի, Էրզրուծի վիլայեթները, Երևան, 1912:  
4.2.54. Աղայան Ծ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Ե.,1976:  
4.3.55. Աճառյան Հ., Տաճկահայ հարցի պատմությունը (սկզբից մինչև 1915թ.), Նոր-Նախիջևան,1915:  
4.4.56 Ամուրյան Ա.,Հայ դատը, Հայ ժողովրդի ազատագրական ճիգերը, Թեհրան, 1977:  
4.5.57. Ասոմ, Բարեբողոքումների հարցը, Կ.Պոլիս, 1914:  
4.6.58. ԱրզումանյանՄ., Հայաստան 1914-1917, Երևան,1969:  
4.7.59. Արմեն Գարո, Ապրամ օրեր, Պեյրուսթ, 1951:  
4.8.60. Արմեն Գարո, Վերջին տեսակցությունը Թալեստ փաշայի հետ, «Հայրենիք», Բոստոն,1922, N 2:

- 4.9.61. Բայբուրդյան Վ., Հայկական բարենորոգումների խնդիրն Արևմտյան Հայաստանում և հայ-քրդական հարաբերությունները, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1986, N1:
- 4.10.62. Գալոյան Գ., Արևմտյան Հայաստանի ինքնավարութան հարցը 1878թ. Բեռլինի վեհաժողովում, «Լրագրեր հասարակական գիտություններին», 1977, N1:
- 4.11.63. Գալոյան Գ., Պատմության քառուղիներում: Ազատագրված ժողովրդի վերածնունդը, Երևան, 1982:
- 4.12.64. Գեղամյանց Ե., Հայերի ազատագրական շարժումները 20-րդ դարում /Հայկական հարցի յոթերորդ շրջան/, Բաքու, 1917:
- 4.13.65. Զավեն արքեպիսկոպոս , Պատրիարքական յուշերս, վավերագրեր և վկայություններ, Գահիրե, 1917:
- 4.14.66. Զոհրապ Գր., Հայկական հարցը փաստաթղթերով լուսին տակ, Պեյրուսթ, 1973:
- 4.15.67. Իգմիրլյան Կ., Հայ ժողովրդի քաղաքական ճակատագիրը անցյալին և ներկայիս, Բեյրութ, 1964:
- 4.16.68. Իշխանյան Բ., Տաճկահայ խնդիրը և միջազգային դիվանագիտությունը, Թիֆլիս, 1907:
- 4.17.69. Լադեան Գ., Հայաստանը և Հայ դատը ըստ գաղչադերերու, Գահիրե, 1942:
- 4.18.70. Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925:
- 4.19.71. Լեո, Հայոց հարցի վավերագրեր, Թիֆլիս 1915:
- 4.20.72. Խաչատրյան Ա., Կաղզրական Գերմանիան եվ հայկական բարենորոգումները 1912-1914թթ., Երևան, 1999:
- 4.21.73. Կարապետյան Ն., Հայկական բարենորոգումների խնդիրը 1912-1914թթ., Հայ ժողովրդի պատմություն, հ.6, էջ 520-538, Երևան, 1981:
- 4.22.74. Կարինյան Ա., Իմպերիալիստական պատերազմը եվ Հայաստանը, Երևան, 1924:
- 4.23.75. Կիրակոսյան Ա., Բրիտանական դիվանագիտությունը եվ արևմտահայությունից խնդիրը /19րդ դարի 30-ական թթ. -1914թ./, Երևան, 1999:
- 4.24.76. Համբարյան Ա., Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում 1898-1908թթ., Երևան, 1999:
- 4.25.77. Համբարյան Ա., Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում /1908-1914/, Երևան, 1979:
- 4.26.78. Հայկական հարց, Հանրագիտարան, Երևան, 1996:
- 4.27.79. Հովհաննիսյան Աչ., Դաշնակցությունը եվ պատերազմը, Երևան, 1924:
- 4.28.80. Մանդելշտամ Ա., Ռուսաստանի քաղաքականությունը Թուրքիայում, «Վէստ», հանդես մշակույթի և պատմության, Փարիզ, 1935, N N 2,3:
- 4.29.81. Մուշեղ արքեպիսկոպոս, Հայկական մղձավանջը. քննական վերլուծություններ, Բոստոն, 1916:

- 4.30.82. Նասրպեան Ա., Բրիտանիա և Հայկական Հարցը 1915-1923, Պեյրուժ, 1994:
- 4.31.83. Զերազ Մ., Հայկական խնդիրը, Վենետիկ, 1917:
- 4.32.84. Զուպանեան Ա., Հայաստանը թուրք լուծին տակ, Պոստոն, 1918:
- 4.33.85. Զորմիսյան Լ. Կուսակցութունները, Պեյրուժ, 1965:
- 4.34.86. Պատերմահան Ն., Հայոց պատմութիւն, Բ Հատոր, Անթիլիաս-Լիբանան, 1958:
- 4.35.87. Պատմութիւն սօցիալ-գեոմորֆոլոգիական հնչակյան կուսակցութեան 1887-1962, Ա Հատոր, Պեյրուժ, 1962:
- 4.36.88. Զեմալ փաշա, Հայկական Հարցը, Երևան, 1927:
- 4.37.89. Սապազ-Գյուլյան Ս., Պատասխանատուները, Պեյրուժ, 1974:
- 4.38.90. Սարուխանյան Ն., Հայկական Հարցը մինչև Խորհրդային Հայ Հասարակական-Բարոյաբանական մտքի և պատմագրութեան մեջ Երևան, 1997:
- 4.39.91. Սերոբյան Մ., Հայկական Հարցը եւ անոր փուլերը, Պեյրուժ, 1937:
- 4.40.92. Սերոբյան Մ., Մեր պայքարը Հայ ազատագրութեան ուղիով, Գահիրե, 1948:
- 4.41.93. Սիմոնյան Հր., Թուրք-Հայկական Հարաբերութիւնների պատմութիւնը, Երևան, 1991:
- 4.42.94. Վարանդյան Միք., Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Բ Հատոր, Փարիզ, 1950:
- 4.43.95. Բաֆֆի, Տաճկահայք, Թիֆլիս, 1895:
- 4.44.96. Փափազյան Վ., Հայկական բարենորոգումները 1912-1914թթ./, «Վէմ», 1934, N1:
- 4.45.97. Փափազյան Վ., իմ յուշերը, Բ Հատոր, Պեյրուժ, 1952:
- 4.46.98. Բոնթանտն Լ., Հայկական Հարցին վերջին փուլերը, Կ. Պոլիս, 1922:
- 4.47.99. Օտյան Ե., Պողոս փաշա նուբար, Կ Պոլիս, 1913:

## 5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՌՈՒՍԵՐԵՆ

- 5.1.100. Акопян С.М., *Западная Армения в планах империалистических держав в период первой мировой войны*, Ереван, 1967.
- 5.2.101. *Армянский сборник*, Москва, 1915.
- 5.3.102. Арш Г.А., *Британская дипломатия и миссия Л. фон Сандерса*, "Вестник АГУ", 1949, N11.
- 5.4.103. Борьян Б.А., *Армения, международная дипломатия и СССР, часть 1*, Москва-Ленинград, 1928.
- 5.5.104. Веселовский Ю., *Трагедия Турецкой Армении*, Москва, 1915.
- 5.6.105. Галкин И.С., *К истории английской дипломатии в 1908-1911*, "Вопросы истории", 1971, N 8.
- 5.7.106. Галоян Г.А., *Рабочее движение и национальный вопрос в Закавказье 1900-1922 гг.*, Ереван, 1969.

- 5.8.107. Гиббонс Г.А., *Последние избиения в Армении. Факты и ответственность. Самая черная страница новейшей истории.* Петроград, 1916.
- 5.9.108. Голобородько И.И., *Турция, Москва, 1913.*
- 5.10.109. Готлиб В.В., *Тайная дипломатия во время первой мировой войны.* Москва, 1960.
- 5.11.110. Гурко-Кряжин В.А., *История революции в Турции, Москва, 1923.*
- 5.12.111. Джемаль паша, *Записки Джемаль паша, 1913-1919, Тифлис, 1923.*
- 5.13.112. Дживелегов А., *Будущее Турецкой Армении, Москва, 1914.*
- 5.14.113. Инджикян О.Г., *Буржуазия османской империи, Ереван, 1977.*
- 5.15.114. Истягин Л.Г., *Экспансия германского империализма в Турции и русско-германские противоречия по Армянскому вопросу, 1912-1914 гг., в кн. Из истории агрессивной внешней политики германского империализма, сборник статей, М. 1959.*
- 5.16.115. Каузер Ж., *Европа и новая Турция, Москва, 1925.*
- 5.17.116. Киракосян А., *Великобритания и Армянский вопрос, Ереван, 1990.*
- 5.18.117. Киракосян А., *Политика Англии в Армянском вопросе по материалам еженедельника „Spectator“, (90-ые годы 19в.). Научно-аналитический обзор, Ереван, 1982.*
- 5.19.118. Киракосян Д.ж., *Западная Армения в годы первой мировой войны, Ереван, 1971.*
- 5.20.119. Киракосян Д.ж., *Младотурки перед судом истории, Ереван, 1989.*
- 5.21.120. Ковалевский М., *Армянский вопрос, „Вестник Европы“, Петроград, 1915, N 6.*
- 5.22.121. Коджоян Р., *Русская дипломатия и проблема реформ в Западной Армении накануне первой мировой войны. Дис., канд., ист., наук, Ереван, 1989.*
- 5.23.122. Контансон Л., *Реформы в Азиатской Турции. Армянский вопрос, М., 1914.*
- 5.24.123. Кочар М., *Армяно-турецкие общественно-политические отношения и Армянский вопрос в конце 19 - начале 20 веков, Ереван, 1988.*
- 5.25.124. Линч, *Армения, т. 2, Тифлис, 1910.*
- 5.26.125. Мандельштам А., *Младотурецкая держава, Москва, 1915.*
- 5.27.126. Мартиросян М., *Армянский вопрос и русская дипломатия 1912-1914 гг., Дис., канд., ист., наук, Ереван, 1990.*
- 5.28.127. Миллер А.Ф., *Краткая история Турции, М. 1948.*
- 5.29.128. Миллер А.Ф., *Оттоманская империя (Султанская Турция), М. 1946.*
- 5.30.129. Минахорян Б., *Трагедия Турции, Баку, 1919.*
- 5.31.130. Мнацаканян Г.Д., *Разрешение Армянского вопроса, Москва, 1914.*
- 5.32.131. Могилевич А.А., Айрапетян М.А., *На путях к мировой войне (1914-1918), Москва, 1940.*

- 5.33.132. Ошеровский Л., Трагедия армян-беженцев, СПб., 1946.
- 5.34.133. Рорбах П., Война и германская политика, Петроград, 1915.
- 5.35.134. Сазонов С.Д., Воспоминания, Берлин, 1927.
- 5.36.135. Саркисян Е.К., Армянский вопрос и великие державы, "Литературная Армения", 1965. N 6.
- 5.37.136. Саркисян Е.К., Армянский вопрос и Россия в 1912-1914гг., Պատմա-Բանասիրական Հանդես, Երևան, 1995, N1:
- 5.38.137. Саркисян Е.К., Политика османского правительства в Западной Армении и державы в последней четверти 19-го в. и в начале 20-го в., Ереван, 1972.
- 5.39.138. Саркисян Е.К., Экспансионистская политика османской империи в Закавказье накануне и в годы первой мировой войны, Ереван, 1962.
- 5.40.139. Степанян Ст., Армения в политике империалистической Германии, (конец 19-начало 20вв.), Ереван, 1975.
- 5.41.140. Степанян Ст., Германские источники о геноциде армян, период первой мировой войны, Ереван, 1991.
- 5.42.141. Тарле Е.В., Европа в эпоху империализма, 1871-1919гг., соч. в 12 томах, т.5, Москва, 1958.
- 5.43.142. Хвостов В.М., История дипломатии, т.2, дипломатия в новое время 1871-1914, М. 1963.
- 5.44.143. Хвостов В.М., История международных отношений, 1871-1917гг., М, 1947.
- 5.45.144. Эрцбергер М., Германия и Антанты, Москва, 1923.

#### 6. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՆ ԳԼԵՐԵՆ

- 6.1.145. Asquith H.H., The Genesis of the War, New-York, 1923.
- 6.2.146 Buxton N. and Buxton H., Travel and Politics in Armenia, London, 1914.
- 6.3.147. Dadrian V.N., The History of the Armenians Genocide. Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus, Oxford, 1995.
- 6.4.148. Davison R.H., The Armenian Crisis 1912-1914, New-York, 1948
- 6.5.149. Fay B. Sidney, The Origins of the World War, vol 1, New-York-London, 1968
- 6.6.150. Gibbons H., The Red Rugs of Tarsus, Paris, 1919.
- 6.7.151 Graves Ph P., Briton and Turk. London-Melbourne.
- 6.8.152 Heller J., Britain and the Armenian Question, 1912-1914. A Study in Real Politik. „Middle Eastern Studies“, London, 1980, N 6.
- 6.9.153. Hovannissian R., Armenia on the Road to Independence, 1918, L-A, 1967.
- 6.10.154. Howard H.N., The Partition of Turkey. A Diplomatic History, 1913-1923, Oklahoma, 1931.

- 6.11.155.Kedourie E., *Young Turks, Freemasons and Jews*, „Middle Eastern Studies”, London, 1971, N 1.
- 6.12.156.Marriott J.A.R., *The Eastern Question. A Study in European Diplomacy*, Oxford, 1917.
- 6.13.157.Morgenthau H., *Secrets of the Bosphorus*, London, 1918.
- 6.14.158.Papazian B., *The Tragedy of Armenia*, Boston-Chicago, 1918.
- 6.15.159.Pears E., *Forty Years in Constantinople*, London, 1915.
- 6.16.160.Pears E., *Turkey and its People*, London, 1912.
- 6.17.161.Robinson E., *Armenia and the Armenians*, London, 1916.
- 6.18.162.Robinson E., *The Armenians*, London, 1918.
- 6.19.163.Somakian M., *Empires in Conflict. Armenia and the Great Powers 1895-1920*. London-New-York, 1995.
- 6.20.164.Tonapetian P., *Turkey and her British Friends*, London, 1919.
- 6.21.165.Toynbee A., *A Past and a Future*, London-New-York, 1917.
- 6.22.166.Van der Dussen W.J., *The Question of Armenian Reforms in 1913-1914*, „Armenian Review”, Boston, Spring, 1986, vol.39, N 1.
- 6.23.167.Walker J.Ch., *The Survival of a Nation*, New-York, 1980.
- 6.24.168.Waugh T., *Turkey. Yesterday, Today and Tomorrow*, London, 1930.
- 6.25.169.Williams W.Llew., *Armenia: Past and Present. A Study and a Forecast*, London, 1916.
- 6.26.170.Westenenk L.C., *Diary Concerning the Armenian Mission*, „Armenian Review”, Boston, Spring, 1986, vol.39, N 1.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ .....	3
ԳԼՈՒԽ 1.	
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԱՅՈՒՄԸ:	
Արևմտյան Հայաստանը Հայկական հարցի վերաբացման նմախորյակին.....	15
Հայկական հարցի վերաբացումը և Մեծ Բրիտանիայի դիրքորոշումը .....	36
ԳԼՈՒԽ 2.	
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑՆ ԱՆԳԼՈՒ - ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ /1913թ.ԱՊՐԻԼ- ՀՈՒԼԻՍ /:	
Անգլո-ռուսական հակասությունների դրսևորումը Հայկական հարցում 1913թ. գարնանը .....	68
Մեծ Բրիտանիայի դիրքորոշումն Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու հարցում Ենի-Քյոյի խորհրդակցության նախտրյակին.....	82
Ենի-Քյոյի խորհրդակցությունը և Մեծ Բրիտանիայի դիվանագիտական նկրտումները .....	100
ԳԼՈՒԽ 3.	
ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ ԵՎ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ /1913թ. ՕԳՈՍՏՈՍ - 1914թ. ՕԳՈՍՏՈՍ:	
Հայկական հարցը ռուս-գերմանական բանակցություններում: Մեծ Բրիտանիայի խարդավանքները /1913թ. օգոստոս-սեպտեմբեր / .....	132
Մեծ Բրիտանիայի քաղաքականությունը ռուս-թուրքական բանակցությունների ընթացքում /1913թ. հոկտեմբեր-1914թ. հունվար/:	
Ռուսթուրքական 1914թ. հունվարի 26-ի համաձայնագիրը .....	154
Հայկական բարենորոգումների ռուս-թուրքական ծրագրի իրագործման փորձերը և Մեծ Բրիտանիան.....	187
Մեծ Բրիտանիայի հանրային կարծիքն ու մամուլը: Հայկական հարցի մասին.....	197
ՎԵՐՋԱԲԱՆ.....	215
ԱՍՓՈՓՈՒՄ .....	222
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....	225
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.....	232

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220090878

A 90878